Պ. ԿՈՍԻՆՈՎ

ՀՈՒՆԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

П. КОКИНОС

ИЗ ИСТОРИИ АРМЯНСКОЙ КОЛОНИИ В ГРЕЦИИ (1918-1927)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1965

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Պ. ԿՈԿԻՆՈՍ

ՀՈՒՆԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ
(1918-1927)

A 37109

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՕՐՈՒ. ԴԱՍԱՐԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1965

Աշխատությունը նվիրված է սիլուսրահայության խոշոր հատվածներից մեկի՝ հունահայ աշխատավորության տնտեսական, քաղաքական և հասարակական կյանքի պատմությանը, հայ և հույն բանվորների համատեղ պայքարի, ինչպես նաև Հունաստանի կոմպարտիայի բաղմակողմանի գործունեության ուսումնասիրությանը՝ հայ աշխատավորներին Հունաստանի ռևոլյուցիոն շարժման մեջ ընդգրկելու ուղղությամբ։

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հունաստանի հայկական գաղութը սփյուռքահայ հնագույն գաղութներից մեկն է։ Իր բազմադարյան պատմության ընթացքում նա առավել մասնայական և բազմամարդ դարձավ 1920-ական թվականներին, առաջին իմպերիալիստական պատերազմին հաջորդող՝ Կիլիկիայի և Իզմիրի աղետալի դեպքերի հետևանքով, և իր հետագա զարգացման տարիներին կարևոր տեղ գրավեց ամբողջ սփյուռքահայ աշխատավորության պատմության մեջ։

Հունաստանում հայ գաղութի հիմնադրման ճշգրիտ թվականը մինչև այժմ դեռևս մնում է անհայտ, բայց անտարակուսելի է, որ Հունաստանը եղել է հայերի հնագույն գաղթավայրերից մեկը։ Բավական լայն են եղել անցյալում հայ և հույն ժողովուրդների կուլտուրական-գրական, ինչպես և քաղաքական կապերը։ Ուշագրավ է այն, որ մինչև մեր օրերն էլ պահպանվել են հունական բազմաթիվ քաղաքների, գյուղերի, գետերի ու լեռների արմեն-արմենական արմատից[1] ծագող անունները, որոնք և տեղ են գտել հունական հանրագիտարանում։

Հայաշատ կենտրոններ են եղել ոչ միայն Հունաստանում, այլև Բյուզանդիայում (Կոստանդնուպոլիս, Ադրիանապոլիս),

---

[1] *Թեև ոչ միշտ, բայց շատ դեպքերում այս բառարմատը կապված է ըուն հայերի հետ. այսպես, օրինակ, Αρμένοι (Արմենիի) է կոչվում Կրետե կղզու Ապոկորոնաս շրջանի համանուն համայնքի կենտրոնը։ Այդ գյուղի առաջին բնակիչները հայեր են եղել, որոնք հաստատվել են Կրետեում դեռևս X դարում։ Նույն անունն է կրում նաև Կրետե կղզու Ռեթիմնոյի շրջանի հա-*

ինչպես նաև Հռոմեական կայսրության արևելյան մի շարք այլ քաղաքներում։

VI դարի վերջին, հատկապես Թրակիայի մի շարք շրջաններում սկսում են կազմվել հայկական գաղթավայրեր, որոնք առավելապես ուժեղանում ու աճում են VII դարում, երբ Բյուզանդական կայսրությունը նպատակ ունենալով ապահովել իր արևմտյան սահմանները, բազմաթիվ հայերի գաղթեցնում է Թրակիա և նրանց ապահովում հողով ու բանող անասուններով։ VII դարի հայ պատմիչ Սեբեոսը վկայում է, որ բյուզանդական Մորիկ կայսրի հրամանով 30 հազար հեծյալ զինվորներ Հայաստանից պետք է տեղափոխվեին Թրակիա[2]։ Արշ. Ալպոյաճյանը, հավանաբար, Սեբեոսի այս վկայությունը նկատի ունի, երբ գրում է, թե Մորիկ կայսրը հրամայում է Հայաստանից 30.000 տնվոր փոխադրելու մասին դեպի Թրակիա[3]։ Հունաստան տեղափոխված այս հայերը բնակվում էին Թրակիայի և Մակեդոնիայի բազմաթիվ քաղաքներում։

Այդ գաղթականները ոչ միայն պահպանել էին իրենց սովորություններն ու ծեսերը, այլև որոշ սովորություններ տարածել էին հույների մեջ, ինչպես, օրինակ, հայկական մատաղի սովորությունը[4]։

մանուն համայնքի կենտրոնը։ Այդ գյուղի առաջին բնակիչները IX դարում նույնպես եղել են հայերը։ Կրետե կղզու Սիթեայի շրջանի համանուն համայնքի կենտրոնը նույնպես կրում է այդ անունը, և նրա առաջին բնակիչները (IX դարում) եղել են հայերը։ Նույն անունն է կրում նաև Կրետե կղզու Կիսամոսի շրջանի մի ուրիշ գյուղ։ Αρμενοί (Արմենի) է կոչվում Թրիֆիլիայի շրջանի համանուն համայնքի կենտրոնը։ Αρμενοχώριον (Արմենոխորիոն—Հայ գյուղ) է կոչվում Ֆլորինայի շրջանի համանուն համայնքի կենտրոնը և այլն։ (Տե՛ս Εγκυκλοπαιδικόν Λεξικόν. Τόμος 2, σ. 473—478. Ελληνικός Οίκος Ελευθερουδάκη. Αθήναι.

[2] Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն, Թիֆլիս, 1913, էջ 112։

[3] Արշակ Ալպոյաճեան, Պատմութիւն հայ գաղթականութեան, հատ. Ա, Գահիրէ, 1941, էջ 151։

[4] Տե՛ս Մ. Բարթիկյանի հոդվածը «Հայկական մատաղը Թրակիայում», «Էջմիածին», 1958, № 5, էջ 57—61։

VII—X դարերին ծագումով հայ մի շարք բյուզանդական կայսրերի, զորավարների հրամանով՝ հայկական շրջաններից դեպի բալկանյան երկրները կազմակերպվել է հայերի բռնի գաղթ՝ նրանց կայսերական բանակում զինվորագրելու համար։ Սրա հետևանքով ավելի ևս բազմացավ Հունաստանի հայկական գաղութը։ Բյուզանդական կայսրության լծի դեմ պայքարի ելած հայ, հույն և սլավոն գյուղացիական մասսաների համատեղ պայքարի դրոշը հանդիսացավ պավլիկյանների հակաֆեոդալական ուսմունքը, որն այդ տարիներին մեծ ժողովրդականություն էր վայելում աշխատավորական մասսաների մեջ։ Մեծ դաժանությամբ ոչնչացնելով IX դարի երկրորդ կեսին Փոքր Հայքում գոյություն ունեցող պավլիկյանների անկախ ու ինքնավար համայնքները, բյուզանդական զորքերը բռնի կերպով գաղթեցնում էին հայերին Թրակիա և Ֆիլիպե, կայսրության այդ անմարդաբնակ ու անմշակ շրջանները, և պարտադրում նրանց՝ աքսորականների նման ապրել։ Օտարության մեջ, իրենց հայրենի երկրից հեռու։ Բազմահազար հայ գաղթականությունը պավլիկյանների ուսմունքի ակտիվ տարածողն է եղել Բալկաններում, մասնավորապես Հունաստանում։ Նոր բնակավայրերում, նվիրվելով առևտրին, արհեստներին, գյուղատնտեսական աշխատանքներին ու զինվորական ծառայությանը, հայերը բարի համբավ էին հանել թե խաղաղ աշխատանքում և թե պատերազմական գործողություններում ցուցաբերած իրենց ռազմական սխրագործություններով։ Հայտնի է, օրինակ, այսպիսի դեպք. երբ 904 թ. հուլիսի 29-ին Կրետե կղզուց ծովահենները հիսունչորս նավերով արշավանք էին կազմակերպել Մակեդոնիայի մայրաքաղաք Թեսալոնիկի[5] վրա, պահակագնդում ծառայող հայերը, սլավոնների հետ միասին, քաջաբար մասնակցել էին քաղաքի պաշտպանությանը։ Բուն Կրետե կղզում այդ ժամանակ եղել է բավական սավարաթիվ հայկական գաղութ, որի հիմնական մասսան կազմել են հայ զինվորները, որոնք ուղարկված են եղել բյուզանդական հայազգի կայսր Ռոմա-

---

[5] Այսպես էր կոչվում անցյալում Սալոնիկ քաղաքը։

նոս II կրասերի հրամանով՝ Կրեատն արաբական տիրապետությունից ազատագրելու նպատակով։ Կրեատում 960-ական թվականներին հայկական համայնքներ են եղել մասնավորապես Ռեթիմնո, Սիթեա, Ապոկորոնի, Արմենիսորեոն քաղաքներում ու գյուղերում։ Կրեատի հայկական եկեղեցին, որի 1780 թվականից գոյություն ունենալու մասին վկայություններ կան եվրոպական ճանապարհորդների հուշագրություններում, պահպանվել է մինչև 1880-ական թվականները։

Թրակիայի և Մակեդոնիայի հին գաղութի պատմության մասին մի ուսումնասիրության մեջ հիշատակվում է Թեսալոնիկեի անցյալի հեղինակավոր պատմագիր Փ. Ռիգալը, որը վկայում է, որ XI դարում Սալոնիկում «Հայերը հաստատված էին քաղաքին մեջ և մասնավորապես Թերմայիկյան մեծ նավահանգստին շուրջը»[6]։

XII դարի սկզբներին Թեսալոնիկե քաղաքի բյուզանդական զորքերում դեռևս ծառայում էին բազմաթիվ հայ զինվորներ։ Իսկ մի շարք հեղինակների վկայությունները XV դարի կեսերին տեղի ունեցող իրադարձությունների մասին՝ հիմք են տալիս ենթադրելու, որ այդ ժամանակներում Թեսալոնիկե քաղաքը եղել է հայկական կարևոր գաղթավայրերից մեկը, որը կազմված էր մեծ մասամբ զինվորական ծառայությունից հետո այդ քաղաքում հիմնական բնակություն հաստատած հայերից, ինչպես նաև Թրակիայից Մակեդոնիա փոխադրված հայ գաղթականներից[7]։ Տարբեր հեղինակներ նույնիսկ ակնարկում են հայկական զորքի և եկեղեցու գոյությունը։ Հայերի մասնակցական դաղթը դեպի բալկանյան երկրները՝ շարունակվեց նաև Բյուզանդական կայսրության անկումից հետո, թուրք սուլթանների տիրապետության ժամանակ։ Մի ավանդության համաձայն, սուլթան Սելիմ Առաջինը (1512—1520) Երզնկայից Ադրիանապոլիս էր փոխադրել 250 հայ ընտանիք, որոնց մեջ եղել են քարտաշ, որմնադիր և ծեփագործ շատ բանվորներ, որոնք և աշխատել են

---

[6] Տե՛ս Ա. Մակարյան, Յուշագիրք Թրակիոյ և Մակեդոնիոյ հայ գաղութներու, Սելանիկ, 1929, էջ 84։

[7] Նույն տեղում, էջ 85։

սուլթանի անվան նշանավոր մզկիթի կառուցման վրա։ Նույն ամանդուիյան համաձայն, սուլթանը զոհ մնալով հայերի ստիպումներից, նրանց շնորհել է Ադրիանապոլսում բնակվելու իրավունք՝ արտոնելով քաղաքի Քրյուբ արվարձանի «Այրճըլար Մահալեսի» թաղամասում ունենալ իրենց եկեղեցին և գերեզմանատունը[8]։

Հայկական հին ու կարևոր գաղթավայրերից էր նաև Ռոդոստոն։ Այստեղ գաղութի կազմության սկզբնավորությունը, համաձայն Գրիգոր վարդապետ Կամախեցու կամ Դարանաղեցու «Ժամանակագրութեան»[9], համարվում է 1608 թ.։

XVII դարի սկզբներին ջալալիների հարստահարությունների ու սովի հետևանքով ուժեղացավ հայ բնակչության մասսայական արտագաղթը Արևմտյան Հայաստանից և Փոքր Ասիայից դեպի մերձավոր ու հեռավոր երկրներ։ Գաղթականական այդ զանգվածների մի մասը հասել էր մինչև Բալկաններ, տեղավորվել Թրակիայի շրջաններում։ Հունաստանի հին գաղութի մասին արժեքավոր տվյալներ է տալիս նաև էջմիածնի Աբրահամ կաթողիկոսը՝ 1737 թ. «Թերթրատպու առաջնորդությանն» ուղարկած հայրապետական կոնդակում[10], ուր հիշատակվում են Թրակիայի և Մակեդոնիայի հայկական մի շարք գաղութների անուններ, ինչպես, օրինակ, Գյումյուլճինայի (ներկայումս Կոմոտինի), Կավալայի, Քսանթիի, Դրամայի, Սերեզի, Սալոնիկի և այլն, որոնք հետագայում ավելի ևս բազմանալով՝ իրենց գոյությունը պահպանեցին մինչև ներկա ժամանակները։ Այդ աղբյուրներում հիշատակվում են նաև Միտիլի կղզու, ապա Լարիսա քաղաքի հայկական համայնքների մասին, որոնք կազմավորվել են XVIII դարում և

---

8 Տե՛ս Ա. Մակարյան, Յուշագիրք Թրակիոյ և Մակեդոնիոյ հայ գաղութներու, Սելանիկ, 1929, էջ 23։

9 Տե՛ս «Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ», Երուսաղեմ, 1915, էջ 7։

10 Տե՛ս Ա. Մակարյանի «Յուշագիրքը»...։ Հեղինակի վկայությամբ այդ կոնդակը, որն ունի մեկուկես մետր երկարություն և կես մետր լայնություն, գտնվում է Ալեքսանդրապոլսի (Դեղե—Ագաճ) հայկական եկեղեցում, նույն տեղում, էջ 26—28։

ավելի առաջ։ Միտիլլիում, ինչպես և Կրետեում, հայերի բնակավայրերը հաճախ կոչվել են Արմենոխորիոն (հայ գյուղ)։ Այս վայրերում էլ հայերն զբաղվելիս են եղել արհեստներով և առևտրով։

Ուշագրավ է պատմական այն իրողությունը, որ Վենետիկի Մխիթարյան միաբանության հիմնադիր Մխիթար Սեբաստացին մինչև ս. Ղազար կղզում հաստատվելը 1701—1715 թթ. իր փոքրաթիվ աշակերտներով հաստատված է եղել Հունաստանում, Մորեա կղզու Մեթոն բերդաքաղաքում, որտեղ կառուցել է վանք և եկեղեցի[11]։

Նորագույն ժամանակաշրջանի գաղութներից պետք է հիշատակել Ալեքսանդրապոլսի (Դեղե-Աղաճ) հայկական գաղութը, որի առաջին բնակիչները եղել են այն 130 հայ բանվորները, որոնք 1872 թ. եկել էին Մշո շրջանից՝ կառուցվող Պոլիս-Սալոնիկ արևելյան երկաթգծում աշխատելու համար[12]։ Դժբախտաբար, այդ և ավելի հին ժամանակաշրջանի Հունաստանի հայության մասին մեր տրամադրության տակ չեն եղել արխիվային նյութեր և գրավոր վկայություններ, որոնք կարողանային լուսաբանել հին հայկական գաղութների ազգային ներքին կյանքը և հասարակական զանազան խավերի զբաղմունքները։ Սակայն հայտնի է, որ 1880-ական թվականներին, օրինակ, Սալոնիկի շուրջ 5 հազար մարդ հաշվող հայկական գաղութում և Մակեդոնիայի ու Թրակիայի մյուս քաղաքներում կային հայ պետական պաշտոնյաներ, դատաբանի, բանկային, փոստ-հեռագրատան աշխատողներ, վաճառականներ, անտառների ու հանքերի տեսուչներ, երկաթուղու մեքենավարներ, ոսկերիչներ, կահագործներ, երկաթագործներ, ձուլողներ և զանազան այլ արհեստների ներկայացուցիչներ, որոնք եկել էին Պոլսից, Էդիրնեից (ներկայումս Ադրիանապոլիս) և Փոքր Ասիայի տարբեր քաղաքներից։ Բազմաթիվ հայ բանվորներ այդ ժամանակներում

---

[11] Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1946, էջ 991։

[12] «Հունահայ Տարեգիրք», Աթենք, 1927, էջ 368։

գալիս էին նաև Հայաստանից, Շապին-Կարահիսարից և այլ քաղաքներից՝ Հունաստանի քրոմի հանքերում աշխատելու համար։ 1882 թ. Կորնթոսի ջրանցքի շինարարության առթիվ Հունաստան են փոխադրվում մի քանի հազար մշեցի բանվորներ, որոնց մի զգալի մասը մահանում է Կորնթոսում այդ շինարարության ընթացքում՝ աշխատանքային ծանր պայմանների և հիվանդությունների հետևանքով[13]։ 1893 թ., երբ վերջանում են ջրանցքի կառուցման աշխատանքները, հայ բանվորները ցրվում են Հունաստանի զանազան քաղաքները և աշխատում գործարաններում, արհեստանոցներում ու դյուղերում։

1890 թ. սկզբներին, հատկապես Գում-Կափուի (Կ. Պոլիս) ցույցից հետո (հուլիսի 15), Հունաստան են անցնում հայ փախստականների բազմաթիվ խմբեր, որոնք որոշ աշխուժություն են մտցնում գաղութի հավաքական կյանքում։ Ըստ երևույթին, սա կապված էր նաև այն իրողության հետ, որ նույն 1890 թ. Կ. Պոլսից Աթենք է փոխադրվում նաև հնչակյան պարտիայի կենտրոնական վարչությունը։ Աթենքում էին պատասխանել հնչակյան պարտիայի մի շարք հայտնի գործիչներ, ինչպես՝ Ռուբեն Խանազատյանը, Միհրան Տամատյանը, Ռշտունին, Պետրոս Գալֆայանը և ուրիշներ։ Կապ հաստատելով հույն նացիոնալիստների հետ, հնչակյան պարտիայի կենտրոնական վարչությունը պաշտոնապես մտնում է նրանց գաղտնի կազմակերպության մեջ։ Այս առթիվ «Հնչակ» ամսաթերթը իր 1891 թ. դեկտեմբերի 23-ի համարում, գրում էր, որ հնչակյան պարտիան «պաշտոնապես միացել է հռչակավոր Արևելյան դաշնակցության հետ (Անատոլիքի Օմոսպոնդիա-Confederation Orientale), որ կազմված է մակեդոնական, ալբանական և կրետական հույն հեղափոխական մասնախմբերից»[14]։

Պաշտպանելով թուրքական բռնապետության դեմ պայքարող մյուս ժողովուրդների ազգային-ազատագրական շար-

---

[13] Տե՛ս «Հունահայ Տարեգիրք», 1929, Գ. տարի, էջ 283։

[14] Տե՛ս «Հնչակ», 1891, № 16։

ժումները Հունական տիրող դասակարգերը հնազանդում էին իրենց դասակարգային նեղ շահերը։ Սրանց հետաքրքրում էր ոչ այնքան ժողովուրդների ազատագրությունը, որքան հունական հին տերիտորիաների միացումը Հունաստանին։ Հին տերիտորիաները վերամիավորելու գաղափարները յուրովի մեկնաբանվում էին ֆեոդալական արիստոկրատիայի և հունական խոշոր բուրժուազիայի էքսպանսիոնիստական նկրտումների հետ։ Նրանք այդ ամենը ժողովրդին մատուցում էին «մեծ իդեալի» քողի տակ, դրանով շարաշահում ժողովրդական մասսաների ազգային հայրենասիրական տրամադրությունները, որպեսզի նրանց ուշադրությունը շեղեն նաև երկրի դեմոկրատական վերափոխումների, մասնավորապես գյուղացիական-ագրարային հարցի լուծման համար մղվող պայքարից։ Ուստի բնական էր, որ նրանք փորձում էին ձեռք մեկնել իրենց այդ նկրտումներին համընկնող բոլոր շարժումներին կամ ուժերին։

1891 թ. հուլիսին, երբ հնչակյանները որոշել էին նշել Գում-Կապուի ցույցի առաջին տարեդարձը Աթենքում, հունական պաշտոնական մամուլը այդ հավաքույթին տալիս էր հակաթուրքական խոշոր ցույցի բնույթ, իսկ Արևելյան կոնֆեդերացիայի ղեկավարությունը թելադրում էր հնչակյաններին, որպեսզի սրանք պաշտոնապես հրավիրեն նաև կրետական, ալբանական, հունական կազմակերպություններին[15]։ Արևելյան կոնֆեդերացիայի հետ հնչակյանների համագործակցությունը թելադրված էր նրանց ընդհանուր տակտիկական այն դրույթով, ըստ որի հնչակյանները պարտավորվում էին պաշտպանելու ամեն մի շարժում, որ ուղղված էր կամ ուղղված կլիներ Թուրքիայի դեմ։

Հունաստանից մի շարք հայ քաղաքական գործիչներ, ինչպես, օրինակ, Միհրան Տամատյանը և ուրիշներ, 1891 թ. մեկնում էին Թուրքիա հայերի ապստամբական շարժումները կազմակերպելու համար, մինչ սուլթանական կառավարությունը ամենավայրագ ու գաժան մեթոդներով արդեն իրա-

[15] Տե՛ս «Հնչակյան մամուլ», Փարիզ, 1929, № 1—2։

գործում էր հայաջինջ քաղաքականությունը, զանազան տեսնելով արևմտահայ աշխատավորական մասսաների հետ։

Արևմտահայ աշխատավոր ժողովուրդը, հարկադրված էր սուլթանական Թուրքիայի սննկարագրելի բարբարոսություններին և 1895—1896 թթ. կոտորածների հետևանքով թողնել և հեռանալ Արևմտյան Հայաստանից և Թուրքիայի հայաշատ քաղաքներից։ Այդ պայմաններում սկսվեց մասսայական արտագաղթը Թուրքիայից։ Ֆիզիկական բնաջնջումից փրկվելու համար հայերը փախչում էին դեպի Ռուսաստան, բալկանյան, եվրոպական, ամերիկյան և այլ երկրներ։ Հայ գաղթականության մի զգալի մասը անցավ նաև Հունաստանում։ Հույն ժողովուրդը, որը մեծ համակրանքով էր հետևում արևմտահայ ազատագրական շարժումներին, եղբայրական ջերմ վերաբերմունք ցույց տվեց հայ գաղթականներին։ Հայ մեծ երգիչ Երվանդ Օտյանը, որ այդ գաղթականների հետ միասին հասել էր Հունաստան և Աթենքում հրատարակվող «Միություն» ամսաթերթի խմբագիրն էր, իր հուշագրություններում գրում է, թե այդ ժամանակ Պիրեա քաղաքը «Պոլսեն բազմաթիվ գաղթականներ կժամանեին, որոնց թիվը ամիս մը վերջը հազարի կհասներ։ Ասոնք հավուր հացի կարոտ էին»[16]։

Այդ գաղթականները մի ժամանակ տեղավորվել էին Պիրեա քաղաքի մոտակայքում գտնվող Ֆալերոյի դաշտում, զինվորական վրանների մեջ, և արժանացել էին հույն ժողովրդի եղբայրական օժանդակությանը։ Հատկանշական է, օրինակ, հույն դեմոկրատական ինտելիգենցիայի ներկայացուցիչների բարյացակամ վերաբերմունքը։ Նրանք հանդես էին կազմակերպել՝ դրանց հաստատությամբ հայ գաղթականներին օգնելու համար։ Երվանդ Օտյանը իր հուշագրություններում վկայում է հետևյալը. «Առաջին անգամ հանգանակություն մը ձեռնարկեցինք, որ շնորհիվ հույն թերթերու աջակցության և ժողովրդին ուղղած ջերմ կոչերուն բավական լավ արդյունք տվավ։ Հետո թատերական ներկայացում մը

[16] Տե՛ս «Հունահայ Տարեգիրք», 1929, Դ. տարի, էջ 283։

կազմակերպեցինք Վարիեթե թատրոնին մեջ և հունաց Սառա Պեռնարը՝ տիկին Փառասկեվոպուլո ու իր խումբը անձնվիրաբար ներկայացուցին «Ֆրու-Ֆրու». հասույթի այդ քանի մը աղբյուրները, սակայն, շուտով սպառեցան»[17]։

Գաղթականական հոսանքի հետ միասին Հունաստան էին ժամանել ազգայնական պարտիաների բազմաթիվ գործիչներ ինչպես, օրինակ, Անդրեաս Մինասյանը, որ հանրածանոթ էր «Բարեպաշտ» անունով, Սիմոն Մանիկյանը, որ հայտնի էր որպես «հայոց դեսպան», Տիգրան Երկաթը, Արմեն Կարոն, Նշան Քեշիշյանը, Զարեհ Գոչյանը, Մաքսուդ Խանջյանը, Վահե Արզույանը, Սեդրակ Ամպարյանը և շատ ուրիշներ։

Բնորոշ է, որ 1897 թ. հույն-թուրքական պատերազմի ժամանակ հնչակյանները Հունաստանի տերիտորիայում կազմակերպում են 600 հոգուց բաղկացած մի կամավորական խումբ՝ խմբապետ Նշան Միրաքյանի հրամանատարությամբ, որը ակտիվ մասնակցություն է բերում պատերազմական գործողություններին, և պարգևատրվում հունական բանակի հրամանատարության կողմից[18]։ Պատերազմում հունական բանակի պարտությունից հետո չափազանց տագնապալի դարձավ հայ գաղթականության վիճակը, մասնավորապես այն կապակցությամբ, որ հաշտության բանակցությունների ընթացքում Եդհիմ փաշան, որը 1895 թ. Զեյթունի ապստամբները ճնշող թուրքական բանակի հրամանատարներից էր, հույն ներկայացուցիչներին առաջարկեց Աթենքի բոլոր հայ գաղթականներին հանձնել իրեն[19]։ Սա նշանակում էր դատապարտել այն հայերի հետ, որոնք արդեն ապաստան էին գտել Հունաստանում։ Թուրքերի այս առաջարկի հետևանքով հազարավոր հայ փախստականներ խուճապահար սկսեցին թողնել Հունաստանի ափերը և մեկնել զանազան հեռավոր երկրներ։ Այդ գաղթականությունից 1900 թ. Աթենք և Պիրեա քաղաքներում մնացել էր միայն 500 հոգի։ Չկար հայ-

---

[17] Տե՛ս Ն. Օտյան, Տասներկու տարի Պոլսեն դուրս (1896—1908) Կ. Պոլիս, 1914, էջ 79։

[18] «Հնչակյան Տարեգիրք», Փրավիտենս, 1931, էջ 200։

[19] «Հունահայ տարեգիրք», Աթենք, 1929, էջ 290։

կական դպրոց, եկեղեցի և կազմակերպված հավաքական կյանք[20]։ Չնայած այս դժվարին պայմաններին և գաղութի սակավաթվությանը, այնուամենայնիվ Եվրոպայի մյուս գաղութների նման, Հունաստանի հայ գաղութը ևս, որ ենթակա էր էջմիածնի կաթողիկոսի իրավասությանը, 1900 թ. կապեր է հաստատում Պոլսի պատրիարքարանի հետ,[21] իսկ 1908 թ. սեպտեմբերի 22-ին պաշտոնապես ճանաչվում է հունական կառավարության կողմից[22]։

Հունաստանի հայկական գաղութի հետագա աճը կապված է 1909 թ. և մասնավորապես 1915 թ. Թուրքիայում ապրող հայերի կոտորածների հետևանքով սկսված մասսայական արտագաղթի հետ, հատկապես բալկանյան պատերազմներից և 1913 թ. Սալոնիկը Հունաստանին միացվելուց հետո։ Սակայն մինչև համաշխարհային պատերազմի վերջը հայերը համեմատաբար փոքրաթիվ էին, նրանց քանակը չէր անցնում 4—5 հազարից։ Սրանց մի զգալի մասը, հիմնավորապես հաստատվելով Հունաստանում, դարձել էր «տեղացի», այսինքն՝ հելլենահպատակ։

1915—1917 թթ. ժամանակաշրջանում հունահայ գաղութում սկսվում է հավաքական կյանքի որոշ աշխուժացում. արդեն ստեղծվում են տեղական մի քանի համայնքներ՝ իրենց թաղական խորհուրդներով, դպրոցներով, եկեղեցիներով և այլն։ Այսպես ձևավորվում է Սալոնիկի համայնքը, որը կապ է հաստատում հունական իշխանությունների կողմից արդեն պաշտոնապես ճանաչված Աթենքի հայ թեմի հետ։ Ուշագրավ է այն, որ թաղական խորհուրդն իր նիստերում (1915 թ. հունվարի 25-ի, օգոստոսի 3-ի) «Աղբատախնամ» և «Բարեսիրական» կազմակերպություններ ստեղծելու հետ մեկտեղ, որոշում է վավերացնել «Հայաստանի կարոտյալներու օժանդակ մարմնի» կազմությունը։ Ըստ որում այդ «օժանդակ մարմնի»

---

[20] 1897 թ. Աթենքում բացվել էր առաջին մատուռը։

[21] Տե՛ս Կ. Պոլսի պատրիարքարանի 1900 թ. հոկտ. 26-ի № 520 պաշտոնագիրը, «Հունահայ տարեգիրք», Աթենք, 1929, էջ 295։

[22] Նույն տեղում, 1913 թ. հունվարի 9, № 117 պաշտոնագիրը, էջ 221։

խնդիրն էր՝ հոգալ հայ կամավորական խմբերի անհրաժեշտ կարիքները[23]։

Բնորոշ է այս շրջանի համար նաև այն, որ զաղութի ազգային մարմիններն սկսում են զբաղվել զաղութի համար ընդհանուր կենսական հարցերով, ինչպես, օրինակ, ազգապատկան գույքի հաշվառման, մարդահամարի կազմակերպման, հունական բանակում հայերի զինվորագրման հետ կապված խնդիրները։ Ի դեպ, այս վերջին հարցով Աթենքի և Սալոնիկի հայ ազգային մարմինները համատեղ դիմում են ներկայացնում հունական կառավարությանը (1916 թ. օգոստոս), որպեսզի հայերը ևս հույն զաղթականների նման զերծ մնան զինվորական ծառայությունից։ Այս պահանջը բավարարվում է։

Այս շրջանում հունահայ փոքրաթիվ զաղութի ազգային մարմինները զբաղված էին հիմնականում ազգային հավաքական կյանք ստեղծելու խնդիրներով, մի բան, որ նրանց մասամբ հաջողվում է։

Այդպես էր դրությունը ընդհուպ մինչև 1920-ական թվականների սկիզբները, որը և բնութագրում է հունահայ զաղութի նորագույն շրջանի նախապատմությունը։

* * *

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիայի հաղթանակի, Հայաստանում սովետական կարգերի հաստատման, կապիտալիստական շահագործման և ռեակցիայի դեմ միջազգային պրոլետարիատի մղած հերոսական մարտերի ազդեցության տակ արտասահմանի հայ աշխատավոր ժողովրդի կյանքում տեղի ունեցան արմատական փոփոխություններ։

Առաջին իմպերիալիստական պատերազմից և Հատկապես III ինտերնացիոնալի հիմնադրումից հետո (1919 թ. մարտ) ափյուռքահայ զաղութների հասարակական կյանքում հան-

---

[23] Ա. Մակարյան. «Յուշագիրք», էջ 104։

դեռ եկան կոմունիստական, բանվորական և դեմոկրատական բազմաթիվ կազմակերպություններ, կոմունիստական ու դեմոկրատական թերթեր ու պարբերականներ, որոնք անհաշտ պայքար ծավալելով հայ ազգայնական պարտիաների քաղաքականության ու գաղափարախոսության դեմ, հայ աշխատավորական մասսաներին համախմբում էին կոմունիստական պարտիաների մարտական դրոշի տակ, Սովետական Միության և Սովետական Հայաստանի պաշտպանության համար։ Այդ երկարամյա անխոնջ աշխատանքի շնորհիվ սփյուռքահայ աշխատավորության բացարձակ մեծամասնությունը հաստատակամ կերպով ներկայումս կանգնել է խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալիզմի համար ժողովուրդների մղած պայքարի առաջավոր դիրքերում։ Այդ պայքարում նա ավել է բազմաթիվ զոհեր, որոնք անթառամ փառքով են պսակել իրենց՝ կոմունիզմի հաղթանակի համար սեփական կյանքը զոհաբերող այլազգի հաղարավոր ազնիվ մարտիկների հետ միասին։

Առանց խորը հարգանքի և հուզմունքի չի կարելի հիշել սփյուռքահայ աշխատավորության ծոցից ելած, պրոլետարական ռևոլյուցիոն շարժման շարքերում կոփված և առնականացած բազմաթիվ անձնվեր կոմունիստ-ռևոլյուցիոներների։ Անխոնջ մարտիկ, ականավոր ռևոլյուցիոն գործիչ Ստեփան Շահբազյանը զազանաբար սպանվեց բուլղարական ֆաշիստական դահիճների ձեռքով 1923 թ. սեպտեմբերյան ժողովրդական ապստամբության ժամանակ։ Հպարտության ու պարծանքի զգացմունք է համակում ամեն մի հայ աշխատավորի սիրտը, երբ նա լսում է Ֆրանսիայի կոմպարտիայի շարքերում դաստիարակված, համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին ֆրանսիական ինտերնացիոնալ պարտիզանական ջոկատների մարտական ղեկավար Միսաք Մանուշյանի սխրագործությունների մասին, որը զնդակահարվեց 1944 թվականին։ Անմահության փառքով իրեն պսակեց կոմունիզմի բոցաշունչ մարտիկ Վահրամ Սաքայանը, որն իրեն ամբողջությամբ նվիրաբերեց ռևոլյուցիոն շարժմանը Հունաստանում։ Երկարամյա բանտարկությունից ազատվելով, նա

Ա 37109 II

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ

չեսնված տոկունությամբ ու հավատով նորից լծվեց ռևոլյուցիոն գործունեության, կազմակերպելով հունահայ աշխատավորության ակտիվ մասնակցությունը գերմանական և իտալական օկուպանտների դեմ հույն ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարին։ Ձերբակալվելով 1944 թվականին՝ նա տանջամահ արվեց ֆաշիստների կողմից։ Բազմաթիվ հայրենասերներ ընկան դաշնակ տեռորիստների գնդակներից, մինչև վերջ հավատարիմ մնալով իրենց դեմոկրատական գաղափարներին ու սոցիալիստական հայրենիքին։

Սփյուռքահայ աշխատավորության դասակարգային զարթոնքը ցայտուն կերպով դրսևորվեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիայից հետո ծայր առած միջազգային բանվորական շարժման վերելքի ազդեցության տակ, հատկապես Ամերիկայում, Ֆրանսիայում, Բուլղարիայում, Հունաստանում և այլուր։

Պատմական զարգացման օբյեկտիվ ընթացքով, կոմունիստական պարտիաների ռևոլյուցիոն գործունեության և ազդեցության ծավալման, նրանց կողմից մասսաներին նվաճելուն համեմատ, սփյուռքահայ աշխատավորությունը դարձավ միջազգային բանվոր դասակարգի մարտական զինակիցը, և իր ազատագրման երկարամյա իղձերը կապեց խաղաղության, դեմոկրատիայի ու սոցիալիզմի հաղթանակի հետ։

Պատմական այդ իրողության լուսաբանումն իր բոլոր դրսևորումներով, անշուշտ, կարոտ է լուրջ ուսումնասիրությունների։

Ներկա աշխատության մեջ մենք փորձ ենք կատարել լուսաբանելու հունահայ գաղութի նորագույն շրջանի պատմության հիմնական հարցերը, տալ նրա հասարակական-քաղաքական կյանքի համառոտ պատմությունը, ցույց տալ հայ աշխատավորների ակտիվ մասնակցությունը Հունաստանի ռևոլյուցիոն շարժումներին, հիմնականում ընդգրկելով Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիայից հետո ընկած ժամանակաշրջանը՝ ընդհուպ մինչև 1927—1928 թթ.։

Ձեռնամուխ լինելով դեռևս չուսումնասիրված այդ հարցի մշակմանը, մենք մեր տրամադրության տակ չենք ունեցել

գաղութի ազգային մարմինների և հասարակական կազմակերպությունների արխիվային նյութերը, Հունաստանի արտաքին գործերի մինիստրության, հատկապես օտարահպատակների բաժնի տվյալները կամ այս ուղղությամբ կատարված հետազոտություններ։ Մինչև այժմ հրապարակված ուսումնասիրություններն, առանձին փոքր հոդվածների ձևով, գրված են տարբեր պարբերականներում և ամբողջական բնույթ չեն կրում։ Հունահայ գաղութի պատմությանը նվիրված աշխատություններից առավել ծավալունը պետք է համարել Ա. Հ. Մակարյանի «Յուշագիրք Թրակիոյ և Մակեդոնիոյ հայ գաղութներու» գործը, որ լույս է ընծայվել 1929 թ. Սալոնիկ քաղաքում։ Սակայն դա ևս ունի մասնակի ուսումնասիրության բնույթ, քանի որ հեղինակը նպատակ չունենալով ուսումնասիրել գաղութի ամբողջական պատմությունը, սահմանափակվել է միայն Մակեդոնիայի և Թրակիայի շրջանի հայկական համայնքների անցյալի հետ առնչվող առանձին փաստերի նկարագրումով, իսկ բոլորովին աչքաթող են արվել հունահայ աշխատավորության կյանքն ու նրան հուզող հարցերը։ Հեղինակի անցյալի կապերը դաշնակցության հետ և նրա բուրժուա-նացիոնալիստական մատյանությունը իրենց բացասական դրոշմն են դրել գաղութի նորագույն շրջանի պատմության որոշ հարցերի լուսաբանության, հատկապես առաջադիմական կազմակերպությունների և մասնավորապես ՀՕԿ-երի հայրենասիրական գործունեության բնութագրման վրա։

Հունահայ գաղութի պատմությանը վերաբերող որոշ տեղեկություններ կան Բեյրութում հրատարակվող «Ամենուն տարեգրքի» 1957 թ. համարում տպագրված Սալոնիկի դաշնակների «Ալիք» և «Հորիզոն» թերթերի նախկին խմբագիր Կարո Գևորգյանի «Հուշեր»-ում։ Այս հեղինակը, որ հունահայ գաղութում հայտնի էր կոմունիստական ու դեմոկրատական կազմակերպությունների դեմ մղած իր կատաղի պայքարով, փորձ է կատարում արդարացնելու դաշնակցության ազգադավ քաղաքականությունը։

Գաղութի պատմության մասին որոշ տվյալներ կան Աթենքում լույս տեսած «Հունահայ տարեգրքի» 1927, 1928, 1929, 1930 թվականների հրատարակություններում, ինչպես նաև արտասահմանի հայրենակցական միությունների հրատարակած մի շարք աշխատություններում, ինչպես օրինակ՝ Գր. Հ. Գալուստյանի «Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն» (Նյու-Յորք, 1934) աշխատության մեջ։ Այստեղ մասնավորապես տեղեկություններ են բերված 1921 թ. Կիլիկիայի դեպքերից հետո Հունաստան գաղթած մարաշցիների մասին։ 1890-ական թվականների հունահայ գաղութի կյանքի մասին արժեքավոր տեղեկություններ կան Երվանդ Օտյանի «Տասներկու տարի Պոլսեն դուրս» (1896—1908) աշխատության մեջ, որ հրատարակվել է 1914 թվականին Կ. Պոլսում։

Գաղութի վերջին շրջանի պատմության մասին որոշ տվյալներ կան նաև Ս. Գասպարյանի «Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր» (Հայպետհրատ, Երևան, 1962) և Ա. Անդրեասյանի «Սփյուռքը և հայրենիքը» (Բեյրութ, 1962) աշխատություններում։

Քննադատաբար մոտենալով հիշատակված հրատարակություններին և առանձին հոդվածներին, մենք մեր աշխատության մեջ օգտվել ենք առավելապես ՍՄԿՊ ԿԿ տրամիր Մոսկվայի մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի, նրա հայկական ֆիլիալի պարտիական արխիվների, Մոսկվայի և Երևանի պետական կենտրոնական պատմական արխիվների, Հայկ. ՍՍՌ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի և սոց. շինարարության պետական կենտրոնական արխիվի, Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվի, ՍՍՌՄ արտաքին քաղաքականության արխիվի նյութերից։ Այդ աղբյուրների փաստական սակավ նյութը լրացրել ենք Հունաստանի կոմպարտիայի հրատարակած «Աշխատանք», «Ժողովուրդի ձայն», «Նոր Շարժում» հայկական թերթերի, թռուցիկների, կոչերի, Հունաստանի կոմպարտիայի պատմա-ռևոլյուցիոն հրատարակությունների, նրա համագումարների և պլենումների որոշումների, ինչպես նաև Հունաստանի ռևոլյուցիոն շարժմանը մասնակից ընկերների հիշողությունների, սփյուռքահայ մա-

մուլի ընձեռած նյութերով՝ ուսումնասիրվող ժամանակաշրջանը ըստ հնարավորին ամբողջական և ըստ ամենայնի ճիշտ լուսաբանելու համար: Ըստ որում հունահայ դեմոկրատական մամուլից բացի, երբեմն դիմել ենք դաշնակների մամուլին («Նոր Օր», «Ալիք») առավելապես դեմոկրատական թերթերի բացակայության ժամանակաշրջանին վերաբերող որոշ փաստական տվյալների ճշգրտման և հատկապես նրանց ռեակցիոն գերի մերկացման նկատառումներով:

Ղեկավարվելով Հայաստանի կոմպարտիայի XXII և XXIII համագումարների որոշումներով, մենք փորձ ենք կատարել ցույց տալու հունահայ գաղութի առաջադիմական բոլոր ուժերի միասնական պայքարը դաշնակցության ավանտյուրիստական քաղաքականության դեմ, հնչակյան և ռամկավար պարտիաների հակադաշնակ-հայրենասիրական գիրքորոշման ընդհանուր առմամբ դրական նշանակությունը:

Մեզ համար ուշագրավ է հանդիսացել Հայաստանի կոմունիստական պարտիայի XXII համագումարի ցուցումն այն մասին, որ մենք մտադիր չենք հայ ազգային պարտիաներին գաղափարական որևէ զիջում անել. բայց մենք ողջունում ենք նրանց հայրենասիրական գործունեությունը:

Հավատարիմ մնալով պատմական ճշմարտությանը, մենք միաժամանակ ցույց ենք տվել նրանց անհետևողականության կոնկրետ դրսևորումները, հակահայրենասիրական տատանումները, որոնք արդյունք էին այդ պարտիաների որոշ գործիչների բուրժուա-նացիոնալիստական մտայնության ու վարքագծի: Ուրախալի երևույթ է այն, որ մասնավորապես հնչակյան պարտիայի շարքային անդամների էվոլյուցիայի պրոցեսը նշանավորվում է արդի դարաշրջանի համար բնորոշ սոցիալ-քաղաքական խոշոր տեղաշարժերի պայմաններում խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալիզմի հարաճուն ուժերի հաղթարշավի մեջ նաև նրա շարքային կազմի հայրենասիրական տարրերի և առաջավոր գործիչների նորանոր խավերի ներգրավմամբ: Դա էլ հենց մարդկության առաջա-

դիմական ուժերի պատմական անկասելի աճի արտահայտությունններից մեկն է սփյուռքահայության մեջ։

Վերջում կկամենայինք ասել, որ սույն ուսումնասիրությունը մենք դիտում ենք որպես մի համեստ փորձ հունահայ զաղութի ամբողջական պատմությունը ստեղծելու ճանապարհին։

ԳԱՂՈՒԹԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՅ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

ՀԱՅԵՐԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԳԱՂԹԸ ՀՈՒՆԱՍՏԱՆ ԱՌԱՋԻՆ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

Հունահայ գաղութի թվական աճի և հասարակական-քաղաքական դերի բարձրացման կարևորագույն ժամանակաշրջանը սկսվում է համաշխարհային իմպերիալիստական առաջին պատերազմից հետո, երբ մասսայական գաղթ է սկսվում դեպի Հունաստան։ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիայի գաղափարների ձգողական մեծ ուժի և Հայաստանում սովետական կարգերի հաստատման պատմական փաստի, ինչպես նաև հունական պրոլետարիատի ռևոլյուցիոն պայքարի ազդեցության տակ հայ աշխատավորությունը սկսում է ապրել դասակարգային ինքնագիտակցության ու զարթոնքի պրոցես։

Հայերի մասսայական գաղթը դեպի Հունաստան կապված էր այն պատմական տեղաշարժերի և դաժան իրադարձությունների հետ, որոնք կատարվեցին այդ տարիներին Թուրքիայում։

Օգտվելով պատերազմական դրությունից, երիտասարդ Թուրքերի կառավարությունը որոշեց ավարտել այն չարագործությունը, որ սկսվել էր դեռևս արյունարբու սուլթան Աբդուլ Համիդի իշխանության ժամանակներից։ Նախօրոք գինովցնելով հայերին, երիտասարդ Թուրքերի կառավարությունը գերմանական իմպերիալիստների հետ միասին,

1915 թվականին կազմակերպեց մարդկային պատմության մեջ չտեսնված մասսայական կոտորածներ, որոնց նպատակն էր իսպառ բնաջնջել հայ ժողովրդին։

Ռուսական բանակի կողմից Վանը գրավելուց անմիջապես հետո, 1915 թ. մայիսին, Թուրքական կառավարության որոշմամբ սկսվեցին հայերի մասսայական տեղահանությունները։ Արևմտահայաստանի բոլոր քաղաքներից, Անատոլիայի և Թուրքիայի մյուս հայաշատ կենտրոններից ավելի քան մեկ ու կես միլիոն մարդ արտաքսվեց իր հինավուրց բնակավայրերից և էտապային կարգով քշվեց Սիրիայի ու Միջագետքի անապատները։ Հայ բնակչության մի մասը կոտորվեց տեղում, իսկ մնացածը զոհ գնաց աքսորի ճանապարհին՝ սովի, հիվանդությունների, ծեծի ու վայրագ սպանությունների ամենադարհուրելի տառապանքներին։ 1915—1916 թթ. զգալիորեն կոտորվեց ավելի քան մեկ և կես միլիոն հայ, իսկ վերապրողներից շատերը, հասնելով Միջագետքի անմարդաբնակ անապատները, գոհ դարձան համաճարակային հիվանդությունների կամ մահացան սովից։ Մոտ 350 հազար արևմտահայեր ռուսական զորքերի օգնությամբ զաղթեցին Անդրկովկաս և Հյուսիսային Կովկաս, մոտավորապես 600 հազար փախան և ապաստանեցին Մերձավոր արևելքի և բալկանյան երկրներում, Եվրոպայում և Ամերիկայում։ Հայ ժողովրդի արտագաղթը մասսայական բնույթ ստացավ, ծնունդ տալով օտար հարիզոնների վրա հայկական նորանոր գաղութների։

Հույն-Թուրքական պատերազմի տարիներին, տասնյակ հազարավոր արևմտահայեր հարկադրված եղան նորից մասսայորեն արտագաղթելու։ Կիլիկիացիների մի մասը գաղթում է դեպի Սիրիա և Լիբանան, մնացած մասն անցնում է բալկանյան երկրները և մասնավորապես Հունաստան։

Հունական բանակի պարտությունից հետո, 1922 թ. սեպտեմբերին, Իզմիրի հայությունը նույնպես մասսայական փախուստի դիմեց դեպի Հունաստան և այլ երկրներ։ Իզմիրի հայ բնակչության գաղթը, կիլիկիացիներից հետո, գաղթականական երկրորդ հոսանքն էր դեպի Հունաստան, որի հետևանքով

վանքով մեծապես աճեց Հունահայ գաղութի թվական կազմը։

Մասնավորապես գաղթականական երրորդ հոսանքը Հունաստան հասավ Թրակիայի շրջանի պարպումից հետո, որ տեղի ունեցավ 1922 թ. հոկտեմբերի 11-ին, Անտանտայի (Ֆրանսիա, Անգլիա, Իտալիա) և Թուրքիայի միջև Մուդանիայում կնքված համաձայնագրի հիման վրա։ 1914—1918 թթ. համաշխարհային պատերազմից հետո Արևմտյան Թրակիան անցավ Հունաստանին։ 1920 թ. Սևրի դաշնագրով Հունաստանը ստացավ նաև Արևելյան Թրակիան։ Սակայն 1919—1922 թթ. հույն-թուրքական պատերազմում Հունաստանի պարտությունից հետո, 1923 թ. հուլիսի 24-ին Լոզանում կնքված հաշտության պայմանագրի հիման վրա Թրակիայի արևելյան մասն ամբողջությամբ նորից վերադարձվեց Թուրքիային, իսկ քեմալականների պահանջով այդ դաշնագրում նախատեսվեց ազգաբնակչության փոխանակումը Թուրքիայի և Հունաստանի միջև։ Հարյուր - հազարավոր հույն բնակչության հետ միասին Արևելյան Թրակիայից դեպի Մակեդոնիա և Արևմտյան Թրակիա փոխադրվեցին տասնյակ հազարավոր հայ գաղթականներ։ Մինչև 1922 թ. նոյեմբեր ամիսը Արևելյան Թրակիայից գաղթեցին 38 հազար հայեր[1]։ Այդ գաղթականների մի շատ փոքր մաս (1600 հոգի) անցավ Բուլգարիա։

Այսպես. Կիլիկիայի, Իզմիրի, փոքրասիական բազմաթիվ ծովափնյա քաղաքների և Արևելյան Թրակիայի հայ գաղթականության մեծագույն մասը, 1921—1922 թ., իր հույն բախտակիցների նման՝ խեղճ ու թշվառ վիճակում, ապաստան գտավ Հունաստանում։ Հունահայ գաղութն այդ տարիներին դարձավ ամբողջահայ ամենահոծ գաղթավայրերից մեկը։

1928 թ. մարդահամարի պաշտոնական տվյալների համաձայն, 1918—23 թթ. Հունաստանում ապաստան էին գտել 1.221.849 մարդ՝ բոլոր ազգերի գաղթականներ։ Այդ ընդհանուր թվից 626.954 մարդ (52 տոկոսը) եկել էին Փոքր-Ասիայից։ Մնացած գաղթականությունը եկել էր Արևելյան Թրա-

---

[1] Տե՛ս «Երկունք», Պիրեա, 1922, № 12։

կիայից՝ 256.635 մարդ, Բուլղարիայից՝ 49.027, Պոլսից՝ 38.458, Կովկասից, Պոնտոսից և Ռուսաստանից՝ 240.695, Ալբանիայից և Սերբիայից՝ 10.080 մարդ[2]։

Փոքրասիական դեպքերի հետևանքով Ալբանիայում, Դոդեկանեզյան կղզիներում, Ռումինիայում, Կիպրոսում, Եգիպտոսում և այլուր ապաստան գտած գաղթականությունը նույնպես հոսում է դեպի Հունաստան։ Այսպիսով Հունաստան հասած 1.221.849 մարդ գաղթականության ընդհանուր թվից 980. 000 հոգի կազմում էին հույները, իսկ մնացած 241. 849 հոգին պատկանում էին այլազգիների թվին, որոնց մեծամասնությունը կազմում էին հայերը։

Այդ ժամանակաշրջանի հայ գաղթականության ընդհանուր թվի մասին պաշտոնական ճշգրիտ վիճակագրական տվյալներ չկան։ Ըստ տարբեր տվյալների հայ գաղթականության ընդհանուր թիվը ընդունվում է 100-ից մինչև 120 հազար։

Հունաստանի արտաքին գործերի մինիստրության մամուլի բաժնի ղեկավար աշխատող Նիկիֆորոս Միխալակոպուլոսը 1924 թ. իր հրատարակած «Հայկական հարցը» գրքում նշում է, որ Թուրքիայից Հունաստան գաղթած հայերի թիվը 100 հազարի էր հասնում։ Հին և Նոր Հունաստանի հայ ազգային մարմինների 1924 թ. դեկտեմբերի 12-ի պաշտոնական տեղեկագրում, որ ուղարկվել էր Հունաստանի վարչապետին, հիշատակվում է 100 հազար հայ գաղթականության մասին, որ ապաստան է գտել Հունաստանում[3]։ 1930 թ. սեպտեմբերի 30-ին Ազգերի լիգայի 11-րդ նստաշրջանի 18-րդ նիստում

---

[2] Տե՛ս Գաղթականական դեսպանման հանձնաժողովի անդամ Ա. Պալիսի զեկույցը «Ուսումնական Տարեցոյց». Աթենք, 1929 թ., մարտի 31։

Կովկասից և Ռուսաստանից եկած գաղթականությունը գլխավորապես Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիայից հետո Հունաստանում ապաստան որոնող կովկասաբնակ հույն բնակչության ունևոր (բուրժուաառևտրական) տարրերն էին և մասամբ ջախջախված սպիտակ-գվարդիականության թափթփուկներ։ Ի դեպ, ուշագրավ է այն, որ այս հոսանքին խառնված որոշ աշխատավորական տարրեր, հետագայում էվոլյուցիա ապրելով ներգրավվեցին բանվորական ռևոլյուցիոն շարժման մեջ, որոնցից ոմանք նույնիսկ աչքի ընկնող դեր կատարեցին։

[3] Տե՛ս «Նոր օր», Աթենք, 1925, № 411։

իր արտասանած ճառում Հունաստանի պատվիրակ Պոլիտիսը, հիշատակելով հայ գաղթականների մասին, շեշտում էր, որ փոքրասիական աղետից հետո նրանց թիվը Հունաստանում հասնում էր 100 հազարի։ Հավանաբար այս նույն տվյալների վրա է հենվել «Մարաշ կամ գերմանիկ հերոս Զեյթուն» աշխատության հեղինակը, երբ գրում է, թե մինչև 1925 թ. «100. 000 հայեր մտան Հունաստան»[4]։ Այս թիվը ընդունում է նաև Աթենքի «Վերածնունդ» թերթը[5]։

Կան նաև մի շարք այլ աղբյուրներ, որոնք ավելի բարձր թվեր են ցույց տալիս։ Օրինակ, 1942 թ. սեպտեմբերին, Ազգերի լիգայի այդ նստաշրջանի Հունաստանի պատվիրակը, խոսելով գաղթականական ընդհանուր հարցի շուրջը, նշում է, որ հայ գաղթականների թիվը Հունաստանում հասնում է 120 հազարի[6]։

Հունաստանի արտաքին գործերի մինիստրության ընդհանուր քարտուղար Բ. Արգիրոպուլոսը «Հելլեն կառավարությունը և հայ գաղթականները» խորագրով իր հոդվածում, հենվելով 1922 թ. նոյեմբերի սկզբներին կազմված Նանսենի տեղեկագրի տվյալների վրա, հայ գաղթականների թիվը համարում է 120 հազար հոգի[7]։ Նույնը հաստատում են նաև մի շարք ուրիշ հեղինակներ։

Հունահայ գաղութի թվական կազմի վերաբերյալ այս տվյալները հիմնականում ճիշտ են[8]։

Կան նաև չափազանցված տվյալներ, ինչպես, օրինակ, Մալթայի ասպետների պետ՝ իշխան Կիտցիի բերած թվերը։

---

[4] Տե՛ս Գր. Հ. Գալուստյան, Մարաշ կամ գերմանիկ հերոս Զեյթուն, Նյու-Յորք, 1934, էջ 855։

[5] Տե՛ս «Վերածնունդ», 1937, № 6։

[6] Տե՛ս «Տեղեկագիր ազգային կենտրոնական վարչության», «Նոր օր», 1925, 470։

[7] «Նոր ալիք», Սալոնիկ, 1924, № 215։

[8] Ուրիշ հեղինակներ տալիս են ավելի նվազեցրած թվեր։ Առաբել Պետրոսյանը, օրինակ, Աթենքում հրատարակվող «Երկիր» թերթում (1963 թ., № 331) գրել է, որ Հունաստանում ապաստան գտած հայ գաղթականների թիվը 80.000 էր։ Նույն կարծիքին է նաև Կ. Գևորգյանը (Բեյրութ, «Ամենուն տարեգիրք», 1957 թ.)։

Սա, որպես հատուկ պատվիրակության գլխավոր, 1924 թվականին այցելելով Հին և Նոր Հունաստանի գլխավոր քաղաքները, զբաղվել էր հայ գաղթականության հարցերի ուսումնասիրությամբ: Հռոմում «Ջորնալե դ'Իտալիա» թերթի խմբագրության ներկայացուցիչների հետ ունեցած իր զրույցի ժամանակ իշխան Կիտցին ներկայացրել էր Հունաստանի հայերի թիվը 200 հազար հոգի, մի բան, որ չի համապատասխանում իրականությանը: Ըստ երևույթին, իշխան Կիտցին յուրովի դարձել էր հունական ռեակցիայի այն շրջանների խոսափողը, որոնք այդ օրերին արդեն սկսել էին ազգուկ բարձրացնել Հունաստանում ապաստան գտած հայերի պատսպարման իբր անկարելիության մասին, այդ նպատակով հատկապես չափազանցնելով հայ գաղթականության ընդհանուր թիվը:

Պաշտոնական ռեակցիոն շրջանները և նրանց մամուլը երկրի տնտեսական ծանր վիճակի, հույն և հայ գաղթականության դժվարին զրության բուն պատճառներից՝ բուրժուական կարգերից ու կառավարության հակաժողովրդական քաղաքականությունից հույն աշխատավորության ուշադրությունը շեղելու համար, դիմում էին այդ էժանագին դեմագոգիային, պահանջելով հայ գաղթականների փոխադրումն այլ երկրներ, որպես թե դրանով պետք է հաղթահարվեին հույն ժողովրդի բարօրությանը խանգարող պատճառները:

Սակայն այս ռեակցիային ըստ էության հակադրվելու, նրա բուն էությունը մերկացնելու փոխարեն հունահայ գաղութի ազգային մարմինները որպես հակահայկական խաչակրության դեմ պայքարելու միջոցի, դիմում էին նաև հայ աշխատավոր գաղթականության ընդհանուր թիվը նվազեցնելու հնարին: Հայերը բոլորովին էլ չէին կարող բեռ նկատվել Հունաստանի համար, քանի որ նրանց բացարձակ մեծամասնությունը աշխատունակ հայ բանվորներ ու արհեստավորներ էին: Հունական բուրժուազիայի ավելի խելամիտ և զգաստ խավերը, ինչ խոսք, գայթակղվում էին աշխատավոր հայ գաղթականության էժանագին բանվորական ձեռքերը շահագործելու հեռանկարից և ավելի զուսպ էին իրենց քաղաքա-

կան վարքագծում, պրակտիկ կյանքում էլ հարազատ մնալով իրենց դասակարգային ոգուն, փորձում էին առիթից օգտվել, «ողորմածարար» իրենց ձեռնարկություններում աշխատանքի ներգրավելով հայ գաղթական աշխատավորների։

Այս ամենից հետո պարզ է դառնում, թե ինչու Հունական ռեակցիան այդպես ազմուկ էր բարձրացնում հայ գաղթականների հարցի շուրջն ընդհանրապես, և նրանց քանակի շուրջը՝ մասնավորապես։

Բնորոշն այն է, որ հույն աշխատավոր ժողովուրդը ոչ միայն որևէ կերպ չէր արձագանքում Հունական ռեակցիային, այլ, ընդհակառակը, իրեն հատուկ ասպնջականությամբ էր ընդունում «գաղթական եղբայրներին»։

Հունական ռեակցիան չհրաժարվեց իր ազգային խտրականության և հայերի նկատմամբ շովինիստական տրամադրություններ հրահրելու վարքագծից, բայց և այնպես հենց բուրժուազիայի տարբեր խավերի ներքին հակասությունները, ապա և գաղթականների, մասնավորապես հայ գաղթականության հարցի դեմոկրատական հասարակական կարծիքի առարկա դառնալը, նույնիսկ Ազգերի լիգայում այդ հարցի հատուկ քննարկումը, վերջին հաշվով, բարենպաստ հող ստեղծեցին Հունաստանում հայ աշխատավորների տեղավորման համար։

Այսպես, հիշատակված շուրջ 120 հազար հայ գաղթականության մոտ 50 հազարը 1922 թ. վերջերին ապրում էր Հին Հունաստանում և կղզիներում, մնացած մասը տեղավորվել էր Նոր Հունաստանի շրջաններում՝ Մակեդոնիայում և Արևմտյան Թրակիայում[9]։

Միայն Աթենք և Պիրեա քաղաքներում ու նրանց արվարձաններում ապրում էին ավելի քան 30 հազար հայ գաղթականներ[10], որոնք «տեղավորվել» էին խուլ և անմարդաբնակ ծայրամասերում, եկեղեցիների բակերում և բացավայրերում՝ Դուրգութի (Ֆիքս), Սինկրու, Քիֆիսիա, Կոկինիա, Լիփազմա,

---

[9] «Երկունք», 1922, № 21։

[10] Նույն տեղում։

Տրապեզոնա և խոշորագույն այլ հայաշատ գաղթավայրերում։ Կրետե, Սամոս, Միտիլինի, Քիոս, Սիրա, Զաքինթոս, Կորֆու և այլ կղզիներում հայ գաղթականությունը ստեղծել էր փոքր համայնքներ։ Քիոս կղզում, օրինակ, ապաստան էին գտել երկու հազար հայ, Միտիլինիում՝ երկու հազար (1921-հուլիս), Կրետե և Սամոս կղզիներում՝ երեք հազարից ավելի հայեր և այլն։

Հայ գաղթականների մեծ խմբեր ցրվել էին նաև Պելոպոնեսի քաղաքներում և Թեսալիայի շրջաններում։ Գաղթականական խոշորագույն կենտրոն էր դարձել Սալոնիկ քաղաքն իր բազմաթիվ հայաշատ արվարձաններով, ինչպես նաև Մակեդոնիայի (Կավալա, Դրամա, Սերեզ, Ֆլորինա, Կոզանա և այլն) և Արևմտյան Թրակիայի (Կոմոտինի-Գյումյուլճինա, Քսանթի, (Իսքեչե), Ալեքսանդրապոլիս (Դեդե-Աղաճ), Դիմոթիկա և ուրիշ բազմաթիվ քաղաքներն ու գյուղերը։ Միայն Կավալա քաղաքում, 1924 թ. մայիս ամսի վիճակագրական տվյալների համաձայն կար 1900 հայ, իսկ եթե հաշվի առնենք նաև շրջակա գյուղերը, նրանց թիվը հասնում էր մինչև 2700-ի։ Դրամայում 1924 թ. սեպտեմբերին կային 2500, Կոզանայի շրջաններում՝ 2000, Ալեքսանդրապոլսում՝ 1370 հայ[11]։

Տառապելով սովից և վարակիչ հիվանդություններից, ծայրահեղ թշվառության հասած, կիսամերկ և անօթևան հայ աշխատավորությունը ցրվել էր Հունաստանի բազմաթիվ քաղաքներում ու գյուղերում։ 1921—1924 թթ. հունահայ աշխատավորության համար ամենադժվարին տարիներն էին՝ իրենց ֆիզիկական գոյությունը պահպանելու համար մղվող պայքարում։ Դժվար էին այդ տարիները նաև հույն գաղթականների և աշխատավոր ժողովրդի համար։

Հունահայ աշխատավորական մասսաների ծանր վիճակի մասին կենդանի պատկերացում տալու համար հիշատակենք մի քանի փաստեր։

---

[11] «Նոր Ալիք», Սկանիկ, 1924, № 159։

Աթենքից Կ. Պոլսի Պատրիարքարան ուղարկած իր առաջին նամակում, 1922 թ. հոկտեմբերին, Ղևոնդ եպիսկոպոս Դուրյանը գրում էր, թե Իզմիրում և փոքրասիական մյուս քաղաքներում բարեկեցիկ կյանք ունեցող հայ գաղթականները «Այսօր Հունաստանի մեջ հետին շքավորության մատնված են, ոչ զգեստ ունին, ոչ ուտելիք»[12]։ Հունաստանի գաղթականներին սպառնացող ամենամեծ վտանգը այդ ժամանակ տրախոման էր, որով վարակված էին հայ գաղթականների 70 տոկոսը[13]։

1922 թ. հոկտեմբերի 26-ին «Միտիլլիի Զմյուռնիո հայ գաղթականաց հանձնաժողով»-ը հատուկ կոչով դիմեց սփյուռքահայ բոլոր կազմակերպություններին՝ խնդրելով շտապ կարգով ուղարկել օգնություն (դրամ, հագուստեղեն, դիշերվա ծածկոցներ և այլն)՝ «քաղցն և մերկությունն»[14] տառապող հայ գաղթականների համար։

Սալոնիկից դուրս, զանազան բացավայրերում ցրված, ինչպես և Հարման գյուղ անվան տակ ճանաչված գաղթականում հազարավոր հայ և հույն գաղթականների համար իբրև բնակարան ծառայում էին անգլիական զինվորների բարաքները. դրանք չունեին ապակեպատ պատուհաններ, ավելի շուտ նման էին խոշոր անկելանոցների, ուր ամփոփված էին բոլոր տեսակի թշվառությունները։

«Երկունք» թերթում մի ականատես՝ Մ. Ֆարաջյանը նկարագրում է Պիրեա քաղաքի Լիփազմա կոչվող խոշորագույն գաղթականության հայ բնակչության դրությունը. «Ոմանք հյուղակներու մեջ, իսկ շատեր բաց պատերու տակ անպատսպար մնացած են. թիֆյուսը, հարսանեթն ու թշվառությունը օրեօր կյանքեր կհնձեն, մեռելները անթաղ կմնան օրերով»[15]։

Դժոխային պայմաններում էին ապրում նաև Ֆալերո արվարձանի մոտ Իվի թաղամասում տեղավորված հայ գաղթականները։ Բացարձակ թշվառության հետևանքով երեք

---

[12] Տե՛ս «Ժողովուրդի ձայնը», Կ. Պոլիս, 1922 թ., № 1234։

[13] Նույն տեղում, № 1090։

[14] Նույն տեղում, № 1948։

[15] «Երկունք», 1922, № 19։

հարյուր հայ ընտանիքից 1924 թ. սկզբներին մնացել էին միայն 150 ընտանիք. հիսուն տոկոսը մահացել էր զանազան հիվանդություններից: 1923 թ., միայն վեց ամսվա մեջ, այդ թաղամասում 300 երեխա մահացել էր մալարիայից և հյուծախտից:

Հայ բարեգործական ընդհանուր միության բժիշկ Վահրամ Մարտիկյանը 1924 թ. մայիսին այսպես է նկարագրում այդ գաղթականների բնակավայրերից մեկը, որը բնութագրական է բոլորի համար:

«Երևակայեցեք մութ ընդարձակ սրահ մը, գետինը քար, խոնավ և դարշահոտ, իրը պատուհան կծառայեն քանի մը նեղ լուսամուտներ, ուրկե երկինք չի տեսնվիր...»[16]:

Հասարակական կազմակերպությունների և մամուլի ներկայացուցիչներից բաղկացած հանձնախմբեր և առանձին լիազորված մարդիկ հատուկ հանձնարարությամբ այդ տարիներին տեսչական շրջագայություններ էին կատարում հայաշատ գաղթականների դրությունն ուսումնասիրելու համար: Իվիի գաղթականի մասին այդ հանձնախմբերի անդամներից մեկը տալիս է հետևյալ վկայությունները.

«Կարմիր այտերով, կայտառ մեկ հոգի՝ իսկ չհանդիպեցանք: Բոլորն ալ գունատ, դեղնած, աշխեր փոս ընկած, փորը ուռեցած ու նդղած բաներ էին: *Իսկապես խղճալի էր տեսնել մանուկներ, որոնք հազիվ 6-7 ամսու երեսուին ունեն և, սակայն, երբ մայրերուն կհարցնենք, որ մեկը մեկուկես տարեկան, որ մեկը երկուք կամ ավելի ըլլալը կհայտնեին: Շատ քիչ բացառությամբ բոլորն ալ մալարիայեն կտառապին, կան նաև մեկ քանի հայտնի թոքախտավորներ:*

Այդ խավարամած, օդն ու արևն զուրկ վայրը բնական է թե պիտի զործեր իր ավերը:

....Անցյալի պատմություններին զարհուրելի է: Չիս տարին ու ցուցուցին անկյուն մը, ուր պզտիկ տակառներ կմնային և բոին թե հոն ամեն օր տասնյակներով մեռյալ կլեցվեր ու կդիզվեր և հանախ օրերով կմնար: Մեռած մանուկներու թիվը, որ կուտան՝ ահռելի բան է և զրեթե չկա մայր մը, որ մեկ

[16] *«Նոր օր», 1924, № 192:*

կամ երկու զավակ կորսնցուցած շքլլա ֆոն.... Նախապես գաղթականներու թիվը անհամեմատ մեծ է եղեր և, սակայն, ի վիճակի եղողները ձգեր փախեր են...»[17]։

Այսպիսի ծանր պայմաններում էր գտնվում հունահայ գաղթականության մեծամասնությունը գրեթե բոլոր քաղաքներում ու գյուղերում։ Այդ տարիներին սովորական երևույթ էր դարձել սրտաճմլիկ կոչերի հրատարակությունը, որոնք հունահայ աշխատավորության տնտեսական վիճակը վկայող ամենաճշգրիտ պատմական փաստաթղթերն են։ Արտասահմանի հայերին ուղղված այդպիսի կոչերից մեկում, օրինակ, կարդում ենք.

«Ամերիկայի, Եգիպտոսի, Ֆրանսիայի և այլուր գտնվող կելիպոլուցի և չանաք-գալեցի ազգայիններին կխնդրվի անմիջական նյութական օգնություն հասցնել Արզոստոլիոյի (Կեֆալոնիա) մեջ գտնվող մեր հազար հոգի մերկ ու անոթի իրենց հայրենակից գաղթականներուն»[18]։

Կարապետ արքեպիսկոպոս Մազլումյանի նախագահությամբ կազմված Սթենքի Ազգային վարչական ժողովի 1923 թ. հունիսի հրապարակած կոչում շեշտվում է, որ հունական կառավարությունը նույն թվականի մայիս ամսից դադարեցրել է ամեն մի օժանդակություն հայ գաղթականներին, իսկ Ամերիկյան Կարմիր խաչը բոլորովին հեռացել է հրապարակից՝ սովի ու հիվանդության ճիրաններին հանձնելով հունահայ գաղթականներին։

Նկարագրելով հայ գաղթականների համար ստեղծված ծանր դրությունը, «երբ աննկուն մայրեր, դեռատի կույսեր, մանկատի աղաքներ ենթարկված են սպառնալիքին՝ անոթության, մերկության և համաճարակին», կոչի հեղինակները օգնություն էին խնդրում արտասահմանի հայերից՝ «քանի ուշ չէ»[19]։

---

[17] «Նոր օր», 1924, № 234 (ընդգծումները մերն են—Պ. Կ.)։

[18] «Երկունք», 1923, № 28։

[19] Տե՛ս կոչը, «Ժողովուրդի Ձայնը—Ժամանակ», Կ. Պոլիս, 1923, № 1434։

Սամոս կղզու Կարլովա գյուղաքաղաքում գտնվող 110 հայ գաղթականների ժողովի անունից գրված նամակում, որ ուղարկվել էր 1922 թ. դեկտեմբերի 22-ին, ասվում է. «Ներկայումս այլևս ոչինչ մնացած չէ, որ ծախենք և պետքերնիս հոգանք. պետք ունինք նպաստի և հոգացողության»[20]։

Այսպիսի նամակներ ստացվում էին բոլոր գաղթականներից։

Պատահական չէ, որ հունահայ գաղութի առաջին ազգային մարմինները հարկադրված էին գլխավորապես զբաղվելու հայ գաղթականների ֆիզիկական գոյության պահպանման հրատապ հարցերով։ 1922 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Աթենքում արդեն գոյություն ուներ «Արկածյալների նպաստի հանձնախումբը», որի նպատակն էր կազմակերպել արտաքսմանի հայությունից ստացվող նպաստների բաշխումը հայ գաղթականությանը։ Նշենք, որ հայ աշխատավորության առաջավոր տարրերը այդ ժամանակ պայքարում էին բոլոր հայաշատ թաղամասերում ընտրովի մարմինները ստեղծելու համար, որոնք պետք է զբաղվեին նպաստաբաշխության գործով։ Միայն Աթենք և Պիրեա քաղաքներում կային 32 գաղթականներ, որոնցից 20-ը գտնվում էր Պիրեայում, իսկ 12-ը Աթենքում։ Հարյուրավոր գաղթականներ կային ամբողջ Հունաստանում։

Դաշնակցական տեսաբանների կողմից 1933 թ. դեկտեմբերին Ամերիկայում ապանված Իզմիրի նախկին առաջնորդ Գևորգ եպիսկոպոս Դուրյանը, որ ազատից հետո փրկված՝ 1922 թ. հոկտեմբերին գտնվում էր Աթենքում, ձեռնամուխ եղավ գաղթական հայ աշխատավորությանը սկզբնական օգնություն կազմակերպելու գործին, հատկապես արտաքսմանի հայության միջոցներով։ Նա հատուկ հեռագրերով ու նամակներով դիմեց այսպես կոչված Ազգային պատվիրակության նախագահ Նորատունկյանին, Պողոս Նուբար փաշային, Պոլսի Ազգային պատրիարքարանին, Հալեպի, Փարիզի, Եգիպտոսի, Լոնդոնի, Մանչեստրի, Կալկաթայի և արտաքսա-

[20] «Երկանք», 1922, № 15։

մանյան այլ գաղութների հայերին, խնդրելով նրանց եղբայրական օգնություն Հունաստանի ազնյալ հայ գաղթականությանը։ Այդ կոչերն արձագանք գտան սփյուռքահայ ժողովրդի մեջ։ Եգիպտոսի հայ գաղութը, օրինակ, Հունաստանի գաղթականության համար ուղարկեց 700 անգլիական, Մանչեսթրի գաղութը 100 անգլիական ոսկի, Լոնդոնի հայ գաղութը՝ կոշիկ ու հագուստեղեն և այլն[21]։

Սակայն հունահայ աշխատավորության ծով կարիքի նկատմամբ արտաքսմանյան օգնությունը չնչին էր։ Այդ մասին են վկայում հունահայ մամուլում հրատարակված հետևյալ տվյալները.

1922 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, հայկական թեմերի վիճակագրական տվյալների համաձայն, միայն Հին Հունաստանում և կղզիներում ցրված հայ գաղթականներից 30 հազար հոգի հացակարոտ էին, 35 հազար հոգի հագուստի և սպիտակեղենի անմիջական կարիք էին զգում, 30 հազար հոգի վերմակի, կոշիկի և օճառի կարիք ունեին, 5 հազար կաթնակեր մանուկներ կաթի և անհրաժեշտ սննդի կարոտ էին։ 1500 նոր որբեր մնում էին բոլորովին անպաշտպան, տասն հազար երկաթե երիտասարդներ սառապում էին կատարյալ գործազրկությունից[22]։

Սկզբնական շրջանում հայ գաղթականության մի մասը հույն գաղթականների հետ միասին որոշ նպաստ էր ստանում հունական խնամատարական մարմիններից, որոնց մոտ, որպես բացարձակ կարիքավորներ, արձանագրվել էին 65 հազար հայ գաղթականներ[23]։ Սակայն այդ բոլորովին չնչին օգնությունն էլ կառավարության որոշմամբ դադարեցվեց հայերի նկատմամբ մի շատ կարճ ժամանակից հետո։ Նպաստների չնչինության մասին պատկերացում տալու համար բավական է հիշատակել միայն մի քանի օրինակ։ Սամոս կղզու հայ գաղթականներին 1921 թ. հունիսի 15-ից, չորս ու

---

[21] «Երկունք», 1922, № 15։

[22] «Երկունք», 1922, № 14։

[23] Տե՛ս Պ. Արգիրոպուլոսի հոդվածը՝ «Հելլեն կառավարությունը և հայ գաղթականները», «Նոր Ալիք», Սմյոռնիկ, 1924, № 215։

կես ամսվա ընթացքում, բաշխվել էր յուրաքանչյուրին երկու և կես դրախմ դրամ, որից հետո այդ նպաստն էլ դադարեցվել էր։ Այդ էլ այն ժամանակ, երբ մեկ օխա[24] ալյուրը արժեր 8-10 դրախմ[25]։ 1923 թ. հունվարին արդեն դադարեցվել էր Պատրաս քաղաքի հայ գաղթականներին տրվող կերակրի բաժանումը. «Տասնհինգ օրե ի վեր միմիայն հաց կուտան մեզ,— գրում էին Պատրասից,— այն էլ սև հաց, 100 տրամ մի անձի գլուխ»[26]։

Կրեան կղզու Ռեթիմնո քաղաքի 1227 հոգուց բաղկացած հայ գաղթականությունը առանց այն էլ չնչին այդ նպաստի դադարեցումից հետո ապրում էր բոլորովին սովյալ վիճակում։

Որոշ գաղթականներում խարականության ոգին զգալի էր նպաստաբաշխության ընթացքում։ Գաղթականների զնահատման հանձնախմբի պաշտոնյաները,— գրում էին Կորֆու կղզուց,— «մինչև օրս չեն բարեհաճած բաժնված հագուստներեն ու կոշիկներեն հայերուն ալ մաս մը հանել։ Յուրաքանչյուր գաղթականի կարվի շորս օրը մեկ անգամ մը հաց և երբեմն ալ բացառաբար քիչիկ մը լուրիա[27]։

Եգեոնի հայ գաղթականները 1923 թ. խնամատարական մարմիններից յուրաքանչյուր անձի համար ստացել էին մի հնացած շապիկ և վեց դրախմ։ Վոլո քաղաքի 1500 գաղթականների բացարձակ մեծամասնությունը,— գրում էր «Երկունք» թերթի թղթակիցը, «ոչ հագուստ, ոչ դրամ և ոչ ալ սրեւէ զբաղում ունին և զրկված են ապրուստի ամեն միջոցներեն»[28]։ Դադարեցվել էր նաև ամերիկյան Կարմիր խաչի, ինչպես նաև անգլիական բարեգործական «Չիլդրեն ֆընտ» (Children Fund) ընկերության նպաստաբաշխությունը, որը

---

[24] Օխան 400 տրամ է, որ հավասար է 1200 գրամի։

[25] Դրախմը—հունական դրամ է, 100 դրախմը հավասար է 3 ռուբլի 02 կոպեկի։

[26] «Երկունք», 1922, № 22։

[27] «Ալիք», Սալոնիկ, 1923, № 76։

[28] «Երկունք», 1923, № 56։

կայանում էր անձին 50—75 գրամ հաց և առավոտները մի փոքր պնակ ապուր տալու մեջ։

Նպաստների հանկարծակի և միահամուռ դադարեցումը բոլոր գաղթականներում, երբ դեռ երկրում տիրող գործազրկության պայմաններում հայ աշխատանքորության մեծամասնությունը չէր կարողացել աշխատանքի տեղավորվել, մի նոր ու մեծ աղետ էր հայ աշխատավոր գաղթականների համար։

Այս ամենը տարբեր քաղաքներում առաջ էր բերում աշխատավոր գաղթականության տարերային բողոքներն ու ելույթները խնամատարական մարմինների կամայականության դեմ։ Հույն գաղթականների հետ միասին հայերը նույնպես մասնակցում էին իրենց իրավունքների համար տեղի ունեցող այդ ելույթներին։ Այսպես, օրինակ, 1922 թ. հունիսին Վոլո քաղաքում գաղթական հայ կանայք բողոքի ցույց են կազմակերպում Զեռեղման հանձնաժողովի մի ղեկավար պաշտոնյայի տան առջև, խմբովին պահանջելով կառավարական նպաստի իրենց հասանելիք բաժինը[29]։

Հունահայ աշխատավորությունն իր կենսունակության շնորհիվ և աննկուն կամքով միայն կարողացավ հաղթահարել այս ահավոր դժվարությունները և սեփական ուժերով փրկել իրեն ցրտից, անձրևից, քաղցից։ Հունաստանի քաղաքների բոլոր հայաշատ թաղամասերում և գյուղերում հայ աշխատավոր գաղթականները՝ տղամարդիկ, կանայք, տղաներ և աղջիկներ իրենց սեփական աշխատանքով, առանց որևէ օգնության, կառուցում էին իրենց խրճիթներն ու հյուղակները, ստեղծում օտարության մեջ հայկական օջախներ։

Շատ հայ պատանիներ ու երեխաներ փողոցներում ու սրճարաններում կոշիկ մաքրելով՝ ապրուստի միջոցներ էին հայթայթում իրենց ընտանիքների համար, մինչ աղջիկները զբաղվում էին մեծահարուստ տիկնանց համար ձեռագործներ ասեղնագործելով։ Հայ աշխատավոր գաղթականությունը ոչ միայն բեռ չէր դարձել Հունաստանի վրա, ինչպես հայտարա-

---

[29] Տե՛ս «Ժողովուրդի ձայնը», Կ. Պոլիս, 1922, № 1129։

ում էին ծայրահեղ ռեակցիոներները, այլ, ընդհակառակը, կարճ ժամանակվա ընթացքում սպառողի դրությունից անցել էր արտադրողների շարքերը, ձուլվել հույն աշխատավորների հետ, դառնալով Հունաստանի արդյունաբերական զարգացման ազդակներից մեկը, առանձնապես գործարարության, ջուլհակագործության, մետաքսագործության, շերամաբուծության, կաշեգործության, ադիբագործության և այլ բնագավառներում։

Նշենք, որ Փոքր Ասիայի ազատից առաջ Հունաստանում գործարարություն գրեթե գոյություն չուներ։ Թուրքիան բացարձակ մենաշնորհ ուներ այդ բնագավառում։ Մինչդեռ հայերի և հույների ներգաղթից հետո գործարարությունը զգալի չափով նվաճեց Թուրքիայում։ Հայ և հույն գաղթականները, փախչելով թուրքական հալածանքներից, իրենց հետ բերին նաև գործարարության արվեստն ու նրա զարգացման նոր հեռանկարներ բացեցին Հունաստանում։

Աթենքում գոյություն ունեցող առանձակ գործարանների աշխատավորության 40 տոկոսը կազմում էին հայ բանվորներն ու արհեստավորները։ Նորաստեղծ արվարձաններից միայն Կոկինիայում կար գործի 16 գործարան՝ 525 դաղդահով, Լիփազմայում՝ 7 գործարան 330 դաղդահով, Պոդարագեսում 14՝ 550 դաղդահով, Իլիսիայում 1՝ 15 դաղդահով, Ամպելոկիպոսում 2՝ 65 դաղդահով, Սինկրուում 3՝ 100 դաղդահով, Պանկրատիում 2՝ 45 դաղդահով, Դուրդուբիում (Ցիրս) 2՝ 37 դաղդահով և այլն[30]։

Հունաստանի մյուս քաղաքներում և շրջաններում նույնպես սավառնթիվ էին գործարանները։ Հայերը Քեռթահիայից Հունաստան բերին նաև հախճապակու արհեստագործությունը։ Հաղարավոր հայ բանվորներ ամենաշնչին վարձատրությամբ աշխատում էին բամբակի և մետաքսի մշակման գործարաններում, ծխախոտի, տեքստիլի ֆաբրիկաներում, հանքերում, կառույցներում, ամենուրեք, ուր պահանջվում էին աշխատունակ ձեռքեր։ Հայ գաղթականությունը Հունաստան մու-

---

[30] *«Հունահայ Տարեգիրք», 1927։*

ծեց նաև ձեռաբվեստը, մասնավորապես արևելյան ձեռագործի նուրբ արվեստը, և հասույթների նոր աղբյուր ստեղծեց Հունաստանի տնտեսության համար։ Աթենքում, Պիրեայում, Սալոնիկում և այլ քաղաքներում ստեղծվեցին հայկական ձեռագործի բազմաթիվ արհեստանոցներ ու փայատիրական կազմակերպություններ, որոնք հայ աղջիկների ու կանանց քրանաչան աշխատանքի ու մեծ վարպետության արդյունք մեծարժեք ձեռագործները արտահանում էին Հունաստանից ու բարձր գներով վաճառում միջազգային շուկաներում, մասնավորապես Ամերիկայում, Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում և այլուր։

Հայ գաղթական գյուղացին իր աշխատասիրությամբ վայելում էր հույն և այլազգի աշխատավոր գյուղացիության համակրանքը։ Քսանթիի շրջանի գյուղերում, ուր առաջ միայն ծխախոտ էր մշակվում, հայ գաղթականը կարողացել էր մշակել նաև ձմերուկ, այն էլ ստանալ շատ լավ արդյունք։ Կ. Պոլսի «Ժողովուրդի ձայնը - Ժամանակ» թերթի Սալոնիկի թղթակիցը վկայում է, թե Քսանթիի շրջանի տեղացի ժողովուրդը «տեսնելով հայոց ձեռնարկը, խրատած է զիրենք, որ ապարդյուն տեղ շաշխատին, հողը անջրդի և ձմերուկի համար անթույլատու ըլլալուն։ Հայ գաղթականը, սակայն, համառ աշխատանքով, հեռուներեն ջուր կրելով և ջրելով իր հողը, հաջողած է ձմերուկ հասցնել և զայն ծախելով լավ գներ գտած ու գրամագլուխ շինած է»։ Այսպիսի օրինակներ բազմաթիվ են։ «Անատոլուցի հայը,— շարունակում է թղթակիցը,— իր արհեստը, մասնագիտությունը փոխադրած է այստեղ։ Կեսարիոյ ատուխտը, Սպարթայի գորգը, Գոնիայի լեպլեպին, ձավարը, այստեղ կը պատրաստվին հիմա և ասոնք գլխավորապես հայոց գործն են»[31]։

Աթենքում հրատարակվող «Le Messager d'Athenes» կիսապաշտոնական թերթը, 1924 թ. հունիսի 10-ին գրում էր, թե գործունյա, մտացի, զարգացած հայերը աշխատանքի և առաջադիմության տարբ են կազմում, որոնց ներկայությունը ամեն տեղ օգտակար է։

[31] Տե՛ս «Ժողովուրդի Ձայնը—Ժամանակ», Կ. Պոլիս, 1924, N 171։

Տասնյակ հազարավոր աշխատունակ հայերի առկայությունը ամենաէժան բանվորական ուժի պահեստազոր էր հայ և հույն կապիտալիստ շահագործողների համար։ Աշխատանք, հաց և ապաստան որոնող աշխատավոր մարդիկ հարկադրված էին թափառել-դնալ Հունաստանի տարբեր շրջանները, բազաքներն ու գյուղերը՝ հաճախ համաձայնելով աշխատել ամենաշնչին օրավարձով։ Նրանք աշխատում էին և՛ որպես սեզոնային բանվոր, և՛ որպես բատրակ, ձեռնամուխ էին լինում ամեն մի աշխատանքի, որպեսզի որևէ կերպ դուրս գան մուրացկանի թշվառ դրությունից և պահպանեն իրենց ընտանիքների գոյությունը։

Տնտեսական ծանր դրության ահռելի հետևանքներից մեկն էր նաև հունահայ աշխատավորության վատնվող առողջական վիճակը։ Հայ գաղթականության մի մասը տեղավորվել էր կլիմայական տեսակետից վատառողջ, ճահճային շրջաններում, ինչպես, օրինակ, Մակեդոնիայում, ուր մալարիան հայ գաղթականի անբաժան ուղեկիցն էր դարձել։ Գրեթե մյուս բոլոր հայաշատ գաղթակայաններում տիրում էր բացարձակ հակասանիտարական դրություն։ Սննդի պակասության հետ միասին՝ այդ դրությունը նպաստում էր, որպեսզի մահն ու վարակիչ հիվանդությունները անողոք կերպով մկրատեն հունահայ աշխատավորության առանց այն էլ նոսրացած շարքերը։ «Ժանտատենդը,— գրում էին Կորֆուից 1923 թ. դեկտեմբերին,— կատաղի կերպով ճարակած է գաղթականության մեջ։ Կորֆու քաղաքը կայրի տնոր սարսափին տակ։ ...Կղզիին մեջ հայ գաղթականներու թիվը կհասնի 4. 000-ի, որոնցմե ցարդ համաճարակը հնձած է 960 հոգի, 420-ը՝ երիտասարդ կյանքեր ըլլալու պայմանով...»[32]։ 1923 թ. սեպտեմբերից մինչև դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակաշրջանում միայն Սալոնիկ քաղաքի 12 գաղթակայաններում մահացողների թիվը հասել էր մինչև 372 հոգու։

Հիվանդությունների մեջ ամենից ավելի աչքի էր ընկնում դրիպը և սակավարյունությունը։ Սալոնիկ քաղաքի 12 հազարից ավելի հայ գաղթականների բժշկական սպասարկման

[32] Տե՛ս «Ժողովուրդի Ձայնը», Կ. Պոլիս, 1923, № 1343։

համար միայն մեկ անվճար բժիշկ կար, որը, բնականաբար, որևէ հնարավորություն չուներ կազմակերպելու կարիքավորների լուրջ բուժումը: Սակայն ամենասարսափելին երեխաների և աճող երիտասարդ սերնդի առողջական վիճակն էր: Կոկինիայի հայ վարժարանի կրթական հանձնախմբի հանձնարարությամբ բժշկական քննության ենթարկված 300 աշակերտներից 100-ը հիվանդ էին տրախոմայով, իսկ մնացածները ենթակա էին վարակման վտանգին: Նույն վիճակն էր տիրում նաև վրանաբնակ Լիփազմայի և ուրիշ գաղթականների վարժարաններում: Հայ բարեգործական ընդհանուր միության բուժակների 1923—1924 թթ. գործունեության մասին հրապարակված պաշտոնական տեղեկագրում, որ ստորագրված էր բժիշկներ Արսլանի և Վ. Մարտիկյանի կողմից, շեշտվում է, որ «ամբողջ Լիփազման ազատության մեջ կմնար, ամեն տեղ գարշահոտություն կտիրեր, ճեմիշներու չգոյության պատճառով կայուն ազատ ջրերը մեծապես կնպաստեին մալարիայի տարածման: ...Մալարիան գաղթականության անբաժան ընկերը և թոքախտը անոթության ծնունդ՝ կշարունակեն իրենց ավերները»[33]:

Տեղեկագրում ընդգծվում էր, որ եթե Բարեգործական ընկերությունը շհետաքրքրվի հունահայ գաղթականների վիճակով, «անոնք դատապարտված են բառին բովանդակ առումով մեռնելու»:

1924 թ. վերջերին Լիփազմա գաղթականում հակասանիտարական պայմանների հետևանքով խոլերան իսկական համաճարակի բնույթ էր ընդունել և սկսել էր իր ահավոր արշավը կատարել հայ և հույն աշխատավորների ընտանիքներում: Բժիշկ Վ. Մարտիկյանը վկայում է, որ «ծծկեր երեխաներեն մինչև ծերերը վարակված են մալարիայով»: Ժանտախտը «գրեթե համաճարակային» բնույթ էր ստացել Լիփազմայում. ժանտախտի հետ միասին հայտնաբերվել էին «թոնչքի բազմաթիվ դեպքեր»[34]: Այսպես էր վիճակը գրեթե բոլոր գաղթականներում:

---

[33] «Նոր Օր», 1924, № 187:

[34] «Նոր օր», № 347:

Հունահայ աշխատավորությունը 1922—1924 թթ. գտնվում էր տնտեսական և առողջական ամենածանր ու դժվարին պայմաններում և լարում էր սեփական բոլոր կենսական ուժերը իր ֆիզիկական գոյությունը պահպանելու համար։ Ավելի ևս անմխիթար էր աճող հայ երիտասարդության դրությունը, որի մի զգալի մասը կորցրել էր ծնողներին, որբացել 1915 թ. կոտորածների ու համաշխարհային առաջին իմպերիալիստական և հատկապես 1920—1922 թթ. հույն-թուրքական պատերազմների ժամանակ և գտնվում էր չափազանց ողբալի վիճակում։

Կիլիկիայի և Իզմիրի աղետալի դեպքերի հետևանքով հազարավոր որբացած մանուկներ ու պատանիներ Հունաստան հասան ընդհանուր գաղթականական հոսանքի հետ, որոնք անտեր ու անպաշտպան, մերկ ու անոթի թափառում էին գաղթական քաղաքներում և գյուղերում, զոհ դառնալով հիվանդությունների, սովամահության, փողոցի ապականիչ ազդեցության և այլ տառապանքների։ Իսկ այն պատանի որբերը, որոնք իրենց «բախտավոր» էին համարում մի փոքր աշխատանք ճարելու դեպքում՝ ենթարկվում էին գործատերերի չարաչար շահագործման։ «Երկունք» թերթն այդ առթիվ գրում էր. «Անչափահասներու աշխատանքի շահագործման դեմ գոյություն ունեցող միջազգային պաշտպանիչ օրենքները կարծես թե այս թշվառներու նկատմամբ բնավ երբեք կիրառելի չեն»[35]։

1922 թ. նոյեմբերի 20-ին Պոլսից դեպի Հունաստան ճամփա եկավ հայ որբերի առաջին քարավանը Կուլելիի և Եսի-Կուլեի որբանոցների հայ որբերից բաղկացած, թվով 2700 հոգի, որոնք ուղղակի փոխադրվեցին Հունաստանի Կորֆու կղզին՝ իրենց մոտ 100 ուսուցիչների հետ միասին։ Նոյեմբերի ժամանումից հետո Հունաստանում գոյացավ բազմահազար հայ որբություն։ 1923 թ. ապրիլ ամսին որբերը, ըստ Հունաստանի տարբեր վայրերի, բաժանվում էին հետևյալ կերպ.

---

[35] «Երկունք», 1922, № 2։

Եռոպոսի որբանոցում՝ 7500 հոգի, Լուսաբիայում՝ 3300, Կորֆուում՝ 2720, Օրոպոսում՝ 2000, Զափիոնում՝ 2000, ընդամենը՝ 17.520 հոգի[36]։

Հետագայում այդ թիվը ավելի ևս բարձրացավ՝ հասնելով մոտավորապես 20 հազար հոգու։ Կազմակերպվեցին նոր որբանոցներ, ինչպես Սիրա կղզում, Կորնթոսում և այլուր։

Մերձավոր արևելքի Ամերիկյան նպաստամատույցի 1925 թ. մարտին հրատարակած տեղեկագրի տվյալների համաձայն, 1924 թ. վերջերին Հունաստանի որբանոցներից իրրև տասնհինգ տարին լրացրած չափահասներ, դուրս էին եկել 12.212 հայ որբեր[37]։ Ամերիկյան նպաստամատույցը հրաժարվում էր այլևս հայ որբերի խնամքից և ուսուցման հոգսից[38]։

Դրամայի մոտակայքում գտնվող Խորիսոի (Զաթալճա) գյուղը, 1923—1924 թվականներին դարձել էր ամերիկյան որբանոցներից արձակված հազարավոր հայ չափահաս որբերի հավաքատեղին, ուր նրանք սպասում էին հույն կալվածատերերի և կուլակների այցելությանը՝ իրենց բանվորական ուժը նրանց առաջարկելու համար։ 1923 թ. հունիսին միայն Կավալայից Դրամա էին հասել ավելի քան 1000 որբեր, Կորֆուից՝ մոտ 400 որբեր, և նույն քանակությամբ նաև ուրիշ տեղերից։ Բոլորը գտնվում էին անօգնական վիճակում։ Այդ որբերի նամակներից մեկում ասված է. «Երբ մեզմեն անջատվող խումբը կառնեն գյուղ մը կը տանին, նախ կը լեցնեն բակի մը մեջ, հաճախորդները կհավաքվին անոնց - շուրջ, կը նեն և հավնածներն կառնեն մեջեն»[39]։ Այսինքն՝ կալվածա-

---

[36] «Երկունք», 1923, № 46—47։

[37] Տե՛ս Մերձավոր արևելքի ամերիկյան նպաստամատույցի («Նիրբ Իսա սրլիֆիթ») տեղեկագիրը, «Ալիք», Սելանիկ, 1925, № 620։

[38] Այս հեռացողներից մոտ հիսուն տոկոսը հանձնվել էր իրենց հայանարերված ծնողներին, 115 հոգի սրդեցրվել էր անզավակ ընտանիքների կողմից, 1492 հոգի ուղարկվել էր Մակեդոնիայի կալվածատերերի և կուլակների տնտեսություններում աշխատելու, 718 հոգի աշխատում էր որբանոցների վարչության «Հեկոդուբյան» տակ, իսկ մնացած որբերը ցրվել էին երկրի տարբեր ծայրամասերը՝ տարկական ձրի աշխատանքով փորձելով տիրապետել զանազան արհեստների։

[39] Տե՛ս «Ժողովրդի ձայնը—Ժամանակ», Կ. Պոլիս, 1923, № 1383։

տերերն ու կուլակները ընտրում էին որբերի միջից ֆիզիկապես առավել ուժեղներին ու կայտառներին իրենց մոտ աշխատեցնելու համար։

Ամերիկյան որբանոցները, նախքան չափահաս որբերին «ազատ» արձակելը, ստրկավաճառի պայմանագրեր էին կնքում բուրժուական ծխախոտագործական մի շարք ընկերությունների հետ։ Այդ պայմանագրերի համաձայն՝ հայ որբերին տեղավորում էին ծխախոտի մշակության հայտնի շրջաններում՝ Կավալայում, Դրամայում, Քսանթիում, Սերեզում և այլուր, ուր հայ երիտասարդ որբերը միանգամայն չնչին օրավարձի փոխարեն շենացնում էին կալվածատերերի ու կուլակների տնտեսությունները։ Իսկ նրանց որպես աշխատավարձ տրվող չնչին գումարներն էլ գանձվում էին և յուրացվում որբանոցների տնօրինության կողմից։

1924—1925 թթ. միայն Մակեդոնիայի շրջանի մեծ ու փոքր գյուղերում իբրև բատրակ աշխատում էին 3000 չափահաս հայ որբեր։

Անցնելով անասելի տառապանքների բովով ու չափահաս դառնալով՝ նրանք ձուլվում էին հույն պրոլետարիատի հետ գործարաններում ու ֆաբրիկաներում։ Հետագայում հենց նրանք էլ սկսեցին ակտիվ կերպով մասնակցել իրենց ղժբախտության ու անհեռանկար կյանքի միակ պատճառը հանդիսացող կապիտալիստական կարգերի դեմ մղվող ռևոլյուցիոն մարտերին։

Ամերիկյան և անգլիական նպաստամատույցների ներկայացուցիչները «մարդասիրության» քողի տակ ֆրանսիական կապիտալիստական ընկերությունների հետ պայմանագրեր էին կնքել երկու հազար հայ որբերի վաճառքի մասին՝ ամենակայտառ, զեղեցիկ ու ֆիզիկապես տոկուններին ջոկելու պայմանով, որոնց Ֆրանսիա փոխադրելով՝ հանձնում էին գործարանատերերին ու կուլակներին[40]։ Պատանի որբերը

[40] Բեռլինից ուղարկված մի նամակում ասված է. «Անցյալ տարի 300-ի չափ 14 տարեկանն վեր որբեր տարվեր են Ֆրանսա, ուր Լիոնի կողմերը գյուղացի ազարակատերերու ծախվեր են։ Այս տղաքը կատանան օրական 1

տարերայնորեն ընդվզում էին, հենց որ որևէ կերպ իմանում էին իրենց վաճառքի առարկա դառնալու մասին։ Նրանցից ոմանք փախուստի էին դիմում դեռ շոգենավերից՝ նավահանգիստներում մինչև իրենց նոր տերերին հանձնվելը, ուրիշներ արդեն մասնայորեն լքում էին կապիտալիստների գործարանները ու հողատերերի կալվածները։

Այս ամբողջի երևույթը, որ բնորոշ էր ամերիկա-անգլիական բարեգործական ընկերությունների ոչ միայն Հունաստանի, այլև մյուս երկրների ներկայացուցիչների համար, գրավեց դեմոկրատական հասարակայնության և մամուլի ուշադրությունը։ Դեմոկրատական հասարակայնությունը պահանջում էր պատել վաճառման բոլոր պայմանագրերը, հայ որբերին ազատել նման «հոգատարությունից» և նրանց խնամքը հանձնել Սովետական Հայաստանի կառավարությանը։ Այս ամենը հանգեցրին նրան, որ Ամերիկյան նպաստամատույցի կենտրոնը հարկադրված եղավ, օրինակ, Սիրիայի իր ներկայացուցիչներին կարուկ հրահանգ տալու, որպեսզի դադարեցվի որբավաճառությունը, դրանով փորձելով մի կերպ «փրկվել» հասարակական կարծիքի դատաստանից։ Սակայն պայմանագրեր կնքած տերերը հեշտությամբ չէին հաշտվում աշխատող էժան ձեռքերը կորցնելու մտքի հետ, և պահանջում էին կետ առ կետ կատարել պայմանագրերը։ Այսպես, ֆրանսիական մի ընկերություն հասել էր այն բանին, որ Ամերիկյան նպաստամատույցը որբերի նոր քարավաններ ուղարկի իր տրամադրության տակ[41]։

Սակայն հայ որբերը լուռ ու անտրտունջ կերպով չէին հաշտվում իրենց վիճակի հետ։ Նրանք պայքարում էին շահագործման և հատկապես ծեծի ու զանգակոծման դեմ, որ լայնորեն կիրառվում էր Ամերիկյան նպաստամատույցի որբանոցներում։

Հատուկ վտանգ էր ներկայացնում մատաղ սերնդի նկատմամբ ամերիկացիների վարած ապազգայնացման քաղաքա-

---

ֆրանկ վարձք, բառին ամենանեղ իմաստով, իրապես չըմեռնելու չափ հաց, փոխարեն օրական 16—18 ժամ չարաչար աշխատանքի։ Տե՛ս «Ժողովուրդի ձայնը—Ժամանակ», Կ. Պոլիս, 1924, № 1726։

[41] «Նոր Ալիք», 1924, № 84։

կանությունը, որն իր պաշտոնական արտահայտությունը գտավ մասնավորապես 1923 թվականի սկզբներին Աթենքում գումարված ամերիկյան «մարդասերների» անդրանիկ ժողովում։ Այստեղ որոշվեց վերջ տալ նպաստամատույցի որբանոցներում հայերեն լեզվով տարվող դաստիարակությանը։ Այդ ժողովից հետո հրատարակվեց 1923—1924 թթ. ուսումնական տարվա այսպես կոչված «խառն դաստիարակության կրթական ծրագիրը», որի գլխավոր նպատակն էր մի հարվածով ոչնչացնել հայերեն դասավանդումը որբանոցներում, դրանք ամբողջապես փոխադրելով հունարեն դասավանդման մեթոդին։ «Մարդասերների» այս քայլը շահեցված գայլուշի առաջացրեց հունահայ գաղութում։ Ծրագրի մերկացմամբ հանդես եկան հայկական դեմոկրատական մամուլն ու հասարակական կազմակերպությունները, քանի որ այն, հասկանալի պատճառներով, շոշափում էր ողջ գաղութի շահերը։

Մասսայական ելույթների ճնշման տակ Ամերիկյան նպաստամատույցը խոստացավ նկատի առնել հասարակական կարծիքը։ Սակայն դա ժամանակավոր մանևր էր։ 1923 թ. օգոստոսի 27-ին տեղի ունեցած կոնֆերանսում ամերիկացի ժողովականները, միասին վերցրած, նորից պահանջեցին հանել հայերեն դասավանդումը։ Սակայն հունահայ հասարակական կարծիքի ճնշումից վախեցած՝ այդ պահանջը նրանք չկարողացան հասուն որոշումով ձևակերպել։ Բայց հետո՝ 1925—1926 թթ. ուսումնական տարում հիմնական փոփոխությունների ենթարկեցին որբանոցների ուսումնական ծրագիրը, և դասավանդման հիմք ընդունելով հունարենը, հայերենը դասեցին օտար լեզուների թվում։ Բանը հասնում էր այնտեղ, որ ամերիկյան «բարերարները» նույնիսկ արգելում էին որբերին խոսել իրենց մայրենի լեզվով։

Ուշադրավ է այն փաստը, որ հայ ժողովրդի՝ որբանոցներում աճող այս տարաբախտ զավակները նույնպես թեակոխում են հասարակական գործոնների փուլը, սկսում են կազմակերպվել ու պայքարել սարկական ռեժիմի դեմ, ստեղծել իրենց դեմոկրատական կազմակերպություններն ու որոշ որբանոցներում նույնիսկ հրատարակել իրենց ձեռագիր և

ապակեապիպ թերթերը, ինչպես, օրինակ, «Պրիսմակը», «Կամքը»[42] «Լորդ Մեյրս ֆրնտի» Կորֆուի որբանոցում՝ 1923—1924 թթ.։ Այս թերթերում լույս էին ընծայվում շնորհալի որբ պատանիների հայրենասիրական բանաստեղծությունները, որոնք մոտիկ անցյալը պատկերող ակնարկները և առաջ բաշվում որբանոցային կյանքի որոշ հրատապ հարցեր։ Այս ամենը որբ պատանեկության մեջ դաստիարակում էր Սովետական Հայաստանի հանդեպ նվիրվածության ոգի։

Հայ որբությունը 1924—1927 թթ. համարյա գլխավին ներգրավվեց հունահայ գաղութի երիտասարդական դեմոկրատական կազմակերպություններում, իսկ նրա առաջավոր տարրերը հետագայում դարձան Հունաստանի կոմերիմիությունի անդամ մարտիկները, հունահայ երիտասարդության ռևոլյուցիոն ջոկատը։

Հայ որբության հարցը սերտորեն կապված էր աճող երիտասարդ սերնդի ազգային-դեմոկրատական ոգով դաստիարակման հարցի հետ և կազմում էր նրա բաղկացուցիչ մասը։ Հունահայ աշխատավորությունը հենց դրա վրա էլ կենտրոնացրեց իր ուշադրությունը։ Գաղութի զրեթե բոլոր հայաշատ թաղամասերում ստեղծվեցին հայ ազգային վարժարաններ, որոնք ի տարբերություն կաթոլիկների ու բողոքականների հակազդության տակ գործող դպրոցների, դառնում էին ազգայնացման դեմ մարտնչող հայ մշակույթի ու ազգային դեմոկրատական դաստիարակության օջախներ, մի բան, որ պայմանավորված էր նաև թաղական խորհուրդների և դպրոցական հոգաբարձությունների կազմում դիրքեր գրաված սոցիալական ուժերի հարաբերակցությամբ։ Հայ ազգային վարժարանները, սկսելով իրենց ազգանվեր ու առաջադիմական գործունեությունը հյուղակներում ու փայտաշեն խարխուլ տարհներում կամ պատահական շենքերում, երկար տարիներ

[42] «Պրիսմակ» և «Կամք» թերթերի խմբագրական կոլեգիաների կազմում եղել են Մ. Մարտիկյանը, Դ. Ավետիսյանը և ուրիշներ։ Հետագայում առաջինը դառնում է հունական բանվորական ռևոլյուցիոն շարժման ակտիվիստներից մեկը, իսկ երկրորդը ֆրանսահայ ռևոլյուցիոն բանաստեղծ Սեման է, որը զոհվել է Ֆրանսիայում Դիմադրության շարժման ժամանակ։

իրենց գոյությունը պահպանում էին թե ուսումնական և թե առողջապահական տեսակետից ամենավատթար պայմաններում։ Հայ մանուկները, մեծ մասամբ կիսաքաղց, հաճախում էին դասերին, դրսևորելով դիտելիքներին տիրապետելու իրենց անսասան կամքն ու ցանկությունը։ Անձնուրաց աշխատանք էին տանում այդ պայմաններում կրթական մշակները, որոնք ուսումնական ու դաստիարակչական քրտնաջան իրենց աշխատանքի չնչին վարձատրությունն իսկ կանոնավոր չէին ստանում։

Ազգային վարժարաններն իրենց գոյությունը պահպանում էին բոլորովին անբավարար բյուջեով, որի 2/3-ը կազմվում էր աշակերտների կողմից մուծվող ուսման վարձից, իսկ մնացածը հայթայթվում էր Բարեգործական միության ու թաղական խորհուրդների կողմից զանազան հանգանակների, ներկայացումների և այլ միջոցառումների կազմակերպման միջոցով։ Մի շարք խոշորագույն գաղթականություններում հայ աշակերտների թիվը 1924—1925 թթ. ուսումնական տարում հասել էր, օրինակ, Ֆիքսում՝ մինչև 450-ի, Սինկրուում՝ 250-ի, Լիփազմայում՝ 300-ի, Կոկինիայում՝ 250-ի և այլն,

Հայկական վարժարանները հնարավորություն չունեին ընդգրկելու դպրոցահասակ բոլոր պատանիներին, որոնք հարյուրներով թափառում էին փողոցներում։ 1925 թ. Սալոնիկում 1330 դպրոցահասակ պատանիներից միայն 890-ն էին հաճախում զանազան դպրոցներ[43]։

Բազմաթիվ աշխատավորական ընտանիքներ հնարավորություն իսկ չունեին մուծելու իրենց երեխաների ուսման սահմանված վճարը։ Անհրաժեշտ երաշ էր հունահայ աշխատավոր երիտասարդության համար բարձրագույն ուսում ստանալը, որը ունևոր դասակարգի զավակների մենաշնորհ իրավունքն է կապիտալիստական բոլոր երկրներում։

Հունահայ աշխատավորության տնտեսական ծանր պայմանների հետևանքով ազգային վարժարանների աշակերտության քանակն աստիճանաբար նվազում էր, մի բան, որ իր

---

[43] «Նոր օր», Աթենք, 1925, № 60։

հերթին նվազեցնում էր դպրոցների նկամուտը, քայքայելով նրանց գոյության հիմքերը։ Օգտվելով այս հանգամանքից, բողոքականների ու կաթոլիկների վարժարանները, որոնք իրենց հարանվանական գոյությամբ պատակում էին առաջ բերում ընդհանուր կրթական գործի բնագավառում, ամեն միջոց ձեռք էին առնում՝ սիրաշահելու և իրենց վարժարաններում ներգրավելու հայ աշակերտներին։ Այդ վարժարաններում կրթության և դաստիարակության հիմնական ուղղությունը որոշում էին ամերիկա-անգլիական «բարերարները» և սրանց ու Վատիկանի հայ գործակալները։

Օտարության մեջ մնծացող հայ երիտասարդության այս սերնդի կրթության ու դաստիարակության հիմնական ուղղության շուրջը քաղաքական սուր պայքար էր ծավալվում հունահայ գաղութի հասարակական կյանքում, առանձնապես կրթական ծրագրի մշակման հարցերում։ Դաշնակցականների բուրժուա-նացիոնալիստական կրթական ծրագրին հունահայ կոմունիստներն ու դեմոկրատները հակադրում էին հասարակական առաջադիմական կազմակերպությունների կողմից պաշտպանություն գտնող դեմոկրատական դաստիարակության ծրագիր, որի գլխավոր առանցքն էր կազմում Սովետական Հայրենիքին նվիրվածության գաղափարը։

ՀՈՒՆԱՀԱՅ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հունահայ աշխատավորության տնտեսական ծանր վիճակը և նրա քաղաքացիական իրավազրկությունը ավելի ևս սրամտկացավ մասնավորապես հունական ռեակցիայի ազգային խտրականության քաղաքականության հողի վրա։ Այդ ցայտուն կերպով դրսևորվեց հայերի մասսայական տեղահանություններում, դրանց դաժան եղանակների մեջ գաղթականական կյանքի մեկուկես-երկու տարուց հետո։ Այդ տեղահանությունները հունական բուրժուական ռեակցիայի թելադրանքն էին իր կառավարություններին, որը մի կողմից խուսափում էր հայ առևտրական և մասամբ արդյունաբերա-

կան կապիտալի հնարավոր ներթափանցումից Հունաստան ու նրա մրցությունից, և մյուս կողմից՝ ձգտում էր հայ գաղթականության ուժերը ներգրավել և գործադրել առավելապես Հունաստանի հետամնաց շրջանների տնտեսական աշխուժացման համար։ Այս քաղաքականության առանցքն էր կազմում Հունաստանին նոր միացված, գերազանցապես այլազգիներով բնակեցված Մակեդոնիան և Թրակիան ամբողջապես հելլենացնելու և վերջնականապես յուրացնելու հունական բուրժուազիայի լուրջ մտահոգությունը, որ արդարացվում էր նաև նոր սահմանների անվտանգությունն ապահովելու նկատառումներով։

Ազգային խարականության քաղաքականությանը հունական ռեակցիան կարողացավ համեմատաբար հեշտությամբ անցնել հենց հունահայ գաղութի իրավա-քաղաքական վիճակի բերումով։ Չէ՞ որ շնչած գաղութի բազմահազար կազմին, այն երբեք հունական կառավարության կողմից չէր ճանաչվել և չճանաչվեց որպես ազգային փոքրամասնություն՝ իր քաղաքացիական իրավունքներով, իրավունքներ, որ թեև որոշ սահմանափակումներով, այնուամենայնիվ, վայելում էին Հունաստանի ազգային մյուս փոքրամասնությունները։ Հայկական գաղութը ճանաչվում էր միայն որպես կրոնական համայնք, որ, ըստ էության, նշանակում էր քաղաքական բոլոր իրավունքների բացարձակ ժխտում։ Ահա այս էլ հունական ռեակցիային, և նրա բոլոր տեսակի կառավարություններին գործողությունների ապատություն էր տալիս իրենց հակաժողովրդական քաղաքականության մեջ։

Ճիշտ է, հույն գաղթականների ընդհանուր տեղավորման տարիներին հունական կառավարությունը դեպքերի բերումով հարկադրված էր մասամբ զբաղվել նաև հայերի գնահատման գործով, նրանց մի փոքր մասին ապահովելով նույնիսկ բնակարաններով։ Սակայն, ի տարբերություն հույն գաղթականների, հայերին, որպես ոչ հունահպատակների, արգելված էր այդ բնակարանները ժամանակի ընթացքում գնելով՝ սեփականացնել։ Հունահպատակ դառնալն էլ կապված էր մեծ դժվարությունների հետ։ Դիկտատոր Պանկալոսի օրով (1925—

1926 թթ.), մի հրամանով հայերին նույնիսկ բոլորովին արգելված էր հունահպատակ դառնալ: Պանկալոսյան դիկտատուրայի անկումից հետո էլ (1926թ. օգոստոս) պահպանվում էին բազմաթիվ սահմանափակումներ ու խոչընդոտներ, որոնք վերին աստիճանի դժվարացնում էին հունական հպատակություն ստանալը:

Հունաստանի բուրժուական ռեսպուբլիկա հռչակվելուց անմիջապես հետո (1924 թ. մարտի 25) վարչապետ Պապանաստասիուի գլխավորությամբ կազմված «դեմոկրատական» առաջին կառավարությունը նախատեսված ծրագրով սկսեց Մակեդոնիայի և Թրակիայի հայ գաղթականության տեղահանությունը: Արդեն 1924 թ. մայիսին Ազգերի լիգայի խորհրդի առաջ հունական կառավարությունը հարց բարձրացրեց հայերին Հունաստանից ուրիշ երկրներ փոխադրելու մասին, պատճառաբանելով, որ նրանց վերջնական տեղավորումը անկարելի է Հունաստանում: Արդարացնելով հայերի նկատմամբ վարած քաղաքական կուրսը, արտաքին գործերի մինիստրության ընդհանուր քարտուղար Բ. Արգիրոպուլոսը «Հելլեն կառավարությունը և հայ գաղթականությունը» խորագրով հիշատակված իր հոդվածում անեկդոտիկ կերպով բացահայտում է այդ կուրսի ասիմիլյատորական տենդենցը: Դանդաղվելով, թե հույն-թուրքական պատերազմից հետո երկրում ստեղծված տնտեսական ծանր դրությունն իբր հնարավորություն չի տալիս տեղական «ինքնաբավ» բնակչությանը, այսինքն հունական բուրժուազիային, բոլոր հայերին հույն ազգի մեջ ձուլելու համար, Արգիրոպուլոսը գրում է, թե «արդար կդաններ, որ հայերը ընդգծեն այս ձուլման և պահեն իրենց ազգությունը այնքան մեծ ազգաններին հետո: Սակայն այն ատեն, հելլենական հողամասի վրա պիտի ստեղծվի փոքրամասնության խնդիր մը, ինչ որ մեզի համար ամենն տեսակետով ցանկալի չէ»[44] (ընդգծումը մերն է—Պ. Կ.):

Հունական կառավարության այս հեղինակավոր ներկայացուցիչը բացարձակ պահանջ էր դնում հայ գաղթականության

[44] Մեջբերումն ըստ «Նոր Ալիքի», Սալոնիկ, 1924, № 215:

առաջ՝ կամ անտրտունջ կերպով ենթարկվել ասիմիլյացիայի քաղաքականությանը, ձուլվել հունական ազգի մեջ և կամ սպառնում էր՝ գործադրել ազգային հալածանքներ, հարկադրել բոլոր հայերին՝ հեռանալ Հունաստանի սահմաններից։ Այս կուրսն էլ հենց ամենայն հետևողականությամբ գործադրեց հունական ռեակցիան։

Հայերի առաջին տեղահանությունը սկսվեց Դեդե-Աղաճ քաղաքից, 1924 թվականի մարտի վերջերին, երբ երկու հարյուր հայ գաղթականներ, ոստիկանական միջամտությամբ, բռնի կերպով վտարվեցին իրենց ապաստարաններից ու «Սփեչե» շոգենավով փոխադրվեցին Պիրեա քաղաքը։ Այդ ժամանակ դեռ տասնյակ-հազարավոր գաղթականներ Պիրեայում բոլորովին անպատսպար վիճակում թափառում էին եկեղեցիների բակերում ու քաղաքի խուլ ծայրամասերում։ Դեդե- Աղաճի տեղահանությունը հայերի մասսայական տեղահանման կառավարական ազդանշանն էր, որին հաջորդեցին նորանոր տեղահանություններ Հունաստանի հայաշատ տարբեր քաղաքներից ու գյուղերից։ Ժողովրդական բողոքի ելույթները հունական իշխանությունների այդ բարբարոսությունների դեմ՝ ընդգրկել էին ամբողջ հայկական գաղութը, նրա հասարակական կազմակերպություններն ու ազգային մարմինները։

Կավալայի, Դրամայի և այլ քաղաքների ազգային և հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև Սալոնիկի առաջնորդարանի դիմումները Մակեդոնիայի ընդհանուր կուսակալին ու հունական կառավարությանը՝ տեղահանությունը կասեցնելու գործում ոչ մի արդյունք չտվին։ Կավալա քաղաքի հայերի տեղահանության մասին կառավարական հրահանգը հայտարարվել էր հայերին 1924 թ. մայիսի 26-ին և, հատուկ ցուցակի համաձայն, մեկ օրվա ընթացքում, այսինքն մայիսի 27-ի առավոտյան, 1020 հայ աշխատավորների հրամայված էր՝ բոլորովին պատրաստ վիճակում ներկայանալ նավահանգիստ, Պելոպոնեսի լեռնային շրջաններից մեկում անհայտ մի քաղաք տեղափոխվելու համար։ Բանվորների ու չքավոր գյուղացիների հետ միասին տեղահանվում էին նաև

տեղացիների կողմից իրենց մրցակից դիտվող՝ հայ մանր առևտրական ու ինքնաբավ խավերը, որոնք մեծագույն վնասներ էին կրում՝ ամենաչնչին գներով վաճառելով իրենց ունեցվածքը, խանութները։ Պետական պաշտոնյաները Կավալայի շրջանի 14 գյուղերում հույներին բացարձակապես արգելել էին որևէ բան գնել հայերից, որոնց չէին թողնում նույնիսկ մոտենալու իրենց հողամասերին։ Հայ գյուղացու արտն իր բերքով միասին բռնագրավվում էր որպես փոխարժեք այն գարու և ցորենի, որն իբրև նպաստ, գաղթի առաջին տարիներին բաց էր թողել կառավարությունը գաղթականներին։

Այսպես, ռեակցիոն կառավարությունը ձեռնամուխ եղավ «լուծելու» հույն գաղթականների կնճռոտ հարցը, նրանց տեղավորելով տեղահանված հայերի բնակատեղերում և տիրանալով քրտնաջան աշխատանքի գնով ձեռք բերած նրանց սեփականությանը։ Կավալայի շրջանի շատ հայ գյուղացիներ, որոնք պետությունից ոչ մի նպաստ էլ չէին ստացել, հարկադրված էին թողնել իրենց ցանած ցորենը, եգիպտացորենն ու ծխախոտը և բոլորովին ունեզրկված վիճակում փոխադրվել անծանոթ վայրեր և դիմագրավել նոր դժվարություններ։

Տեղահանությունները կրկնվում էին մի քանի անգամ, մինչև որ հայերի բացարձակ մեծամասնությունը վերջնականապես չհեռանար իր բնակավայրերից։ Գյուղերից տեղահանվածների զրությունը չափազանց անմխիթարական էր։ Պատահում էին սովից ու հիվանդություններից մահացության դեպքեր ճանապարհներին։ Մինչև 1924 թ. սեպտեմբեր ամիսը Կավալա քաղաքը և նրա շրջակա հայաշատ գյուղերը երեք անգամ ենթարկվել են տեղահանության, նույնը և Դեդե-Աղաճը, ինչպես և Դրաման ու նրա շրջակա գյուղերը։ Թրակիայի շրջանի Պոյվա գյուղի երեսուն հայ ընտանիքներ 1924 թ. հուլիսին երկրորդ անգամ տեղահանվեցին իրենց բնակավայրերից, դաշտերում թողնելով իրենց մշակած ծխախոտն ու մնալով բոլորովին խեղճ ու կարոտ վիճակում[45]։

Հունահայ և սիրիուքահայ մամուլը, նկարագրելով Սարը-Շապանի և շրջակա տասը գյուղերի հայ գյուղացիության

---

[45] Տե՛ս «Նոր Ալիք», 1924, № 108։

1924 թ. սեպտեմբերի 26-ին կատարված տեղահանության մանրամասները, վկայում է, որ հունական իշխանությունները նախքան տեղահանության մասին հրամանի գործադրումը՝ բռնագրավում էին հայ գյուղացիների ծխախոտի և արմտիքի բերքը, այն գնահատում չափազանց էժան գներով, ապա ընդհանուր գումարից գնդչում էին տրված նպաստի, սերմնացուի և այլնի փոխարժեքը, հայերին վերադարձնելով բերքի արժեքի միայն մի չնչին տոկոսը։ Քանթիից և այլ քաղաքներից ու գյուղերից ահազանգում էին, որ եթե գաղութի ազգային մարմինները նյութական որևէ օգնություն չցուցաբերեն հայ գյուղացիներին, «անոնց մեծ մասը, դեռ իրենց երթալիք տեղը չհասած, անոթության և թշվառության դատապարտված են»[46]։

Հունական կառավարությունը պաշտոնապես հաղորդել էր, որ 1924 թ. հոկտեմբերի 10-ին տեղահան են լինելու Դրամայի շրջակա գյուղերի բոլոր հայ հողագործները, հոկտեմբերի 22-ին՝ քաղաքի աշխատող և անգործ հայ բնակչությունը, հոկտեմբերի 29-ին՝ մանր առևտրով զբաղվող հայերը, իսկ նոյեմբերի 5-ին՝ հայ խանութպանները։

Միայն Դրամայի շրջանի տեղահանված հայերից կառավարությունը պահանջում էր 400 հազար դրախմ, որ նպաստի և փոխատվության ձևով հատկացվել էր հայ գաղթականներին՝ լծկաններ և գյուղատնտեսական գործիքներ գնելու համար։ Այսպես, տեղահանությունների ընթացքում հունական իշխանությունները, տրված նպաստները հայ գյուղացիներից հետ վերցնելու անվան տակ բռնագրավում էին նրանց համարյա ամբողջ ունեցվածքը[47]։

Կավալայից հետո, հունիս ամսին, 900 հայ տեղահանվեց նաև Քանթի քաղաքից, հազար հոգի՝ Գյումիլջինայից և նույն

---

[46] Տե՛ս «Նոր Ալիք», 1924, № 157։

[47] Աթենքի ազգային կենտրոնական վարչությանը ուղարկած իր հեռագրում Մակեդոնիայի շրջանի առաջնորդ Երվանդ եպիսկոպոս Փերտահջյանը այդ օրերին հաղորդում էր. «Դրամայի խնամատարական վարչությունը բռնի ուժով կգրավե հայ գաղթականներու շարժուն ինչքերը, անկողին, գործիքներ, հունձք և այլն»։ Տե՛ս «Ժողովուրդի ձայնը—Ժամանակ», Կ. Պոլիս, 1924, № 1833։

քանակությամբ էլ՝ ուրիշ բաղաքներից։ Առանձին դեպքերում իրենց զանազան կապերի և մութ գործարքների միջոցով կարողանում էին տեղահանությունից զերծ մնալ որոշ հայ մեծահարուստներ, իսկ մնացած գաղթականներն անխտիր ենթարկվում էին ընհանուր տեղահանության։ Հայ գաղթականները փոխադրվում էին Պելոպոնեսի ժայռոտ լեռնալանջերը, կալանավորների նման՝ էտապային կարգով և ավինավոր զինվորների ու ոստիկանների հսկողության տակ։ Նրանց դրությունն ավելի ևս ծանրանում էր, երբ ափ էին դուրս գալիս ու հասնում իրենց նոր բնակավայրերը։ Տեղահանվածների բազմաթիվ խմբեր գիշերում էին բացօթյա՝ պարտեզներում, ծովափին, ծառերի տակ, փոշու և կեղտի մեջ, առանց որևէ օգնության, խնամքի և պատսպարման։

Հյուրընկալված երկրից վտարման վտանգը ծանր ու ողբերգական էր դարձրել հունահայ աշխատավոր ժողովրդի դրությունը։ Բայց ո՞վքեր էին Պելոպոնես տեղահանվածները։ Նույնիսկ «Նոր օր» թերթը, որ հոչակ էր հանել բուրժուական կեղծ ասպնջականությունը գովաբանելու իր արհեստով, հարկադրված էր ընդունել այն փաստը, որ տեղահանված գաղթականների «հարյուրեն իննսուն տոկոսը կբաղկանա արհեստավորների՝ հյուսն, ատաղձագործ, երկրագործ, կոշկակար և այլն», թե նրանց մեջ «... կան նաև գորգի աշխատանքին մեջ մեծ փորձառություն և հմտություն ունեցող բազմաթիվ այր թե կին գաղթականներ»[48]։

Կոմունիստական «Բանվոր-Պարիզ» թերթի Կալամաթայի թղթակիցը գրում է, թե Կալամաթա տեղահանված 200 հայ ընտանիքներից մեծ մասը, որոնք հողագործներ ու շերամապահներ էին, նոր բնակավայրում աշխատում էին այգիներում, ձիթագործարաններում որպես բանվորներ և նավահանգստում՝ որպես բեռնակիրներ[49]։

1925 թ. գարունը հունահայ աշխատավորությանը բերեց նոր մտահոգություններ՝ տեղահանությունների վերսկսման հեռանկարով։ Մակեդոնիայի ու Թրակիայի հայաշատ բոլոր բա-

---

48 «Նոր օր», 1924, № 313։

49 «Բանվոր—Պարիզ», Փարիզ, 1925, № 31։

դաքներից և գյուղերից բողոքի ու ցասման աղաղակող ձայներ էին լսվում ամենուրեք, պահանջելով հունական իշխանություններից՝ կասեցնել հակամարդկային այս վայրագությունները հայ աշխատավոր ժողովրդի դեմ։ Սակայն հունական ռեակցիան անդրդվելի էր մնում։ Ի հակակշիռ դրան, Հունաստանի բանվոր դասակարգն ու դեմոկրատական հասարակական կազմակերպությունները, ռևոլյուցիոն ու դեմոկրատական մամուլը իրենց եղբայրական համերաշխությունն էին արտահայտում ու պաշտպան կանգնում հունահայ աշխատավորության մարդկային իրավունքներին։ Հունաստանի կոմպարտիայի օրգան «Ռիզոսպաստիս»-ը, «Միկրասիատիքի», «Նեոս Էոն», «Մակեդոնիա», «Էլեֆթերոս լոգոս», Սալոնիկի «Իմերեսիա» և ուրիշ դեմոկրատական թերթեր ակտիվ ելույթներ ունեցան տեղահանությունների դեմ, ուղղակի դատապարտեցին հունական կառավարության շովինիստական քաղաքականությունը, ջատագովելով հելլենական ասպնջականության ավանդական տրադիցիաները։

Ի պատիվ Հունաստանի ասպնջական աշխատավոր ժողովրդի պետք է նշել, որ տեղահանության ամենադժվարին օրերին, 1924 թ. հունիսին կայացած հույն գաղթականների ընդհանուր համագումարում ընդունվել էր հատուկ բանաձև «Հայ գաղթական եղբայրների մասին», ուր քննադատվում էր կառավարության տարած ազգային խտրականության քաղաքականությունը հայերի նկատմամբ։ «Գաղթականությունը մեկ է, և անոր բախտն ու ճակատագիրն ալ մեկ պիտի մնա»,— ասված էր այդ բանաձևում, որը ընդունվեց դելեգատների բուռն ծափահարությունների ներքո[50]։

Հունական մի շարք դեմոկրատական կազմակերպությունների թվում իր բողոքի ձայնը բարձրացրեց նաև «արդարության համահունական միությունը» (Ի Պանելինիկի Էնոսիս դիկեոսինիս), որը 1924 թ. օդոստոսին կառավարության ներկայացրած իր բողոքագրում հայտարարել էր, թե Հունաստանում ապաստան գտած հայերի բռնի տեղահանությունը Հու-

---

[50] Տե՛ս «Ժողովուրդի ձայնը—ժամանակ», Կ. Պոլիս, 1924, № 1761։

նաստանին իջեցնում է «բարբարոս թուրքի ատիճանին»։ Բողոքագրում ասված է, թե «Հելլենականության բարեկամ և դաշնակից հայ ժողովուրդը, տանջված միևնույն չար բախտով և փոքր Ասիո հույներուն հետ ունենալով միևնույն շահերը, արժանի է ամեն տեսակ պաշտպանության, հյուրասիրության, ինչպես նաև օգնության, այն արժանի է ապաստան գտնելու պատմականորեն ծանոթ հյուրասեր Հունաստանի մեջ։ ... Հունաստանի ազգային և բարոյական շահը կպահանջի վերաքննել տեղահանության որոշումը...»[51]։ Հունաստանի կոմունիստական պարտիան հետևողականորեն հանդես էր գալիս նաև հայ ազգային փոքրամասնության շահերի պաշտպանությամբ, գլխավորելով բոլոր աշխատավորների պայքարը դասակարգային և ազգային ճնշման ու շահագործման դեմ։ Այս առթիվ չափազանց ուշագրավ են Ամերիկայի կոմունիստական «Պրոլետար» թերթում տպված, Սալոնիկից ուղարկված մի թղթակցության այսպիսի տողերը.

«Բոլոր այս դժնդակ իրականության մեջ մեկ պարագա կա, որ գաղթական աշխատավորության մխիթարություն և ուժ կներշնչե, այդ՝ Հունաստանի բանվորական մասսաներու առաջնորդ Կոմունիստական կուսակցության եղբայրական վերաբերմունքն է»[52] (ընդգծումը մերն է—Պ. Կ.)։

Հունաստանում սովետական առաջին դեսպան Ուստինովը այդ օրերին բողոքով դիմում է հունական կառավարությանը՝ տեղահանությունները կասեցնելու միջնորդությամբ, միաժամանակ հավաստիացում տալով ներգաղթի հնարավոր կազմակերպման մասին։ Այս ամենը դրդատացնող նշանակություն ունեցավ հունական կառավարության համար և հապշրեց տեղահանությունների ժամանակավոր սահմանափակմանը։ Բայց շուտով՝ 1925 թ. մայիս-հունիս ամիսներին տեղահանությունները վերսկսեցին և իրենց ավերիչ հետևանքներով նոր տառապանքներ պատճառեցին հայ աշխատավորությանը։

1925 թ. տեղահանությունները տարբերվում էին նախորդներից նրանով, որ այս անգամ խտրություն չէր դրվում այս-

---

[51] Տե՛ս «Սուրիական մամուլ», Հալեպ, 1924, № 298։

[52] «Պրոլետար», 1925, № 3։

պես կոչված «ինքնաբավերի» և «ոչ-ինքնաբավերի» միջև, հպատակ և ոչ հպատակների միջև։ Տեղահանությունները ստացել էին մասսայական արտաքսումների բնույթ։ Եթե 1924—25 թթ. «դեմոկրատական» կառավարությունների սկրսած՝ հայերի մասսայական տեղահանություններն ընդգրկում էին միայն Նոր Հունաստանի, այսինքն՝ Մակեդոնիայի և Թրակիայի հայերին, ապա պանկալոսյան ֆաշիստական դիկտատուրայի ժամանակ այդ հալածանքներն ընդգրկեցին նաև Հին Հունաստանում ապրող հայերին։ 1926 թ. սկզբներին հունական իշխանությունները կարգադրեցին Գաղթականական գնահատման հանձնախմբի կողմից կառուցված շենքերում բնակվող 4000 հայ գաղթականներին անխտիր վտարել իրենց բնակարաններից և տեղափոխել բարաքները կամ «տեղավորել» այլ վայրերում։ Այս կապակցությամբ միայն Պիրեա քաղաքի արվարձան Կոկինիայից բռնի կերպով տեղահանվեց մոտ 3000 հայ և փոխադրվեց Աթենքի ուրիշ, դեռևս չկառուցապատված, հետամնաց ծայրամասեր, ինչպես, օրինակ, Պոդարադես և այլուր։ Մի այլ կարգադրությամբ մի քանի օրվա ընթացքում Սալոնիկի Պեշ-Զինար թաղամասի շրջակայքում վրանների տակ ապրող բոլոր հայ գաղթականները տեղափոխվեցին Հարման գյուղը, իսկ նրանց զբաղեցրած հողամասերը հատկացվեցին դինվորական իշխանություններին։

Հունական իշխանությունների նման վարքագիծը խոր դժգոհություն էր առաջացրել նույնիսկ այսպես կոչված «ինքնաբավ» հայերի մեջ։ Նրանցից շատ-շատերը, որոնք դիմել էին հունահպատակ դառնալու համար, մասսայորեն ետ էին պահանջում իրենց դիմումները և խնդրում էին իրենց արձանագրել Սովետական Հայաստան մեկնողների ցուցակների մեջ։

Սովետական Հայաստանը, սակայն, այդ տարիներին կարող էր ընդունել միայն սահմանափակ քանակությամբ ներգաղթողներ և հնարավորություն չուներ բավարարելու արտասահմանի հայ աշխատավորության հայրենիք վերադառնալու մասսայական ձգտումը։

Ինչպես տեսանք, տեղահանվածների հիմնական մասը կենտրոնացվեց Պելոպոնեսի ամայի ու քարքարոտ վայրերում,

իսկ մյուս մասը՝ հայաշատ տարբեր քաղաքներում (հատկապես Պիրեայում), լցնելով հայկական վարժարանների, եկեղեցիների բակերը, սրահներն ու բացավայրերը, ուր նույնիսկ վրաններ գոյություն չունեին: Տեղահանությունների առաջին իսկ օրերից ամբողջ հունահայ գաղութը և նրա կիսաքաղց աշխատավորական մասսաները մոբիլիզացնելով իրենց վերջին միջոցները, օգնության ձեռք մեկնեցին իրենց տարաբախտ եղբայրներին: Սակայն թշվառությունն այնքան մեծ էր, որ այդ եղբայրական օգնությունը մի կաթիլ էր միայն ծով կարիքի դիմաց:

1924 թ. օգոստոսի 12-ին տեղահանված հայ աշխատավորներին անմիջական օգնության հասնելու մասին արտասահմանի հայությանն ուղղած իր կոչում Աթենքի առաջնորդական փոխանորդ Նշան քահանա Փափազյանը այսպես էր նկարագրում հունահայ գաղթականության վիճակը. «Հայ գաղթականը, որ քանի մը անգամներ ճաշակելե նաք աքսորանքի և տեղահանության դառն հետևությունները, եկած հաստատված էր այս անգամ Արևմտյան Թրակիո քաղաքներուն մեջ, հանկարծ կիսլվի իր կազմած բույներեն, կբռնադատվի լքել իր քրտնաջան աշխատության արդյունքը, ցանք, հունձք, կրպակ, ինչք, առնելիք, ոչինչ գներով հարկադրվելով զոհել զանոնք, և երամակներու պես լեցվելով շոգենավերուն մեջ կցրվին ու կը ցանցնվին Հին Հունաստանի ապրուստի և աշխատանքի միջոցներե զուրկ գյուղերն ու կղզիները: Եվ հոն ծառերու տակ, տաղավարներու, անհարմար շենքերու մեջ խմբվելով կգալարվին հետին թշվառության մեջ: Շատեր խելակորույս կդառնան, ոմանք հուսահատությենե ծով կը նետվին: Եվ եթե այս վիճակը շարունակի, հեռու չէ այն ժամանակը, երբ պիտի լսենք հայրուրներով իրենց շունչը փչելը և այդ փոխադրավայրերը պիտի ըլլան արդեն բազմիցս տանջված և հազիվ կազմակերպված այս հայածական հայության գերեզմանը:

Մյուս կողմն տեղահանությանց սպառնալիքը դամոկլյան սուրի պես կախված է նաև Մակեդոնիո և Հին Հունաստանի գաղթական հայոց գլխուն վրա»[53]։

1925 թ. նոյեմբերին Կողանայի հայ գաղթականաց միության հրապարակած կոչում ասված է, որ տեղահանված և Հարման գյուղ բերված 1500 հայ գաղթականներ բնակվում էին խոնավության և ցեխի մեջ և «այն տեսակ վրաններու տակ, ուր մարդ պիտի չուզեր իր խոզերը բնակեցնել»[54]։

ՀՕԿ-ի Սալոնիկի կենտրոնական վարչությունը ևս հրապարակեց մի քանի տպագիր կոչ՝ ուղղված Հունաստանի և արտասահմանի հայությանը։ Այդ կոչերով խնդրվում էր նյութական շտապ օգնության հասնել տեղահանվածներին՝ նրանց մահվան ատուգ վտանգից փրկելու համար[55]։ Մի այլ կոչում Հարման գյուղի վրաններում ապրող գաղթականների վիճակի մասին ասվում է. «Ասոնցմե 450—500 հոգի արդեն սպառած են դրամական փոքրիկ գումարը, որ տնտեսած ունեին։ Մնացած հարյուր հոգին հագիվ մեկ ամսվան չոր հացի դրամ միայն ունին։ Ամեն առավոտ 150—200 տղամարդ քաղաք կիջնեն գործ գտնելու համար, բայց երկար թափառումներե վերջ, երեկոյան պարապ ձեռքերով կվերադառնան գյուղ, ուր վրաններու տակ կին ու երեխաներ պատառ մը հաց ստանալու հույսով կսպասեն։ Եվ, սակայն, թշվառության խորությունը այստեղ չի սահմանափակվիր։ Աշուն է, տեղացող անձրևները թրջած են այն հատակը, որում պետք է հանգստանան երեխաներու ու մայրերու ուժաթափ մարմինները։ Քալելու անկարող երեխաներ պառկած կմնան խոնավ գետնի վրա՝ դանդաղորեն մահվան գիրկը հառաջանալով։ Տիրող թշվառության իրական պատկերը բառերն անզոր են ուրվագծելու, պետք է աչքերով տեսնել այն ահավոր անդունդը, որուն եզերքը անմիջականորեն կեցած են

---

53 Տե՛ս «Ժողովուրդի ձայնը—ժամանակ», Կ. Պոլիս, 1924, № 1799 (ընդգծումները մերն են—Պ. Կ.)։

54 «Ալիք», Սալոնիկ, 1925, № 844։

55 Տե՛ս ՀՍՍՌ ՀՌՍՇ, ԿՊԱ, ֆ. 178, գ. 394, թ. 85։

1600 գաղթականներ։ Թեթև հարված մը և մենք ականատես պիտի ըլլանք անոնց պահավեժ անկումին»[56]։

Աղքատախնամ և այլ դանազան բարեգործական կազմակերպությունների միջոցով հանդանակված գումարներն այնքան չնչին էին իրենց քանակով, որ ամեն մի կարոտյալի օրական հատնում էր միայն 3—5 դրամ, որը մի կիլո հացի արժեքն իսկ չէր[57]։ Իսկ տխրահռչակ «Սեյվ տը չըլտրըն ֆընտ» (Save the Children Fund) բարեգործական կազմակերպությունը Հարման գյուղի երեխաներին տալիս էր օրական միայն 36 դրամ հաց և երկու օրը մեկ՝ մի պնակ բրնձի ապուր։

Հայ գաղթականների առանց այն էլ տնտեսական ծանր վիճակն ավելի էր վատթարանում նրանով, որ հունական իշխանությունները նրանցից պահանջում էին երկու տարվա ընթացքում վերադարձնել սկզբնական շրջանում իրենց ստացած նպաստների փոխարժեքը, մինչդեռ հույն գաղթականներն այդ կարգի նպաստներն ստանում էին անվերադարձ կերպով։

Տնտեսական ծանր վիճակումն էին ոչ միայն տեղահանվածները, այլև քաղաքներում ապրող հայ բնակչության մեծամասնությունը։

Դեպի Սովետական Հայաստան առաջին ներգաղթի (1924—1925 թթ.) նախապատրաստական աշխատանքների կապակցությամբ Սալոնիկի ՀՕԿ-ի կենտրոնական վարչության ձեռնարկած վիճակագրության արդյունքները պարզել էին, որ միայն Սալոնիկ քաղաքում արձանագրվածների մեջ կարիքավորների և բոլորովին աղքատների թիվը կազմում էր 4165 հոգի (1336 ընտանիք), միայն ճանապարհածախսը հոգալու հնարավորություն ունեցողները կազմում էին 402 հոգի (120 ընտանիք). ոչ կարիքավորները կազմում էին միայն 1095 հոգի (317 ընտանիք)[58]։ Գյուղական շրջաններում, ուր տիրում էր համատարած չքավորություն, պատկերն ավելի մռայլ էր։

---

56 Տե՛ս ՀՍՍՌ ՀՌՍՇ, ԿՊԱ, ֆ. 178, գ. 400, թ. 8—11։

57 1926 թ. հունվարին մեկ օխա սպիտակ հացի արժեքը 8 դրամ 60 լիպտա էր, իսկ սև հացինը՝ 7 դրամ։

58 Տե՛ս ՀՍՍՌ ՀՌՍՇ ԿՊԱ, ֆ. 178, ց. 1, գ. 394, էջ 22։

Հայերի հանդեպ խարականության պայմաններում որոշ վայրերում սկսեցին դրսևորվել հայերի հելլենացման առանձին երևույթներ, ինչպես, օրինակ, Եպիրոսի շրջանի Յանինա քաղաքի և մոտակա գյուղերի սակավաթիվ հայության մեջ։ Այդ շրջանի հայերը, թեև Հունաստանում հաստատվել էին հին ժամանակներից, սակայն չունենալով ազգային հավաքական կյանք՝ չէին կարողանում դիմադրել հելլենացման քաղաքականությանը։ Սակայն շատ դեպքերում հայ աշխատավորների «հելլենանալու» այդ հակումը ավելի շուտ առերես էր, որը թելադրված էր աշխատանք, հաց և կառավարական աջակցություն ստանալու գործում հայ աշխատավորների նկատմամբ կիրառվող խարականության քաղաքականությունից չտուժելու ցանկությամբ։ Ուստի, ինչպես վկայում է «Նոր օր» թերթի թղթակիցը, նրանք հարիպադրված փոխում էին իրենց անուն-ազգանունները, թաքցնում իրենց հայ լինելը։ Այսպես, Յանինա քաղաքից յոթ կիլոմետր հեռավորության վրա գտնվող Նեա Կեսարիա և Մարգարիտա գյուղերի 15 հայ բնակիչ «հունական անուններով արձանագրվելով, խառնվել են կեսարացի հույն գաղթականներու մեջ, ստանալու համար կառավարության աջակցություն»[59]։ Նշված երևույթը բնորոշ էր նաև այդ շրջանի մի քանի ուրիշ գյուղերի համար։

Արևմտյան Թրակիայի և Մակեդոնիայի շրջանների տեղահանություններն ընդգրկեցին մոտ 10 հազար հայ գյուղացիների, բանվորների և արհեստավորների, և պատճառ դարձան հարյուրավոր հայ բնակիչների քայքայման ու ֆիզիկական բնաջնջման։ Այդ տեղահանությունները բնութագրվում էին նրանով, որ դրանց հաջորդում էին ոչ թե բռնի աշնչացումն ու վայրագ ջարդերը, այլ չտեսնված ազգատացումն ու թշվառությունը, որոնք և հասցնում էին հայ աշխատավորների ֆիզիկական դանդաղ բնաջնջման։ Տեղահանությունների հետևանքով հունահայ աշխատավորությունը կրեց հսկայական նյութական վնասներ։ Թեև այդ վնասները լրիվ կերպով չեն ուսումնասիրված, սակայն միայն 1924 թ. տեղահանությունը-

[59] «Նոր օր», 1925, № 398 (ընդգծումը մերն է—Պ. Կ.)։

ների պատճառած նյութական կորուստները, հունահայ մամուլում հրապարակված նախնական տվյալների համաձայն, հասնում են ավելի քան 30 միլիոն դրախմի։

Այսպես, հույն բուրժուազիայի ազգային խտրականության քաղաքականությունը և բուրժուա-կալվածատիրական շահագործման պայմանները արագացրին հայ գաղթականության ազգատացման պրոցեսը՝ հայկական գաղութի բնակչության բացարձակ մեծամասնությունը վերածելով բանվորական և աշխատավորական ընչազուրկ տարրերի, որոնք իրենց տնտեսական դիրքով ու քաղաքացիական իրավազրկությամբ կազմեցին հունական հասարակության ամենաճնշված մասը՝ թե սոցիալական և թե ազգային տեսակետից։ Այս էլ սոցիալական այն պարարտ հողն էր, որ հետագայում կենսական օբյեկտիվ հիմք հանդիսացավ հունական ռևոլյուցիոն պրոլետարիատի և նրա ավանգարդ կոմունիստական պարտիայի շուրջ՝ հունահայ աշխատավորության հիմնական մասի համախմբման համար։

ՀԱՅ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԻ ԴԵՄ։ ՀԱՅԵՐԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՐՏԱԳԱՂԹԸ ՀՈՒՆԱՍՏԱՆԻՑ

Հայերի նկատմամբ վարած հունական ռեակցիայի տեղահանությունների, ազգային խտրականության ու հալածանքների քաղաքականության դեմ հունահայ աշխատավորների պայքարն սկզբնապես թույլ էր, անկազմակերպ ու տարերային։ Եվ դա հասկանալի է, քանի որ 1923—1925 թթ. Հունաստանի կոմպարտիայի ազդեցությունն ու գործունեությունը դեռևս նոր էին ծավալվում մասնավորապես հունահայ գաղութում։ Բոլորի և պայքարի տարերային ու պասիվ արտահայտություններն էին՝ թաքնվելով տեղահանությունից խուսափելը, ճանապարհին տեղահանվողների քարավանից փախչելը, իսկ հետագայում նաև մասսայական արտագաղթը Հունաստանից։ Սրան մասնավորապես նպաստեց այն, որ Ազգերի լիգան 1924 թ. ընդառաջեց հայերին Հունաստանից այլ երկրներ տեղափոխելու վերաբերյալ հունական կառավարության պահանջին։

Աթենքում և Սալոնիկում հիմնվեցին հատուկ գրասենյակներ, որոնց նպատակն էր հունահայ գաղթականներին փոխադրել Ֆրանսիա, Կանադա, Կուբա, Մեքսիկա, Բրազիլիա, Ուրուգվայ և այլ երկրներ, որոնց կառավարությունները համաձայնվել էին ընդունել հողագործ գաղթականներին։ Էժանագին բանվորական ուժ որսալու համար հրապարակ եկան բազմաթիվ «բարերարներ» և «միջնորդներ», որոնք, աշխատանքի տեղավորելու դիմակի տակ, կոմիսիոն պայմաններով հայ գաղթականներին վաճառում էին արտասահմանյան կապիտալիստներին։ Հազարավոր հայ աշխատավոր ընտանիքներ զոհ էին դառնում նման շահատակությունների։

1924 թ. երկրորդ կիսամյակում միայն Ֆրանսիա մասնաբյորեն արտագաղթողների թիվը հասել էր երեք հազարի։ Փոխադրման միջոցներից զուրկ աշխատավորները հարկադրված էին ստորագրել ամենածանր պայմանագրեր ֆրանսիական գործարանատերերի հետ՝ մետաքսի, տեքստիլի, գորգի և այլ գործարաններում աշխատելու համար։ Այդ պայմանագրերի էնքումը վերածվել էր մի տեսակ գործարքի, երբ հայ ժողովրդի դժբախտությունն էր դարձել սակարկության առարկա։ Ֆրանսիական կոմպարտիայի օրգան «Յումանիտեն» 1925 թ. փետրվարի 10-ին անդրադառնալով այս հարցին, գրում էր, թե հունահայ դժբախտ գաղթականները մեծագույն կարիքից հարկադրված՝ «գերության պայմանագրեր» են ստորագրել ֆրանսիական կառավարության գործակալների հետ։ Այդ պայմանագրերի համաձայն, կանանց օրավարձը որոշված էր ութ, իսկ տղամարդկանցը՝ 15 ֆրանկ։ Ճանապարհի ծախսերը բռնադանձվելու էին աշխատավարձից՝ առաջին իսկ օրերից սկսած։ Հայ բանվորները պարտավոր էին աշխատել նշանակված տվյալ քաղաքում և «առանց մասնավոր հրամանի» ազատ չէին փոխադրվելու ուրիշ բնակավայրեր։ Խստորեն արգելվում էր անգամ այցելել մոտակա գաղթականները, եթե նույնիսկ այդտեղ բնակվող հարազատներ ունենային։ Հայ բանվորները նախազգուշացվում էին, որ եթե նրանք Ֆրանսիայում մասնակցեն քաղաքական ցույցերի կամ շարժումների, անմիջապես կվտարվեն երկրի սահմաններից դուրս։

«Բանվոր-Պարիզ» թերթի թղթակիցը այդ օրերին գրում էր, թե 1925 թ. փետրվարի 18-ին Սալոնիկ է ժամանել նաև Պ. Բիեռ Ռու, «խումբ մը հողատերներու հաշվույն հայ բանվորներ և բանվորուհիներ արձանագրելու առաքելությամբ, որոնք Արլ գավառի հողագործական աշխատանքներու մեջ պիտի բանեցվեն»[60]: Ֆրանսիական կալվածատերերի այդ ներկայացուցիչը Սալոնիկից հետո այցելեց նաև Կոմոտինի, Կավալա և Դեդեաղաճ քաղաքները, հայ բանվորներ և բանվորուհիներ արձանագրելու և նրանց Ֆրանսիա փոխադրելու համար: Արտագաղթող հայ աշխատավորների աշխատանքի և կյանքի ծանր պայմանների մասին՝ Սալոնիկից արտագաղթող հայերի քարավանի հետ 1925 թ. մարտին Մարսել հասած Լևոն Տոնիկյանն իր հուշերում գրում է. «Մեզ զրկեցին Արլ, ուր դատարկ տան մը մեջ դնելով, սկսան վարձու տալ իրեն գրասա: Սելանիկեն մեկնած էինք երեք ամսվան պայմանագրով, բայց տեսնելով, որ լեզու չենք գիտեր, վերածեցին մեկ տարվան: Վերջապես հաճախորդներ եկան և մեզ գնելով տարին ազատակներ: Օրական 15 ժամ կաշխատեինք՝ փոխան 11 ու կես ֆրանկի, կեր դառնալով մժեղներուն»[61]:

Արտագաղթը շարունակվեց հետագա տարիներին ևս, երբ հոսանք սկսվեց նաև դեպի Արգենտինա, Մեքսիկա և Հարավային Ամերիկայի այլ երկրներ, որի հետևանքով 1925 թ. վերջերին հունահայ գաղութի թվական կազմը նվազեց համարյա կիսով չափ, մոտ 120 հազար մարդուց իջնելով մինչև 60—65 հազարի:

Հայ աշխատավորների մասսայական արտագաղթը Հունաստանից, թեև պասիվ, բայց ըստ էության ժողովրդական բողոքի բացահայտ դրսևորումներից էր: Աշխատավոր մարդիկ հարկադրված էին թողնելու Հունաստանի տիերը և որոնել նոր ապաստարաններ: Ճիշտ է, դա նրանց փրկության ելքը չէր, քանի որ բուրժուական մի երկրից մյուսը փոխադրվելով, նրանք չէին ազատվում ոչ դասակարգային, ոչ էլ ազգային

---

60 Տե՛ս «Բանվոր—Պարիզ», 1925, № 32:

61 Տե՛ս Լևոն Տոնիկյան. Իմ տեսածներս 1915—1924, Փարիզ, 1933, էջ 113—114 (ընդգծումը մերն է—Պ. Կ.):

ճնշումից։ Կապիտալի աշխարհում շահագործման և ազգային ճնշման պայմաններում ծավալվող բանվորական ռևոլյուցիոն շարժման բարերար ազդեցության տակ աշխատավոր հայ գաղթականն էլ ասիճանաբար ապրեց իր դասակարգային ինքնագիտակցության զարթոնքը, հնարհետև գիտակցեց իր ազգբախտության ու թշվառության բուն պատճառները, դրանք տեսնելով հենց բուրժուական իրավակարգի հիմքերի մեջ։ Զարթոնքի այդ պրոցեսը սկիզբ առավ դեռ մասսայական տեղահանությունների, հայ աշխատավոր գաղթականության անստույգ և կարծես անհեռանկար կյանքի ծանր օրերին։ Եվ բանը սկսվեց նրանից, որ հունահայ աշխատավոր գաղթականության ազգային-դեմոկրատական և կոմունիստական տարրերի գլխավորությամբ ծնունդ առան մասսայական այնպիսի կազմակերպություններ, ինչպես, օրինակ, Հայաստանի օգնության կոմիտեները, Հայ պետական կարմիր խաչի մասնաճյուղերը, գաղթականաց միությունները, զանազան հայրենակցական և երիտասարդական միությունները, գաղթականական հանձնախմբերը և այլն, որոնք և դրական որոշակի դեր խաղացին աշխատավոր գաղթականության ուժերը կազմակերպվածության հունը փոխադրելու ճանապարհին։ Հիշատակենք, օրինակ, Կոզանայի, Աթենքի՝ Դուրդութի արվարձանի գաղթականաց միությունները, Սեբաստիայի, Տարոն-Սալնաձորի, Հաջընի և հայրենակցական այլ միությունները Աթենքի, Պիրեայի, Սալոնիկի, Կավալայի, Դրամայի և այլ քաղաքների շրջաններում ու արվարձաններում։ Մասսայական տեղահանությունների օրերին գաղթականական միությունները, նրանց տարբեր հանձնախմբերը ելույթներ էին կազմակերպում, բողոքի կոչեր հրապարակում հունական իշխանությունների դեմ։ Բողոքի այս շարժումը, որ գտնում էր հույն աշխատավորության պաշտպանություն, հարկադրեց պետական իշխանություններին մասամբ մեղմացնել վայրագությունները, ինչպես, օրինակ, Դրամայում, որտեղ 1925 թ. հուլիսի 2-ին նոր հրահանգ էին տվել խատությունները դադարեցնելու մասին։ Քանթիի տեղահանությունից հետո Մակեդոնիայի և Թրակիայի հայաշատ քաղաքների ժողովրդական բազմաթիվ պատվի-

թակությունները, ներկայանալով կուսակալությանը՝ պահանջել Լին հետաձգել տեղահանությունները և հնարավորություն տալ հայ աշխատավորներին նախապատրաստվելու, իսկ գյուղացիներին՝ հավաքելու իրենց բերքը։ Հայ գյուղացիները խմբերով իջնում էին քաղաքները և բողոքում իշխանությունների կամայականությունների դեմ։

Գաղութի ազգային մարմինները, որոնց մեջ մինչև 1924—1925 թթ. իշխող էին ժողովրդից կարված, ըստ էության մասամբ շարժմանը հակադրվող և պասիվություն քարոզող պահպանողական տարրեր, մասսաների ճնշման տակ նույնպես բողոքներ էին հղել հունական կառավարությանը։ Այս տեսակետից բնորոշ է Մակեդոնիայի և Թրակիայի հայերի քաղաքական ժողովի 1924 թ. հուլիսի 22-ի նիստի որոշմամբ ընդունված բողոքի հեռագիրը, ինչպես նաև Նոր ու Հին Հունաստանի հայ ազգային իշխանությունների համատեղ դիմումը արտաքին գործերի մինիստրությանը 1924 թ. դեկտեմբերի 12-ին, որով պահանջվում էր դադարեցնել տեղահանությունները։ Հեռագրում ասված էր. «Թրակիայեն հինգ հազար հայ գաղթականներու տեղափոխության կառավարական որոշումը կատարյալ աղետի մը հանգամանք առավ հայ ժողովրդին համար, թե իր ծավալովը և թե գործադրության եղանակովը։ Հակառակ որ այդ որոշումը միայն Թրակիո համար էր, այսօր կտեղահանվին նաև Մակեդոնիո հայերը՝ Կավալայեն, Տրամայեն և այլն։

Իրենց բոլոր կարողությունը հողին հանձնած և հինգ-վեց ամսվան ճակատի քրտինքով դայն ոռոգած հողագործները կպատրաստվին թողնելու ամեն ինչ հողին մեջ և մերկ ու սոված ճամփա իջնալու, դատապարտվելով անոթության ճիրաններուն մեջ փչանալու»[62]։

Այնուհետև «Հանուն արդարության և տարապանքի եղբայրակցության» Սալոնիկի քաղաքական ժողովը պահանջում էր հունական կառավարությունից՝

1) սահմանափակել հայերի տեղահանությունը Թրակիայի շրջանում.

---

[62] «Նոր օր», 1925, № 411։

2) Հայ գյուղացիներին թողնել իրենց բնակավայրերում՝ մինչև բերքահավաքի վերջը։

Տեղահանությունները և հունական ռեակցիայի հայահալած քաղաքականությունը կասեցնելու համար վճռական նշանակություն կարող էին ունենալ հունահայ աշխատավորության մասսայական ելույթները միայն։

Կառավարական ռեակցիոն շրջանները 1925 թ. ամռանը տեղահանությունների պրակտիկան նաև Հին Հունաստանի, մասնավորապես Աթենքի շրջանների վրա տարածելու իրենց փորձերի մեջ հենվում էին հատկապես հունական ռեակցիոն մամուլի որոշ օրգանների հակահայ պրոպագանդի և մի քանի բուրժուա-շովինիստական կազմակերպությունների վրա։ Նման կազմակերպություններից մեկն էր Աթենքի խոշորագույն գաղթական՝ Դուրդութիի (Ֆիքս) հույների, այսպես կոչված, «Սիլլոդոսը» (միությունը), որը, թևավորված ռեակցիայի հակահայ խաչակրությունից, 1925 թ. օգոստոսին մի հուշագիր հղեց պառլամենտի նախագահին։ Դրանով «Սիլլոդոսը» պահանջում էր յոթ հազար հայ գաղթականների տեղահանումը[63]։ «Սիլլոդոսի» այս ելույթը մասսայական խոր վրդովմունք առաջ բերեց գաղթականների բոլոր աշխատավորների մեջ։ Դուրդութիի հայրենակցական, գաղթականաց, երիտասարդական և այլ բոլոր միությունները, կոմունիստների և առաջավոր մյուս տարրերի գլխավորությամբ, միասնաբար ոտքի ելան սպառնացող վտանգի դեմ։ Սկսվեցին բողոքի մասսայական միտինգներ, հավաքույթներ, ուր աշխատավորները վճռականություն էին հայտնում ամեն գնով պաշտպանելու իրենց մարդկային իրավունքները, իրենց ընտանիքներն ու բարաքները ամեն տեսակի ոտնձգություններից։ Մասսայական այս ելույթները գտան ոչ միայն Դուրդութիի հայ համայնքի թաղական խորհրդի, այլև Ազգային կենտրոնական վարչության աջակցությունը, արժանանալով նաև հույն գաղթական մասսայի եղբայրական համերաշխությանը։ Այն արժանացավ նաև հունական առաջավոր հասարակայնության և դեմոկրատական ու բանվորական ռեոլյուցիոն մամուլի պաշտպանությանը։

63 «Ալիք», 1925, № 751։

«Միլլոզոսի» ռեակցիոներները ժամանակավորապես նահանջեցին, իսկ կառավարական օրգանները չհամարձակվեցին ձեռնամուխ լինելու իրենց իսկ հրահրած և նյութած պլանի գործնական իրականացմանը։ Դա մասսայական շարժման, դեմոկրատական ուժերի միասնության հաղթանակն էր այդ օրերին, և այն փաստորեն ձախողեց տեղահանությունների տարածումը Հին Հունաստանի շրջանների վրա։ Դեմոկրատական և բանվորական ռևոլյուցիոն ուժերի հետագա աճն ու ամրապնդումը, ինչպես նաև հայ և հույն աշխատավորների եղբայրական համերաշխության կապերի ուժեղացումը սանձահարեցին ռեակցիային այնպես, որ նա այլևս չհամարձակվեց դիմել մասսայական տեղահանությունների իր ձախողված պրակտիկային։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ ՀՈՒՆԱՀԱՅ ԳԱՂՈՒԹՈՒՄ

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀՈՍԱՆՔԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Կապիտալիզմի զարգացման և Հունաստանում բանվոր դասակարգի քանակական աճի հետևանքով XIX դարի վերջերում սկսում է զարգանալ նաև բանվորական շարժումը։

Առաջին սոցիալիստական խմբերը կազմակերպվում են 1878 թ. Հունաստանի մի շարք քաղաքներում ու կղզիներում։

Առաջին գործադուլը Հունաստանում տեղի է ունենում 1879 թ. փետրվար ամսին, Սիրա կղզում, իսկ 1894 թ. առաջին անգամ Հունաստանում, Աթենքի ստադիոնում, տոնվում է պրոլետարական միջազգային տոնը՝ Մայիսի 1-ը։ 1896 թ. բռնկվում են մի շարք գործադուլներ, որոնց մեջ կարևորագույն տեղ է գրավում Լավրիոնի հանքափորների գործադուլը (1896 թ. ապրիլին)։ Նույն ժամանակաշրջանում սոցիալիստական խմբեր են կազմակերպվում արդյունաբերական կենտրոններում, ինչպես, օրինակ, Աթենք, Պիրեա, Պատրաս, Վոլո, Կավալա և այլ քաղաքներում։

Ազատագրական գաղափարների ազդեցության տակ գրանցվող սակավաթիվ հայկական գաղութի աշխատավորների առաջավոր առանձին տարրեր մասնակցություն էին բերում Հունաստանի բանվորական շարժմանը։

1887 թ., Աթենքում լույս էր տեսել Հնչակյան պարտիայի անդրանիկ պաշտոնաթերթ «Հնչակ»-ի երկրորդ համարը Ա. Նազարբեկի խմբագրությամբ։ 1890-ական թվականների սկզբներին Աթենքում հրատարակվել են մարքսիզմի կլասիկ-

ների առանձին երկերի առաջին հայերեն թարգմանությունները։ Այսպես սկզբնավորվում է հունահայ աշխատավորների, ինտելիգենցիայի առաջավոր տարրերի ծանոթությունը մարքսիստական գաղափարների հետ։

1893 թ. Աթենքում, առանձին բրոշյուրով հայերեն հրատարակվել է Մարքսի «Վարձու աշխատանք և կապիտալ» աշխատության մի գլուխը, իսկ 1894 թ. նույն Աթենքում հրատարակվող «Գաղափար» եռամսյա հնչակյան հանդեսում տպագրվել են «Կոմունիստական մանիֆեստ»-ի առաջին և երկրորդ գլուխները[1], Պոլ Լաֆարգի «Կոմունիզմը և տնտեսական էվոլյուցիան» հոդվածը և այլն։ Դրանք վկայում են առաջադիմական, սոցիալիստական, ապա մարքսիստական գաղափարների նկատմամբ հունահայ աշխատավորների հետաքրքրության մասին։ Այդ հրատարակությունները, անկախ նրանց հրատարակիչների քաղաքական տենդենցներից, օբյեկտիվորեն նպաստում էին սոցիալիստորեն տրամադրված հնչակյան բանվորների ու աշխատավորների գաղափարական մշակմանը, ապա և նրանց ազդեցության ուժեղացմանը թե՛ հնչակյան պարտիայի ներսում և թե՛ գաղութի հասարակական-քաղաքական կյանքում։

1897 թ. հույն-թուրքական պատերազմից հետո, ինչպես նշել ենք, սկսվել էր հայերի մասսայական արտագաղթը Հունաստանից. նվազել էր գաղութի թվական կազմը, և տնտեսական դժվարությունների և այլ պատճառների բերումով դադարեցվել էին հայկական պարբերականների հրատարակությունները։ Հունահայ աշխատավորների մեջ մարքսիստական թարգմանական գրականությունը տարածվում էր հունարեն լեզվով, որի հրատարակումն օր-օրի աճում էր երկրում բանվորական շարժման զարգացման համեմատ։

---

[1] Տե՛ս «Գաղափար», № 1, 1894, «Բուրժուա և պրոլետարի» (էջ 15—32), № 2, «Պրոլետարներն ու կոմունիստները» (էջ 107—117)։ Նշենք, որ «Կոմունիստական մանիֆեստի» առաջին հունարեն լրիվ թարգմանությունը հրատարակվել է 1909 թ. դեկտեմբեր ամսին Վոլոս քաղաքում լույս տեսնող «Էրգաթիս» («Բանվոր») սոցիալիստական շաբաթաթերթում։

1905—1907 թթ. ռուսական բուրժուա-դեմոկրատական հեղափոխության բարերար ազդեցության տակ սոցիալիստական ու բանվորական շարժումները սկսեցին աշխուժանալ Հունաստանում։

1909 թ. Սալոնիկում ստեղծված սոցիալիստական բանվորական «Ֆեդերասիոնը», առաջին նշանավոր հեղափոխական ինտերնացիոնալ կազմակերպությունն էր, որ իր շարքերում միավորում էր հույն, հայ, հրեա, բուլղար և թուրք առաջավոր բանվորների[2]։

Հունաստանի պետական անվտանգության (Ասֆալիայի) պետ Ֆեսոպուլոսը 1928 թ. գրած իր պաշտոնական գեկուցագրերից մեկում, որ տպագրվել էր հունական մամուլում, անդրադառնալով կոմունիստական գաղափարների տարածման պատմության հարցին Հունաստանում, ընդունում է, որ 1910—1911 թթ. «Ֆեդերասիոնի» շարքերում կազմակերպված օտարազգի բանվորների մեջ կային նաև «սակավաթիվ հայեր»[3]։

«Ֆեդերասիոնը» սերտ կապ պահպանելով Բուլղարիայի սոցիալ-դեմոկրատական պարտիայի ձախ թևի՝ «տեսնյակների» հետ, պատմական խոշոր դեր խաղաց բալկանյան սոցիալիստական պարտիաների ուժերի միավորման գործում։

Հունաստանը հաղթական դուրս գալով 1912—1913 թթ. բալկանյան պատերազմներից, ստացավ Հարավային Մակեդոնիան՝ Սալոնիկ քաղաքի հետ միասին, Արևմտյան Թրակիան, Կրետե կղզին և հարավային էպիրը։ Այս նվաճումների շնորհիվ Հունաստանի տերիտորիան կրկնապատկվեց, նրա

---

[2] «Ֆեդերասիոնը» 1909 թ. հրատարակում էր իր տպագիր օրգանը հունարեն, բուլգարերեն, թուրքերեն և իսպանա-հրեական լեզուներով, և կոչվում էր «էֆիմերիս թոն էրգատոն» («Բանվորների թերթ»)։ Այդ թերթը, կարճ դադարից հետո, շարունակեց իր հրատարակությունը «էրգատիրի ալիլենկիի» («Բանվորական համերաշխություն») անվան տակ, որը խոշոր դեր խաղաց Սալոնիկի բազմազգ բանվորությանը արհմիություններում կազմակերպելու գործում։ Այդ ժամանակ դեռ Սալոնիկը մտնում էր Թուրքիայի սահմանների մեջ և առաջադիմական բոլոր ուժերի ու դեմոկրատական քաղաքական հոսանքների կենտրոնն էր։

[3] Տե՛ս «Ռիզոսպաստիս», Աթենք, 1928, հուլիսի համարները։

բանվոր դասակարգի շարքերը բազմացան ու ամրապնդվեցին բազմազգ Մակեդոնիայի բանվորության կազմակերպված ու մարտական նորանոր ջոկատներով, որոնք խոշոր դեր խաղացին հետագայում հունական բանվորական շարժման զարգացման գործում։ Հարավային Մակեդոնիայում և Արևմտյան Թրակիայում ապրող հայերը և մասնավորապես Սալոնիկի «Ֆեդերասիոնի» ռևոլյուցիոն շարքերում դասավորակված հայ աշխատավորները, որոնց մեջ կային բազմաթիվ ծխախոտագործ բանվորներ, նույնպես միացան հունահայ դաշտին։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիայի հաղթանակը Ռուսաստանում լայն արձագանք գտավ Հունաստանում և նպաստեց բանվորական շարժման վերելքին։

1917 թ. նոյեմբերին Հունաստանում գոյություն ունեին բանվորական 207 արհմիություն՝ 52.129 անդամով[4], իսկ 1918 թ. հոկտեմբերին նրանց թիվն արդեն հասել էր 320-ի, 79.306 անդամով։ Դա խոսում էր բանվորական շարժման անշեղ աճի մասին։

1918 թ. նոյեմբերի 17-ին Պիրեայում գումարված սոցիալիստական առաջին համագումարում հիմնվեց Հունաստանի սոցիալիստական բանվորական պարտիան։ Այդ ժամանակից էլ սկսվում է կոմունիստական պարտիայի պատմությունը։

Պարտիայի I համագումարը խանդավառությամբ ողջունեց սոցիալիստական ռևոլյուցիան Ռուսաստանում, դատապարտեց կազմակերպվող անգլո-ֆրանսիական ինտերվենցիան, պահանջեց «միապետական ռեժիմի ոչնչացումը» և «ժողովրդական դեմոկրատիայի հաստատումը» Հունաստանում[5]։

Կոմունիստական ինտերնացիոնալի հիմնադրումից անմիջապես հետո (մարտ, 1919) Հունաստանի սոցիալիստական բանվորական պարտիան դատապարտեց II ինտերնացիոնալի օպորտունիզմը և մայիս ամսին որոշում ընդունեց Կոմինտերնի շարքերը մտնելու մասին։ 1920 թ. ապրիլին Աթենքում գումարված ՀՍԲ պարտիայի II համագումարը հայտարարեց Կոմունիստական ինտերնացիոնալի մեջ մտնելու մասին և

---

[4] Տե՛ս „Χρονικὸ τοῦ ἀγῶνα", էջ 15։

[5] «Ռիզոսպաստիս», 1918, նոյեմբերի 12։

ընդունեց նրա սկզբունքներն ու որոշումները որպես ուղենիշ իր հետագա ռևոլյուցիոն գործունեության համար։ Համագումարը լրացրեց պարտիայի անունը՝ այն անվանելով «Հունաստանի սոցիալիստական (կոմունիստական) բանվորական պարտիա»։

Հունաստանի կոմունիստական պարտիան խոշոր աշխատանք ծավալեց բանվոր դասակարգի բոլոր խավերի և ազգային փոքրամասնությունների մեջ։ Նա հետևողական պայքար մղեց Հունաստանում ապրող մակեդոնացիների, հրեաների, թուրքերի և հայերի իրավահավասարության համար, անողոք կերպով մերկացրեց ու դատապարտեց հանրաշխարհային պատերազմից հետո սկսվող հույն-թուրքական պատերազմը, կազմակերպեց ու ղեկավարեց բանվոր դասակարգի ռևոլյուցիոն դիմադրությունը հունական իմպերիալիստական բուրժուազիայի ավանտյուրաների, մասնավորապես հակասովետական ինտերվենցիայի դեմ։

Ռևոլյուցիոն շարժման վերելքի պայմաններում Հունաստանի կոմպարտիան գլխավորեց բանվորների, գյուղացիների և ազգային փոքրամասնությունների համերաշխության շարժումը՝ սովի ու հիվանդությունների դեմ մղվող պայքարում, Սովետական Ռուսաստանին անմիջապես օգնություն ցույց տալու համար, կազմակերպելով մասսայական հանդգնակություններ աշխատավորական բոլոր խավերի մեջ։ Հունահայ աշխատավոր դաղթականները մասնակցում էին այդ շարժմանը, ներգրավվում ռևոլյուցիոն արհմիությունների մեջ, իսկ նրանց առաջավոր տարրերը մտնում էին կոմունիստական պարտիայի շարքերը։

Հունաստանի ռևոլյուցիոն բանվորական շարժումը բազմաթիվ թելերով կապված էր եվրոպական և հատկապես բալկանյան երկրների բանվորական շարժման հետ։ Այդ կապերն ավելի ամրապնդվեցին Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիայի բարերար ազդեցությամբ և կազմակերպչորեն ձևակերպվեցին, երբ Բալկանյան սոցիալիստական ֆեդերացիան 1919 թ. մարտին մտավ Կոմունիստական ինտերնացիոնալի մեջ։ 1920 թ. հունվարին Սոֆիայում տեղի ունեցավ



ԷԼՔ ԲԱՆԻՍԻՆՔԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻԱՑՅԱԼ ՏԻՊԼԻՊ

Բոլոր երկրների միացեք, Պրոլետարներ

ՀԱՅ

Հայ բանվորներ ու աշխատավորներ,

Ընդ մեկուսի, համաշխարհային աղետի, համազգային դժբախտության, անասելի քայքայումի, համազգային սովի, սարսափելի ոգուիթեան պատմական վայրկեանին, երբ կեանքը անկարելի դարձած է ժողովուրդներու համար, իսկ ափ մը անոգոք չահագործողներ, քծնող բապանգիստներ, որոնք ազգուկի պէս ժողովուրդին մարմինէն կը բամեն անար արեան վերջին կաթիլը՝ ուելի անհոգ, ուելի կուշտ, ուելի շռայլ ապրելու համար, — կը քարձրացնենք մեր ձայնը դարբիմալիստական դժոխքի ուերակներու մէջէն, ու կը կոչենք ձեզ համախմբուելու, կազմակերպուելու, բանաւորուելու, հաղորդակցելու իրար մէջ, սանդեալու հայ մոլեռանական գոմունիստական ոգիան

Բուլղարահայ կոմունիստների 1919 թ. հուլիսին հրատարակած առաջին տպագիր կոչը

բալկանյան երկրների կոմունիստական պարտիաների առաջին կոնֆերանսը, ուր Բալկանյան սոցիալիստական ֆեդերացիան վերանվանվեց Բալկանյան կոմունիստական ֆեդերացիա, հիմք դնելով կոմունիստական պարտիաների հետագա ավելի սերտ համագործակցությանը՝ Կոմունիստական

ինտերնացիոնալի դրոշի տակ։ Այս հանդամանքը դրական նշանակություն ունեցավ նաև հունահայ և բուլղարահայ կոմունիստական խմբերի միջև կապերի ստեղծման համար։

1919 թ. հուլիս ամսին բուլղարահայ կոմունիստները Պլովդիվում հրատարակեցին իրենց առաջին կոչը[6] ուղղված Բուլղարիայի և արտասահմանի հայ աշխատավորությանը։ Այդ կոչն արտասահմանի կոմունիստական պարտիաների հայկական սեկցիաների պայքարի պատմությանը վերաբերող առաջին տպագիր փաստաթղթերից մեկն է[7]։

Այդ նշանավորում էր քաղաքական նոր, երիտասարդ կոմունիստական հոսանքի հաստատումն ու առնականացումը բալկանահայ գաղութներում, որն անհաշտ պայքարի էր դուրս եկել ազգայնական պարտիաների դեմ՝ հանուն նորաստեղծ կոմունիստական պարտիաների դրոշի տակ բալկանահայ աշխատավորության համախմբման։

Պլովդիվից բացի, բավականաչափ անդամներով կոմունիստական խմբեր էին կազմակերպվել 1919 թ. երկրորդ կեսին՝ Ռուշչուկ, Վառնա, Շումեն (ներկայումս Կոլարովգրադ), Դեդե-Աղաճ (ներկայումս՝ Ալեքսանդրապոլիս, Հունաստան), Սոֆիա, Իսլիմյա (ներկայումս Սլիվեն), Բուրգաս, Էդիրնե (Թուրքիա), Դիմոթիկա (Հունաստան), Գյումյուլջինա (ներկայումս՝ Կոմոտինի, Հունաստան), Հարմանլի, Օրեխովո և ուրիշ քաղաքներում, ուր աշխատում և իրենց ռևոլյուցիոն գործունեությունն էին ծավալում հայ կոմունիստները[8]։

Բուլղարիայի և Հունաստանի որոշ շրջանների հայկական կոմունիստական խմբերը հարաբերություններ էին ստեղծել միմյանց հետ և կոմունիստական պարտիաների ղեկավարությամբ կազմակերպված աշխատանք էին կատարում հայ աշ-

---

[6] Այդ կոչը հրատարակվել էր փոքր բրոշյուրի ձևով և բաղկացած էր 16 էջից։ Այն խմբագրել է բուլղարական ռևոլյուցիոն շարժման հնագույն վետերան Ստեփան Շահրաքյանը։ Տե՛ս Հայկական ՍՍՌ ՀՌՍՇ ԿՊԱ, Ֆ. 4-114, ց. 1, գ. 63, թ. 9-17։

[7] Տե՛ս Ռ. Հ. Խաչատրյան, Արտասահմանի հայ կոմունիստական մամուլի պատմությունից, հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակություն, Երևան, 1960, էջ 34—41։

[8] Տե՛ս Հայկական ՍՍՌ ՀՌՍՇ ԿՊԱ, ֆ. 4—114, ց. 1, գ. 63, թ. 1։

խառավորության մեջ, հատկապես Արևմտյան Թրակիայի Դեդե-Աղաճ, Գյումյուլջինա, Դիմոթիկա քաղաքների՝ Հունաստանին միացվելուց հետո։

Կիրառելով Բալկանյան կոմունիստական ֆեդերացիայի գիծը, բուլղարահայ կոմունիստները որպես բալկանահայ աշխատավորության ավելի վաղ կազմակերպված ջոկատ, վերոհիշյալ հայկական կոմունիստական խմբերին պարբերաբար ուղարկում էին շրջաբերական նամակներ, ուր պարզաբանվում էին նրանց հետաքրքրող հարցերը։ Մեր նպատակն է, ասվում է 1920 թ. հունվարի 3-ի առաջին շրջաբերական նամակում,— «կազմակերպել հայ բանվորներն ու մանր արհեստավորները հայ ազգային, հնչակյան, դաշնակցական ու ռամկավար կուսակցություններին դուրս անջատ միության մը մեջ՝ հանուն կոմունիզմի և Երրորդ Կոմունիստական Միջազգայնականի, հետացնել հայ բուրժուական, ազգայնական կուսակցություններու պատկանող բանվորներն անոնց շովինիստական ապականիչ ազդեցությունեն, զարգացնել անոնց մեջ դասակարգային գիտակցությունը, պրոպագանդայի, ագիտացիայի և ընդհանուր քաղաքական ակցիաներու միջոցով ու միացնել յուր համեստ ուժերը կոմունիզմի հզոր հեղափոխական ուժերու հետ Բուլղարիա, Բալկաններն ու արտասահման ջնջելու համար աւր մը դրամատերերու ու ֆինանսիստներու տիրապետությունը, որոնք կազմակերպված են հանիշատակիչ կապիտալիստական պետության մը մեջ և կանգնել կոմունիզմի հոյակապ աշտարակը, որը կբերե շահագործվողներու կամ վարձկան բանվոր դասակարգի և փոքր ազգերու ազատագրումը միջազգային ավազակ իմպերիալիզմի գազանային ճանկերեն»[9]։

Հայկական կոմունիստական խմբերի անդամներին հանձնարարվում էր՝ ակտիվ կերպով մասնակցել «կոմունիզմի բոլոր կռիվներուն»[10]։

Սփյուռքահայ գաղութներում հայ ազգայնական հոսանքների դեմ ծավալվող գաղափարական կռիվը հաջողությամբ պահելու և հայ աշխատավորության առաջավոր բոլոր ուժերը

---

[9] Տե՛ս Հայկական ՍՍՌ ՀՌՍՇ ԿՊԱ, ֆ. 4/114, ց. 1, գ. 63, թ. 1։

[10] Նույն տեղում, ց. 1, գ. 63, թ. 2։

Կոմունիստական պարտիաների շուրջ միավորելու և կազմակերպելու հրատապ խնդիրներն առաջ բերին նաև կոմունիստական մամուլ ստեղծելու անհրաժեշտությունը։ 1920 թ. ամռանը Բուլղարիայում սկսեց հրատարակվել «Կարմիր Լուրեր»[11] կոմունիստական առաջին տպագիր ամսաթերթը Բալկաններում և ընդհանրապես արտասահմանում, որը 1922 թ. մարտի 15-ից վերածվեց երկշաբաթաթերթի և շարունակեց հրատարակվել «Նոր աշխարհ» անվան տակ։ «Նոր աշխարհը» որպես արևմտահայ աշխատավորության մարտական օրգաններից մեկը՝ այդ տարիներին տարածվում էր Հունաստանի հայ աշխատավորության մեջ, ինչպես նաև փոքրասիական հայաշատ քաղաքներում։

Հետաքրքրական է 1920 թ. Բուլղարիայի կոմունիստների կողմից կազմված լուսավորական գործունեության ծրագիրը, որ հիշատակված շրջաբերական նամակով հանձնարարվում էր բոլոր հայկական կոմունիստական խմբերին։ Հայ աշխատավորության մեջ կարդացվելիք դասախոսություններն ընդգրկում էին հետևյալ թեմաները, որոնց հենց միայն թվարկումը խոսում է ինքն իր մասին։ Օրինակ՝ «Ներկա հայ իրականությունը», «Հայ քաղաքական կուսակցությունները», «Հայ մամուլը և բանվորությունը», «Թե ինչ ասել է կոմունիզմ», «Դաշնակցությունը և կոմունիզմը», «Հնչակյանները և կոմունիզմը», «Ռամկավարները և կոմունիզմը», «Հայրենիքի գաղափարը և կոմունիզմը», «Բանվորական արհեստակցական միությունների մասին», «Համագործակցական միությունները (կոոպերացիաները)», «Քաղաքական կուսակցությունները և պրոլետարիատը», «Սոցիալիստական հեղափոխությունը» և այլ թեմաներ։

Հայկական գաղութների հրապարակային ժողովներում կոմունիստական խմբերին հանձնարարվում էր կազմակերպել ելույթներ հետևյալ հարցերի շուրջը. Վերսալը, հայկական հարցը և միջազգային դրությունը, հայրենիքի տուրքը, Երևանյան (դաշնակցական) հանրապետությունը և Սովետական

[11] «Կարմիր լուրեր» թերթից առաջ 60 օրինակ տպարանակով լույս էր ընծայվել «Նոր Հոսանք» ապակետիպ թերթի մեկ օրինակը։

Ռուսաստանը, Փարիզի հայ պատվիրակության գործունեությունը և այլն[12]։

Թվարկված թեմատիկայի բազմազանությունը, նրա գաղափարական նպատակասլացությունը վկայում են դասախոսությունների ծրագիրը կազմող կոմունիստների մարքսիստական պատրաստակամությունը, նրանց մարանչող ուսուցիչն ոգին, արևմտահայ աշխատավորությանը հուզող բոլոր հարցերն ընդգրկելու, դրանց լուծում տալու ազնիվ մտադրությունները։

Ուսուցիչն սուր քննադատությամբ մերկացնելով ազգայնական պարտիաներին, հայ կոմունիստներն իրենց գլխավոր հարվածն ուղղում էին Հայաստանի գաշնակցական կառավարության և նրա արտաքսահմանյան արբանյակների դեմ, բնորոշելով այդ կառավարությունը՝ «իբրև իմպերիալիստական գազուբային քաղաքականության ներկայացուցիչը» հայ իրականության մեջ և միանգամայն ճիշտ կերպով շեշտում էին, որ այդ կառավարությունը «շուտով իր գլուխը պիտի ջախջախեն»[13]։

Դաշնակցությունը Սովետական Ռուսաստանի դեմ ուղղված ինտերվենցիայի տարիներին, ինչպես և այսօր մնում է իմպերիալիզմի հլու կամակատարը։ Կոմունիստները դիմակազերծ անելով այդ պարտիային, նրա ազդակրության գործունեությունը, կոչ էին անում Բալկանների հայ աշխատավորությանը՝ ակտիվ կերպով պաշտպանել Սովետական Ռուսաստանը։

Բուլղարահայ կոմունիստների ծավալած ագիտացիոն և պրոպագանդիստական գործունեությունն այդ շրջանում զգալի օգնություն էր հանդիսանում նաև Հունաստանի կոմպարտիայի շարքերում կազմակերպված հայ կոմունիստների համար։

Հունաստանի կոմպարտիայի Կենտկոմի ցուցումների հիման վրա հունահայ կոմունիստներն ու կոմերիտականները համախմբվելով ու միավորելով իրենց սակավաթիվ ուժերը՝

---

[12] Տե՛ս ՀՍՍՌ ՀԱՍԵ ԿՊԱ, ֆ. 4, ցանկ 114, գ. 1, գ. 63, թ. 4։

[13] Նույն տեղում, թ. 5։

Վահրամ Սահակյան

նույնպես կազմեցին հայկական խմբեր (ֆրակցիաներ)՝ կազմակերպված ռևոլյուցիոն աշխատանք ծավալելու համար հունահայ աշխատավոր մասսաների մեջ։ Հայկական կոմունիստական խմբերի ստեղծումը պատմական անհրաժեշտություն էր Հունաստանի կոմունիստական շարժման համար և բխում էր հայ աշխատավոր զանգվածների մեջ կոմպարտիայի ռևոլյուցիոն մասսայական աշխատանքների բարելավման պահանջից։ Այդ խմբերը իրենց աշխատանքներում

հետևողականորեն իրագործում էին ինտերնացիոնալիզմի սկզբունքները, կազմակերպորեն լիովին ենթարկվում Հունաստանի կոմպարտիային և ղեկավարվում նրա Կենտրոնական կոմիտեի, մարզային և քաղաքային կոմիտեների կողմից։

Հայկական կոմունիստական խմբերի գլխավոր խնդիրն էր կազմակերպել ռևոլյուցիոն ագիտացիա և պրոպագանդա հայ բանվորների, գյուղացիների և արհեստավորների մեջ իրենց մայրենի լեզվով, հայաշատ թաղամասերում կազմակերպել ակումբներ, լսարաններ, մասսայական հակադաշնակ միություններ, համախմբել նրանց շուրջ համակիր անկազմակերպ հայ աշխատավորներին, ներգրավել նրանց Հունաստանի ռևոլյուցիոն պրոլետարիատի պայքարի մեջ։

Հայկական խմբերն (ֆրակցիաները) իրենց շարքերում համախմբում էին պարտիայի և կոմերիտմիության այն հայ անդամներին, որոնք իրենց հիմնական հասարակական աշխատանքները տանում էին հայ աշխատավորության մեջ։ Պարտիական կազմակերպությունների ղեկավարությամբ նրանք կոնկրետացնում էին պարտիայի գիծը հունահայ գաղութի ովյալ քաղաքի, շրջանի, արվարձանի աշխատավորների կյանքի ու պայքարի կոնկրետ պայմաններին ու խնդիրներին համապատասխան, և այս իմաստով նրանք Հունաստանի կոմպարտիայի քաղաքային, շրջանային, արվարձանային ղեկավար օրգանների համար չափազանց կարևոր օժանդակ հենակետեր էին հայ փոքրամասնության մեջ ռևոլյուցիոն աշխատանքները կազմակերպելու և ծավալելու գործում։

Հայկական առաջին կոմունիստական խումբը ստեղծվեց ռևոլյուցիոն տրադիցիաներով հարուստ Սալոնիկ քաղաքում 1923 թ. վերջերին՝ Իզմիրից գաղթած ձախ հնչակյանների, կոմունիստորեն տրամադրված հայ բանվորների Հունաստան հասնելուց հետո։ Սկզբնական շրջանում այն բաղկացած էր ոչ ավելի, քան տասնհինգ կոմունիստից. հետագայում նա բազմապատկեց իր անդամների թիվը։ Այդ խումբը Սալոնիկի պարտիական կազմակերպության ուժեղ հենարանն էր՝ Մակեդոնիայի և Թրակիայի հայ աշխատավորության մեջ կոմունիստական պարտիայի ազդեցությունը տարածելու գործում։

Խորեն Ծովիկյան

Հունահայ կոմունիստական խմբերի կազմակերպման առաջին շրջանում Սալոնիկը խաղում էր յուրատեսակ առաջատար դեր։ Այս խմբի ղեկավար ընկերները շրջագայում էին Մակեդոնիայի և Թրակիայի շրջանները, ինչպես նաև Հին Հունաստանի քաղաքները՝ օգնելով հայ կոմունիստների աշխատանքներին։

Սալոնիկի խմբումն էին գործում, մասնավորապես, Մարգար Քեբաբչյանը, Խորեն և Խաչիկ Ծովիկյան եղբայրները,

Սմբատ Տերտերյանը, Օննիկ Մոմճյանը, Մինաս Ավետիսյանը, Գևորգ Կուրաբյանը, Անթուան Միքայելյանը (1924—1925), հետագայում Կարպիս Պալթայանը, Ստ. Կուրտիկյանը, Մադաթ Թերզյանը, Հովհ. Սատեթյանը, Գր. Թադեոսյանը, Հակոբ Կետիրյանը, Սոֆի Մինասյանը և ուրիշներ։ Կավալայի խմբում գործում էին Սահակ Չալյանը, Թության և Մատինյան եղբայրները, Քոանթիում՝ Վահան Պալթայանը, Աթենքում՝ Սահակ Միսաքյանը, Գուրգեն Վարդանյանը, Սեպուհ Գյուզելյանը, Սուրեն Ծառուկյանը, Լավրիոնում՝ Վահրամ Սաքայանը և շատ ուրիշներ[14]։

---

[14] Մարզար Քեռարյանը 1923—1924 թթ. մասնավորապես նոանդան գործունեություն էր ծավալում ՀԿ-ի կազմակերպություններում, մասսայականացնելով սովետական կարգերի փրկարար դերը հայ ժողովրդի համար։ Ներգաղթելով Սովետական Հայաստան (1924 թ.) նա երկար տարիներ (1931—1937 թթ.) աշխատել է Հայաստանի ՄՕՊՐ-ի կենտրոնական վարչությունում որպես պատասխանատու քարտուղար։ Վախճանվեց 1960 թ. սեպտեմբերին Երևանում, 71 տարեկան հասակում։ Նա ՍՄԿՊ-ի անդամ էր և անհատական թոշակառու։

Խորեն Մովիկյանը, որ Սալոնիկի հայկական խմբի առաջին ղեկավարներից էր, հայրենիք վերադառնալով (1924 թ.), երկար ժամանակ եղել է Երևանի տպարանների պարտիական կազմակերպության ազատված բարտուղար, ապա Լենինգրադում ավարտել է Արևելագիտական ինստիտուտի ասպիրանտուրան, ստացել գիտական աստիճան, դարձել դասախոս նույն ինստիտուտում։ Հայրենական մեծ պատերազմի տարիներին նա Լենինգրադի պաշտպանության համար մղվող մարտերի օրերին գտնվում էր աշխարհազորի շարքերում և այդ ժամանակ էլ զոհվել է։

Բանվոր Սահակ Միսաքյանը իր մարտական մկրտությունը ստացել է դեռևս 1918 թ. ակտիվ կերպով մասնակցելով Բաքվի պրոլետարիատի պայքարին և Բաքվում դեռ բանտարկվել է իր ռևոլյուցիոն գործունեության համար։ Բաքվի կոմունայի անկումից հետո նա անցնում է արտասահման՝ Հունաստան, ուր 1925 թ. մտնելով կոմպարտիայի շարքերը խոշոր աշխատանք է ծավալում Աթենքում՝ հանդիսանալով սակավաթիվ հայ կոմունիստների ամենապայծառ ներկայացուցիչներից մեկը։ Իր ռևոլյուցիոն գործունեության համար աքսորվել է Անաֆի չորակղզին։ Վերադառնալով հայրենիք, նա ամբողջությամբ նվիրաբերել է իր ուժերն ու եռանդը սոցիալիստական շինարարության գործին։ Վախճանվել է 1931 թ. օգոստոսին, Երևանում, դժբախտ պատահարի հետևանքով։

Վահրամ Սամայանը, մինչև իր վերջին շունչը անձնվիրաբար աշխատելով Հունաստանի կոմպարտիայի շարքերում, ֆաշիստ դահիճների ձեռ դար-

Սակայն մինչև 1925 թ. հայկական կոմունիստական խմբերում ընդգրկվել էին առավելապես հնչակյան պարտիային լքած նրա նախկին անդամներ և հայ առաջավոր մտավորականներ։ Թույլ էր հայ բանվորների ընդգրկումը ռևլյուցիոն արհմիություններում, դասակարգային կազմակերպություններում։ Սակայն 1925 թ. վերջերից արդեն որոշակի բեկում առաջացավ հայկական կոմունիստական խմբերի գործունեության մեջ։

Շատ հայ երիտասարդ բանվորներ մտան Կոմերիտմիության և Կոմպարտիայի շարքերը։ Նրանց ծավալած եռանդուն ինտերնացիոնալիստական ռևոլյուցիոն գործունեությունը հունահայ աշխատավորության մեջ և հետևողական պայքարը ազգային սահմանափակվածության տենդենցների դեմ՝ մեծ չափով նպաստեցին կոմունիստական խմբերի գործունեության ծավալմանը և հայ կոմունիստների դաղափարական կոփմանը։

ձավ 1944 թ. օգոստոսին։ Նա Հունաստանի կոմպարտիայի ականավոր գործիչներից էր, որը հետագայում դարձավ կոմունիստական «Ժողովուրդի ձայն», «Նոր շարժում» թերթերի խմբագիրներից և հայկական սեկցիայի մարտական ղեկավարներից մեկը։

Մեխանտագործ բանվոր, Սալոնիկի հայկական սեկցիայի քարտուղար Կարապետ Պալբայանը, ինչպես նաև աչքի ընկնող ակտիվիստ Մատաթ Թերզյանը, հունական ռեակցիայի կողմից բազմիցս հալածվելուց, բանտարկվելուց հետո 1927 թ. նոյեմբերին արտաքսվելով եկել են Հայաստան որպես քաղաքական վտարանդիներ։ Կ. Պալբայանը աշխատել է Կոմինտերնի գծով, իսկ հետագայում զոհվել է Հայրենական մեծ պատերազմում, իսկ Մ. Թերզյանը երկար տարիներ Երևանում եղել է Հայգրքի բաղայի վարիչ, և մահացել է Հայրենական մեծ պատերազմի օրերին։

Կոմպարտիայի Սալոնիկի հայկական սեկցիայի քարտուղար (1927 թ.) Ստ. Կուրտիկյանը 1927 թ. ներգաղթելով, մի շարք տարիներ եղել է Հայաստանի լենինյան կոմերիտմիության Կենտկոմի ղեկավար աշխատողներից. «Ավանգարդ», ապա «Երևանի բանվոր» թերթի խմբագիր, այժմ Արտաքսմանի հետ բարեկամության և կուլտուրական կապի հայկական ընկերության նախագահության և Հայաստանի սովետական գրողների միության վարչության անդամ է և «Սովետական գրականություն» ամսագրի խմբագիր։

Հայրենիք վերադարձած մյուս ընկերները՝ Ամբատ Տերտերյանը, Հակոբ Կեսիքյանը, Գուրգեն Վարդանյանը և բուլգարական ֆաշիստների հալածանքներից ճողոպրած Սոֆի Մինասյանը և ուրիշներ, բոլորն էլ աչքի են ընկել հայրենանվեր գործունեությամբ և իրենց արդարացրել որպես կոմունիստներ և սովետական հայրենասերներ։

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ 1922—1924 ԹԹ.

Հայերի մասսայական գաղթը Հունաստան՝ իր հետ բերեց նաև բուրժուա-նացիոնալիստական պարտիաների բազմաթիվ գործիչներ և նրանց անանկացած քաղաքականության դեմ ակտիվ պայքարի առաջավոր շատ մարտիկներ։

Հունահայ գաղութի ազգային մարմինների ու հասարակական կազմակերպությունների ստեղծման և նրանց գործունեության ծավալման առաջին իսկ տարիներին արդեն իրեն զգալ էր տալիս աշխատավորական լայն մասսաների արմատական շահերն ու քաղաքական տրամադրություններն արտահայտող Սովետական Հայաստանի համակիրների հակադաշնակ ճակատը, որի ղեկավար կորիզն էին կազմում կոմունիստներն ու ձախ հնչակյան բանվորական տարրերը։ Այս ճակատին էին հարում նաև ռամկավարների առաջավոր շատ ներկայացուցիչներ։ Ժողովրդական այդ ճակատին հակադրվում էր դաշնակ թափթփուկների ոգեշնչած հակասովետական, ռեակցիոն տարրերի խմբակցությունը։

1922 թ. հոկտեմբերին Իզմիրից Աթենք հասած Ղևոնդ Եպիսկոպոս Դուրյանը Կ. Պոլսի պատրիարքարանի լիազորությամբ ստանձնեց հունահայ գաղութի ժամանակավոր ղեկավարությունը և իր նախագահությամբ կազմեց Ազգային քաղաքական ժողով՝ ներգրավելով ևս երեք հոգու (Հրանտ Նիքոբյան, Հայկ Քերեսթեջյան, Բարսեղ Կյուլբենկյան)։ Այս կազմը պաշտոնապես վավերացվեց Հունաստանի կառավարության կողմից և ձեռնամուխ եղավ հայ գաղթականներին օգնություն կազմակերպելու գործին։

1922 թ. դեկտեմբերին կազմակերպվեց նաև Կենտրոնական գաղթականական հանձնախումբ, որն ուներ ենթահանձնախմբեր Աթենքի և Պիրեայի մի շարք խոշոր գաղթականներում՝ Ֆիքսում, Կոկինիայում և այլուր։ Արտասահմանյան հայության օգնություն կազմակերպելու հետ միասին Դուրյան Եպիսկոպոսը ստեղծեց բժշկական մարմին՝ գաղթակա-

Սահակ Միսարյան

յաններին այցելելու և կարոտյալներին բժշկական օգնություն ցույց տալու համար։

1921—1922 թթ. սկզբնական շրջանում արտասահմանյան հայության նպաստները ուղարկվում էին դաշնակների անգոյ կառավարության Աթենքի հյուպատոսարանի հասցեով, որի հետևանքով դրանց միայն չնչին մասն էր հասնում կարոտյալներին։ Ջեղծումների նոր ասպարեզ էր բացվել դաշնակների համար։ Գաղթականներին ուղարկված գումարներով նրանք

փորձում էին պահել Հայաստանից վտարված ու թափառական կյանք վարող յուրայիններին, զանազան բախտախնդիր տարրերի, մասուլերիստների։ Անհրաժեշտ էր հասարակական վերահսկողության տակ առնել ծով կարիքների համար առանց այն էլ չնչին նպաստների բաշխման գործը։ Այսպես, Հունահայ Ազգային քաղաքական ժողովին կից ազգայնական բոլոր պարտիաների մասնակցությամբ ստեղծվեց խնամատարական վերին մարմին, որը կոչված էր կարգավորելու կարոտյալ հայ գաղթականներին նպաստներ բաշխելու գործը[15]։

Խնամատարական մարմնի ստեղծման հետ միասին սրվեց նաև միջպարտիական պայքարը։ Եվ քանի որ հենց թեկուզ միայն նպաստաբաշխության հարցում արդեն խախտվել էր դաշնակների միահեծանությունը, հետևաբար սահմանափակվել էր նաև բացահայտ զեղծումների հնարավորությունը։

Հունական օկուպացիոն բանակի հետ համագործակցող Իզմիրի նախկին գավառական և քաղաքական ժողովների անդամները, որոնք նույնպես հասել էին Հունաստան, թեմի առաջնորդ Դուրյան եպիսկոպոսին վարկաբեկելու գիծ էին վարում, քանի որ նա դատապարտում էր դաշնակների արկածախնդրական քաղաքականությունը ինչպես Իզմիրում, այնպես և Հունաստանում։ Նրանք միասնաբար դիմում են հունական կառավարությանը՝ պահանջելով վավերացնել իրենց «լիազորությունները»։ Եվ այդ հաջողվում է նրանց։ 1922 թ. դեկտեմբերի 14-ին հունական կառավարությունը հաստատեց այդ պարոնների «լիազորությունները»։ Սակայն Ղևոնդ եպիսկոպոս Դուրյանը հրաժարվում է վավերացնել այդ ժամանակավոր քաղաքական ժողովի կազմը։ Այս հողի վրա նա ընդհարվում է Իզմիրի հայտնի հարուստ վաճառական, ազգայնամոլ ռեակցիոն տարրերի լիդեր Մարգար Օհանյանի հետ։

Հունական կառավարության ռեակցիոն շրջանների հովանավորությամբ դաշնակներն սկսում են թունավորել մթնոլորտը և ամեն կերպ վատաբանել ու խանգարել Դուրյանի գործունեությունը։ Չկարողանալով հակազդել հունական կառավարության և հայ ռեակցիոներների ճնշմանը, Ղևոնդ

---

[15] «Երկունք», 1922, № 14։

Եպիսկոպոս Դուրյանը 1922 թ. դեկտեմբերին դիմում է Կ. Պոլսի պատրիարքարանին՝ խնդրելով փոխադրել իրեն մի ուրիշ գաղութ, իսկ Հունաստան ուղարկել նոր առաջնորդ։ Այս խնդիրքն ընդունվում է Ազգային պատրիարքարանի կողմից, որի հետևանքով Իզմիրի քաղաքական ժողովի նախկին անդամներից կազմված այդ ապօրինի մարմինը, ինքնաբերաբար ու կամայականորեն, իրեն հայտարարում է Հին Հունաստանի և կղզիների միակ իրավասու վերին մարմինը, որը կատարելու էր Ազգային կենտրոնական վարչության ֆունկցիաները, առանց ընտրված կամ առաջնորդի կողմից նշանակված լինելու։ Այդ կազմի մեջ իբրև Իզմիրի գավառական և քաղաքական ժողովի նախկին անդամներ՝ մտնում էին անցյալում հայտնի մեծահարուստ Միհրան Աղնաուրյանը (ատենապետ), Բ. Կյուլբենկյանը (ատենադպիր) և Մ. Օհանյանը (գանձապահ)[16]։

Պարզ էր, որ այս «վարչությունը» իրավասու օրգան չէր և չէր էլ կարող այդպիսին լինել, քանի որ նա չէր ներկայացնում ամբողջ հայ գաղթականությունը։ Կիլիկիացիները, օրինակ, որոնց մեջ հնչակյանները պահպանում էին իրենց ազդեցությունը, պահանջում էին անհապաղ ընտրություններ՝ օրինական ազգային մարմիններ ստեղծելու համար։

Այս իրադրության մեջ, Ղևոնդ եպիսկոպոս Դուրյանի հրաժարականից հետո, ինքնակոչ ազգային մարմինների դեմ ծավալվեց մի շարժում, որին ակտիվ կերպով մասնակցում էին Սովետական Հայաստանին համակիր աշխատավորական տարրերը։ Աթենքի, Պիրեայի, Կղզիների և Մակեդոնիայի քաղաքների հայաշատ գաղթակայաններում կոմունիստների և ձախ հնչակյանների ղեկավարությամբ սկսել էին կազմակերպվել հակադաշնակ բոլոր ուժերը։ Նոր Հունաստանի կենտրոն Սալոնիկ քաղաքից գրում էին այդ ժամանակ։ «Հայ գաղութը սկսել է կազմակերպվել, և ուրախալի է, որ աշխատավոր դասակարգը, որ կորիզն է հայ ազգին, իր ձեռքին մեջ կենտրոնացուցած է բոլոր ազգային գործերը։ Բուրժուային մնկը, որ ձեռք էր առել գաղթականական գործերու ղեկը,

---

16 «Երկունք», 1922, № 20։

անցյալ օր արժանացավ մի լավ դասի։ Այդ ազրուկը վերջապես հրաժարվեց իր պաշտոնից»[17]։

Նույնանման երևույթներ և արամադրություններ հատկանշական էին նաև հայաշատ մյուս քաղաքների ու գաղթակայանների համար։ Բողոքի մասսայական շարժման ճնշման տակ, նկատի ունենալով նաև Հունաստանի, մասնավորապես Աթենքի շրջանի ազգային գործերի խառնաշփոթ վիճակը, Կ. Պոլսի՝ պատրիարքական տեղապահ Գեորգ եպիսկոպոս Արսլանյանը որպես լիազոր քննիչ, Հունաստան ուղարկեց հանրածանոթ եկեղեցական, Բանդրմայի թեմի նախկին առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոս Մազլմյանին, որը հայտնի էր հնչակյանների հետ ունեցած իր կապերով[18]։

1923 թ. ապրիլի 9-ին Պիրեա քաղաքի Կոկինիա արվարձանի հայկական եկեղեցում իր կատարած պատարագից հետո, Մազլմյան արքեպիսկոպոսը, առաջին անգամ լինելով, հանդես եկավ Պիրեայի Լիփազմա արվարձանում կազմակերպված Սովետական Հայաստանի համակիրների ժողովրդական միտինգում, ուր նա կոչ արեց հայ գաղթականներին՝ իրենց բոլոր հույսերը բևեռել դեպի Սովետական Հայրենիքը, հայ ժողովրդի հետագա բարգավաճման ու ազգային վերածննդի միակ հենարանը[19]։ Այդ միտինգում ելույթներ ունեցան

---

[17] «Երկունք», 1922, № 15։

[18] Նշելով Ղ. Դուրյանի և Կ. Մազլմյանի ընդհանուր դեմոկրատական դիրքորոշումը, մենք միանգամայն հեռու ենք առհասարակ հայ հոգևորականության պատմական դերը չափազանցելու մտքից։ Մենք այդ երևույթը դնահատում ենք որպես հայ հոգևորականության որոշ առաջավոր ներկայացուցիչների կողմից դեպի սովետական կարգերը կատարված շրջադարձի արտահայտություններից մեկը, որը հետևանք էր նրանց կողմից հայ ժողովրդի պատմական բախտի համար սովետական կարգերի ազատարար դերի հիմնականում ճիշտ ըմբռնման և մասնավորապես դաշնակների ազգակործան վարքագծից կրած հիասթափության։ Այս տեսանկյունից դիտած՝ անկախ նրանց կրոնական բարոյների հակագիտական բովանդակությունից, նրանց գործունեությունը պատմականորեն հիմնականում դրական նշանակություն է ունեցել հունահայ աշխատավորության սովետական հայրենիքի հետ կապերը գործում։ Կարապետ արքեպիսկոպոս Մազլմյանը հունահայ թեմի առաջնորդ էր մինչև իր մահը՝ 1951 թվականը։

[19] Տե՛ս «Երկունք», 1923, № 34։

նաև առաջադիմական մի շարք գործիչներ։ Մաղլմյան արքեպիսկոպոսը, բարյացակամորեն արտահայտվելով Սովետական Հայաստանի նկատմամբ, այդ տարիներին սկսեց ժողովրդականություն վայելել, արժանանալով հունահայ աշխատավորության աջակցությանն ու պաշտպանությանը։

Նույն ժամանակաշրջանում, 1923 թ. սկզբներին, Կ. Պոլսի պատրիարքարանի կարգադրությամբ, Թուրքական Թրակիայի նախկին առաջնորդ Երվանդ եպիսկոպոս Փերտահճյանը նշանակվեց Նոր Հունաստանի, այսինքն՝ Մակեդոնիայի և Արևմտյան Թրակիայի հոգևոր առաջնորդ։ Նա գտնվում էր դաշնակների ազդեցության տակ և համագործակցում էր գաղութի ռեակցիոն տարրերի հետ։ Հունահայ գաղութի կազմավորման սկզբնական տարիներին, երբ ազգային հավաքական կյանքը նոր էր ձևավորվում և աշխատավոր ժողովուրդը նոր էր ձեռնամուխ լինում իր սեփական կազմակերպությունների ստեղծմանը, Կ. Պոլսի պատրիարքարանի կողմից որոշ լիազորություններով օժտված և հունական իշխանությունների կողմից ճանաչված այս երկու հոգևորականներն իրենց քաղաքական դիրքորոշման կնիքն էին դնում ինչպես ազգային մարմինների ստեղծման, նույնպես և միջպարտիական պայքարի, դեմոկրատական և ռեակցիոն հոսանքների պայքարի ընթացքի ու բնույթի վրա։ Կարապետ արքեպիսկոպոս Մաղլմյանը 1924 թվականի սկզբներին ստեղծեց Հին Հունաստանի նշանակովի առաջին Ազգային կենտրոնական վարչությունը։ Սա իր առաջին իսկ նիստում հատուկ հանձնախումբ կազմեց՝ հանձնարարելով նրան նախապատրաստելու գաղութի ներքին կանոնադրությունը (ստատուտ), որը պետք է ներկայացվեր ժողովրդական քվեներով ընտրված առաջին պատգամավորական ժողովի վավերացմանը։

Այս կանոնադրության նախագծի քննարկման շուրջը սրվեց պայքարը։ Դաշնակները մեծ ջանք էին թափում նախագծի մեջ մտցնելու այնպիսի կետեր, որոնց նպատակն էր խղել հունահայ գաղութի հոգևոր և կուլտուրական կապերը ինչպես Կ. Պոլսի պատրիարքարանի և Էջմիածնի կաթողիկոսության, այնպես էլ Սովետական Հայաստանի հասարակական կազ-

մակերպությունների հետ։ Նրանք հունահայ գաղութը փորձում էին միացնել այսպես կոչված «համագաղութային կենտրոնին», որի կազմակերպման համար, Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո արկածախնդրական քայլեր էր անում այդ տարիներին դաշնակների գործիքը դարձած Ռումինիայի թեմական խորհուրդը։ Հիմնականում նույն դիրքերում էր կանգնած նաև Մակեդոնիայի և Արևմտյան Թրակիայի առաջնորդ Երվանդ եպիսկոպոս Փերտահճյանը։

Նշանակովի Ազգային կենտրոնական վարչությունը ձեռնամուխ եղավ նաև կրթական գործի կազմակերպմանը։ Հայ ազգային վարժարաններ բացվեցին Պիրեա քաղաքի արվարձաններ Լիփազմայում, Կոկինիայում, Աթենքի արվարձան Ֆիքսում, ապա Պատրասում, Արգոստոլիում, Կրետե կղզու քաղաքներ՝ Ռեթիմնոյում, Կանիայում, ապա Քալամաթայում, Կամարիցայում և այլն։ Շարունակվեցին հայ գաղթականների օգնությունն ու խնամատարությունը կազմակերպելու, ինչպես և պատգամավորական ժողովի ընտրությունները նախապատրաստելու աշխատանքները։

Նոր Հունաստանի առաջնորդ Երվանդ եպիսկոպոս Փերտահճյանը 1924 թ. մայիսի 21—22-ին Սալոնիկ քաղաքի ու շրջանների թեմերի ներկայացուցիչների մասնակցությամբ խորհրդակցական ժողով անցկացրեց։ Այդ ժողովին հրավիրված էին նաև Դիմոտիկայի, Դեդե-Աղաճի, Գյումյուլջինայի, Քսանթիի, Դրամայի, Կավալայի, Սերեզի նշանակովի պատվիրակները, ինչպես նաև Կարինի, Մուշի, Բրուսայի, Արևելյան Թրակիայի, Աֆիոն-Կարահիսարի, Քյոթահիայի, Նիկոմիդիայի, Դարդանելի, Բանդրմա-Բալըքեսիրի, Կ. Պոլսի և Կիլիկիայի շրջանների գաղթականության նշանակովի ներկայացուցիչները։ Խորհրդակցությանը մասնակցում էին նաև Սալոնիկի հայկական մամուլի ներկայացուցիչները, Քաղաքական ժողովի, Թաղականական խորհրդի և խնամատարական մարմինների դիվանները։ Խորհրդակցական ժողովը որոշում ընդունեց կազմակերպել Նոր Հունաստանի պատգամավորական ժողովի անմիջական ընտրությունները՝ վարչական ազգային մարմին ընտրելու համար, որը օրինական իրավասություն պիտի

ունենար Թրակիայի և Մակեդոնիայի հայությանը շահագրգռող բոլոր խնդիրներով զբաղվելու համար[20]։

Սովետական Հայաստանի համակիրները, քննադատելով Փերտահջյան եպիսկոպոսի այս ինքնակամ գործունեությունը, ուղղակի պահանջում էին նոր խորհրդակցություն հրավիրել, այն էլ ոչ թե նշանակովի, այլ ժողովրդի կողմից ընտրված պատգամավորների մասնակցությամբ, որոնք իրավասու լինեին որոշումներ ընդունելու հունահայ գաղութի ազգային հարցերի վերաբերյալ։

1923—1924 թթ. թե Հին և թե Նոր Հունաստանում հիմնականում ավարտվել էր հունահայ գաղութի կազմավորման ու ձևավորման պրոցեսը։ Գաղութն արդեն ուներ իր ազգային մարմիններն ու հասարակական կազմակերպությունները։

Գաղութի ազգային մարմինների կազմավորման հետ միասին, հանդես եկավ նաև հայկական պարբերական մամուլը։ Առաջին թերթը, որ լույս տեսավ հունահայ գաղութում, համաշխարհային իմպերիալիստական պատերազմից հետո ուներ դեմոկրատական-առաջադիմական ուղղություն։ Դա Կիլիկիայից գաղթած հնչակյան գործիչներ Հարությունյանի, Արիս Գալֆայանի և Իգնատիոս Սուքիասյանի ջանքերով 1922 թ. հոկտեմբերի սկզբներին Պիրեայում լույս ընծայված «Երկունք» թերթն էր, որը կանգնել էր Սովետական Հայաստանի նկատմամբ բարյացակամ-բարեկամական դիրքերում։

«Երկունք» թերթն իր գոյությունը պահպանեց մինչև 1923 թ. երկրորդ կիսամյակը, և պատմականորեն դրական դեր կատարեց այդ տարիներին հայրենադարձության ու դեմոկրատական գաղափարների տարածման գործում։

1923 թ. երկրորդ կիսամյակում Աթենքում սկսեց հրատարակվել դաշնակների օրգան «Նոր օր» թերթը, որի շուրջ հավաքվել էին Իզմիրից գաղթած բոլոր դաշնակ բախտախնդիրներն ու մաուղերիստները։ Նույն ժամանակաշրջանում Սալոնիկում իր հրատարակությունը սկսեց «Ալիք» թերթը, որը սկզբի ամիսներին հայ ազգայնական բոլոր պարտիաների

[20] «Նոր Ալիք», Սալոնիկ, 1924, № 52։

համագործակցության արգասիքն էր և նրանց օրգանը։ Շուտով, սակայն, այդ համագործակցությունը կանգնեց լուրջ տարաձայնությունների առջև, երբ հունահայ գաղութի քաղաքական հոսանքները կյանքի հրամայական պահանջով հարկադրված էին որոշել և ճշտել իրենց դիրքերը Սովետական Հայաստանի հանդեպ։ Աշխատավոր հայ գաղթականության հիմնական մասսան գիտակցաբար և տարերայնորեն արդեն կողմնորոշվել էր դեպի իր վերածնվող հայրենիքը՝ Սովետական Հայաստանը։ Այս պայմաններում «Ալիք» թերթի խմբագրական կազմում առաջ եկած լուրջ տարաձայնությունները հանգեցրին նրան, որ խմբագրական կոլեգիան պառակտվելով՝ բաժանվեց երկու մասի։

Սովետական Հայաստանի համակիր տարրերը 1924 թ. մարտ ամսին վճռականորեն խզելով իրենց կապերը դաշնակների հետ, դուրս եկան «Ալիք»-ի խմբագրական կազմից ու վերամիավորելով իրենց ուժերը՝ սկսեցին հրատարակել Սալոնիկի «Նոր Ալիք» թերթը, որի հիմնադրման մեջ ակտիվ դեր խաղաց ռամկավար առաջադեմ տարրերից Գառնիկ Նավասարդյանը[21]։ «Ալիքը» ժողովրդական բոյկոտի ենթարկվելով՝ դարձավ դաշնակ փոքրամասնության օրգանը, որը հետագայում վերանվանվեց «Հորիզոն»։ «Նոր Ալիքը» հնչակյանների հրատարակած «Երկունք» թերթի խափանումից հետո միակ դեմոկրատական թերթն էր այդ տարիներին, որ կանգնել էր Սովետական Հայաստանի սոցիալիստական շինարարությանը սատարելու քաղաքական գծի վրա։ Հունահայ կոմունիստները, որոնք 1923—24 թթ. հաստատորեն թևակոխել էին իրենց կազմակերպական աճի ու մասսայական գործունեության վերելքի շրջանը, ակտիվ կերպով օժանդակում էին ինչպես «Երկունքի», նույնպես և «Նոր Ալիքի» շուրջը համախմբված դեմոկրատական-առաջադիմական ուժերին։

«Նոր Ալիք»-ը «Մեր ուղին» խորագիրը կրող իր առաջին խմբագրական հոդվածում ընթերցողներին խոստանում էր հայ

---

[21] Գ. Նավասարդյանը հետագայում արտաքսվել էր Հունաստանից մի խումբ կոմունիստների հետ միասին (1927 թ. նոյեմբեր), եկել էր Սովետական Հայաստան, ուր և փախճանվեց 1949 թ.։

դաղութը մոտեցնել մայր հայրենիքին և իրազեկ պահել այնտեղ կատարվող ստեղծագործ ու շինարար աշխատանքին, թեյադրել այն միջոցները, որոնցով դաղութի հայությունը կարող էր սատարել իր հայրենիքի վերաշինության գործին։ «Նոր Ալիքն» իր պարտքն էր համարում զգուշացնել հայ աշխատավորությանը ցնորական այն հին քաղաքականությունից, որից «կառչել կհամառին հին ուղեղները...»։

«Տառապող մարդկությունը,— շարունակում էր խմբագրական հոդվածը,— իր պայքարի ձևոնոցը նետած է ներկա իրավակարգի անարդար կառուցվածքին դեմ։ Ճակատագրականորեն հայ ժողովրդին վիճակված է այդ պայքարի ուղին ընդգրկելու, քանի որ պրոլետարական հեղափոխության համփուն վրա պետք է լուծվի հայ ժողովրդի ազատագրության դատը, զոր ազգայնական շարժումը թաղեց անփառունակ կերպով։ «Նոր Ալիքը» այս ոգին վառ պիտի պահե իր ընթերցողներուն մեջ»[22]։

Այս թեզերը պաշտպանություն էին գտնում առաջավոր բանվորների կողմից։ Սակայն այս թերթն էլ հետևողական չէր իր քաղաքական վարքագծի մեջ, քանի որ նա զինաթափում էր աշխատավորական մասսաներին, կոչելով նրանց հեռու մնալ հույն պրոլետարիատի մղած դասակարգային պայքարից։ Այս տեսակետից բնորոշ է «Նոր Ալիքի» հետևյալ հորդորը. «Յուրաքանչյուր հայ,— գրում էր նա,— իր ապրած միջավայրին մեջ պարտավոր է կատարել իր օրինավոր ու պարկեշտ պարտականությունը, իբրև այդ երկրի քաղաքացին։ Այս գիտակցությունը խորացնելու գործը պիտի ստանձնեն «Նոր Ալիքը»[23]։

«Նոր Ալիքի» խմբագրական կազմում 1924 թ. սկզբին իշխող էին ռամկավար առաջադիմական տարրերը։ Սակայն «Նոր Ալիքը» ռամկավարների Փարիզի և Աթենքի ղեկավար կենտրոնների ճնշմամբ խմբագրական կոլեգիայի կազմում կատարված փոփոխությունների բերումով ի վերջո դարձավ բուրժուա-պահպանողական տարրերի օրգանը։ Նրա էջերից

---

22 «Նոր Ալիք», № 1, ընդգծումը մեր է—Պ. Կ.։

23 Նույն տեղում։

ռամկավարները շարունակում էին իրենց պրոպագանդը ինչպես վերը նշված հոդվածի, այնպես էլ Սովետական Հայաստանի նկատմամբ բուրժուական վերապահության ոգով։ 1925 թ. ռամկավարները Աթենքում հրատարակեցին նաև իրենց «Արարատ» թերթը։

Այդ տարիներին հայ ազգայնական պարտիաների գեկավար շրջանների հատուկ հանձնարարություններով Հունաստանն ժամանեցին այդ պարտիաների մի շարք հայտնի գործիչներ։ Նրանք փորձեցին հակազդել հունահայ աշխատավորության մեջ կոմունիստական պարտիայի ծավալած աշխատանքներին ու ամրացնել իրենց պարտիաների խարխլված դիրքերը հայկական գաղութի նորակազմ մարմիններում և հասարակական կազմակերպություններում։ Այսպես, Աթենք հասան և Հունաստանի հայաշատ կենտրոնները շրջագայության դուրս եկան դաշնակցական կառավարության ու պառլամենտի նախկին անդամ Կարո Սասունին, հնչակյան լիդերներ Սապահ-Գյուլյանը, Սյունիքը, Սեդրակ Քարյանը, ռամկավար լիդերներից Հրաչ Երվանդը, Արտակ Դարբինյանը, Վահան Թեքեյանը և ուրիշներ։ Ի դեպ, հնչակյան լիդերները Հունաստան էին եկել մասնակցելու նաև իրենց պարտիայի VIII ընդհանուր պատգամավորական ժողովին։

Հայվասանելով իրենց լոյալ վերաբերմունքը Հայաստանում հաստատված սովետական կարգերի նկատմամբ, հնչակյան ու ռամկավար լիդերները ձգտում էին պահպանել իրենց քաղաքական ազդեցությունը մասսաների վրա, որոնց բացարձակ մեծամասնությունը անվերապահ կերպով նվիրված էր Սովետական Հայաստանին։ Նույնիսկ հակառևոլյուցիոն դաշնակները փորձում էին իրենց քաղաքական հետին նպատակների համար օգտագործել հունահայ աշխատավորության հայրենասիրության անկեղծ զգացումները, խցկվելով նրա մասսայական կազմակերպությունների մեջ։ Դաշնակների, հնչակյանների ու ռամկավարների միջև 1923—1924 թթ. հաճախակի տեղի էին ունենում բանակցություններ, կազմվում էին բլոկներ՝ հունահայ գաղութի հասարակական կյանքում համատեղ ելույթներ ունենալու համար։ Սակայն հայ կոմունիստներն ու

ձախ հնչակյանները միավորելով իրենց ուժերը, միասնաբար պայքարում էին դաշնակներին քաղաքականապես մեկուսացնելու և նրանց ջախջախիչ հարված հասցնելու համար։

Հունահայ դաղութի առաջին հայրենասիրական խոշոր կազմակերպությունը ՀՕՄ-ն էր՝ Հայաստանի օգնության մարմինը։

ՀՕՄ-ը հիմնադրվել էր դեռևս 1920 թ. հոկտեմբերին, Կ. Պոլսում, Հայաստանում դաշնակների տիրապետության օրերին և նպատակ ուներ մոբիլիզացնել արևմտահայության նյութական ու բարոյական միջոցները՝ Հայաստանին օժանդակելու համար։ Սակայն ՀՕՄ-երը դեռ չէին հասցրել ստեղծել իրենց մասնաճյուղերը սփյուռքահայ դաղութներում, երբ Հայաստանում հաղթանակեցին սովետական կարգերը և արդեն 1921 թ. կազմակերպվեցին Հայաստանի օգնության կոմիտեներ՝ Կովկասի և Ռուսաստանի հայաշատ քաղաքների քաղաքական բոլոր հոսանքների ներկայացուցիչների մասնակցությամբ։ ՀՕԿ-երն իրենց առջև նպատակ էին դնում օգնել դաշնակների լծից ազատագրված հարազատ հայրենիքին՝ սովի դեմ մղվող պայքարում, ամեն կերպ օգնել Հայաստանի սոցիալիստական վերաշինության վեհ գործին։ ՀՕԿ-ի առաջին նախագահն էր մեծանուն բանաստեղծ Հովհաննես Թումանյանը։

Այն ժամանակ, երբ ՀՕՄ-երն ստեղծվել էին բուրժուական հայրենասիրության հիմքերի վրա, ՀՕԿ-երն ըստ էության ստեղծվեցին նոր, սոցիալիստական հայրենասիրության հողի վրա։ Նոր իրադրության մեջ ՀՕՄ-երն իրենց գոյությունը կարող էին արդարացնել և պահպանել միայն որդեգրելով ՀՕԿ-ի գիծը, այն է՝ աջակցել Սովետական Հայաստանին, նրա սոցիալիստական շինարարությանը։ Այս հիմքի վրա էլ նախադրյալներ կային ՀՕՄ-երի և ՀՕԿ-երի համատեղ գործունեության համար։ Եվ, հիրավի, 1921 թ. դեկտեմբերի 1-ին ՀՕՄ-ի և ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունները համատեղ կոչ ուղարկեցին արտասահմանի հայությանը՝ հայկական բոլոր դաղութներում կազմելու Հայաստանի օգնության մարմիններ[24]։ Արձագանքելով այս կոչին՝ 1922 թ. դեկտեմբերին

[24] Տե՛ս ՀՍՍՌ ՀՊՍՇ, ԿՊԱ, ֆ. 178, ց. 1, գ. 249, էջ 1։

Կ. Պոլսից Աթենք ժամանեցին Հայաստանի օգնության մարմնի լիազոր ներկայացուցիչները՝ Պ. Մալումյանի գլխավորությամբ, Հունաստանում ՀՕՄ-ի մասնաճյուղ կազմակերպելու համար։ 1923 թ. հունվարի 15-ին Հունաստանի և կղզիների ՀՕՄ-ի կենտրոնական մարմնի անդրանիկ նիստին մասնակցեցին հնչակյանների, դաշնակների, ռամկավարների, ինչպես և Ֆիքսի ու Կոկինիայի թաղական խորհուրդների ներկայացուցիչները։

Հունվարի 17-ին գումարված երկրորդ նիստում ընդունվել էր համագործակցող ազգային երեք պարտիաների կողմից համաձայնեցված հաղորդագրություն, որով հայտարարվում էր ՀՕՄ-ի Աթենքի և Հին Հունաստանի շրջանի վարչություն կազմելու փաստը, վարչություն, «որ իրավասու մարմինն է նույն շրջանի զաղթականաց գործերով զբաղվելու»[25]։

Ընտրված կենտրոնական մարմնի կազմի մեջ մտնում էին դաշնակների, հնչակյանների և ռամկավարների ներկայացուցիչներ։

Սակայն ՀՕՄ-երի որդեգրելիք հայրենասիրության նոր գաղափարները և գործունեության նոր բովանդակությունը սկզբից ևեթ խորթ էին դաշնակներին։ Հայրենասերների դիմակ հագած՝ մտնելով ժողովրդական այդ կազմակերպությունների մեջ, նրանք փորձում էին ՀՕՄ-ը շեղել իր նպատակից, Սովետական Հայաստանի օգնության մարմնից այն վերածել ինչ-որ համահայկական, բայց սոսկ սիյուռքահայ կազմակերպության, որպեսզի նրան կտրեն Սովետական Հայաստանից։

Ռեակցիոն այդ տենդենցների ու գործելակերպի դեմ միասնաբար հանդես էին գալիս սովետական հայրենիքին նվիրված բոլոր հայրենասիրական ուժերը։ ՀՕՄ-ի կազմակերպություններում ծավալվող ներքին քաղաքական պայքարի, ինչպես և Թուրքիայից հայերի մասսայական արտագաղթի հետևանքով, ՀՕՄ-երը ոչ միայն չկարողացան դառնալ մասսայական կազմակերպություններ, այլև շատ կարճատև գոյությունից հետո իրենց տեղը զիջեցին սիյուռքահայության

[25] «Երկունք», 1923, № 22։

մեջ 1924 թ. սկզբներից ծնունդ առած խոշորագույն մասսայական կազմակերպությանը՝ Հայաստանի օգնության կոմիտեներին (ՀՕԿ-երին)։ Սրանք շարունակելով և զարգացնելով հայրենիքին օգնելու ՀՕՄ-ի ազնիվ տրադիցիաները՝ անվերապահորեն սատարեցին Սովետական Հայաստանի սոցիալիստական շինարարությանը, պատմական կարևոր դեր խաղալով հայ ժողովրդի արևելյան և արևմտյան հատվածների եղբայրական կապերի ամրապնդման գործում։

Սովետական հայրենիքի պաշտպանության ու նրա վերաշինության գործին իր նյութական ու բարոյական օժանդակությունը ցուցաբերելու դաշտափարը վերածվեց մի սրբազան պարտականության ամբողջ սփյուռքահայության և մասնավորապես հունահայ աշխատավորության համար։ Հայ աշխատավորական լայն մասսաների համար հասկանալի էր դառնում, որ միայն ամրացնելով հայ ժողովրդի նոր՝ բանվորա-գյուղացիական պետությունը, արևմտահայ աշխատավորական մասսաները կարող էին իրենց պատվավոր տեղը բռնել իրենց ազատագրման համար մարտնչող աշխատավոր մյուս ժողովուրդների շարքում, ազատվել կապիտալիստական շահագործումից և ազգային հալածանքներից, փրկվել թափառականի անպատվաբեր վիճակից։

Հունահայ կոմունիստների և դեմոկրատական տարրերի նախաձեռնությամբ ու ջանքերով 1924 թ. ստեղծված ՀՕԿ-ի մասսայական կազմակերպությունները մեծ դեր խաղացին հունահայ աշխատավորներին Սովետական Հայաստանի շուրջը համախմբելու, նրանց հասարակական ակտիվությունը խթանելու գործում։ Այդ կազմակերպությունների ստեղծման առաջնությունը պատկանում էր Սալոնիկի և Մակեդոնիայի հայ առաջավոր աշխատավորությանը, մի բան, որ իր դրական նշանակությունն ունեցավ ոչ միայն Հունաստանի, այլև բալկանյան մյուս երկրների հայ աշխատավորների հայրենասիրական ուժերի արագ համախմբման համար՝ ՀՕԿ-երի մեջ։ Սալոնիկում ստեղծվեց նաև Հունաստանի ՀՕԿ-ի անդրանիկ կենտրոնական վարչությունը, որը նույն թվականի մայիս ամսին վավերացվեց Երևանի ՀՕԿ-ի կենտրոնական վարչության

կողմից։ Դա Բալկաններում ՀՕԿ-ի առաջին կազմակերպության վավերացումն էր։ Այս առթիվ Երևանի ՀՕԿ-ի կենտրոնական վարչության արտասահմանյան ներկայացուցիչ Ե. Կարիկյանը 1924 թ. մայիսի 13-ին Փարիզից Սալոնիկի ՀՕԿ-ի կենտրոնական վարչությանն ուղարկած իր նամակում գրում էր.

«Կազմակերպեցեք ձեր շրջանը, կազմեցեք մասնաճյուղեր, որքան հնարավորություն ունեք Բալկանյան ամբողջ թերակղզին վրա, ՀՕԿ-ի բարձրագույն գաղափարի շուրջ»[26]։

ՀՕԿ-ի մասնաճյուղերի կազմակերպմանը զուգընթաց, 1923—24 թթ. Հունաստանի բոլոր հայաշատ քաղաքներում ու խոշորագույն գաղթակայաններում ստեղծվում են երիտասարդական, կուլտուր-սպորտային բազմաթիվ կազմակերպություններ, երգի ու թատերական խմբեր, բացվում են ակումբներ, ընթերցարաններ, հիմնադրվում են հայրենակցական միություններ, կանանց զանազան կազմակերպություններ, որոնք խոշոր աշխատություն են մատնում հունահայ գաղութի հասարակական կյանքում։ Այս բոլոր կազմակերպություններում դարձյալ շարունակվում էր սուր պայքարը հունահայ քաղաքական հոսանքների միջև՝ գաղութին զբաղեցնող առանցքային խնդիրների բմբռնման և դրանց լուծման ուղիների հարցի շուրջը։

ՀԱՅ ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ՊԱՐՏԻԱՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԴԵՊ

Հունահայ գաղութի ներքին կազմավորման պրոցեսն սկսվեց այն ժամանակաշրջանում, երբ Հայաստանում սովետական կարգերի հաստատման շնորհիվ հայ ժողովրդի պատմական զարգացման ուղին պայծառորեն լուսավորում էր Հոկտեմբերյան մեծ ռևոլյուցիայի փարոսը։ Տանջված, աննկարագրելի փորձություններ ու արհավիրքների բովից անցած թափառական հայ աշխատավորությունն իր բոլոր ուժերով ձգտում էր մասնակից դառնալ հարազատ երկրի սոցիա-

[26] «Նոր Ալիք», 1924, № 48։

լիստական վերակառուցման մեծ գործին, և երազում էր տեսնել իր բոլոր իղձերի իրականացումը ազատագրված Հայրենի երկրում՝ Սովետական Հայաստանում։ Աշխարհում ոչ մի ուժ չէր կարող խափանել սփյուռքահայ աշխատավորության հայրենաբաղձության այս անկեղծ զգացմունքները և խոչընդոտ հանդիսանալ սոցիալիզմի հիման վրա հայ ժողովրդի վերամիավորման մեծ գործին։

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից և մասնավորապես փետրվարյան ավանտյուրայի ջախջախումից հետո հայրենիքից դուրս շպրտված դաշնակների հակառևոլյուցիոն ոհմակը իր հայրենադավ գործունեությունը սկսեց շարունակել սփյուռքահայության մեջ և ուղղակի անցավ միջազգային իմպերիալիզմի ռեակցիոն լագերը։

Թե Իզմիրի աղետալի դեպքերի ընթացքում դաշնակների սերտ համագործակցության փաստը հունական ռեակցիոն շրջանների հետ, թե նրանց համագործակցությունը վրանգելյան բանակի ջարդված բեկորների և բուլղար ֆաշիստների հետ՝ սեպտեմբերյան հակաֆաշիստական բանվորա-գյուղացիական ապստամբության ճնշման ժամանակ 1923 թ., և թե այլ ոճրագործություններ մերկացնում էին դաշնակցության ոճրապարտ, հրեշավոր դեմքը և հակասովետական-հակաժողովրդական էությունը, հրատապ դարձնում սփյուռքահայ աշխատավորության և դեմոկրատական բոլոր խավերի համատեղ պայքարի անհրաժեշտությունը, նրա քաղաքական մեկուսացման ու լիակատար ջախջախման համար։

Դաշնակները փորձում էին մթագնել հունահայ աշխատավորության դասակարգային գիտակցությունը, հեռու պահել նրան հացի և ազատության համար մարտնչող հույն պրոլետարիատի ռևոլյուցիոն պայքարից։ «Հայ գաղթականը,— գրում էր դաշնակների «Ալիք» թերթը,— երբեք պետք չէ խառնվի նույն երկրի ներքին գործերուն, կուսակցական վեճերուն, որովհետև այսպիսով ոչ միայն իր անձը, այլ մանավանդ իր պատկանած ազգի թշվառ բեկորներուն հանդիսաք կվտանգի»[27]։ Թեև նրանք ձևի համար, երևսպաշտորեն ընդունում

[27] «Ալիք», Սալոնիկ, 1925, № 596։

էին հայ բանվորների «անխիղճ շահագործման ենթակա» լինելը, սակայն թելադրում էին «հանդուրժել այդ շահագործումը», իրենց «ֆիզիկական գոյությունը ապահովելու համար»[28]։ «Հունահայ գաղութին այժմու դիրքը կհարկադրե ինք իր յուղով տապկվիլ և երբեք միջամուխ չըլլալ այս երկրին ներքին գործերուն»[29],— գրում էր «Նոր օրը» 1925 թ. դեկտեմբերին։

Հունահայ կոմունիստներն անխնա մերկացնում էին բուրժուական կարգերի պաշտպանության այսպիսի քարոզները և դաշնակների ողջ գործունեության հակաժողովրդական բնույթը։

Հունահայ գաղութում գործում էր նաև ռամկավար-ազատականների պարտիան։ Սա, որպես արևմտահայ բուրժուազիայի քաղաքական կազմակերպություն, ամենաջերմ կերպով պաշտպանում էր կապիտալիստական մասնավոր սեփականատիրական կարգերը և դրանք արդարացնող հասարակական հայացքները։ Չնայած դրան, ռամկավարները Սովետական Հայաստանի նկատմամբ լոյալ ու բարյացակամ դիրք էին բռնում, թեև նրանց բարյացակամությունը լի էր վերապահումներով։ Դա դրսևորվում էր մասնավորապես, երբ խոսքը վերաբերում էր Սովետական Հայաստանին օգնելու ուղղությամբ գործնական քայլերի դիմելուն։

Ռամկավարները մենաշնորհ կերպով իշխելով Հայ բարեգործական ընդհանուր միությունում և տնօրինելով արտաքսահմանյան կտակները, ինչպես և Կ. Պոլսի, Եգիպտոսի, Բաղդադի, Սիրիայի, Երուսաղեմի և այլ երկրներում հայ ազգային կալվածքները, ուղղակի հրաժարվում էին ժողովրդական այդ հարստությունների, ինչպես նաև գույքերի իրացումից գոյացած գումարներն իրենց իսկական տիրոջը՝ Սովետական Հայաստանի կառավարությանը հանձնելուց։

Պատմական փաստերը խոսում են այն մասին, որ երբ Բաղդադի հայ գաղթականներն իրենց համար ամենադժվարին օրերին (1921—1922) Սովետական Հայաստանի բանվորնե-

---

[28] Նույն տեղում, № 597։

[29] «Նոր օր», Աթենք, 1925, № 688։

րից և գյուղացիներից օգնություն խնդրեցին, վերջիններս, չնայած նրան, որ իրենք էլ այդ ժամանակ գտնվում էին դժվարին պայմաններում, մասնավորապես Զանգեզուրում, Ալեքսանդրապոլում, Ղազախում և այլ գավառներում տիրող սովի ու հիվանդությունների հետևանքով, եղբայրական ձեռք մեկնեցին իրենց գաղութահայ եղբայրներին, անկարելին կարելի դարձնելով նրանց համար։ Սակայն, երբ Հայաստանի շինարարական վերելքն ապահովելու համար գաղութահայության օժանդակության հարցը դրվեց ՀՕԿ-ի համագումարներում (1923), ռամկավարները սկսեցին հարց բարձրացնել, թե Հայաստանը ինքը պետք է գտնի իր կարիքների դարմանը, իսկ գաղութահայությունը պետք է օժանդակություն ցուցաբերի Սիրիայի գաղթականությանը։ Սիրիայի, ինչպես նաև Հունաստանի գաղթականությունը, որ վազուց սոված էր ապրում և որի հանդեպ հայ հարուստը միշտ մնացել էր սառն ու անտարբեր, հանկարծ, Հայաստանին կոնկրետ օգնություն ցույց տալու հարցի առթիվ դարձավ «գթասեր» և սկսեց աղմուկ բարձրացնել գաղութահայությանը օգնելու մասին։

Սակայն տեղի էր ունեցել և ունենում էր նաև մի այլ բնորոշ պրոցես։

Հունաստանի ռամկավարները, որոնց մեծ մասը բաղկացած էր գլխավորապես Իզմիրի և Կ. Պոլսի մեծահարուստներից, առևտրականներից և առանձին մտավորականներից, տնտեսական մեծ հարված ստանալով հույն-թուրքական պատերազմի և Իզմիրի աղետալի դեպքերի հետևանքով, կապիտալիստական Հելլադայում չկարողացան վերականգնել իրենց անցյալի տնտեսական հզորությունը։ Մյուս կողմից՝ չդիմանալով հունական ու օտարերկրյա կապիտալի մրցակցությանը, նրանց մի մասն ունեզրկվեց, քայքայվեց և անցավ մանր սեփականատերերի ու պրոլետարիատի շարքերը, իսկ մյուս մասը, մեծագույն դժվարությամբ, գրավեց տնտեսական միջակ դիրքեր, որպես զանազան արհեստանոցների, ֆաբրիկաների տերեր կամ միջնորդ առևտրականներ։ Սոցիալական այսպիսի շերտավորման հիմքի վրա ռամկավարների շարքե-

ում առաջ կան որոշ տարրեր, որոնք սկսեցին ավելի ու ավելի որոշակի դիրք բռնել դաշնակցության դեմ, ակտիվորեն մասնակցել Սովետական Հայաստանի բարեկամների մասսայական շարժմանը, իսկ նրանցից առավել առաջավոր տարրերը, առանձին անհատներ անցան ռևոլյուցիոն կազմակերպությունների և նույնիսկ Հունաստանի կոմպարտիայի շարքերը։

Իր ընդհանուր հայրենասիրական գործունեությամբ Հունահայ գաղութի կյանքում որոշ դրական դեր խաղաց Հնչակյան պարտիայի Հունաստանի մասնաճյուղը, թեև նա ընդհանուր ոչինչ չի ունեցել մարքսիզմի և Հունաստանի բանվորական ռևոլյուցիոն շարժման հետ։

Կիլիկիայի և Իզմիրի դեպքերից հետո Հնչակյան պարտիայի բանվորական և աշխատավորական տարրերը հիասթափվելով իրենց նախկին լիդերների արկածախնդրական ամբողջ վարքագծից և սովետահայ իրականության, ինչպես նաև ծավալվող տեղական կոմունիստական շարժման ազդեցության տակ սկսեցին շրջադարձ կատարել նացիոնալիզմից դեպի ինտերնացիոնալիզմը։ Այս հողի վրա Հունահայ գաղութում, ինչպես նաև մյուս գաղութներում, Հնչակյան պարտիան սկսեց ներքին սուր ճգնաժամ ապրել։

Գաղութի հավաքական կյանքի հենց սկզբնական շրջանում Հնչակյան պարտիայի կազմակերպությունների աջ ու ձախ թևերի միջև սկսած պայքարն այնքան սրվեց, որ ընդհուպ հասցրեց մինչև պառակտում։ Աջ Հնչակյանները, չկարողանալով վերագնահատել իրենց գաղափարական և քաղաքական վարքագիծը, շարունակեցին պաշտպանել այսպես կոչված «Թրքահայ դատը», կառչել «ծովից-ծով» Հայաստան ստեղծելու հին, մաշված լոզունգին։ Ավելին. Սովետական Հայաստանը դիտելով միայն իբրև «ապագա ամբողջացյալ և ընդարձակյալ հայրենիքի ... կորիզը»[30], նրանք առաջարկում էին սովետական կառավարությանը՝ Սևրի դաշնագրի համաձայն Թուրքիայից պահանջել Հայաստանի վիլայեթները և ամբողջ

[30] «Երկունք», 1922, № 1։

Կիլիկիան։ Այս ծրագրի իրականացման անհրաժեշտ պայմանը նրանք համարում էին հնչակյան պարտիայի պահպանումը։ Սա ցույց էր տալիս ինչպես մյուս գաղութների, նույնպես և Հունաստանի հնչակյան աջ գործիչների անհեռատեսությունը, պատմական նոր իրադրության, ռեակցիայի և ազատագրական շարժման ուժերի տեղաբաշխման ու հարաբերակցության կոնկրետ գիտական վերլուծման և հայ ժողովրդի արյունոտ պատմությունից դասեր քաղելու նրանց անընդունակությունը։

Ի հակադրություն աջերի, ձախ բանվորական տարրերը տեսնելով, որ հայ ժողովուրդը նվաճել է իր անկախ պետականությունը սովետական իշխանության շնորհիվ, և նրա քաղաքական ու տնտեսական ազատագրումն այլևս անժխտելի փաստ է, գտնում էին, որ բոլոր անկեղծ հնչակյանները պարտավոր են պայքարելու հայ ժողովրդի սոցիալիստական նվաճումները պաշտպանելու, ամրապնդելու և ընդարձակելու համար, պարտավոր են միանալու Հունաստանի այն բոլոր ռևոլյուցիոն ուժերի հետ, որոնք, ինչպես վայել է իսկական սոցիալ-դեմոկրատներին, պայքարում են «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» մարտական նշանաբանի տակ։ Ամրապնդելով և ուժեղացնելով ձախ օպոզիցիոն թևը հնչակյան պարտիայի շարքերում, բանվորական ռևոլյուցիոն տարրերը խզում էին իրենց կապերը հնչակյան պարտիայի հետ, մտնում Հունաստանի կոմունիստական պարտիայի շարքերը։ Չնայած իր ներքին ճգնաժամին, քաղաքական-թեորիական և կազմակերպական հեղհեղուկությանը, Հունաստանի հնչակյան պարտիայի մասնաճյուղը ընդհանուր առմամբ դրական դիրքորոշում ունեցավ Սովետական Հայաստանի նկատմամբ և, վերջին հաշվով, նպաստեց գաղութի հակադաշնակ ուժերի միավորմանը։

Բանվորական ռևոլյուցիոն շարժման վերելքի և հունահայ կոմունիստների մղած գաղափարական պայքարի ազդեցության տակ հնչակյան պարտիայի հիմնական բանվորական և աշխատավորական մասսան հաղթահարելով իր տատանումները՝ աստիճանաբար ընդգրկվեց հույն ժողովրդի մղած հակաֆաշիստական և ազգային ազատագրական պայքարի մեջ,

իսկ նրանցից ոմանք դարձան նույնիսկ Հունաստանի կոմպարտիայի ակտիվ գործիչներ։

Հունահայ բանվորական և կոմունիստական կազմակերպությունները աճեցին ու ամրապնդվեցին ազգայնական պարտիաների դաղափարախոսության ու քաղաքական վարքագծի դեմ մղվող անհաշտ պայքարում։

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՀՈՒՆԱՀԱՅ ԴԱՂՈՒԹՈՒՄ

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ ԵՎ ՀԱԿԱԴԱՇՆԱԿ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՇԱԿԱՏԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Արևմտյան իմպերիալիզմի հետ սերտորեն համագործակցող հունական բուրժուազիայի արտաքին քաղաքականությունը՝ ակտիվ պաշտպանություն էր գտնում բուրժուական բոլոր հոսանքների, մասնավորապես նրա քաղաքական գլխավոր երկու խմբավորումների՝ միապետական և լիբերալ պարտիաների կողմից։ 1919—1922 թթ. բուրժուազիայի միացյալ ուժերին հակադրվում էր միայն երիտասարդ կոմունիստական պարտիան, որը ռազմական դրության դժվարին պայմաններում մերկացնում էր Հունաստանի ուկրաինական ավանտյուրայի և փոքրասիական պատերազմի հակասովետական ու իմպերիալիստական բնույթը, և կազմակերպում ժողովրդական մասսաների ռևոլյուցիոն պայքարը պատերազմի դեմ թե՛ ռազմաճակատում և թե՛ թիկունքում։

Հունական բանակի խուճապային նահանջը փոքրասիական ռազմաճակատից ուղեկցվում էր զինվորական մասսաների տարերային ապստամբություններով, որոնք, միաձուլվելով սովի ճիրաններում տառապող անօթևան և կիսամերկ հարյուրհազարավոր գաղթականության ռևոլյուցիոն ելույթների հետ, 1922—1923 թթ. Հունաստանում ստեղծեցին ռևոլյուցիոն իրադրություն։ Հունաստանի երիտասարդ կոմունիստական պարտիայի դաղափարական և կազմակերպական անպատրաստությունը վճռական մարտերի համար, հնարավորու-

թյուն տվեց իշխող դասակարգերին՝ խափանել դեմոկրատական վերափոխումների ուղին։ Սրանք երկրում կազմակերպեցին զինվորական հեղաշրջում՝ գեներալ Պլաստիրասի գլխավորությամբ (1922 թ. սեպտ. 26—28) և հաստատեցին զինվորական դիկտատուրա։

Զինվորական հեղաշրջմամբ իշխանության գլուխ անցած լիբերալ բուրժուազիան, այնուամենայնիվ, հարկադրված էր հաշվի նստել երկրում ծավալվող ժողովրդական ռևոլյուցիոն շարժման հետ, մասնավորապես մի շարք զիջումներ անել աշխատավոր գյուղացիությանը և վերացնել միապետական ռեժիմը։

Ռևոլյուցիոն շարժումը ամբողջ երկրում վերելք էր ապրում։

Գյուղացիական մասսաների պայքարը կոնկրետ դրսևորում գտավ կալվածատիրական հողերի բռնագրավման մեջ, գլխավորապես Թեսալիայի և Բիոդիայի շրջաններում։ Գյուղացիները ամենուրեք զինված հակահարված էին տալիս ոստիկանական պատժիչ ուժերին, որոնք փորձում էին դուրս հանել նրանց բռնագրաված հողերից։ Այսպես, 1922 թ. գյուղացիները բռնագրավել էին 159 կալվածք, 1923 թ. մինչև՝ 861, իսկ 1924—1925 թթ.՝ մինչև 484 կալվածք[1]։

Բանվոր դասակարգն ակտիվ կերպով պաշտպանում էր գյուղացիական մասսաների ռևոլյուցիոն ելույթները։

Փոքրասիական պատերազմի կործանարար հետևանքներն ամենաուժեղ կերպով անդրադարձան բանվոր դասակարգի վրա։ Սովն ու հիվանդությունները ընդդիմացին աշխատավորական լայն խավերին[2]։ Իսկ գործարանատերերը հարյուր-հա-

---

[1] Տե՛ս Х. Ваги Аграрный вопрос и аграрные реформы в Греции „Аграрные Проблемы" 1929 № 6, стр. 67-94

[2] Ազգերի լիգայի պաշտոնական ժամանակների համաձայն, 1923 թ. վերջին ամիսներին մահացությունը Հունաստանի գաղթական բնակչության մեջ հասել էր 45 տոկոսի։ Մահացությունների ընդհանուր թվից 70 տոկոսը մալարիայից էր, 25 տոկոսը՝ տիֆից և դիզենտերիայից, իսկ 5 տոկոսը՝ տարբեր հիվանդություններից։ Այս դրությունը շարունակվեց նաև 1924 թ., իսկ հիվանդությունների մեջ ավելացավ նաև խոշտանգը իր կործանարար հետևանքներով։ Տե՛ս „L'Etablissement des réfugier en Crèce", 1924.

զարավոր անգործ գաղթականների առկայությունից օգտվելով՝ ընդհանուր հարձակում սկսեցին բանվոր դասակարգի վրա։ Բանվորական միջին աշխատանքային օրը պատերազմից հետո հավասար էր տասը ժամի։ Կյանքի թանկությունը երկրում աճում էր ավելի արագ, քան բանվորների աշխատավարձը։ 1923 թ. ապրիլին, համեմատած նախապատերազմյան շրջանի հետ, կյանքը թանկացել էր տասնչորս անգամ, իսկ բանվորների աշխատավարձը բարձրացել էր միայն ութն անգամ[3]։ Միջին հաշվով, հույն բանվորները 1923 թ. ստանում էին 20 դրախմ օրական, այսինքն՝ նրանց ունեալ աշխատավարձը շատ ավելի ցածր էր, քան պատերազմից առաջ։ Հայ և մյուս օտարազգի բանվորների աշխատավարձն այդ ժամանակ անհամեմատ ավելի ցածր էր, քան հույն բանվորներինը։ Պլաստիրասի կառավարությունը ոչ միայն ոչինչ չարեց բանվոր դասակարգի դրությունը բարելավելու ուղղությամբ, այլև, ընդհակառակը, ուղղակի աջակցեց կապիտալիստների կազմակերպած ընդհանուր հարձակմանը բանվոր դասակարգի դեմ։

1923 թ. մայիս ամսին գործարանատերերը իջեցրին բանվորների աշխատավարձը արդյունաբերության բոլոր ճյուղերում։ Կոմունիստական պարտիան կոչ արեց ամբողջ բանվորությանը՝ այդ հարձակմանը պատասխանել ընդհանուր գործադուլով, որը հայտարարվեց օգոստոս ամսին և ընդգրկեց 80 հազար բանվոր ու ծառայող։ Այդ գործադուլը աննախընթաց երևույթ էր Հունաստանի բանվորական շարժման համար և հատկապես աչքի էր ընկնում բանվորների մարտունակությամբ։ Հետպատերազմյան շրջանում առաջին դեպքն էր, երբ կառավարական զորքերը Հունաստանում գնդացիրներ օգտագործեցին բանվորների դեմ, սպանելով ու վիրավորելով բազմաթիվ գործադուլավորների, հատկապես Պիրեա քաղաքում։ Կառավարությունը ռազմական դրություն հայտարարեց ամբողջ երկրում ու հրահանգեց իր զինված ուժերին՝ դիմել բոլոր միջոցների՝ «կարգը վերականգնելու» համար։

---

[3] Տե՛ս „Международное профдвижение 1923-24“ М., 1924, стр. 224

Սակայն գործադուլը ճնշելու համար ուղարկված զինվորները ոչ միայն հրաժարվեցին բանվորների դեմ կրակելուց, այլև իրենք ևս միացան ցուցարարներին։ Ժողովրդական շարժումն ընդլայնվելով՝ սպառնում էր ընդունել զինված ապըստամբության բնույթ։ Իշխանություններն սկսեցին դիմել ծայրահեղ միջոցների՝ արյան մեջ խեղդելու ծավալվող գործադուլային շարժումը։ Լուծարված հայտարարվեցին բանվորական բոլոր կազմակերպությունները։ Ոստիկանական օրգանները ներխուժում էին բանվորական կենտրոնները, ավերում արհմիությունների շենքերն ու բռնագրավում նրանց ունեցվածքը, ձերբակալում առաջավոր բանվորներին և տեռորի ենթարկում նրանց։

Սպիտակ տեռորը առանձնապես ուժեղացավ համահունական գործադուլից հետո, որի դեմ մասսայական նոր շարժում սկսվեց ամբողջ երկրում։ Պրոֆինտերնի Գործադիր կոմիտեն հատուկ կոչ հրապարակեց այս առթիվ՝ ուղղված միջազգային բանվորությանը։

Հունաստանի ռևոլյուցիոն շարժման համար հատուկ նշանակություն ունեցավ կոմպարտիայի III արտակարգ համագումարը, որ գումարվեց անլեգալ կերպով Աթենքում՝ 1924 թ. նոյեմբերի 28-ից մինչև դեկտեմբերի 3-ը։ Կոմունիստական ինտերնացիոնալի և Բալկանյան կոմունիստական ֆեդերացյայի անմիջական ղեկավարությամբ համագումարը մշակեց պարտիայի դիծը ռևոլյուցիոն պայքարի բոլոր բնագավառներում և, առաջին անգամ լինելով, լենինյան ազգային քաղաքականության սկզբունքների ոգով կոնկրետացրեց պարտիայի խնդիրները՝ բոլոր կոմունիստների ուշադրության կենտրոնում դնելով նաև ազգային փոքրամասնությունների, հատկապես մակեդոնացիների, հայերի, հրեաների, թուրքերի մեջ տարվող աշխատանքները։ Համագումարը կոչ արեց բոլոր կազմակերպություններին կերտել բանվորների, գյուղացիների և ազգային բոլոր փոքրամասնությունների աշխատավորների միասնական մարտական ճակատ ռեակցիայի դեմ մղվող ընդհանուր պայքարում։

ΡΙΖΟΣΠΑΣΤΗΣ

ΟΡΓΑΝΟ ΤΗΣ ΚΕΝΤΡΙΚΗΣ ΕΠΙΤΡΟΠΗΣ ΤΟΥ ΤΟΜΠΟΥΛΓΙΚΟΥ ΣΥΛΛΟΓΟΥ (Ε.Τ.Κ.Δ.)

ΑΠΟ ΤΗΝ ΚΥΡΙΑΚΗ
ΤΟ ΤΣΙΜΕΝΤΟ
ΕΝΑ ΑΠΟ ΤΑ ΚΑΛΥΤΕΡΑ
ΜΕΤΕΠΑΝΑΣΤΑΤΙΚΑ ΡΟΥΣΙΑ

Ο ΡΙΖΟΣΠΑΣΤΗΣ ΣΤΗΝ ΕΠΑΡΧΙΕΣ
ΘΡΑΚΗ
Η Ελληνικία διοίξη τοῦ κατοίκους τοῦ νομοῦ Ἔβρου.-Τὸ κράτος περιορίζεται στὸ νὰ κάμνη σχόλιες.

Η 43η ΣΥΝΟΔΟΣ ΤΗΣ Κ.Π.Ε.
ΟΙ ΑΣΥΜΒΙΒΑΣΤΟΙ ΑΝΤΑΓΩΝΙΣΜΟΙ

ΕΓΕΝΕΤΟ ΧΘΕΣ Η ΟΡΚΩΜΟΣΙΑ ΤΩΝ ΒΟΥΛΕΥΤΩΝ
Η ΕΚΛΟΓΗ ΤΟΥ ΠΡΟΕΔΡΟΥ

ΤΙ ΣΗΜΑΙΝΕΙ Η ΟΙΚΟΥΜΕΝΙΚΗ

Λουβαστανῆ κοιμητηρίου Κιζιλκιμ ὀργὰν «Ριζοσπαστης» τῆς 1926 μ. δεκεμβρίου 7-ῆ κυριακὴ

Այս համագումարը մեծ նշանակություն ունեցավ ամբողջ պարտիային պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելու գործում և պատմական ուղենիշ հանդիսացավ հունահայ աշխատավորության և ազգային մյուս փոքրամասնությունների մեջ կոմունիստական պարտիայի քաղաքական ազդեցության հետագա աճի գործում։ Արտակարգ համագումարում պարտիան վերանվանվեց «Հունաստանի կոմունիստական պարտիա (Կոմունիստական ինտերնացիոնալի հունական սեկցիա»)։

Համագումարի ընդունած չափազանց կարևոր որոշումները, ինչպես, օրինակ՝ երկրի քաղաքական դրության մասին, արհմիութենական շարժման մասին, բանվորների, գյուղացիների և ազգային փոքրամասնությունների միացյալ ճակատի կերտման մասին, բջիջների կազմակերպման հիման վրա պարտիական բոլոր կազմակերպությունների վերակառուցման և ամբողջ պարտիան անլեգալ աշխատանքների համար նախապատրաստելու մասին, երիտասարդական շարժման և հակամիլիտարիստական աշխատանքի բարելավման միջոցառումների մասին քանակում և նավատորմում,— պարտիային հաստատուն կերպով կանգնեցրին բոլշևիկացման ուղու վրա։ Եվ դա վճռական նախապայման հանդիսացավ երկրի վերահաս ֆաշիզացման պայմաններում ընդհատակյա ծանր պայքարում պարտիայի գաղափարական ու կազմակերպական միասնությունն ապահովելու և նրա ուժերի պահպանման ու հետագա ամրապնդման գործում։

Քաղաքական խոշորագույն խնդիրը, որ դրազեցրեց հունահայ կոմունիստներին 1923—1927 թթ.՝ դա համաժողովրդական հակապաշտպան միացյալ ճակատի ստեղծումն էր հունահայ գաղութում՝ դեմոկրատական բոլոր կազմակերպությունների մասնակցությամբ, որոնք կանգնած լինելով Սովետական Միության և Սովետական Հայաստանի պաշտպանության դիրքերում, պատրաստ էին ակտիվ կերպով աջակցել հարազատ հայրենիքի սոցիալիստական շինարարության մեծ գործին։

Ֆաշիստական տեռորի դժվարին պայմաններում, երբ դաշնակցականները լիովին անցել էին հունական ռեակցիայի

կողմը և իրենց ահաբեկչական գործունեության մեջ վայելում էին կառավարության նյութական ու բարոյական բազմակողմանի աջակցությունը, հայ կոմունիստների ճակատաբաց պայքարը հայկական ռեակցիայի դեմ, հունահայ աշխատավորության մեծամասնությունը ազգայնական պարտիաների քաղաքական ազդեցությունից դուրս՝ կոմունիզմի և սովետական հայրենիքի դաղափարների շուրջը համախմբելու համար՝ կապված էր անձնազոհ գործունեության հետ և պահանջում էր ուժերի մեծ լարում։

1923 թ. հոկտեմբերին Երևանում տեղի ունեցած ՀԿԿ-ի III համագումարը որոշում ընդունեց արտասահմանյան մասնաճյուղեր կազմակերպելու մասին, որոնց հիմնական նպատակն էր՝ սփյուռքահայությանը նույնպես մասնակից դարձնել Սովետական Հայաստանի վերաշինությանը։ Հունահայ կոմունիստներն ամբողջությամբ նվիրվեցին ՀԿԿ-ի վեհ նպատակներին և արտասահմանյան մասնաճյուղեր կազմակերպելու գործում առաջավոր տեղ գրավեցին ոչ միայն Բալկաններում, այլև ամբողջ սփյուռքահայության մեջ։

1924 թ. սկզբներին Թրակիայի և Մակեդոնիայի հայաշատ կենտրոններում, ինչպես, օրինակ, Դեդե-Ագաճ, Կավալա, Դիմոթիկա, Դրամա, Գյումյուլջինա, Քասանթի, Սերեզ, Վոտինա քաղաքներում[4], կոմունիստների նախաձեռնությամբ ստեղծվեցին ՀԿԿ-ի մասնայական մասնաճյուղեր։ Նույն թվականի ապրիլ ամսին Սալոնիկում ստեղծված ՀԿԿ-ի Հունաստանի կենտրոնական անդրանիկ վարչությունը մեծ աշխատանք ծավալեց հայ աշխատավորությանը, դեմոկրատական ու առաջադիմական բոլոր ուժերը սովետական հայրենիքի շուրջը համախմբելու գործում։ 1924 թ. երկրորդ կեսին ՀԿԿ-ի մասնաճյուղեր կազմակերպվեցին նաև Հին Հունաստանի շրջաններում՝ Աթենք, Պիրեա, Վոլոս, Կիպարիսիա, Կալամաթա քաղաքներում, Միտիլինի, Սիրա և հայաշատ այլ կղզիներում։ Միայն Պիրեայի Կոկինիա, Լիփազմա և Աթենքի Ֆիքս, Սինկրու և Պանկրատիի թաղամասերի ՀԿԿ-ի մասնաճյուղերի սկզբնական անդամների թիվը գերազանցում էր 500 հոգուց[5],

---

[4] Տե՛ս ՀՍՍՌ ՀԱՍՇ ԿՊԱ, ֆ. 178, ց. 1, գ. 394, թ. 9։

[5] Նույն տեղում, թ. 7։

որոնք շատ շուտով ավելի ևս աճելով՝ դարձան ժողովրդական մասսայական կազմակերպություններ։ 1924 թ. վերջերին կազմվեց Աթենքի շրջանային վարչությունը, որը ենթարկվում էր այդ ժամանակ Սալոնիկի կենտրոնական վարչությանը։ ՀՕԿ-ի կազմավորման շրջանից (1924) մինչև նրա լուծարքի ենթարկվելը (1937) հունահայ կոմունիստները միշտ եղել են Սովետական Միության բարեկամների մասսայական այս շարժման սիրտն ու հոգին, նրա ղեկավար կորիզը։

ՀՕԿ-ի դրոշի շուրջը համախմբվեց հունահայ-գաղութի դեմոկրատական հասարակայնության բացարձակ մեծամասնությունը։ Կոմունիստ ակտիվիստները շրջագայում էին ամենուրեք, հատկապես Մակեդոնիայի և Թրակիայի քաղաքներում և հայկական կոմունիստական խմբերի կազմակերպման ընթացքում ստեղծում էին ՀՕԿ-ի նորանոր մասնաճյուղեր։ Սակայն ՀՕԿ-երի հետագա զարգացման ու նրանց աճող կազմակերպությունների ղեկավարման հարցերի շուրջը սուր պայքար ծավալվեց կոմունիստների ղեկավարությամբ գործող սովետական հայրենիքին անվերապահորեն նվիրված աշխատավորական մասսաների և ՀՕԿ-երը թափանցած ազգայնական առանձին տարրերի միջև։

Առաջնորդվելով ռեակցիայի դեմ մարտերում մասսաներին նվաճելու համար «ձախ» ազանդավորականություն հաղթահարելու մասին Վ. Ի. Լենինի ցուցումներով «Ձախության» մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ» երկում, հունահայ գաղութի դեմոկրատական ուժերի հավաքման, դաշնակցության դեմ միացյալ ճակատ կազմելու համար մղած պայքարում կոմունիստները ակտիվ համագործակցություն էին զարգացնում թե ռամկավարների և թե հնչակյանների առաջադիմական տարրերի հետ և գաղափարական սուր գոտեմարտերում պաշտպանում էին ՀՕԿ-երի աշխատավորական-ժողովրդական բնույթը։ Նրանք միաժամանակ հետևողականորեն մերկացնում էին ռամկավարների ու հնչակյանների աջ տարրերի կեղծ հայրենասիրությունը և խարազանում նրանց բուրժուա-նացիոնալիստական ոտնձգությունները ՀՕԿ-երի դեմ։

1924 թ. հուլիսի վերջերին ռամկավարների պարագլուխ-

ներից Հրաչ Երվանդը, հանդես գալով հրապարակային բանախոսությամբ ՀՕԿ-ի Սալոնիկի մասնաճյուղի կազմակերպած մասսայական ժողովում, հայտարարեց, թե ռամկավարները պատրաստ են օժանդակելու հայրենիքի վերաշինության գործին ոչ թե նրա համար, որ Հայաստանում հաստատված են սովետական կարգեր, այլ բոլորովին անկախ նրա վարչաձևից[6]: Հասկանալի է, որ այս վերապահությունը միանգամայն հակասում էր հունահայ աշխատավորության բացարձակ մեծամասնության տրամադրություններին, որոնք պատրաստ էին իրենց վերջին լումաներով իսկ ակտիվ մասնակցություն բերել սովետական հայրենիքի սոցիալիստական շինարարության գործին հենց այն բանի համար, որ հայրենի երկրում իշխանությունը գտնվում էր բանվորների ու գյուղացիների ձեռքին:

Հրաչ Երվանդն իր հրապարակախոսական մի շարք հոդվածներում մեկնաբանելով ռամկավարների տեսակետը և Սովետական Հայաստանի հանդեպ վարած քաղաքականության էությունը, ընդգծում էր, թե նրանք, այսինքն ռամկավարները պատրաստ են ճանաչել «նույնիսկ ամենագեշ կառավարություն մը», երբ նա իր ձեռքում է պահում երկրի ու ժողովրդի ներքին ու արտաքին ճակատագիրը, ճանաչել մի կառավարություն, «երբ անոր հետ վարդապետական հողի վրա գոյություն ունի ամենաբուռն հակասությունը»: Ավելի պարզորոշ բացահայտելով իր միտքը, Հրաչ Երվանդը շարունակում է. «Հայաստանի կառավարության հանդեպ բացասական վերաբերումը, ուրեմն իրողության մը չգոյությունն չէ, որ պիտի գա», այլ «պիտի գա որակին, դավանանքին և քաղաքական ուղղության մասին տարակարծությունն»[7]:

Նույն հեղինակը մի այլ առիթով շեշտում էր, թե ռամկավարների համար Սովետական «Հայաստանի դրությունը չի հասնիր ազգային բնույթին մասին մեր առաջադրած ու ըմբռնած չափանիշին»[8]: Ուրեմն՝ մտնելով ՀՕԿ-ի մասսայական կազ-

---

[6] «Նոր Ալիք», 1924, № 105:

[7] Տե՛ս «Նոր Ալիք», 1924, № 124, (ընդգծումները մերն են—Պ. Կ.):

[8] «Նոր Ալիք», 1924, № 133:

մակերպությունների մեջ, ռամկավարները փորձում էին դրանք վերածել «օրինապահ» ու անաստամ կազմակերպությունների, որոնք պետք է զբաղվեին միայն ներգաղթի հարցերով։ Կոմունիստները մերկացնում էին ռամկավարների այս կեղծ «հայրենասիրությունը», և թեպետ ՀՕԿ-ի ղեկավար օրգաններում համագործակցում էին նրանց առաջադիմական տարրերի հետ, սակայն իրենց հիմնական աշխատանքները զլխավորապես կենտրոնացնում էին մասնաճյուղերում, վերածելով դրանք սովետական հայրենիքին անվերապահորեն նվիրված աշխատավորական մասսայական կազմակերպությունների։ Հնչակյանները նույնպես մեծ ակտիվություն ցուցաբերեցին ՀՕԿ-ի մասնաճյուղեր կազմակերպելու գործում, հատկապես Հին Հունաստանի հայաշատ բաղաքներում։ Սակայն, ի տարբերություն ռամկավարների, մի շարք աջ հնչակյան լիդերներ այդ ժամանակ (1924) համագործակցում էին դաշնակների հետ գաղութի ազգային մարմինների զեկավարման գործում և, նպատակ դնելով մեկուսացնել ռամկավարներին, փորձում էին ներգրավել նույնիսկ դաշնակցականներին այդ կազմակերպությունների մեջ։ Այսպես էր եղել, օրինակ, Կոկինիայում և Ֆիքսում, երբ ՀՕԿ-ի մասնաճյուղերի կազմակերպման նախաձեռնությունը վերցրել էին հնչակյան մի շարք գործիչներ, որոնք առանց որևէ վերապահության դիմել էին դաշնակներին՝ մասնակցելու ՀՕԿ-ի մասնաճյուղերի աշխատանքներին։

Սովետական Հայաստանի հանդեպ ատելությամբ լցված դաշնակ թափթփուկները տեսնելով, թե ինչպիսի արագությամբ են աճում ՀՕԿ-ի մասնաճյուղերը, նույնպես փորձում էին, դիմակավորված, մտնել ՀՕԿ-երի մեջ՝ դրանք ներսից կազմալուծելու համար։ Աջ հնչակյանները «արդարացնելու» համար դաշնակների հետ իրենց համագործակցությունը՝ վերջիններիս ըստ էության վերագրում էին հայրենասիրություն, որը կարող էր արտահայտվել նաև ՀՕԿ-ին մուծած անդամավճարների մեջ։ Հատկանշական է, օրինակ, որ հնչակյան պարագլուխներից Հ. Սուքիասյանը, հանդես գալով դաշնակցական մամուլում ՀՕԿ-ի կազմակերպությունների նշանակության մասին, գրում էր. «Ամեն ոք, որ դրամ կվճարե

ՀՕԿ-ին իրրև անդամավճար, մասնակցած կրլլա անոր առանց կուսակցական և այլ խարուքյան»[9]։ Ջատագովելով ազգայնական պարտիաների բոլոր տարրերի հետ անխտիր համագործակցելու աջ հնչակյանների տեսակետը և ելնելով իրենց կազմակերպած ՀՕԿ-ի մի քանի մասնաճյուղերի օրինակից, նա գրում էր, թե մինչև այժմ ՀՕԿ-երի անդամ արձանագրվողների մեջ կան և չեղոքներ, և հնչակյաններ, և դաշնակցականներ և թե ռամկավարներ։

Հունաստանի ՀՕԿ-ի կազմակերպությունների արագ զարգացման ուղու վրա, գրում էր կոմունիստական «Բանվոր-Պարիզ» թերթի Հունաստանի թղթակիցը, դժբախտաբար «խոչընդոտներ հարուցողներ կան։ Դաշնակցականները հոն ալ զանազան անուններով մարմիններ մեջտեղ հանած են ՀՕԿ-ի գործունեությունը չեղոքացնելու համար, և այդ գործին մեջ իրենց դաշնակից ունին «Հայաստանի համակիր» հնչակյանները։

Բայց հակառակ այս ամենուն,— շարունակում է թղթակիցը, ՀՕԿ-ի ծավալումը ցույց կուտա, որ այլևս փոքճառու դարձած աշխատավորությունը իր շահերը լավ կը ճանչնա և գիտե իր բալելիր ճամբան»[10]։

ՀՕԿ-երի նկատմամբ ազգայնական պարտիաների վերաբերմունքի մասին խոսում է նաև նախկին դաշնակցական, իսկ հետագայում ռամկավար, բժիշկ Վ. Մարտիկյանի հոդվածը, որ տպագրվել էր Աթենքի «Նոր օր» թերթում, 1924 թ. դեկտեմբերին։ Հոդվածագիրն առաջ է քաշում կոալիցիոն ՀՕԿ-եր կազմակերպելու գաղափարը։ Նրա կարծիքով ՀՕԿ-ը պետք է բաղկանար «հավասարապես» երեք քաղաքական հոսանքներից՝ ռամկավարներից, հնչակյաններից և դաշնակներից։ Իրոք, այդ տարիներին հունահայ կոմունիստներն իրենց սակավաթիվ ուժերով դեռևս հնարավորություն չունեին ամենուրեք իրենց ազդեցության տակ վերցնելու Սովետական Հայաստանի բարեկամների շարժումը և նրանց կազմակերպու-

---

[9] «Նոր օր», 1925, № 396։

[10] Տե՛ս «Բանվոր—Պարիզ», 1925, № 26։

թյունների ղեկավարությունը։ Կոմունիստական շարժման վերելքին, բանվորական և աշխատավորական տարրերի դասակարգային ինքնագիտակցության աճին համեմատ, հունահայ կոմունիստ ակտիվիստների և հնչակյան բանվորական տարրերի եռանդուն ջանքերով հայ աշխատավորությունը համախմբվում էր ՀՕԿ-ի կազմակերպություններում, գանգվածային հայրենասիրությունը վերածվում-հանգում էր ոչ միայն անվերապահորեն Հայաստանի սոցիալիստական շինարարությանը սատարելուն, այլև դաշնակների կեղծ հայրենասիրության մերկացմանը և նրանց վտարմանը ՀՕԿ-ի մասնաճյուղերից։ Կոմունիստները միացյալ ճակատ կազմելով ձախ հնչակյան բանվորների հետ՝ մերկացնում էին աջ հնչակյանների համագործակցությունը դաշնակների հետ, բոյկոտի էին ենթարկում նրանց կազմակերպած հրապարակային ժողովները, ուր ելույթներ էին ունենում Սապահ-Գյուլյանը, Սյունիքը և հնչակյան այլ պարագլուխներ։ 1924 թ. վերջերին Աթենքում կայացավ հնչակյան պարտիայի VIII ընդհանուր պատգամավորական ժողովը։ Պատգամավորական ժողովում հնչակյան պարագլուխները, Ամերիկայի շրջանային վարչության ղեկավար Սապահ-Գյուլյանի գլխավորությամբ, անցկացրին բանվորական շարժումը պառակտող գիծ՝ և մերժելով հնչակյան բանվորական մասսայի պահանջը, հրաժարվեցին միանալ կոմունիստական պարտիաների տեղական հատվածներին։ Այդ գծի հետ իրենց համերաշխությունն էին հայտնել նաև Հունաստանի աջ հնչակյանները դեռևս իրենց առաջին շրջանային պատգամավորական ժողովում, որ տեղի էր ունեցել 1923 թ. դեկտեմբերի 23-ին, Կոկինիայի հնչակյան ակումբում։

«Փրկարար ուղի»[11] անվանելով Ամերիկայի բանվորական (կոմունիստական) պարտիայի և Հայ բանվորական կուսակցության[12] ներկայացուցիչների հետ Ամերիկայի հնչակյան

---

[11] Տե՛ս Ս. Դ. հնչակյան պարտիայի Հունաստանի գործադիր մարմնի № 1 շրջաբերականը, «Երիտասարդ Հայաստան», Նյու-Յորք, 1924, № 31։

[12] Ամերիկայի կոմպարտիայի շարքերում գտնվող հայ կոմունիստները 1920 թ. Նյու-Յորքում կազմակերպեցին իրենց առաջին խմբակը, որի նպատակն էր ագիտացիոն հատուկ աշխատանք ծավալել ազգայնական պարտիա-

լիդերների 1923 թ. հուլիսի 25-ին կնքած համաձայնագրի ուխտադրուժ խախտումը, համաձայնագիր, որը նախատեսում էր հնչակյանների մուտքը Կոմինտերնի տեղական սեկցիայի մեջ ֆեդերացիայի սկզբունքով,— Հունաստանի աջ հնչակյանները նույնպես մերժում էին կոմունիստների հետ մի ընդհանուր կազմակերպության մեջ միաձուլվելու գաղափարը և հանդես էին գալիս «մայր կուսակցության» ամբողջականությունն ու ինքնուրույնությունը պահպանելու նշանաբանով։ Ամերիկայի հնչակյան պարագլուխների առաջնորդությամբ մի քանի մասնաճյուղերի դուրս գալը Ֆեդերացիայից, այնքան էր ոգևորել Հունաստանի հնչակյան «սոցիալիստներին», որ նրանք Ամերիկայի հնչակյան գործադիր մարմնին ուղղած իրենց մի նամակում գրում էին. «...ձեր շրջաբերականը

ներից հիասթափված հայ աշխատավորության մեջ, համախմբելով նրանց կոմպարտիայի շուրջը։ Կառավարական հալածանքներից խուսափելու համար Հայ կոմունիստները հանդես եկան Հայ բանվորական միություն անվան տակ և սկսեցին բանակցություններ վարել ձախ հնչակյան բանվորների և դաշնակցության պարտիան լքած աշխատավորական տարրերի հետ, ընդհանուր միասնական կազմակերպություն ստեղծելու համար, որը կանգնած լինելով պրոլետարական ինտերնացիոնալիզմի դիրքերում, պետք է պայքար հայտարարեր հայ բուրժուա-նացիոնալիստական պարտիաներին։

Հայաստանում սովետական կարգերի հաղթանակը բարերար ազդեցություն գործեց բանակցությունների ընթացքի վրա։ 1921 թ. դեկտեմբերի 31-ին Ամերիկայում հիմնվեց—ըստ էության որպես կոմպարտիայի հայկական հատված—Հայ բանվորական կուսակցությունը, որը բաղկացած էր կոմունիստներից, ձախ հնչակյաններից և դաշնակցություն պարտիան լքած հայ աշխատավորներից։ Ամերիկայի հնչակյանները, չնայած իրենց պատգամավորական ժողովի որոշմանը Կոմունիստական ինտերնացիոնալին միանալու մասին, դեռևս շարունակում էին դուրս մնալ բանվորական կազմակերպություններից։ Հայկական ֆեդերացիայի կազմումը հնչակյան մասնաճյուղի և Հայ բանվորական կուսակցության մասնակցությամբ Ամերիկայի կոմունիստական պարտիայի մարտական դրոշի տակ, նպատակ ուներ միավորել ամերիկահայ գաղութի բոլոր ուսելյուցիոն սոցիալիստական ուժերը, և հեշտացնել հնչակյան մասսայի անցումը կոմպարտիայի դրոշի տակ։ Պատմականորեն ֆեդերացիան իրեն արդարացրեց։ Կոմինտերնի և Ամերիկայի կոմպարտիայի Կենտկոմի ցուցումների համաձայն, 1924 թ. փետրվարի 22-ին Բոստոնում գումարված պատգամավորական ժողովում ֆեդերացիան վերանվանվեց Ամերիկայի կոմպարտիայի հայկական հատված։

անանկ ժամանակի մը հասավ, որ մեղի ուրախություն մը պատճառելե ավելի կյանք մը ներշնչեց»[13]։ Պառակտումի այդ ոգին սավառնում էր պատգամավորական ընդհանուր ժողովում։ Աթենքում հավաքված «մարքսիստ» հնչակյանները հրաժարվեցին հետևել Թիֆլիսի և Փարիզի իրենց ընկերների օրինակին, պրոլետարական ինտերնացիոնալիզմի դաղափարներին, և ձգտելով ամեն գնով պահպանել իրենց պարտիայի ազգայնական էությունը, և նրա անջատ գոյության իրավունքը, դրանով իսկ նպաստավոր հող ստեղծեցին դաշնակների հետ հետագայում համագործակցելու համար մի շարք երկրներում, ինչպես այդ տեղի էր ունենում այդ ժամանակ Հունաստանում, Բուլդարիայում, Պարսկաստանում և այլուր։

Այսպիսի քաղաքականության դեմ բանվորական մասսայի ծավալած բողոքի շարժման ազդեցության տակ խախտվել էր հնչակյանների համաձայնեցված, միասնական գործունեությունը շրջաններում։ Սիրիայում և Եգիպտոսում, օրինակ, հնչակյանները սահմանազատվելով աջակողմյան տարրերից, որդեգրել էին դաշնակցության դեմ անհաշտ պայքարի քաղաքականություն, որը ամենուրեք պաշտպանություն էր գտնում կոմունիստների կողմից։ Բանվորական ձախ հոսանքի ճնշման տակ, VIII պատգամավորական ընդհանուր ժողովը հարկադրված եղավ հայտարարել իր համակրության մասին Կոմունիստական III ինտերնացիոնալի նկատմամբ, որդեգրել Սովետական Հայաստանին օժանդակելու քաղաքականություն, մերժելով նրա թշնամիների հետ ընդհանուր և մասնակի որևէ համագործակցություն։ Պատգամավորական ժողովի այս դրական դիրքորոշումը հիմք ծառայեց հետագայում հունահայ կոմունիստների և հնչակյանների միջև մասնակի համագործակցություն զարգացնելու և Սովետական Հայաստանի համակիրների շարժումը է՛լ ավելի ընդլայնելու համար։

Առաջին հերթին անհրաժեշտ եղավ լիկվիդացնել հնչակյանների և ամիկավարների միջև գոյություն ունեցող վնասակար հակամարտությունը, հատկապես ՀՕԿ-ի կազմակերպու-

[13] Տե՛ս «Երիտասարդ Հայաստան», Նյու-Յորք, 1924, № 21։

թյունների ղեկավարման հարցերում, միաձուլել որոշ տեղերում զուգահեռաբար գոյություն ունեցող՝ ռամկավարների և հնչակյանների նախաձեռնությամբ ստեղծված ՀՅԿ-ի անջատ մասնաճյուղերը, մասնավորապես Հին Հունաստանի շրջաններում, և կոմպրոմիսի միջոցով ստեղծել ՀՅԿ-ի միացյալ ղեկավարություն։

1925 թ. ապրիլ ամսին ՀՅԿ-ի Աթենքի շրջանային վարչությունը ստացավ նույնպես կենտրոնական վարչության բնույթ, որ Սալոնիկի ՀՅԿ-ի կենտրոնական վարչությունից անկախ՝ սկսեց ղեկավարել Հին Հունաստանի և կղզիների հայաբնակ շրջանների մասնայական շարժումը։ Այդ ժամանակաշրջանում Աթենքի և Սալոնիկի ՀՅԿ-ի երկու կենտրոնների միջև պահպանվում էին սերտ հարաբերություններ և ընդհանուր բնույթի բոլոր հարցերը լուծվում էին համատեղ խորհրդակցությամբ և համաձայնությամբ։

Հունական կառավարության կողմից ՀՅԿ-ի կանոնադրության վավերացումից հետո, որի շնորհիվ նա ամբողջ Հունաստանում գործելու օրինական իրավունք ստացավ, Աթենքի կենտրոնական վարչությունը վերածվեց ամբողջ Հունաստանի ՀՅԿ-ի կենտրոնական վարչության, իսկ Սալոնիկի կենտրոնական վարչությունը ենթարկվելով նրան՝ վերածվեց շրջանային վարչության։ Այս փոփոխությունը համընկնում էր նաև գաղութի ազգային իշխանությունների միավորման և կենտրոնացման պրոցեսի հետ, Աթենքի ազգային կենտրոնական վարչության հաստատման, հունահայ գաղութի ընդհանուր և միասնական ղեկավարություն ստեղծելու համար ծավալված շարժման հետ։ Նույնպիսի փոփոխություններ հետագայում տեղի ունեցան նաև հայկական կոմունիստական խմբերի աշխատանքներում։

Առաջին իսկ տարիներից ՀՅԿ-երը գարձան հունահայ գաղութի ամենամասսայական կազմակերպությունները երեսուն մասնաճյուղերով և հազարավոր անդամներով[14], որոնց մեջ կոմունիստները և մյուս հայրենասիրական տարրերը խոշոր աշխատանք էին ծավալում՝ բանախոսությունների, հրապա-

[14] Տե՛ս ՀՍՍՌ ՀԱՍՇ ԿՊԱ, ֆ. 178, գ. 547, ց. 1, թ. 33—40։

բակային ժողովների, դասախոսությունների, երեկույթների և կուլտուր-մասսայական այլ ձեռնարկումների կազմակերպման միջոցով։

Բացի Սովետական Հայաստանի սոցիալիստական շինարարության օժանդակելու համար կազմակերպվող հանդանակություններից[15], ՀՕԿ-ի կազմակերպությունների գործունեության համար հատկապես նշանակալի էր այն մեծ ակտիվությունը, որ նրանք ցուցաբերեցին այդ տարիներին տեղահանությունների դեմ ծավալվող հայ աշխատավորության բողոքի շարժումը կազմակերպելու գործում, տեղահանված կարոտյալների համար օգնություն կազմակերպելու և ներգաղթի քարավաններով նրանց Սովետական Հայաստան ուղարկելու, Սովետական Հայաստանի հասարակական կազմակերպությունների հետ եղբայրական կապեր ստեղծելու գործում։

1925 թ. ՀՕԿ-ի կազմակերպությունների ամրապնդումից հետո կոմունիստների նախաձեռնությամբ սկսեցին կազմակերպվել նաև Հայ պիոնական կարմիր խաչի մի շարք մասնաճյուղեր, որոնք հետագայում վերածվեցին կանանց բազմանդամ դեմոկրատական կազմակերպությունների։ Կոմունիստների և դեմոկրատների համատեղ գործունեության շնորհիվ Սովետական Հայաստանի բարեկամների շարժումը ամուր դիրքեր գրավեց նաև հայրենակցական, երիտասարդական և կուլտուր-մասսայական բազմաթիվ կազմակերպություններում։

ՊԱՅՔԱՐ ՀԱՆՈՒՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՃԱԿԱՏԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԴԱՇՆԱԿՆԵՐԻ ՄԵԿՈՒՍԱՅՄԱՆ

1924 թ. սկզբներին հունահայ գաղութում արդեն ձևավորվել էին ազգային մարմիններ՝ Ազգային կենտրոնական վար-

---

[15] Միայն Սալոնիկում մինչև 1925 թ. փետրվար ամիսը հանդանակվել էր 99.699 դրախմ, Աֆենքում՝ 10.000 դրախմ. հանդանակությունները մասսայական բնույթ էին ստացել նաև մյուս քաղաքներում։ Տե՛ս ՀՍՍՌ ՀՌՍՇ ԿՊԱ, ֆ. 178, ց. 1, գ. 394, էջ 25։

ությունը, գաղթականների թաղական խորհուրդները, որոնց իրավասության տակ էին գործում հայկական դպրոցները, սրանց հոգաբարձությունները և այլն։ Սակայն դրանք մեծ մասամբ, ինչպես նշել ենք, նշանակովի մարմիններ էին և կրում էին ժամանակավոր բնույթ։

Հին Հունաստանի և կղզիների առաջին գումարման պատգամավորական ժողովի ընտրությունները նշանակվեցին 1924 թ. հուլիսի 20-ի համար։ Ընտրությունները տեղի ունեցան երկրի ֆաշիզացման, հայերի մասսայական տեղահանությունների և հնչակ-դաշնակ համագործակցության պայմաններում, համագործակցություն՝ որը որպես մի ամոթալի էջ՝ մնում է հունահայ հնչակյանների պատմության մեջ։[16]

Հունահայ աշխատավորությունը բոյկոտի ենթարկեց այդ ընտրությունները։ Բազմահազար գաղթականությունից Հին Հունաստանի Առաջին պատգամավորական ժողովի ընտրություններին մասնակցել էին միայն 2958 հոգի, որոնք ընտրել էին 37 պատգամավոր, իսկ Աթենքի 5000 հայերից ընտրություններին մասնակցել էր միայն 88 հոգի[17]*։ Ընտրված պատգամավորները բաժանվում էին հետևյալ կերպ. ռամկավար՝ 8 մարդ, հնչակյան՝ 9, դաշնակցական՝ 9, և չեզոք (անպարտիական՝) 11 մարդ, որոնց մեջ գերակշռում էին Սովետական Հայաստանի համակիրները։*

Այս ընտրությունների արդյունքները չէին արտացոլում հունահայ աշխատավորության կամքը, քանի որ մասնավորապես ֆաշիստական տեռորի իրադրությունն օգտագործելով՝ դաշնակները դիմել էին ամեն տեսակ ընտրական և այլ կեղծումների ու զեղծումների։ Դաշնակներն այդ ժամանակ առավել կազմակերպված էին Աթենքի շրջանում։ Օգտվելով շրջանային ազգային մարմինների թույլ կազմակերպվածությունից ու նյութական անզորությունից, որոնք չէին կարող հոգալ

---

[16] *Հունաստանի հայանի աջ հնչակյան գործիչ Լևոն Սեֆերյանը մի քանի շրջագայություններ էր կատարել շրջաններում, հատկապես եղել էր Սալոնիկ քաղաքում, որպեսզի «այնտեղի հնչակյան ընկերները ջանա համոզել, որ դաշնակցականներու հետ միանան և գործակցեն»։ Տես «Արարատ», Աթենք, 1925, № 75։*

[17] *«Նոր Ալիք», 1924, № 411։*

Նույնիսկ իրենց ընտրած պատգամավորների ճանապարհածախսը, Ամենքի մի շարք «պատկառելի» դաշնակցականներ «համաձայնեցին» իրենց անձով ներկայացնել այդ շրջանները պատգամավորական ժողովում և այս կերպ ապահովեցին շրջանների քվեները դաշնակների օգտին։

Ընտրությունների ժամանակ աջ հնչակյանները մի շարք թաղամասերում, ինչպես, օրինակ, Կոկինիայում, հանդես եկան դաշնակների հետ միացյալ ցուցակով և որպես փրենց ընդհանուր թեկնածու անցկացրին Իզմիրի հայկական լեգեոնի նախկին հրամանատար, արկածախնդիր գեներալ Թորգոմին[18]։

Սակայն հիշատակության արժանի է այն փաստը, որ հնչակ-դաշնակ բլոկի մյուս բոլոր թեկնածուները ծանր պարտություն կրեցին հենց նույն Կոկինիայում, ուր ամիկավարները հանդես գալով այս բլոկի դեմ, պաշտպանություն գտան Սովետական Հայաստանի բոլոր բարեկամների կողմից և հարթանակ տարան։

Աջ հնչակյանները համաձայնեցին Ամենքում ևս հանդես գալ թեկնածուների միացյալ ցուցակներով դաշնակների հետ, սակայն վերջին պահին, մասսաների ճնշման տակ, խախտելով համաձայնությունը՝ ընտրական մասնակի համագործակցության մեջ մտան ամիկավարների հետ և անցկացրին ընդհանուր թեկնածուներ։ Նույնը պատահեց նաև ուրիշ թաղամասերում։

Հնչակյանների մասնակի համագործակցությունը դաշնակների հետ՝ խոշոր հարված հասցրեց դեմոկրատական ուժերի համախմբման գործին և թեավորեց դաշնակներին, որոնք երազում էին հնչակյանների օգնությամբ դեկավար դեր խաղալ գաղութի ազգային մարմիններում։ Կոմունիստները, ինչպես նշել ենք, այդ ժամանակ կազմակերպված մեծ ուժեր չունեին Հին Հունաստանի շրջաններում։ Դա հնարավորություն չէր տալիս նրանց ինքնուրույն կերպով գլխավորելու ընտրական պայքարը դաշնակցության դեմ։ Ուստի նրանք պաշտպանեցին

---

[18] «Կոկինիա մեջ,— գրում էր «Բանվոր-Պարիզ» թերթը,— հնչակյանները միացած ... դաշնակցականներուն հաջողցուցած են ընտրություններ տեղահանել «գորավար» Թորգոմի...»։ Տե՛ս «Բանվոր-Պարիզ», Փարիզ, 1924, N 4։

ռամկավարներին, որոնք որպես Սովետական Հայաստանի բարեկամներ՝ հանդես եկան իբրև օպոզիցիոն պարտիա դաշնակ-հնչակ բլոկի դեմ։ Հրաժարվելով դաշնակների հետ համագործակցելու առաջարկություններից, որ պաշտոնապես արվել էին նրանց արտասահմանից ժամանած՝ դաշնակ պարագլուխ Կարո Սասունիի կողմից, ռամկավարները քաղաքական որոշ հեղինակություն ձեռք բերին աշխատավորության մեջ և արժանացան այդ ժամանակ Սովետական Հայաստանի համակիր մասսաների աջակցությանը։ Գաղութի ազգային մարմիններում գերակշռող ազդեցություն ապահովելու համար ազգայնական պարտիաների միջև մղվող քաղաքական պայքարը հանգեցրեց նրան, որ ռամկավարները դիմադրելով դաշնակներին, դարձան օպոզիցիոն կարևոր ուժ Առաջին պատգամավորական ժողովում։ Դաշնակների «Նոր օր»-ը, պարծանքով գրում էր, թե «Այսօր դաշնակ-հնչակ բլոկի ձեռքին մեջ է Ազգային վարչությունը»[19]։ Այդ համագործակցությունը փառաբանվում էր ռեակցիոն բոլոր ուժերի կողմից։

Պատգամավորական ժողովը թեմի հոգևոր առաջնորդ առաջադրեց իր հայրենասիրական հայացքներով ու վարքագծով հայտնի հոգևորական Կարապետ արքեպիսկոպոս Մազլումյանին, որը հետագայում հաստատվեց էջմիածնի կաթողիկոսի հատուկ կոնդակով։ Մազլումյանի՝ թեմի հոգևոր առաջնորդ նշանակվելը նրա քաղաքական դիրքորոշման բերումով բարենպաստ որոշ նշանակություն ունեցավ հետագայում գաղութի դեմոկրատական ուժերի համար՝ դաշնակցության դեմ մղվող պայքարում։ Պատգամավորական ժողովն ընդունեց հունահայ գաղութի ներքին վարչական կանոնադրությունը և անհրաժեշտ համարեց Սալոնիկի ու Աթենքի ազգային մարմինների միացումը՝ գաղութի ընդհանուր ղեկավարություն ստեղծելու համար։

Ջնայած դաշնակների կատաղի դիմադրությանը, պատգամավորական ժողովի վրա Սովետական Հայաստանի համակիրների մասսայական շարժման ճնշումը ավելի պայմանների համար բարենպաստ եղը ավելին նորընտիր Ազգային կենտրո-

---

[19] «Նոր օր», 1924, № 349։

նական վարչություն կազմելու հարցին։ Այն կազմվեց անպարտիականների (չեղոքների) մեծամասնությամբ և Գրիգոր Բարազամյանի ղեկավարությամբ։ Չեղոքներն անցան Սովետական Հայաստանի պաշտպանության դիրքերը։ Սա կարևոր երևույթ էր և լուրջ դեր խաղաց գաղութի ազգային մարմինների դեմոկրատացման գործում։ Բնորոշ էր, որ պատգամավորական ժողովը հանձնարարեց նորընտիր վարչությանը՝ Սովետական Հայաստանի կառավարությանը հաղորդել հունահայ աշխատավորության անկեղծ համակրանքն ու լավագույն մաղթանքները հայրենիքի բարգավաճման գործում։

Այս որոշումը ցույց էր տալիս, որ հունահայ գաղութում չի կարող գոյություն ունենալ օրինական ոչ մի մարմին, որի գործունեության առանցքը չի կազմի սովետական հայրենիքի հանդեպ բարյացակամ վերաբերմունքը։ Այս որոշման ընդունումը աշխատավորների հաղթանակն էր դաշնակցության դեմ՝ գաղութի առաջին իսկ ազգային մարմնում։ Պատգամավորական ժողովից ընտրված Ազգային կենտրոնական վարչության հրահանգով 1924 թ. հոկտեմբերին տեղի ունեցան Հին Հունաստանի թաղական խորհուրդների ընտրությունները, ուր հնչակյանները մի շարք տեղերում (օրինակ, Կոկինիայում-Պիրեա) նույնպես շարունակեցին իրենց ընտրական համագործակցությունը դաշնակների հետ, իսկ առանձին ցուցակներով այդ բլոկի դեմ հանդես եկող ռամկավարները պաշտպանություն գտան կոմունիստների և Սովետական Հայաստանի բոլոր բարեկամների կողմից։

Սալոնիկի «Նոր Ալիք» թերթն իրավացիորեն այդ ժամանակ գրում էր, թե «Աթենքի հնչակյաններն իրենց ուսերը տրամաբրելով դաշնակցականներուն, որպեսզի անոնք իշխեն Հունաստանի մեջ, կկատարեն դեր մը, որ անփառունակ է»[20]։

Դաշնակ-հնչակ համագործակցության այս կարճատև շրջանը, սակայն, մոռանում էր իր վախճանին։ Ներգաղթի կազմակերպման մասին սովետական կառավարության հումանիտարական որոշումը այնքան մեծ խանդավառություն առեղծեց հունահայ աշխատավորության մեջ և ՀՕԿ-երի գոր-

[20] «Նոր Ալիք», 1924, № 179։

ծունեությանն այնպիսի զարկ տվեց, որի հետ չէին կարող հաշվի չնստել աջ հնչակյան պարագլուխները։ Սրանք իրենց գոյությունը պահպանելու համար, ենթարկվելով նաև իրենց VIII պատգամավորական ընդհանուր ժողովի որոշումներին, հարկադրված էին մեկ առ մեկ սահմանազատվել դաշնակցությունից և, մասսաների ճնշման տակ, միանալ Սովետական Հայաստանի բարեկամների ժողովրդական շարժմանը։ Մակեդոնիայի և Թրակիայի շրջաններում, ուր կոմունիստները մեծ ազդեցություն ունեին աշխատավոր մասսաների վրա և հակադաշնակ ճակատի գլխավոր ուժն էին, դաշնակները չկարողացան կրկնել այն, ինչ արել էին Հին Հունաստանում։ Նույնիսկ այնպիսի կազմակերպություններում, որոնք դաշնակների նախաձեռնությամբ էին կազմակերպվել (օրինակ՝ Սալոնիկի հայ երկսեռ երիտասարդաց միությունը), Սովետական Հայաստանին համակիր մեծամասնությունը, մեկուսացնելով դաշնակ ղեկավարներին, կարողացել էր առաջադիմական ուղղություն տալ նրանց գործունեությանը։ Նույնը վերաբերում է նաև Հայ մարմնակրթական ընդհանուր միությանը (ՀՄԸՄ) և կուլտուր-մասսայական այլ կազմակերպություններին, որոնք ամենուրեք աճում էին սնկի պես։

Հին Հունաստանի պատգամավորական ժողովից հետո՝ 1924 թ. սեպտեմբերի 7-ին տեղի ունեցած Նոր Հունաստանի Առաջին պատգամավորական ժողովի ընտրություններում Մակեդոնիայի և Թրակիայի աշխատավորությունը, կոմունիստների ղեկավարությամբ, Սովետական Հայաստանի բարեկամների միացյալ բլոկի դրոշի տակ ընտրական մեծ հաղթանակ տարավ դաշնակցության դեմ։ Ընտրված քսաներկու պատգամավորների ընդհանուր թվից տասնութը հակադաշնակ բլոկի ներկայացուցիչներ էին, և միայն չորսը՝ դաշնակ պատգամավորներ[21]։

Սակայն, օգտվելով Մակեդոնիայի և Թրակիայի առաջնորդ Երվանդ եպիսկոպոս Փերտահջյանի հովանավորությունից, դաշնակներին հաջողվեց ապօրինի կերպով բեկանել տալ բանվորական մի շարք քաղաքների (Կավալա, Կոզանա, Դիմոթի-

[21] «Նոր Ալիք», 1924 № № 148, 169, 175, 192։

կա) ընտրությունները, ուր միահամուռ կերպով պատգամավորներ էին ընտրվել կոմունիստները, և ակտիվ հակադաշնակները։ Այս ապօրինությունը մեծ զայրույթ առաջացրեց աշխատավորական մասսաների մեջ։ Կավալայի, Քսանթիի, Կոզանայի և այլ քաղաքների հայ աշխատավորները մասսայական միտինգներ կազմակերպելով՝ բողոքագրեր էին ուղարկում Սալոնիկի ազգային քաղաքական ժողովին, հայտարարելով, որ եթե նշանակվեն նոր ընտրություններ, նրանք նորից կընտրեն նույն պատգամավորներին։ Բանվորական բոլոր կենտրոններում այդպես էլ եղավ։ Կավալայի հայ աշխատավորները միահամուռ կերպով իրենց քվեները տվեցին հակադաշնակ բլոկի թեկնածուներին։

Ընտրված հակադաշնակ պատգամավորները պահանջեցին սեպտեմբերի 21-ին անհապաղ բաց անել պատգամավորական ժողովի նիստը՝ Մակեդոնիայի և Թրակիայի շրջանի ազգային նոր ղեկավարություն ստեղծելու համար։ Դրա դեմ հանդես եկավ Փերտահջյան եպիսկոպոսը։ Նշանակելով ժողովի բացումը սեպտեմբերի 28-ին, Փերտահջյան եպիսկոպոսը ձգտում էր մի շարք կոմունիստ պատգամավորների իրավասությունները անվավեր հայտարարելով՝ թույլ չտալ նրանց մասնակցությունը պատգամավորական ժողովի անդրանիկ նիստին, և ամեն կերպ խանգարել հակադաշնակ կազմով ազգային նոր ղեկավարություն ստեղծելու մասին ընտրողների մասսայական պահանջի իրականացումը։

Սեպտեմբերի 21-ին Մակեդոնիայի առաջնորդի պահանջով Սալոնիկի հայկական եկեղեցին պաշարված էր ոստիկանական ջոկատների կողմից, որոնք հասել էին դաշնակներին օգնելու և պատգամավորական ժողովի բացումն արգելելու համար։

Ոստիկանական ուժերի հետ բնդհարումից խուսափելու համար, հավաքված 17 պատգամավորները հեռանում են եկեղեցու բակից, նախօրոք միաձայն որոշում ընդունելով՝ ամեն կերպ շարունակել պայքարը դաշնակների ոտնձգությունների դեմ, ժողովրդի կամքն իրականացնելու համար։

Դաշնակների պահանջով և Հունական իշխանությունների հովանավորությամբ Փերտահջյան եպիսկոպոսը հրաժարվեց

վավերացնել Կավալայի, Կոզանայի և Դիմոթիկայի ընդդիմադիր պատգամավորների իրավասությունները և չթույլատրեց նրանց մասնակցությունը պատգամավորական ժողովի բացման նիստին[22]։ Նա հովանավորելով դաշնակներին, արհամարհեց աշխատավորների մասսայական բողոքագրերը, որոնք ընտրական դեղծումների կապակցությամբ Քաղաքական ժողովից պահանջում էին անվավեր հայտարարել Քսանթի, Գյումյուլջինա և Սերեզ քաղաքների դաշնակ պատգամավորների իրավասությունները և նշանակել նոր ընտրություններ։

Մակեդոնիայի և Թրակիայի առաջնորդի այս ապօրինությունների ու կամայականությունների դեմ նորից ոտքի կանգնեց հայ աշխատավորությունը՝ բողոքի մասսայական միտինգներում դատապարտելով առաջնորդի վարքագիծը և պահանջելով պատգամավորների իրավասությունների անհապաղ վավերացումը։ 1924 թ. հոկտեմբերի 19-ին Սալոնիկի եկեղեցու բակում, հարյուրավոր աշխատավորների մասնակցությամբ, տեղի ունեցավ բողոքի մասսայական միտինգ, ուր ժողովուրդը դարձյալ պահանջեց Փերտահջյան եպիսկոպոսի և Քաղաքական ժողովի անմիջական հրաժարումը և պատգամավորական ժողովի օրինական բացումը։

Դաշնակները տեսնելով իրենց բացարձակ քաղաքական պարտությունը Մակեդոնիայի և Թրակիայի շրջաններում, համամիտ էին այդ շրջանները ևս միացնելու Հին Հունաստանին և ենթարկելու Ազգային կենտրոնական վարչության իրավասություններին, հուսալով դրանով ջլատել դեմոկրատական ուժերի միասնությունը և աջ հնչակյանների հետ միասին նվաճել ազգային մարմինների ղեկավարությունը ամբողջ Հունաստանում։ Մակեդոնիայի և Թրակիայի ընտրություններից

---

[22] Սփյուռքահայ դեմոկրատական մամուլը լայնորեն արձագանքում էր հունահայ գաղութի առաջին ընտրական պայքարի արդյունքներին։ Նույնիսկ Կ. Պոլսի պահպանողական «Ժողովուրդի Ձայնը - Ժամանակ» թերթը 1924 թ. հոկտեմբերի 16-ին գրում էր, թե Փերտահջյան եպիսկոպոսը «պարզապես դաշնակցության հաշվույն է, որ կը գործե, հակադաշնակցական պատգամավորներու ընտրության ապօրեն կերպով բեկանումը հովանավորելով»։

հետո, երբ ցայտուն կերպով դրսևորվեցին հայ աշխատավորության դեմոկրատական, սովետասիրական տրամադրությունները, դաշնակները սկսեցին տեռորիստական ակտեր կազմակերպել կոմունիստների և Սովետական Հայաստանին համակիր ակտիվիստների դեմ, բացահայտորեն նրանց մատնել հունական ոստիկանական օրգաններին, պահանջելով կոմունիստների արտաքսումը երկրի սահմաններից։ Քաղաքական սուր պայքարի ծավալման պայմաններում, երբ անհնար եղավ այլևս ապահովել նոր Հունաստանի պատգամավորական ժողովի նորմալ աշխատանքը, ընդդիմադիր կողմերը, համաձայնության գալով, 1924 թ. հոկտեմբերի վերջերին ընտրեցին Քաղաքական ժողովի նոր կազմ, որ գլխավորապես բաղկացած էր շեղոքներից։ Այդ կազմը պարտավորվեց վեց ամսվա ընթացքում պատգամավորական նոր ընտրություններ անցկացնել՝ օրինական ազգային մարմին ստեղծելու համար։ Այս համաձայնության հիման վրա նախկին Քաղաքական ժողովն ամբողջ կազմով ներկայացրեց իր հրաժարականը, իսկ ընտրված պատգամավորները նույնպես հրաժարվեցին իրենց լիազորություններից։ Սակայն, օգտվելով հունական իշխանությունների հովանավորությունից և դիմելով ստոր միջոցների, դաշնակները թույլ չտվեցին, որ այդ ընտրությունները տեղի ունենան համաձայնեցված ժամկետին։

Հունահայ աշխատավորության առաջին ընտրական պայքարը պատգամավորական ժողովների շուրջը թե Հին և թե Նոր Հունաստանում՝ ցույց տվեց հայկական զաղութի դեմոկրատական ուժերի գերակշռությունը դաշնակցության ուժերի համեմատությամբ, նրա նվիրվածությունը և համախմբվածությունը սովետական հայրենիքի շուրջը։

Հունահայ կոմունիստները քննարկելով 1924 թ. ընտրությունների արդյունքները և քաղաքական եզրակացություններ անելով իրենց գործունեությունից, Հունաստանի կոմպարտիայի օժանդակությամբ մշակեցին տակտիկական նոր գիծ, որի առանցքն էր կազմում մասսայական աշխատանքների հետագա ծավալումը հանուն հունահայ զաղութի դեմոկրատական

ուժերի միասնության, միասնություն, որը և միայն կկարողանար վերջնականապես մեկուսացնել և չախչախիչ հարված հասցնել դաշնակցությանը։

Կոմունիստներն ամբողջապես նվիրվեցին այդ խնդիրների իրականացմանը։

1925 թ. ապրիլին Հին Հունաստանի և կղզիների առաջին գումարման պատգամավորական ժողովի նիստերը տեղի ունեցան քաղաքական սուր պայքարի մթնոլորտում։ Ընդդիմադիր պատգամավորները հենվելով ժողովրդական շարժման վրա, անվստահություն հայտնեցին գաղութի ղեկավար մարմիններին և պահանջեցին Ազգային կենտրոնական վարչության անմիջական հրաժարումն ու պատգամավորական նոր ընտրությունների նշանակումը։ Պատգամավորական ժողովի չորս նիստերի ընթացքում ընդդիմադիր ուժերի վճռական բոյկոտի տակտիկան հարկադրեց իշխող դաշնակ-հնչակ բլոկին, որն արդեն սկսել էր քայքայվել, համաձայնել նոր ընտրությունների հետ, որոնք նշանակվեցին նույն թվականի սեպտեմբերի 27-ի համար։

Նոր ընտրությունների պայմանների համաձայն՝ հազար հոգի հայ բնակիչ պետք է ընտրեին մեկ պատգամավոր, այսպիսով Հին Հունաստանում նախատեսված էր ընդամենը ընտրել հիսուներկու պատգամավոր։ Հայերի մասսայական տեղահանությունները Մակեդոնիայի և Թրակիայի շրջաններից դեպի Պելոպոնեսի շրջանները՝ առաջ բերին նաև նորանոր հայկական համայնքներ Հին Հունաստանի տարբեր վայրերում և ղպալիորեն ավելացրին հայ բնակչության ընդհանուր թիվը՝ համեմատած Նոր Հունաստանի շրջանների հետ։

Տեղահանությունները տնտեսապես քայքայելով և բացարձակ թշվառության մատնելով հունահայ աշխատավոր մասսաների մեծամասնությանը, ուժեղացրին նաև նրանց ռևոլյուցիոն տրամադրությունները։ Կոմունիստները հենվելով հայ աշխատավորների մարտական այս տրամադրությունների վրա, դյուրավորում և հաջողությամբ ներդրավում էին նրանց բանվորական ցույցերի և գործադուլային շարժման

մեջ, կազմակերպում նրանց ակտիվ մասնակցությունը ռեակցիայի դեմ մղվող համաժողովրդական ընդհանուր պայքարին։

Հունահայ կոմունիստները դեռևս 1924 թ. սերտ կապեր էին պահպանում Սփյուռքի հայ կոմունիստների հետ, լայնորեն տարածում Ամերիկայի «Պրոլետար» և Փարիզի «Բանվոր-Պարիզ» կոմունիստական թերթերը և ակտիվորեն աշխատակցում նրանց։ 1924 թ. վերջերին ուղարկած մի թղթակցության մեջ, որ տպագրված է «Բանվոր-Պարիզ» թերթի 1925 թ. հունվարի 25-ի համարում ասված է, թե Սալոնիկում «Աշխատանքի խումբ մը կազմված է և հարաբերության մեջ մտած է բոլոր երկիրներու կոմկուսի հայ աշխատանքի խումբերու հետ։ Կատացվին կանոնավորաբար զանազան թերթեր, ինչպես և «Բանվոր-Պարիզ», որուն համար առանձնապես շնորհակալություն կհայտնենք»[23]։

Թե ինչպիսի ծանր պայմաններում էին աշխատում հունահայ կոմունիստները և ինչպիսի արիությամբ էին նրանք դիմագրավում պայքարի դժվարությունները, այդ մասին վկայում է բանվոր Աշոտ Արշակունու նամակը Սալոնիկից, որ տպագրվել էր Ամերիկայի «Պրոլետար» թերթում՝ 1925 թ. հունիսի 27-ին։ Այդ նամակում ասված է. «Մայիսի 8-ի գիշերը դիս ձերբակալեցին «վտանգավոր գրքեր փոխադրելու հանցանքով։ Տարին ոստիկանատուն... և սկսան անխնա ծեծել զիս, մինչև որ այդ ահռելի և անտանելի տանջանքին տակ մարմինս սկսավ և ես անզգա գետինը փռված մնացի։ Այս անտանելի տանջանքը շարունակվեցավ չորս օր։ ...Չորս օր հետո, վերջապես զիս ազատ արձակեցին։ Ընկերներս զիս անմիջապես շրջապատելով բժշկի խնամքին տարին հանձնեցին...։ Վիճակս լավ չէ, չեմ գիտեր ի՞նչ պիտի ըլլա վերջս, բերանես արյուն կհոսի և ամբողջ մարմինս ահռելի ցավերու մեջ է։ Սակայն ես հոգեպես շատ ուրախ եմ, որովհետև կոմունիզմի համար մեռնելը բախտավորություն կհամարեմ. իմ հավատս այն է թե՝ մարդիկ ապրելու չեն մեռնելու համար, այլ մեռնելու են ապրելու համար»։

---

[23] Տե՛ս «Բանվոր—Պարիզ», 1925, № 22։

Հունահայ գաղութում տարածվող սիյուտֆանայ կոմունիստական և դեմոկրատական թերթեր և պարբերականներ

Ոսոիկանական տանջանքների հետևանքով ծանր հիվանդացած կոմունիստ Ա. Արշակունին բժիշկների կողմից ուղարկվում է Սալոնիկի ընդհանուր գաղթականաց կենտրոնական հիվանդանոցը, որտեղից մայիսի 21-ին իր մարտական ընկերներին և «Պրոլետար» թերթին ուղարկված նամակում գրում է.

«Ընկերներ, կարելի է այս վերջին նամակս ըլլա, իբր հիշատակ կապիտալիզմին զոհ գնացող բանվորի. պահեցեք և ձեր թերթովը խրախուսեցեք կոմունիստ ընկերները, որ անհանգիստ պայքար մղեն մարդկությունը սարկացնող ավազակ կապիտալիստներու դեմ»[24]։

Հայ աշխատավորները իրենց հույն դասակարգային եղբայրների հետ միասին կռիվում էին կապիտալիստական շահագործման ու վայրագությունների դեմ մղվող ընդհանուր պայքարում։ Նույնիսկ այն հունահայ բանվորները, որոնք հարկադրված էին արտագաղթել տարբեր կապիտալիստական երկրներ, նոր հորիզոնների վրա շարունակում էին մարտնչել կոմունիստական պարտիաների դրոշի տակ։ Հակագաղնակ պայքարում ֆրանսահայ աշխատավորության առաջին զոհերից մեկը՝ Մխիթար Բաղդասարյանը, որ դաժանորեն սպանվել էր Լիոնում 1926 թ. մայիսի 2-ին դաշնակ տեռորիստների կողմից՝ Ա. Ահարոնյանի բանախոսության ժամանակ, իր մարտական միկրոֆոնը տարել էր Հունաստանի կոմպարտիայի Սալոնիկի կազմակերպության շարքերում[25]։ Հայ կոմունիստներն ու առաջավոր բանվորները սրբությամբ էին պահպանում սիրելի հայ աշխատավորներին Ալեքսանդր Մյասնիկյանի տված պատգամները. «Եթե դուք ուզում եք Հայաստանի զորացումը,— ուղղում էր նա իր բոցավառ խոսքը սիրելի հայ աշխատավորներին,— որով նա հնարավորություն կունենա նորանոր գաղթականներ ընդունելու, եթե դուք ուզում եք մի անգամ ընդմիշտ ազատվել անանկությունից, թշվառությունից ու շարքաշ դրությունից, դուք, հայ գաղթականներդ, որոնց թիվը հարյուր հազարներով է հաշվվում, ապա վանեցեք Զեյտունից հակաժողովրդական ու մարդատյաց դաշնակցականներին, որոնք մասն ունեն ձեր դժբախտության մեջ, և փարվեցեք արդի հեղափոխական շարժմանը, միացած ձեր երկրների պրոլետարներին՝ բանվորներին՝ բանվորներ նրանց հետ միա-

---

[24] Տե՛ս «Պրոլետար», նյութ—Յորք, 1925, № 2։

[25] Մխիթար Բաղդասարյանը եղել էր 1925 թ. Սալոնիկի մայիսմեկյան ցույցի կազմակերպիչներից մեկը։ 1925 թ. սեպտեմբերին նա մեկնել էր Մարսել, ապա անցել Լիոն։

սին կապիտալիզմի, արյան, թշվառության ու հին աշխարհի հիմքերը»[26]։

Հունահայ կոմունիստներն ու գիտակից բանվորները այդպես էլ վարվում էին իրենց ամբողջ ռևոլյուցիոն գործունեության ընթացքում։

* * *

Պանկալոսյան ֆաշիստական զինվորական դիկտատուրան, որ հաստատվեց երկրում 1925 թ. հուլիսի սկզբներին և տևեց մինչև 1926 թ. օգոստոսը, նպատակ ուներ ամրապնդել իշխող դասակարգերի խարխլվող տիրապետությունը՝ ժողովրդական շարժման ջախջախման միջոցով։ Արգելվեցին կոմունիստական պարտիան և ռևոլյուցիոն արհմիությունները, վերացվեցին առանց այդ էլ սահմանափակ բուրժուա-դեմոկրատական ազատությունները, հալածանքի ենթարկվեցին նույնիսկ կառավարության բուրժուական հակառակորդները։ Կոմունիստները անցնելով ընդհատակյա աշխատանքի, անողոք կերպով մերկացնում էին պանկալոսյան դիկտատուրայի հակաժողովրդական էությունը, կազմակերպում և ղեկավարում բանվոր դասակարգի և աշխատավորական մասսաների պայքարը հացի և ազատության համար։

Դիկտատուրայի ամենադաժան պայմաններում հայ աշխատավորության առաջավոր տարրերը, հատկապես բանվոր երիտասարդությունը, համախմբվում էին կոմունիստական պարտիայի և կոմերիտմիության դրոշի տակ և ակտիվ կերպով մասնակցում ռևոլյուցիոն ընդհատակի աշխատանքներին։

1925 թ. հուլիսին, անլեգալ պայմաններում, Աթենքի Թիսեոն արվարձանում տեղի ունեցավ Հին և Նոր Հունաստանի հայկական կոմունիստական խմբերի (Աթենքի, Պիրեայի, Սալոնիկի, Դեդե-Աղաճի) ներկայացուցիչների առաջին միացյալ խորհրդակցական ժողովը Հունաստանի կոմպարտիայի Կենտ-

---

[26] Տե՛ս «Արեգ», Վիեննա, 1924 № 1, էջ 38։

ռնական կոմիտեի ներկայացուցչի մասնակցությամբ[27]։

Խորհրդակցական ժողովը խանգավառությամբ նշելով սովետական կառավարության ներգաղթի քաղաքականության խոշոր ու փրկարար նշանակությունը գաղութահայ աշխատավորական մասսաների համար, հանձնարարեց բոլոր հայ կոմունիստներին՝ ամենուրեք ակտիվ մասնակցություն բերել ներգաղթի հաջող կազմակերպման աշխատանքներին և լայն գործունեություն ծավալել ՀՕԿ-ի, Պետական կարմիր խաչի և դեմոկրատական երիտասարդության կազմակերպություններն ավելի ևս մասսայական դարձնելու համար։

Խորհրդակցական ժողովը հատուկ քննարկման առարկա դարձրեց հունահայ աշխատավորության մեջ կոմունիստների տարած ագիտացիոն և պրոպագանդիստական աշխատանքների վիճակը, դեմոկրատական թերթ հրատարակելու, ներգաղթի կազմակերպմանը աջակցելու և Հին Հունաստանի ազգային պատգամավորական ժողովի ընտրություններին նախապատրաստվելու հարցերը։ Նպատակահարմար գտնվեց տարբեր ուղիներով հաճախ հանդես գալ թռուցիկներով, կոչերով և մեծ ուշադրություն դարձնել ագիտացիոն պրոպագանդիստական և քաղաքական աշխատանքներին հասարակական բոլոր կազմակերպություններում։ Ագիտացիոն և պրոպագանդիստական աշխատանքների հիմնական բովանդակությունը պետք է լիներ դաշնակցության հակասովետական էության մերկացումը, ազգայնական մյուս պարտիաների՝ ռամկավարների և հնչակյանների գաղափարախոսության քննադատությունը։ Կոմունիստական խմբերի ամբողջ ագիտացիոն և պրոպագանդիստական գործունեությունը պետք է ուղղված լիներ համախմբելու հայ բանվորներին և աշխատավորներին կոմպարտիայի, կոմերիմիության և սովետների

---

[27] Այդ խորհրդակցությանը մասնակցում էին Աթենքից, Պիրեայից, Սալոնիկից, Դեկե—Աղաճից մի շարք կոմունիստ ակտիվիստներ՝ Գուրգեն Վարդանյանը, Սեպուհ Գյուզելյանը, Սահակ Միսաքյանը, Սոֆի Մինասյանը, Անթուան Միրայելյանը, Պետրոս Ախիկյանը և ուրիշներ։

շարքերում, Սովետական Միության բարեկամների ժողովրդական ճակատում։

Խորհրդակցական ժողովը, գտնելով որ հակադաշնակ ժողովրդական ճակատի կազմակերպման հարցը հունահայ աշխատավորության ամենահրատապ խնդիրն է, որոշում ընդունեց բազմակողմանի նախապատրաստական աշխատանք կատարել մոտ ապագայում դեմոկրատական մասսայական օրաթերթի հրատարակումն ապահովելու ուղղությամբ, օրաթերթ, որը կանգնելով Սովետական Միության և Սովետական Հայաստանի անվերապահ պաշտպանության դիրքերում, պետք է լիներ զաղութի բոլոր հակադաշնակ առաջավոր ուժերի պայքարի ընդհանուր օրգանը։

25
ՅԱՅՐԱՆԱԿ
ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ
ՎԵՐՔԻՆ ԾԱՆՈՒ
ՅՈՒՆԱՍՏԱՆԻ

«Յայրանակ» դեմոկրատական թերթի 1927 թ. դեկտեմբերի 25-ի համարը

Իրոք, կոմունիստների և առաջադիմական մյուս ուժերի համատեղ ջանքերի և սերտ համագործակցության շնորհիվ 1926 թ. սկզբներին Աթենքում հաջողվեց Կ. Պոլսից եկած հնչակյան հայտնի գործիչ Վահան Ջեյթունցյանի խմբագրությամբ հրատարակել «Հայրանակ» դեմոկրատական օրաթերթը, որը շարունակելով իր գոյությունը մինչև 1927 թ. վերջերը, մեծ դեր խաղաց ժողովրդական մասսաներին Սովետական Հայաստանի և Սովետական Միության շուրջը համախմբելու

գործում։ Այդ թերթին աշխատակցում էին հունահայ կոմունիստ-ակտիվիստները և նրա տարածման գործում ցուցաբերում բազմակողմանի աջակցություն։

Խորհրդակցական ժողովը, մանրամասն քննության առնելով հունահայ գաղութի քաղաքական ուժերի նոր հարաբերակցությունը, մշակեց նաև հայկական կոմունիստական խմբերի տակտիկական գիծը Հին Հունաստանի և կղզիների պատգամավորական ժողովի առաջիկա ընտրությունների կապակցությամբ։

Երկրորդ գումարման պատգամավորական ժողովի ընտրությունների նախապատրաստման շրջանում (1925 թ. ապրիլ-մայիս) հունահայ կոմունիստները մասսայական ագիտացիոն խոշոր աշխատանքներ ծավալեցին գաղութի բոլոր դեմոկրատական և առաջադիմական ուժերը միավորելու և Հին Հունաստանի շրջաններում ևս ջախջախիչ հարված հասցնելու համար դաշնակցությանը։ Ամրապնդելով իրենց եղբայրական կապերն ու համագործակցությունը հնչակյան ձախ բանվորական տարրերի հետ, հենվելով ՀՕԿ-ի մասսայական կազմակերպությունների ու ռամկավարների առաջավոր տարրերի վրա, հունահայ կոմունիստներին հաջողվեց ստեղծել ժողովրդական լայն շարժում։ Իրենց VIII պատգամավորական ընդհանուր ժողովից հետո հնչակյանների հիմնական մասի հրաժարումը դաշնակցության հետ գործակցելու պրակտիկայից և ասիաճանաբար Սովետական Հայաստանի բարեկամների միացյալ ճակատին միանալը հասցրին նրան, որ ի վերջո, դաշնակցության քաղաքական դիրքերը խախտվեցին հունահայ գաղութում և նրա ազդեցությունը սահմանափակվեց միայն մի քանի հայրենակցական միությունների շրջանակներում։

Ֆաշիստական դիկտատուրայի դժվարին պայմաններում ծավալվող նախընտրական պայքարն աշխուժացնելով հունահայ գաղութի քաղաքական բոլոր հոսանքների գործունեությունը, կարևոր ստուգատես հանդիսացավ նաև հունահայ կոմունիստների ուժերի և քաղաքական հասունության համար։

Այս շրջանի սկզբին դաշնակները, ինչպես և սփյուռքահայ մյուս գաղութներում, այնպես էլ հունահայ գաղութում, դեռևս

բավական ազդեցություն ունեին։ Ամենուրեք նրանք հրատարակում էին իրենց թերթերը։ Միայն Հունաստանում ունեին երկու օրաթերթ՝ «Նոր օրը» Աթենքում և «Ալիքը» Սալոնիկում։ Նրանք ունեին նաև բավականաչափ ստվար ինտելիգենցիա։ Փետրվարյան ավանտյուրայի ջախջախումից հետո արտաքսման փախած մի շարք հայտնի դաշնակ գործիչներ ղեկավարում էին նրանց գործունեությունը։ Բացի այդ, դաշնակները հենվում էին հունական ռեակցիոն ուժերի վրա, վայելելով նրանց բազմակողմանի աջակցությունը։ Դաշնակները դիմում էին բոլոր ստոր միջոցների՝ պրովոկացիայի, մատնության, բիրտ ուժի և շանտաժի, որպեսզի չեզոքացնեն ընդդիմադիր ուժերին և Երկրորդ պատգամավորական ժողովում նորից կարողանան ապահովել իրենց գերիշխանությունը։ Այս հանգամանքները բավականին դժվարացնում էին ժողովրդական պայքարը դաշնակցության դեմ և կոմունիստներից պահանջում էին ավելի կազմակերպված աշխատանք ու անձնազոհություն։

Պատգամավորական ժողովը հայկական գաղութի միակ ներկայացուցչական օրգանն էր, որը հունական կառավարության կողմից պաշտոնապես ճանաչված լինելով, լուծում էր հունահայ գաղութի ընդհանուր բոլոր հարցերը։ Այս պատճառով էլ պատգամավորական ժողովը դաշնակների ձեռքից խլելը քաղաքական իր բարերար հետևանքներով՝ կարևոր նշանակություն ուներ ազգային մարմինների հետագա դեմոկրատացման համար։ Հունահայ կոմունիստները մեծ նշանակություն տալով ընտրական մենամարտին դաշնակցության հետ, քաղաքական ակտիվության էին կոչում բանվորներին, գյուղացիներին և արհեստավորներին, կազմակերպում նրանց ուժերը։

Հին Հունաստանի բոլոր հայաշատ թաղամասերում կոմունիստների նախաձեռնությամբ ստեղծվեցին միացյալ ժողովրդական կոմիտեներ, որոնք աշխուժությամբ հսկում էին ընտրությունների օրինական անցկացմանը, պայքարում դաշնակների դեղծումների դեմ և չեզոքացնում տեռորիստական խմբերի ահաբեկչական գործունեությունը, կարգ ու կանոն

պահպանելով բոլոր թաղամասերում։ Այդ ժողովրդական կոմիտեների հիմնական կորիզը կազմում էին Սովետական Հայաստանի համակիր աշխատավորները, իսկ նրանց մարտական ուժը՝ կոմունիստներն ու կոմերիտականները։ Աշխատավորները դիշերները հերթապահում էին թաղամասերում, պաշտպանում հակազգնական բլոկի զեկավար ընկերների կյանքը, կազմակերպում և ոգևորում հայ աշխատավորներին։ Հայ երիտասարդության մեջ Հունաստանի կոմերիտմիության ծավալած ռևոլյուցիոն աշխատանքի արդյունքներն իրենց զգալ էին տալիս հատկապես նախընտրական պայքարի շրջանում։ Հայ երիտասարդ բանվորները, արհեստավորները և նույնիսկ գրպրոցական աշակերտներ ակտիվ կերպով մասնակցում էին ագիտացիոն բոլոր աշխատանքներին և տարբեր թաղամասերում մարտական ելույթներ կազմակերպում գաշնակ տեռորիստների դեմ։

Երկրորդ գումարման պատգամավորական ժողովի ընտրությունները (1925 թ., սեպտեմբերի 27) լիակատար հաղթանակ բերեցին հակազգնական միասնական ճակատին, որն անցկացրեց 35 պատգամավոր[28], գաշնակցության 16 պատգամավորի դիմաց. սրանց մեջ մտնում էին նաև մի քանի այսպես կոչված չեզոքներ՝ ոսոիկանական լրտես Արամ Կայծակի գլխավորությամբ, որոնք համագործակցում էին գաշնակների հետ[29]։

Մոտավոր պատկերացում տալու համար ընտրական տեղամասերում իշխող լարված մթնոլորտի և աշխատավոր մասսայի աշալրջության ու մարտական ոգու մասին, բավական է բերել միայն Ֆիքսի ընտրությունների նկարագրությունը ըստ գաշնակների «Նոր օր» թերթի։

«Ֆիքսի մեջ,— գրում է «Նոր օրը»,— ընտրություն տեղի կունենա 48 ժամ շարունակ, զենքով-դաշույնով, բիրով ու ճականով զինված, սպառնալիքով, ահաբեկումով և նման պայմաններու տակ։ Հունաստանի խորհրդարանին համար երեսփոխանական ընտրություն տեղի ունեցավ և տևեց միայն մեկ ժամ և քվեատուփին մոտ չէին սպասեր ավելավոր գին-

[28] «Հունահայ Տարեգիրք», Աթենք, 1927, էջ 268։

[29] «Երևան», Փարիզ 1925, № 16։

վորներ և, սակայն, փառք հայկական հասկացողության, այդ պատիվն ալ ունեցանք»[30]։

Իրոք, ընտրությունները, որ տեղի ունեցան պանկալոսյան դիկտատուրայի ժամանակ, անցկացվեցին զինվորական ջոկատների հսկողության տակ։ «Նոր օր»-ի ակնարկը «զենքով, դաշույնով, բիրով ու ճակատով զինվածների» մասին դաշնակներին հատուկ դեմագոգիա էր, որ ուղղված էր դեմոկրատական, հակադաշնակ ուժերը վարկաբեկելու նպատակին։ Դաշնակները, հիրավի, կատաղել էին հայ աշխատավորների մարտական աշխուժության և կազմակերպվածության դեմ հանդիման, որի շնորհիվ վիժեցվեցին նրանց բոլոր մեքենայությունները, դաշնակ ահաբեկիչների չարամիտ պլանները, և ապահովվեց հակադաշնակ ժողովրդական ճակատի ընտրական մեծ հաղթանակը։

Ընտրությունների արդյունքները լայն արձագանք գտան սփյուռքահայ գաղութներում։ Հակադաշնակ մամուլը վեր հանեց այդ լուրջ հաղթանակի մեծ նշանակությունը ոչ միայն Հունաստանի, այլև մյուս երկրների հայկական գաղութների համար, սփյուռքահայ աշխատավորության դեմոկրատական ուժերի ամրապնդման համար։ Այդ օրերին կոմունիստներն ու կոմերիտականները գիշեր-ցերեկ գտնվում էին իրենց մարտական պոստերում՝ հրատարակում ու տարածում էին թռուցիկներ, շրջում Աթենքի, Պիրեայի և ուրիշ քաղաքների հայաշատ արվարձաններում, ելույթներ ունենում հրապարակային ընտրական ժողովներում և միտինգներում, անխնա մերկացնում դաշնակների մեքենայությունները և կազմակերպում հայ աշխատավորներին ռեակցիայի դեմ։

Դեմոկրատական ուժերի ընտրական հաղթանակը դիկտատուրայի պայմաններում՝ մեծ ոգևորություն ստեղծեց Հունահայ աշխատավորության մեջ։ Այդ վերածվեց համաժողովրդական ցնծության, երբ հայաշատ քաղաքներում ու թաղամասերում, կայծակի արագությամբ տարածվեց ցանկալի լուրը՝ սովետական կառավարության որոշումը ներգաղթի մասին, որի կազմակերպման գործում հատուկ ծառայությունը

[30] «Նոր օր», 1925, № 620։

ներ ունի Անդրկովկասյան Ֆեդերացիայի առևտրական ներկայացուցիչ Դանուշ Շահվերդյանը։ Հունահայ ամեն մի աշխատավորի համար հասկանալի էր դառնում կոմունիստական պարտիայի լենինյան ազգային քաղաքականության փրկարար նշանակությունը հայ ժողովրդի և մասնավորապես բազմաշարչար սիյուռքահայ աշխատավորների համար, որոնք ազատագրվելով կապիտալիստական շահագործումից, հնարավորություն էին ստանում համախմբվելու իրենց վերածնված հայրենիքում և ակտիվ մասնակցություն բերելու նրա սոցիալիստական շինարարությանը։ Ներդաղթի կազմակերպումը էլ ավելի ամրապնդեց Սովետական Միության և Սովետական Հայաստանի քաղաքական-բարոյական հեղինակությունը սիյուռքահայության մեջ և ուժեղ հարված հասցրեց դաշնակներին, որոնք ամենատարբեր միջոցներով ձգտում էին հեռու պահել հայ աշխատավորներին իրենց հարազատ հայրենիքից, նրանց հայացքներն ուղղելով դեպի Սիբիր կամ Հարավային Ամերիկա՝ օտար հորիզոնների վրա «հայկական օջախ» ստեղծելու ցնորքով։

Հունաստանի կոմպարտիան լայնորեն օգտագործեց ներդաղթի կազմակերպման որոշումը ոնոլյուցիոն ագիտացիոն աշխատանքները բարելավելու և Սովետական Հայաստանի նվաճումները հայ աշխատավորության մեջ մասսայականացնելու համար. ներդաղթը նպաստեց նաև հունահայ դաղութի դեմոկրատական ուժերի միասնության ամրապնդմանը և դաշնակների ազդագրավ քաղաքականության մերկացմանը։

Կոմունիստներն ու դեմոկրատական տարրերը 1925 թ. հոկտեմբերի 28-ին հրատարակեցին համատեղ թռուցիկներ, որոնք ավետում էին ժողովրդին, թե հոկտեմբերի 31-ին հունահայ դաղթականներին հայրենիք փոխադրող «Խարալամպոս» շոգենավը հասնելու է Պիրեա քաղաքը և հաջորդ օրն էլ ուղևորվելու է Սալոնիկ։ «Ցնծա հայ ժողովուրդ,— ասված էր այդ թռուցիկներից մեկում։ —Մեծ անձկությամբ սպասած ժամդ հասավ։ ...Իրականացան բոլոր հույսերդ։ Իրականացան երազներդ։ Իրականացավ ներդաղթը։ Հասավ ժամը, որ դու անգամ մըն ալ Խորհրդային Հայաստանի և հայ ժողովուրդի

Հունգարիայի կոմունիստական խմբերի հրատարակած կոչեր, թռուցիկներ

արի, մարի ու կյանքի հետ խաղացող դավաճան դաշնակցականները ճանչնան։ Անոնք խաղացին ղգացումներուդ հետ։ Թունաւ պարներով ամեն օր խոցուեցին սիրդ, պղտորեցին միտքդ։ Այսօր դու ճակատ առ ճակատ կանգնած ես քեզ խաբող, ղգացումներդ անարգող և կյանքի հետ խաղացող դավաճաններուն հետ։ Այսօր խոսելու կարգը քուկդ է։ ...

Ներդաղթի իրականացումը անգամ մըն ալ երևան հանեց «մարտական կուսակցության» բարոյական անանկությունը։

Անկցին ուրեմն ատոր գրպարտիչները։ Անկցին դավաճան դաշնակցականները։

Կեցցե Հայ ժողովուրդը։ Կեցցե Խորհրդային Հայաստանը և Հայ ժողովուրդի միակ պաշտպան Հայ կառավարությունը»[31]։

Ուրախությունը ընդգրկել էր թե մեկնողներին և թե մնացողներին։ Հոկտեմբերի 31-ին Աթենքի և Պիրեայի հայաշատ թաղամասերում (Ֆիքում, Սինկրուում, Լիփաղմայում, Կոկինիայում), որտեղից հայրենիք էին մեկնում 800 աշխատա-

[31] Տե՛ս «Երևան», Փարիզ, 1925, № 11։ (Թռուցիկը մեջբերվում է կրճատումներով — Պ. Կ.)։

վորներ, իսկական տոնախմբություն էր տիրում։ Ամբողջ գիշերը մեկնողներն ու Սովետական Հայաստանի համակիր ժողովուրդը ուրախության շացականչություններով, երգերով ու նվագով շրջում էին փողոցները։ Աննկարագրելի էր նրանց հրճվանքն ու երջանկությունը։ Երբ բոլոր նել յաղթողները տեղավորվել էին նավի մեջ, ժողովրդի ծափահարությունների որոտի ներքո, մեկնողների առաջ բացվառ ճառով հանդես եկավ Հունաստանում ՍՍՌՄ դեսպան ընկ. Ոստինովը, որը հայտարարեց, թե Սովետական կառավարության օգնությամբ, Սփյուռքի հայ գաղթականությունը ստիճանաբար փոխադրվելու է իր հայրենիքը՝ Սովետական Հայաստան։ Այս քաբավանը,— ասաց նա,— ոչ առաջինն է, ոչ էլ վերջինը։ Սովետական Կենտրոնական կառավարությունը առ այժմ սփյուռքահայերի տեղավորման համար տրամադրած է 1.700.000 ոսկի ռուբլի, և անհրաժեշտության դեպքում պատրաստ է նորանոր օժանդակություններ անելու։

Նոյեմբերի 2-ին «Խարալամպոս» շոգենավը խարիսխ նետեց Սալոնիկի նավամատույցի մոտ՝ ընդունելու համար ներգաղթողների նոր խմբեր։ Նոյեմբերի 3-ի առավոտյան քարափի մոտ կազմակերպվեց մասսայական միտինգ, որը վերածվեց Սալոնիկի հայ աշխատավորության անսահման նվիրվածության ցույցի դեպի իր հարազատ հայրենիքը՝ Սովետական Հայաստանը։ Կամավայի ներգաղթողներին ընդունելուց հետո, նավը ուղևորվեց դեպի Դեդե-Աղաճ։ Նոյեմբերի 7-ին շոգենավը հեռանում է հունական ջրերից, իր հետ տանելով 3010 հայրենադարձներ դեպի Սովետական Հայաստան։

Նավային հանձնաժողովը ներգաղթողներին դիմավորելու եկած Սովետական Հայաստանի պատվիրակությանը Բաթումում հանձնեց հունահայ աշխատավորների հետևյալ նվերները. 1000 ռուբլի Դեդե-Աղաճից և մի մանրադիտակ Սալոնիկից՝ Երևանի պետական համալսարանի համար. 2000 դրամ դրամ Աթենքից՝ ավիացիայի ֆոնդի համար. մի արժեքավոր դրոշակ Ֆիրքից՝ Սովետական Հայաստանի կարմիր բանակի համար. ասեղնագործված մի մետաքսյա դրոշակ Դրամայից՝ հայ աշխատավորության կողմից և բազմաթիվ գիտական գր-

քեր, մեծ քանակությամբ դեղորայք և այլն[32]։ 1926 թ. հունվարի 28-ին, երբ Երևանում տեղի էր ունենում Անդրկենտգործկոմի երկրորդ նստաշրջանի սեսիան, Հունաստանի հայրենադարձ աշխատավորների ներկայացուցիչների կողմից հանդիսավոր պայմաններում կարմիր դրոշակը հանձնվեց Անդրկովկասյան Ֆեդերացիայի ղեկավարներին՝ ի նշան հունահայ աշխատավորության երախտագիտական զգացմունքների և նրա անսահման նվիրվածության սովետական հայրենիքին[33]։

ԴԱՇՆԱԿՆԵՐԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԸՆՏՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Երկրորդ դումարման պատգամավորական ժողովի առաջին նիստը տեղի ունեցավ 1925 թ. նոյեմբերի 1-ին, 39 պատգամավորների մասնակցությամբ՝ Աթենքի հայոց եկեղեցու սրահում։ Ժողովին ներկա էին նաև բազմաթիվ հայ աշխատավորներ։ Բուռն խանդավառության պայմաններում հայկական գաղութի ընտրական բարձրագույն օրգանը հանդիսացող Հին Հունաստանի երկրորդ պատգամավորական ժողովը, հակառակ դաշնակների կատաղի դիմադրության, որոտընդոստ ծափերի տակ, հոտընկայս ողջույնի ջերմ ուղերձ ընդունեց Սովետական Հայաստանի կառավարությանը, հայտնելով հունահայ աշխատավորության համակրանքն ու սերը սովետական հայրենիքի հանդեպ, նրա երախտագիտությունը՝ հունահայ գաղթականներին հայրենիք ընդունելու կապակցությամբ, նրա պատրաստակամությունը՝ բոլոր միջոցներով օգնելու Սովետական Հայաստանի բարգավաճմանն ու նրա սոցիալիստական վերածննդին։

Պատգամավորական ժողովը շնորհակալություն հայտնեց մասնավորապես Հունաստանում Սովետական Միության դեսպան ընկ. Ուստինովին՝ ներգաղթի առաջին քարավանների կազմակերպման գործում նրա ակտիվ ջանքերի համար։,

Նոյեմբերի 10-ի նիստում պատգամավորական ժողովի ղեկավար օրգանների ընտրության ժամանակ, ձայների բա-

---

32 Տե՛ս «Երևան», Փարիզ, 1925, № 15։

33 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1926, № 14 (1375)։

յարձակ մեծամասնությամբ, ժողովի ատենապետի և փոխ-ատենապետի, ատենադպրի ու փոխ-ատենադպրի տեղերը գրավեցին Սովետական Հայաստանի համակիրների միասնական ճակատի թեկնածուները։ Դաշնակները խայտառակ պարտություն կրեցին և մեկուսացվեցին պատգամավորական ժողովում։ Հաղթանակեց հունա-հայ կոմունիստների և մյուս հայրենասիրական ուժերի միասնական ճակատի տակտիկական գիծը։

Ընտրությունների արդյունքներից կատաղած դաշնակները, թևավորված պանկալոսյան ռեժիմի և գաղտնի ոստիկանության հովանավորությունից, դիմում են իրենց փորձված միջոցներին՝ մատնության և տեռորիստական գործողությունների։

Պատգամավորական ժողովի նիստերի վերջին օրը՝ դեկտեմբերի 11-ին, Ազգային կենտրոնական վարչության նոր կազմի ընտրությունների ժամանակ, նրա կազմում իրենց որևէ ներկայացուցիչը ունենալու հույսը կորցրած դաշնակները նախօրոք եկեղեցու բակում հավաքում են իրենց «տղերքից» մոտ 50 հոգի զինված բանդիտների։ Սրանք ներխուժում են զանփակ նիստերի դահլիճը և խավարի մատնելով ժողովարահը՝ ատրճանակի կրակոցներով սարսափի են մատնում ներկաներին, կոտրում ու ջարդում սեղաններն ու աթոռները, ծանր կերպով վիրավորում 7-8 պատգամավորների և հարձակվում են նույնիսկ պատգամավորական ժողովի ատենապետ՝ 70-ամյա դոկտոր Տ. Էնֆիեճյանի վրա, որը միաժամանակ ՀՕԿ-ի նախագահն էր։

Կրակոցներից հետո պատգամավորներից նոսրացած դահլիճում ատրճանակներով զինված դաշնակ դիմակավոր ահարեկիչները ձեռնալապտերների աղոտ լույսի տակ որոնում են հակադաշնակ բլոկի զեկավար պատգամավորներ, հայտնի կոմունիստ Ա.Հակ Միսաքյանին և հնչակյան գործիչ Հակոբ Սուքիասյանին՝ նրանց տեռորի ենթարկելու համար։ Սակայն այս երկու պատգամավորները, օգտվելով խավարից, դահլիճի կողմնակի ելքից խույս են տալիս տեռորիստներից։

Հունական իշխանությունները ոչ միայն վճռական միջոցների չեն դիմում քաղաքական բանդիտների ահաբեկչական գործունեությունը վնասազերծելու համար, այլ նույնիսկ ձերբակալված դաշնակ տեռորիստներին գաղտնի ոստիկանության միջնորդությամբ ազատ են արձակում։ Այնուհետև դաշնակները դիմում են ստոր մատնության՝ իրենց քաղաքական հակառակորդներին, որպես կոմունիստների, հանձնելով ոստիկանությանը։ Ոստիկանական օրգանների կողմից դեկտեմբերի 17-ին ձերբակալվում են պատգամավորներ Սահակ Միսաքյանը, Հակոբ Սուքիասյանը, բանվոր Արշակ Գարամանյանը, ավտովարորդ Արամ Զամիշյանը և ուրիշներ, որոնք 1926 թ. սկզբներին աքսորվում են Անապի շրջակայքին։

Հայ և հույն աշխատավորները մեծ զայրույթով դատապարտեցին հայանուն ֆաշիստների գործելակերպը։ Աթենքի հայկական կոմունիստական խումբը 1925 թ. դեկտեմբերի 19-ին, «Խումբ մը բանվորներ» ստորագրությամբ հատուկ կոչ[34] հրատարակեց՝ ուղղված Աթենքի և Պիրեայի հայ աշխատավորությանը։ Կոչը դիմակազերծ էր անում դաշնակների լրտեսական գործունեությունը և մարտական համախմբման էր կոչում հայ բանվորներին։

Երկրորդ պատգամավորական ժողովի ընտրություններից հետո «պարտված ու անարգանքի սյունին գամված հայ հակահեղափոխական դաշնակցությունը,— ասված է այդ կոչում, չկարողանալով քաղաքական գետնի վրա իր գոյությունը շարունակել, հուսահատ, ու ստոր միջոցներու սկսավ դիմել։ ... Ստոր մատնիչները բացարձակ զրպարտություններով կչանան ինքզինքին գերեզմանն փրկել։ Տեսեք իրենց հուզայական բնազդը, հակաժողովրդական իսկությունը — ու այդ գարշահոտ դիակը ալ ավելի դեպի անդունդ խրեցեք»։

Դեկտեմբերի 30-ին, Կոկինիայի հայ եկեղեցու սրահում աշխատավորների խուռն բազմության ներկայությամբ տեղի ունեցավ Հին Հունաստանի և կղզիների Ազգային պատգամավորական ժողովի վերջին նիստը։ Պատգամավորական ժողովի դեմոկրատական մեծամասնությունը անվստահություն

[34] Տե՛ս «Երևան», Փարիզ, 1925, դեկտեմբերի 31։,

Հայանեց նախկին Ազգային կենտրոնական վարչությանը և բնտրեց հակադաշնակ մեծամասնության վրա հենվող նոր Ազգային կենտրոնական վարչություն, ՀՕԿ-ի նվիրված ակտիվիստ Կարապետ Աղասյանի գլխավորությամբ։ Ազգային կենտրոնական վարչության նոր կազմի մեջ այլևս տեղ չունեին, ինչպես նախկինում, դաշնակ լիդերներ Գաբրիել Լազյանը և Անտոն Կաղելը, գորգի գործարանատեր, մեծահարուստ Մարկոս Քեշիշյանը և ուրիշ ռեակցիոներներ։

Դաշնակների քաղաքական մեկուսացումը Հունահայ գաղութի ղեկավար օրգաններից՝ աշխատավորական մասսաների նշանակալից հաղթանակն էր, որ նպաստեց դեմոկրատական ուժերի միասնության հետագա ամրապնդմանը։

Ֆաշիստական դիկտատուրայի պայմաններում Հունաստանի կոմպարտիայի և նրա հայկական խմբերի գործունեության համար ստեղծվել էին մեծ դժվարություններ։ 1925 թ. դեկտեմբերի 25-ին կոմունիստները գրում էին Աթենքից. «Ներկա կացության հետևանքով, Հունաստանի կոմկուսի հայկական խումբի (Աթենք) գործունեությունը ևս շատ կդժվարանա. հրապարակային աշխատանքի հնարավորությունն դրկված, ան ստիպված է իր գործը պայմաններուն հարմարեցնելու։ Մյուս կողմե դաշնակներու շարունակական կրած պարտությունները, գիրենք դեպի հին սովորությունները կմղեն—մասնության։ Հետևեան դաշնակցության «գոյության» համար, մասնությունը սիստեմ կդառնա։ Ամենուրեք անոնք միջազգային ֆաշիզմի ոգիներուն կառչած՝ աշխատավորության դավաճանելով անոր թշնամիներուն կծառայեն»[35]։ Չնայած այս բոլոր դժվարություններին, կոմունիստները մեծ աշխատանք էին ծավալում մասսաների մեջ։

Հունահայ գաղութի հասարակական-քաղաքական կյանքում մասնավորապես մեծ իրադարձություն էր նաև Հունաստանում սովետական կարգերի հաստատման 5-րդ տարեդարձին նվիրված տոնակատարությունները, որոնք առաջին անգամ լինելով Հունաստանում անցկացվեցին 1925 թ. նոյեմբերի 29-ին։ Կոմունիստներն ու ձախ դեմոկրատական տարրերը

[35] Տե՛ս «Պրոլետար», Նյու-Յորք, 1926, № 31։

ժողովրդական այդ տոնախմբություններին ավելին հակադաշնակ մասսայական ցույցերի բնույթ։ Աթենքում, Պիրեայում, Սալոնիկում նախապես տարածվեցին հաղարավոր թռուցիկներ, որոնք բացատրում էին փառապանծ տարեդարձի նշանակությունը։ Մյուս կողմից, ՀՕԿ-ի տեղական մասնաճյուղերի նախաձեռնությամբ և գանազան կուլտուրական միությունների լայն աջակցությամբ կազմակերպվեցին մի շարք ժողովներ, հանդես-ցերեկույթներ, հանդիսավոր միտինգներ հայաշատ թաղամասերում, որոնք հատկապես աչքի էին ընկնում աշխատավոր երիտասարդության մասսայական մասնակցությամբ։ Կոկինիայում և Լիփազմայում, օրինակ, այդ տոնակատարություններին մասնակցում էին նաև ՀՄԸՄ-ի հայ սկաուտները, իսկ Ֆիրքսում՝ «Նոր Կայծ», «Քնար», և «Ժիրայր» երիտասարդական միությունները, որոնց ակտիվիստները հանդես եկան ուսուցչական արտասանություններով, հայրենասիրական ոգերգներով, մենակներգներով, խմբերգներով։ Սովետական Հայաստանի բարեկամների միջնաբերդերից մեկը հանդիսացող Սինկրու թաղամասում հանդեսից հետո էլ մինչև ուշ գիշեր աշխատավորները փողոցներում շարունակում էին երգել ու նվագել բանվորական ուսուցչական երգեր, արտահայտելով իրենց անսահման նվիրվածությունը Սովետական Հայաստանին։ Հունահայ աշխատավորության դեմոկրատական զգացումների այս վառ արտահայտությունները պանկայոյան դիկտատուրայի տարիներին աննշմար չմնացին հունական իշխանությունների համար։

Հենված դաշնակների ակտիվ օգնության վրա, հունական հետախուզական օրգանները լրտեսական լայն ցանց ստեղծեցին հայկական գաղութում, օրը օրին հետևելով հայ աշխատավորության առաջավոր տարրերի ամեն մի քայլին։ Աշխատելով ընդհանուր ապահովության տնօրինության (ասֆալիայի) օրգաններում, դաշնակները քննում էին ձերբակալված բոլոր հայերի գործերը, փաստաթղթերը և փաստորեն որոշում իրենց քաղաքական հակառակորդների բախտը, քանի որ ձերբակալվածների արգելափակումը կախված էր ոչ թե դատական վճռից, այլ միայն ադմինիստրատիվ որոշումից։ Նրանք թարգ-

մանաբար հունական իշխանություններին էին ներկայացնում հունահայ կոմունիստական կազմակերպությունների հրատարակած անլեգալ թռուցիկների տեքստերը, «Հաղթանակ» դեմոկրատական թերթում տպագրած բոլոր հոդվածները, 20կ-ի մասսայական կազմակերպություններում ու հանդեսներում եղած ելույթների ու ռեոլյուցիոն արտաքսանությունների բովանդակությունը, մի խոսքով՝ տալիս էին բազմակողմանի լրտեսական տեղեկություններ, բազմապիսի մատնագրեր՝ հետախուզական և ոստիկանական օրգանների համար։ Հունական ռեակցիան գնահատելով դաշնակ տականքների այս հակառևոլյուցիոն ու լրտեսական գործունեությունը, առատաձեռն վարձատրում էր նրանց և հրահրում նորանոր պրովոկացիաների։ Ոչ միայն «հայրենասիրության», այլև իրենց «եկեղեցասիրության» դիմակը մի կողմ շպրտելով, դաշնակներն անցան բացահայտ տեռորի։ Երբ Պատգամավորական ժողովի խնդրանքով և ամենայն հայոց կաթողիկոսի հրամանով Կարապետ արքեպիսկոպոս Մաղլմյանը 1926 թ. սկզբներին նշանակվեց ամբողջ հունահայ գաղութի հոգևոր առաջնորդ, դաշնակները փորձեցին անջատողական շարժում ստեղծել գաղութում, իսկ երբ այդ չհաջողվեց նրանց, սկսեցին ստորագրություններ հավաքել և իրենց մամուլում խայտառակ գրպարտություններով հանդես գալ նրա դեմ։ Նրանք հունական իշխանությունների առաջ Մաղլմյան արքեպիսկոպոսին ներկայացրին որպես համայնավար-կոմունիստ՝ նրա հակադաշնակ դիրքորոշման և Սովետական Հայաստանի սոցիալիստական շինարարության օգտին արտասանած քարոզների համար։

Սակայն այդ պրովոկացիոն կամպանիան չաջողվեց միայն մամուլի հարձակումներով և ոստիկանության տրված մատնագրերով։ Ազգային կենտրոնական վարչության և տնտեսական խորհրդի նիստերից մեկում, որ տեղի էր ունենում Աթենքի առաջնորդարանի շենքում 1926 թ. մարտի վերջերին, ժողովասրահ է ներխուժում զինված դաշնակ տեռորիստների դիմակավորված մի խոշոր խումբ, խուճապ առաջացնելով ներկաների մեջ։ Խմբի պաշտպանության տակ գտնվող դաշնակ զոչիներից չորս հոգի հարձակվելով Մաղ-

լրմյան արքեպիսկոպոսի վրա, խուզում են նրա մորուքը և վայրագ խոշտանգումների ենթարկելով՝ հափշտակում նաև ձեռքի թանկարժեք մատանին ու դիմում փախուստի, ուշագրնաց վիճակում թողնելով իրենց զոհին։ Տեռորիստական այս նոր հարձակումը կատարվել էր դաշնակցության բյուրոյի որոշմամբ, Գաբրիել Լազյանի և Անատոն Կաղելի անմիջական ղեկավարությամբ։

Դաշնակցական հայտնի գործիչ Ա. Հակոբյանը, որ հետագայում հրաժարվեց հակառևոլյուցիոն ոհմակից, իր հրապարակած մերկացումների մեջ խոստովանում է, թե Մալլմյան արքեպիսկոպոսի դեմ կազմակերպված դավադրության համար դաշնակները ծախսեցին 30 հազար դրամ[36]։

Դաշնակների տեռորիստական այս ակտը մարտահրավեր հանդիսացավ հունահայ աշխատավորության համար, որը նորից միասնական ուժերով ոտքի կանգնեց հայ ֆաշիստների դեմ, ամենուրեք կազմակերպելով հակադաշնակ մարտական խմբեր, որոնք պաշտպանում էին զազութի ընտրական օրգանների նորմալ գործունեությունը։

Աթենքի գաղթականներից մոտ 300 հոգի բողոքի հավաքական դիմում կատարեցին ոստիկանության տնօրինությանը՝ պահանջելով վճռական միջոցներ ձեռք առնել դաշնակ ահաբեկիչների դեմ։ Լիփազմայի աշխատավորների կողմից 200 ստորագրությամբ բողոքի հանրագրություն ներկայացվեց կառավարությանը։ Նույնպիսի հանրագրեր էին ուղարկում հայ աշխատավորները նաև մյուս քաղաքներից, կղզիներից և հայաշատ գաղթականներից։ Աթենքի դեմոկրատական «Հաղթանակ» թերթն այս առթիվ իր խմբագրական հոդվածում գրում էր. «Ժողովուրդը պետք է միահամուռ դիմի կառավարության և անոր զգացնել թե ինք վրդովված է կարգ մը շահամոլներու փորձած այս վանդալական արարքին»[37]։ Սալոնիկի «Նոր Ալիք» թերթը «Թրքավայել ոճիր»[38] էր անվանել դաշնակ-

---

[36] Տե՛ս «Արձագանք», Աթենք, 1928, № 97։

[37] «Յաղթանակ», Աթենք, 1926, ապրիլի 1։,

[38] «Նոր Ալիք», Սալոնիկ, 1926, № 640։

ների վայրագությունը, որը նողկանք ու զայրույթ էր առաջացրել նաև հույն դեմոկրատական հասարակայնության մեջ։

Մասսայական բողոքի շարժման ու լայն հասարակայնության վճռական պահանջի հետևանքով ոստիկանության օրգանները հարկադրված եղան ձերբակալել 14 դաշնակ տեռորիստների, որոնք մասնակցել էին ահաբեկչական հարձակմանը։ Սակայն քսանվեց օրվա բանտարկությունից հետո նրանց նորից ազատ արձակեցին հունական ռեակցիայի հատուկ հոգատարության շնորհիվ, որը ոչ միայն չէր ցանկանում պատժել ու զատել տեռորիստներին, այլ, ընդհակառակը, քաջալերում էր նրանց հակաժողովրդական գործունեությունը։

Սանձակոտոր դաշնակները, գոռանդված այս ամենից, շարունակում էին իրենց քայքայիչ աշխատանքը գաղութի օրինական մարմինների դեմ։ Ահաբեկչական միջոցներով նրանք հարկադրեցին Ազգային կենտրոնական վարչության չեզոք անդամներ Գ. Բարաղամյանին և Ա. Պետրոսյանին՝ հրաժարվելու իրենց պատգամավորական լիազորություններից և հրահրեցին իրենց ազդեցության տակ գտնվող Լիփազմայի Բաղական խորհրդին՝ խողվարարության դրոշ բարձրացնել գաղութի կենտրոնական մարմինների դեմ, հրաժարվելով ենթարկվել Ազգային կենտրոնական վարչության հրահանգներին։ Նրանք կազմակերպեցին Ազգային կենտրոնական վարչության ատենապետ Կ. Ադաչյանի դեմ տեռորիստական հարձակում և վայրագորեն խոշտանգեցին Լիփազմայի Բաղական խորհրդի հարցը հետաքննելու համար նշանակված քննիչ հանձնախմբի անդամներին։

Ա. Հակոբյանը իր մերկացումների մեջ նույնպես խոստովանում է, որ Կ. Ադաչյանի դեմ կազմակերպված ահաբեկմանը մասնակցող տեռորիստներին դաշնակցության բյուրոն օրական վճարում էր 75—100 դրամ[39]։

Դրությունը չափազանց լարված էր նաև Հունաստանի շրջաններում։ Դաշնակները հենվելով հունական իշխանությունների բազմակողմանի աջակցության, հատկապես Սալոնիկի

---

[39] Տե՛ս «Արձագանք», Աթենք, 1928, № 97։

Բեմի առաջնորդ Փերտահջյան եպիսկոպոսի և առաջնորդական փոխանորդ Մալաքյան քահանայի սերտ համագործակցության վրա, ապօրինի կերպով շարունակում էին իրենց ձեռքում պահել շրջանի ազգային գործերը և խախտելով 1924 թ. հոկտեմբերին կայացած համաձայնությունը, հրաժարվում էին նոր պատգամավորական ընտրություններ կազմակերպելու մասին իրենց ստանձնած պարտավորությունից։

Երկու տարվա ընթացքում Սալոնիկի քաղաքական ժողովը իր կազմի մեջ հետզհետե նշանակովի մարդկանց հրավիրելով զլխավորապես դաշնակներից, բոլորովին կորցրել էր իր իրավական հանգամանքը, քանի որ նրա կազմում մնացել էր միայն մեկ ընտրված անդամ՝ Հովհաննես Քրմաճյանը, որը չեզոքի դիմակի տակ խաղալիք էր դարձել դաշնակների ձեռքը։ Քաղաքական ժողովը ոչ միայն չէր զբաղվում հայրենիքի վերաշինությամբ և ներգաղթին սատարելու կարևոր հարցերով, որոնք հատկապես Նոր Հունաստանի հայության համար ունեին ճակատագրական նշանակություն, այլև ամեն կերպ խափանում էր այդ աշխատանքները։ Կոմունիստները դեմոկրատական մյուս բոլոր կազմակերպությունների ու հոսանքների հետ միասին, հակադաշնակ պայքարի պլատֆորմի հիման վրա, 1926 թ. հուլիսի սկզբներին Սալոնիկում կազմեցին ժողովրդային միությունը։ Դիկատատուրայի պայմաններում այս կազմակերպությունը մեծ հնարավորություններ էր ստեղծում հայ կոմունիստների լեգալ գործունեության համար։ Ժողովրդային միությունը ուներ իր թաղային մասնաճյուղերը ինչպես նաև Գործադիր մարմին, որը իր հուլիսի 18-ի հայտարարության մեջ գրել էր. «Ժողովրդային Միության Գործադիր Մարմինը բովանդակ Նոր Հունաստանի ժողովուրդին 100-ին 90-ը ունենալով իր կողքին, օրինական և խաղաղ միջոցներով պիտի պայքարի ապօրինի ազգային իշխանության դեմ մինչև որ ձեռնարկվի ընդհանուր և հավասար ընտրություն և հարգվի ժողովուրդին իրավունքները»[40]։

Ժողովրդային միությունը 800 հայ աշխատավորների ստորագրությամբ մասնակցական բողոքագիր ներկայացրեց Քա-

[40] Տե՛ս «Նոր Ալիք», 1926, N: 701։

զաքական ժողովին և հունահայ դեմոկրատական մամուլին, պահանջելով անհապաղ անցկացնել պատգամավորական նոր ընտրություններ։ Նույնանման բողոքագրեր ուղարկվեցին նաև Դեղե-Աղաճից 104 ստորագրությամբ և այլ վայրերից[41]։

Դաշնակները ժող. միության կազմակերպած մասսայական հանրագրության բոլոր մասնակիցներին անվանում էին կոմունիստներ, և հունական իշխանություններից պահանջում էին գործադրել ռեպրեսիաներ նրանց դեմ, հատկապես Գործադիր մարմնի ղեկավարներ՝ կոմունիստ Հակոբ Կեսիրյանի և ՀՕԿ-ի ակտիվիստ՝ Պետրոս Ադամյանի դեմ։

Սալոնիկի հակադաշնակ միասնական ճակատի հրապարակած տպագիր կոչում, որ ուղղված էր Մակեդոնիայի և Թրակիայի հայ աշխատավոր զանգվածներին, մերկացվում էր «Ազգային Առաջնորդարանի մեջ բույն դրած արկածախնդիրների խմբակը», որն անլուր դավերով շարունակում էր նյութական և բարոյական զեղծումները, մսխում հայ գաղթականների անունով ուղարկված միլիոնավոր դրամները և հեղնում նրանց տառապանքները։

Նույն այս սհմակը, ինչպես այնուհետև գրված է կոչում, «տակավին կհամարձակի շղիջել իր բռնագրված շահավետ աթոռները ժողովուրդին վստահություն վայելող անհատներուն»։ Առաջնորդարանը կողոպտողների այս կլիկը 4—5 տարի շարունակ խաբել է հայ աշխատավորներին ընտրություն կատարելու և օրինավոր ազգային իշխանություն ստեղծելու խոստումով։ Կոչը պահանջում էր Նոր Հունաստանի Ազգային պատգամավորական ժողովի ընտրությունների անհապաղ նշանակումը։

Դաշնակներն այս կոչը թարգմանարար ներկայացնելով ոստիկանական մարմիններին, պահանջում էին խիստ կերպով պատժել նրա հեղինակներին՝ որպես կոմունիստների։ Մատնիչների այս մտադրությունն առաջ բերեց ժողովրդական բողոքի նոր շարժում։ Ապացուցելու համար, որ դա սոսկ կոմունիստների գործը չէ, բազմաթիվ դեմոկրատների ու հակադաշնակ գործիչների ստորագրություններով հայ գաղթա-

[41] Տե՛ս «Նոր Ալիք», 1926, № 704։

կանությանն ուղղված նոր կոչ հրապարակվեց, որը մերկացնում էր Առաջնորդարանում իշխող դաշնակներին, որոնք «անցյալ օր հրապարակած բողոքի թուղթիկը հելլեն կառավարության ներկայացուցչին որպես համայնավարներու գործ, այդ սուտ ու գարշելի մատնությամբ կրկին շարունակել կարենալու համար իրենց նյութական ու բարոյական անհաշիվ մախումները»։ «Որպեսզի կառավարությունը,— ասված է այդ կոչում,— դաշնակ կլիկի թյուր տեղեկություններին չխաբվի ու հասկնա, որ ամբողջ հայ գաղութը դեմ է Առաջնորդարանի բռնակալներուն... ստիպվեցանք կրկին թուղթիկ մը հանել այս անգամ մեր ստորագրություններով։ ...Մենք առանց վհատվելու Առաջնորդարանի դաշնակ հելուզակներու դավերեն և գարշելի մատնություններեն,— ասված է կոչում,— պետք է ...—...պահանջենք մեր ոտնակոխված իրավունքներուն պաշտպանությունը և դաշնակ կլիկին միանգամընդմիշտ վտարումը Ազգային Առաջնորդարանեն»։ Կոչը վերջանում է. «Անկցին մատնիչները։ Անկցին գաղթականության պարազիտները»[42] *խոսքերով։*

Ձնայած հայ աշխատավորության վճռական պահանջներին, հունական և հայկական ռեակցիոն շրջանները, սարսափելով ընտրական նոր մենամարտությունից, դիմում էին բոլոր միջոցներին՝ խափանելու գաղութի դեմոկրատական մեծամասնության հաղթանակի ուղին և ապօրինի կերպով ձգտում էին պահպանել իրենց խարխլվող դիրքերը Մակեդոնիայի և Թրակիայի շրջաններում։

Հունահայ գաղութի կազմավորման ու ձևավորման առաջին իսկ տարիներից ինչպես ոսմյուռքահայ մյուս գաղութներում, այնպես էլ հունահայ գաղութում, իբրև հիմնական օրենք ընդունվել էր արևմտահայերի ազգային Սահմանադրությունը, որը որոշակիորեն սահմանում էր ոսմյուռքահայ գաղութների ազգային մարմինների իրավասություններն ու արտասահմանյան հայերի ընտրական իրավունքները։

---

[42] *Մեր սեփական արխիվից (Թուղթիկը մեջբերվում է կրճատումներով — Պ. Ս.)*

Կ. Պոլսի պատրիարքարանի մասնավոր կարգադրության համաձայն, բոլոր այն հայերը, որոնք վեց ամսից ավելի բնակվում էին որևէ հայաբնակ քաղաքում, իրավունք էին ստանում մասնակցելու գաղթականական համայնքների ազգային գործերին, ընտրելով և ընտրվելով հայկական գաղութների ազգային բոլոր մարմիններում։ Սակայն շնորհած ազատության իրավական կարգին, որը հնարավորություն էր տալիս գաղութի ներքին հարցերը դեմոկրատական և խաղաղ ոգով լուծելու, հունական իշխանությունները հաճախ միջամտում էին գաղութի ներքին գործերին և թույլ տալով կոպիտ կամայականություններ, խախտում էին հայ աշխատավորության ընտրական իրավունքները։

1925 թ. մարտին Թրակիայի ընդհանուր կուսակալ Կուրտիդիսը ազգային մարմիններից պահանջելով հայ գաղթականների և հունահպատակ հայերի ցուցակները, պաշտոնապես հայտարարեց[43], թե նա չի ճանաչում իր շրջանում Պոլսի պատրիարքարանի ցուցումների և ազգային օրենքների հիման վրա ընտրված ազգային մարմինների իրավասությունները, և հրահանգեց Թրակիայի բոլոր հայաշատ քաղաքներում անցկացնել թաղական խորհուրդների նոր ընտրություններ միայն հունահպատակ հայերի մասնակցությամբ։

Կուսակալի այս որոշումը, որ ներդաշնակում էր տեղահանությունների ռևանշիստական քաղաքականությանը, նպատակ ուներ, մի կողմից, ընդդծել հայ գաղթականության քաղաքական բացարձակ իրավազրկությունը, իսկ մյուս կողմից՝ նոր ու սահմանափակ ընտրությունների միջոցով վերափոխել թաղական խորհուրդների դեմոկրատական կազմը։ Դաշնակները չէին կարող ավելի կոնկրետ օժանդակություն ստանալ հունական իշխանություններից՝ իրենց ջախջախված ուժերը վերականգնելու համար։ Հետևելով կուսակալի ընդհանուր հրամանին, Թրակիայի մի շարք քաղաքների կառավարիչներ նույնպես հանդես եկան համապատասխան հայտարարություններով։

---

[43] Տե՛ս «Ալիք», 1925, № 641։

Նոր Հրահանգի համաձայն, 1925 թ. ապրիլի 26-ին տեղի ունեցան Գյումյուշինայի հայ համայնքի թաղական ընտրությունները։ Երկու հարյուր հոգի ընտրական իրավունք ունեցող հայ բնակիչներից քվեարկեցին միայն ութսուն հոգի հունահպատակներ, որոնք, չնայած ռեակցիայի բոլոր մեքենայություններին, նորից ապահովեցին հակադաշնակ թեկնածուների լիակատար հաղթանակը։ Ընտրություններ տեղի ունեցան նաև Կավալայում, Դրամայում և Թրակիայի մյուս քաղաքներում։ 1926 թ. մարտի 7-ին տեղի ունեցած Կավալայի թաղական նոր ընտրություններին մասնակցել էին միայն 57 հունահպատակ հայ։ Ընտրական իրավունքներից զրկվել էին հարյուրավոր հայ աշխատավորներ։ Այս դրությունը հատկանշական էր միայն Նոր Հունաստանի շրջանների համար, ուր, ինչպես նշել ենք, հայերի հալածանքներն ընդունել էին ամենավայրագ ձևեր։ Նույն ժամանակաշրջանում Հին Հունաստանի հայաշատ քաղաքներում ընտրական պայքարը տեղի էր ունենում հայ գաղթականների մասսայական մասնակցության պայմաններում, քանի որ զոյություն չունեին այդպիսի սահմանափակումներ։

Դիմելով հունական ռեակցիայի պաշտպանությանը, դաշնակները հասկանում էին, թե ընտրական խաղաղ պայքարը հունահայ աշխատավորության հետ՝ քաղաքական լիակատար մահ էր նրանց համար։ Չէ՞ որ վերջին ընտրությունների արդյունքները գրեթե բոլոր քաղաքներում անժխտելիորեն ապացուցում էին այդ։ 1926 թ. հունիսի 27-ին տեղի ունեցած Կոկինիայի թաղական ընտրություններում դաշնակները նոր շառաչուն ապտակ ստացան հայ աշխատավորների կողմից։ Ընտրություններին մասնակցած 574 հոգուց 465-ը իրենց քվեները տվեցին կոմունիստների պաշտպանությունը դառած Սովետական Հայաստանի համակիրների միասնական ճակատի թեկնածուների օգտին[44]։

1926 թ. օգոստոսի 8-ին Սինկրուի թաղական ընտրություններում ընտրական իրավունք ունեցող 467 հայ աշխա-

---

[44] Տե՛ս «Նոր Ալիք», 1926, № 688։

տավորներից ընտրություններին մասնակցեցին 283 հոգի, որոնք արհամարհելով դիկտատորական օրգանների խստությունները ու դաշնակների ահաբեկումները, միահամուռ կերպով իրենց քվեները տվեցին հակադաշնակ ճակատի միացյալ ցուցակի թեկնածուների օգտին, ապահովելով նրանց լիակատար հաղթանակը։ Ընտրությունների ժամանակ դեմոկրատական ճակատը ստացավ 273, իսկ դաշնակները՝ միայն 10 քվե[45]։ Ռևոլյուցիոն պայքարի տրադիցիաներով հարուստ այս խոշորագույն բանվորական թաղամասում նվաճված հաղթանակը ակնհայտ կերպով խոսում էր այն արմատական տեղաշարժերի մասին, որոնք տեղի էին ունենում ամենուրեք հունահայ աշխատավորության մեջ՝ ֆաշիստական դիկտատուրայի տարիներին։ Այս խայտառակ պարտությունից հետո դաշնակները երբեք այլևս չկարողացան վերականգնել իրենց ջախջախված դիրքերը պրոլետարական այս կարևոր կենտրոնում։

Հայ կոմունիստներն ու դեմոկրատական տարրերը մասսայական աշխատանք էին ծավալում հատկապես Մակեդոնիայի և Թրակիայի հայ աշխատավորության մեջ։

Մասսայական միտինգներից և խորհրդակցական ժողովներից ընտրված ժողովրդական կոմիտեները ընդհանուր կուսակցությանը ներկայացնում էին բազմաթիվ նոր բողոքագրեր, որոնցով պահանջում էին հայ գաղթականների ընտրական իրավունքների վերականգնումը և նոր պատգամավորական ընտրությունների նշանակումը անխտիր բոլոր հայ աշխատավորների մասնակցությամբ։ Սակայն այս բոլոր դիմումները մերժվեցին հունական իշխանությունների կողմից, քանի որ նրանք ընդառաջելով դաշնակներին, ձգտում էին հավերժացնել ռևակցիոն տարրերի ապօրինի գերիշխանությունը Մակեդոնիայի և Թրակիայի ազգային մարմիններում։ Այս տեսակետից հետաքրքիր է այն հայտարարությունը[46], որ Սալոնիկի առաջնորդարանի դիվանը հրապարակել էր 1926 թ. հոկտեմբերի սկզբներին։

---

[45] «Աշխատանք», Սալոնիկ, 1926, № 5։

[46] «Ալիք», 1926, № 1187։

Մեկնաբանելով ընդհանուր կուսակալության տեսակետը նոր ընտրությունների մերժման մասին, Առաջնորդարանի դիվանը փորձում էր արդարացնել հունական իշխանությունների այդ ապօրինի միջամտությունը, ելնելով այն հանգամանքից, թե «Հայերը Հունաստանի մեջ նկատվում են իբրև հյուր տարր» և պետական օրենքներով ճանաչված չեն իբրև ազգային փոքրամասնություն։

Այս բացատրությունը համոզիչ չէր։ Չէ՞ որ նույն վիճակում գտնվող Հին Հունաստանի շրջանների հայ աշխատավորների իրավունքները, ինչպես նշել ենք, նման կոպիտ սահմանափակումների չէին ենթարկվում։ Հունական և հայկական ռեակցիան հասկանում էր, որ տեղահանությունների և ազգային կատաղի հալածանքների պայմաններում Մակեդոնիայում և Թրակիայում նշանակված ամեն մի ընտրություն կհանգեցնի աշխատավորների միավորմանը և կարող է վերածվել հակապետական ցույցերի՝ հայ աշխատավորության մարդկային իրավունքները պաշտպանելու նշանաբանի տակ։ Ահա թե ինչու նրանք նպատակահարմար էին գտնում ընտրությունների մասին «մոռացվելը» միայն ներգաղթի քարավանների մեկնումից հետո, երբ, նրանց կարծիքով, դեմոկրատական ու հակաֆաշիստական տարրերի զգալի մասը մեկնած կլիներ Սովետական Հայաստան և ուժերի հարաբերակցությունը որոշ չափով կարող էր փոխվել հօգուտ ռեակցիոն տարրերի։

Առաջնորդարանի դիվանի այդ հայտարարության մեջ բացահայտորեն ասվում էր, թե «Ընդհանուր կուսակալությունը որոշած է որևէ ընտրություն չարտոնել հայերու համար, մինչև որ Հայաստան ներգաղթը ամբողջովին ավարտվի։ Անկէ հետո միայն կուսակալությունը նկատի պիտի ունենա և որոշում պիտի տա վերջնականապես Հունաստան մնացած հայերու մասին ըլլալիք կարգադրությանց շուրջ»։ Մինչ այդ,— ասված է նույն փաստաթղթում,— Սալոնիկի առաջնորդը կուսակալության լիազորությամբ «արտոնված է իր ճարտար դատած ամենեն ճշանակել ազատյա մարմիններ, որոնց պիտի վարեն հայ գաղութի ընթացիկ գործերը»։ Այսպիսով, հունական իշխանությունների միջամտությունը գաղութի ներ-

քին գործերին և նրանց կողմից դաշնակների պաշտպանությունն ակտիվ բնույթ էր կրում։

Ուշագրավ է Սալոնիկի առաջնորդարանի հիշատակված հայտարարության մեջ հատկապես շեշտվող այն հանգամանքը, թե Մակեդոնիայի և Թրակիայի ընդհանուր կուսակալը 1926 թ. հոկտեմբերի 1-ին «նուռանանգ տվավ ռատիկանական ընդհանուր տնօրինության, որպեսզի ի հարկին ռատիկանական ուժերով արգելվեն եկեղեցվո մեջ բնարության և այլ պատճառներով կատարվելիք որևէ միտինգ կամ որևէ ազմկարարություն»[47]*։ Սակայն ոչինչ չէր կարող ընկճել աշխատավորների անսասան կամքը։ Նույնիսկ դաշնակցական մամուլը հարկադրված էր ընդունել, որ անգամ ռատիկանական հալածանքները չէին կարողանում խորտակել հունահայ աշխատավորության մարտական ոգին։ Սալոնիկի դաշնակների օրգան «Ալիք»-ը, անդրադառնալով կոմունիստների և դեմոկրատների համատեղ գործունեությանը, գրում էր. «Ոմանք հրապարակով, ուրիշներ ականջ-ականջ, կարգ մը բախտախնդիրներ, (կարդա կոմունիստներ - Պ. Կ.) սրճարաններու անկյունները, բոլորը միաբերան մինչև այսօր մեկ ճապաղ հանգերգ միայն ունեցան իրենց շրթներուն վրա,— փառք և օրհնություն ամենազոր հյուսիսին (կարդա Սովետական Միությանը - Պ. Կ.) և նրա մոլորակներուն... (կարդա Սովետական Հայաստանին - Պ. Կ.)։*

Նրանք «չքաշվեցան,— գրում էր նույն թերթը,— բոլշևիկյան կոչեր ցրվել ժամուն (եկեղեցու - Պ. Կ.) բակը, պանծացնելու ու «կեցցեներով» բարձրացնելու համար բոլշևիկյան... տարեդարձ մը...»[48]*, նկատի ունենալով Հայաստանում սովետական կարգերի հաստատման տարեդարձը։*

Դաշնակները մոլեգնել էին գիտակից հայ բանվորների վարքագծի առթիվ, որոնք ակտիվ մասնակցություն էին բերում հույն ժողովրդի հակաֆաշիստական պայքարին, ռևոլյուցիոն արհմիությունների աշխատանքներին ու գործադուլային շարժմանը։ «Ալիքը» նույն համարում գրում էր, թե Սալոնիկի

---

[47] *«Ալիք», 1926, № 878, ընդգծումը մերն է — Պ. Կ։*

[48] *«Ալիք», 1926, № 878։*

հարյուրավոր հայ բանվորներ 1925 թ. դեկտեմբերին մասնակցել են «Միախոտի բանվորներու վերջերս սարքած մեկ միտինգին, Սքեյթինկի մեջ», և այս խոստովանությամբ ակամա վկայակոչում էր հայ և հույն բանվորների մարտական ինտերնացիոնալ կապերի ամրապնդման անժխտելի փաստերից մեկը դիկտատուրայի տարիներին։ «Ինչերնուն էր պետք,— գանգատվում էր դաշնակցական թերթուկը,— բանվորական միտինգները, բոլշևիկյան տարեդարձները, կոչերը, կեցցեները, ինչերնուն էր պետք գունատ ու թափթփված բջիջները սրճարաններու մեջ, բոլորի աչքին առջև»։

Պանկալոսյան դիկտատուրայի տարիներին կոմունիստական մամուլը արգելված էր։ Կոմպարտիայի օրգան «Ռիզոսպաստիս»-ը լույս էր տեսնում անլեգալ և փոքր ծավալով։ Կոմունիստական լեգալ թերթ հրատարակելու հնարավորությունից զրկված հունահայ կոմունիստները այդ տարիներին էլ ավելի ակտիվացրին իրենց աշխատակցությունը արտասահմանի հայ կոմունիստական թերթերին։ Նրանք հանդես էին գալիս Հունաստանի բանվոր դասակարգի ուսուցիչն պայքարին և հունահայ գաղութի հասարակական-քաղաքական կյանքին նվիրված հոդվածներով և այստեղ այդ թերթերը լայնորեն տարածում էին հայ աշխատավորության շրջանում։ Ամերիկայի «Պրոլետար», «Նոր աշխարհ», Ֆրանսիայի «Բանվոր-Պարիզ» և «Երևան» թերթերը, ինչպես նաև «Արեգ» և «Վերելք» ամսագրերը մեծ դեր խաղացին այդ տարիներին հունահայ աշխատավորությանը պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելու գործում, նպաստեցին հունահայ կոմունիստների քաղաքական դիրքերի ամրապնդմանը գաղութում։

Դաշնակ մատնիչների հրահրմամբ հունական իշխանությունների կողմից արգելվեց այդ թերթերի մուտքը Հունաստան։ 1926 թ. «Նոր Աշխարհ» և «Երևան» թերթերը բռնադրավվում էին հունական իշխանությունների կողմից որպես «վտանգավոր» գրականություն և հալածանքների էին ենթարկվում նրանց ընթերցողները։ Ֆաշիստական այս միջոցառումները դժվարացնում էին, անշուշտ, հայ կոմունիստների

գործունեությունը։ Սակայն նրանք կարողանում էին ընդհատակյա ագիտացիոն-մասսայական աշխատանքի նոր ձևեր գտնել՝ մասսաների հետ իրենց կապերը պահպանելու և ուժեղացնելու համար։ Հայ կոմունիստների ամբողջ գործունեությունը ենթարկվում էր Հունաստանի կոմունիստական պարտիայի առաջադրած հիմնական խնդիրների կենսագործմանը։ Իսկ հակառևոլյուցիոն դաշնակցության դեմ, նրա լիակատար մեկուսացման ու ջախջախման համար ծավալվող ժողովրդական պայքարը հանդիսանում էր նրանց ընդհանուր ռևոլյուցիոն պայքարի անխզելի բաղկացուցիչ մասը։

ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԿՈՄԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈՒՆԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Պանկալոսյան դիկտատուրայի տարիներին տեղի ունեցած Հունաստանի կոմերիտմիության երրորդ համագումարը[49] նշանավորեց երիտասարդական շարժման զարգացման կարևորագույն էտապներից մեկը։

Քննարկելով տարբեր բնագավառներում տարվող ռևոլյուցիոն աշխատանքների վիճակը, համագումարը հատուկ որոշում ընդունեց ազգային փոքրամասնությունների երիտասարդական մասսաների մեջ կոմերիտմիության տարած աշխատանքների վիճակի ու նոր խնդիրների մասին։

Հետհամագումարյան ժամանակաշրջանում հատկապես դրսևորվեց Հունաստանի կոմերիտմիության ինտերնացիոնալիստական մարտական ոգին, որն իր արտահայտությունը գտավ այն մասսայական աշխատանքներում, որ նա ծավալեց ազգային բոլոր փոքրամասնությունների և մասնավորապես հունահայ աշխատավոր երիտասարդության մեջ։ Բազմաթիվ հայաշատ քաղաքներում և գաղթականներում կոմերիտականները վերակառուցեցին իրենց ընդհանուր տերի-

[49] Հունաստանի կոմերիտմիության առաջին համագումարը տեղի ունեցավ 1922 թ. նոյեմբերին, երկրորդը՝ 1924 թ. փետրվար ամսին, իսկ երրորդը՝ 1925 թ. դեկտեմբերին։

տորիալ կազմակերպությունները, ստեղծելով արտադրական և տերիտորիալ բջիջներ, որոնք անլեգալ պայմաններում հաջողությամբ ղեկավարում էին երիտասարդության պայքարը։ Կազմակերպված աշխատանք ծավալելով հայ աշխատավոր երիտասարդության մեջ, կոմունիստները ձեռք բերեցին իրենց առաջին հաջողությունները։ Մարզական և կուլտուրմասսայական երիտասարդական կազմակերպությունների շարքերում գտնվող երիտասարդ բանվորներին ու դպրոցականներին կազմակերպելով հակադաշնակ խմբերի մեջ և դաստիարակելով նրանց Սովետական Հայաստանի հանդեպ անվերապահ նվիրվածության ոգով, նրանք կենտրոնացրին իրենց ուշադրությունը գլխավորապես հայ որբերի կազմակերպման հարցերի վրա, որբեր, որոնք հունահայ աշխատավորության ծաղիկն էին և 1924—1925 թվականներին, իբրև չափահասներ, հազարներով դուրս էին շպրտվել ամերիկյան և անգլիական որբանոցներից և, ինչպես նշել ենք, տեղավորվում էին հույն կալվածատերերի մոտ՝ իբրև բատրակներ կամ աշխատում էին տարբեր քաղաքների կապիտալիստական ձեռնարկություններում, դառնալով ամենավայրագ շահագործման առարկա։

1925 թ. վերջերին հունահայ կոմունիստների նախաձեռնությամբ Աթենքի, Պիրեայի, Սալոնիկի և այլ քաղաքների հայաշատ գաղթակայաններում կազմվեցին չափահաս որբերի երկսեռ միություններ, որոնք հայտնի էին «Կամք» որբերի միություն անունով Աթենքի և Պիրեայի մարզերում, իսկ «Խորհրդային Հայաստանի համակիր որբերի միություն» անունով՝ Սալոնիկում և Մակեդոնիայի շրջաններում։ Այս շրջանների կազմակերպությունները հետագայում միավորելով իրենց ուժերը, բոլոր մասնաճյուղերի աշխատանքներին ընդհանուր ուղղություն տալու համար Սալոնիկում ստեղծեցին նաև Որբերի միության կենտրոնական վարչություն։ Որբերի միությունները դարձան հունահայ երիտասարդության անդրանիկ դեմոկրատական կազմակերպություններից մեկը։ Դրանք շատ շուտով վերածվեցին հակադաշնակ մասսայական կազմակերպությունների, իրենց շարքերում ընդգրկելով նաև բազ-

մաթիվ հայ աշխատավոր երիտասարդների՝ որպես միության կցորդ-անդամների։

Որբերի միության բոլոր հիմնական մասնաճյուղերը պանկալոսյան դիկտատուրայի տարիներին ղեկավարում էին հունահայ երիտասարդ կոմունիստներն ու հակադաշնակ ակտիվիստները։ Այսպես, օրինակ, Պիրեայի (Լիփազմա) «Կամք» որբերի միության ատենապետն էր երիտասարդ կոմունիստ Մինաս Մարտիկյանը։ Աթենքի որբերի միության (Ֆիրս) ատենապետն էր կոմերիտական Հարություն Շերամյանը, Սալոնիկի խորհրդային Հայաստանի համակիր որբերի երկսեռ միության ատենապետն էր Վահան Ղազարյանը[50], ապա նախագահն էր երիտասարդ կոմունիստ Ստեփան Կուրտիկյանը, քարտուղարը՝ Հրաչ Փաշայանը։ Ղեկավար օրգաններում և Որբերի միության ակտիվիստների շարքերում կային նույնպես բազմաթիվ կոմերիտականներ, որոնք ագիտացիոն-դաստիարակչական մեծ աշխատանք էին ծավալում հայ աշխատավոր երիտասարդության մեջ։ Նրանցից աչքի էին ընկնում Ջիվան Աբրահամեանը, Սուրեն և Խորեն Ճլղյան եղբայրները, Ջիվան Բարթուղյանը, Պողոս Երկանյանը, Մարուքն Մարուքյանը, Երվանդ Ջիրեքյանը, Վահան Սաղաթելյանը, Ռուբեն Շահմանյա-

ՈՐԲԵՐՈՒ ԵՐԿՍԵՌ ՄԻՈՒԹԻՒՆ
ՍԵԼԱՆԻԿԻ
Անուն Ֆիրդ
Ազգանուն Փիրիանեան
Ծննդեան տարեթիւ 1908
Ազգութիւն Հայ
Անդամագրման թիւ 26 դեկ. 1927

Սելանիկի խորհրդային Հայաստանի համակիր որբերի միության անդամատոմսը

[50] Վահան Ղազարյանը 1927 թ. Հունաստանից մեկնեց ԱՄՆ, ներկայումս նա Ամերիկայի հայկական զարթի հայտնի առաջադիմական գործիչներից է։ 1961 թ. մայիսին նա եկել էր Երևան՝ Հայաստանի 40-ամյակի հոբելյանական հանդեսներին մասնակցելու հրավիրված ամերիկահայ հյուրերի կազմում։

նը, Հովհան Տատիկյանը, Գրիգոր Խրիմյանը, Հարությունն Հակոբյանը, Միքայել Ճեվիլեկյանը, Հենրի Անլանյանը և ուրիշներ։ Որբերի կազմակերպությունները հունահայ կոմունիստների և կոմերիտականների լեգալ գործունեության կարևորագույն հենակետերը հանդիսացան, ուր դաստիարակվում էին ազատության և կոմունիզմի հետագա խիզախ մարտիկները։

Որբերի միությունները մասսայական երիտասարդական կազմակերպություններ էին, քանի որ նրանց շարքերում ընդգրկվում էին բոլոր երիտասարդները։

Միության ղեկավար աշխատողները հաճախ մեկնում էին շրջանները հայ որբերին, երիտասարդ բանվորներին կազմակերպելու, նրանց սովետական հայրենիքի շուրջ համախմբելու նպատակով։ Եղել են դեպքեր, երբ դաշնակ ահաբեկիչները փորձել են տեռորի ենթարկել կամ հունական ապահովության օրգաններին մատնել շրջան մեկնող ընկերներին։ Այդպես է պատահել, օրինակ, Սալոնիկի Խորհրդային Հայաստանի համակիր որբերի միության ղեկավարներից Ստ. Կուրտիկյանի հետ, երբ նա մեկնել էր Մակեդոնիայի Սերեզ քաղաքը և շրջակայքի Տոմիստա, Վեզնիկո և այլ գյուղերը 1926 թ. մայիսին[51]։

Պանկալոսյան դիկտատուրայի օրերին դաշնակների մատնիչական հնարների ըմբռնման տեսակետից ուշագրավ է, որ դաշնակների «Ալիք» թերթը շրջան մեկնողի մասին նախօրոք հրապարակում էր այսպիսի մի մատնագիր «Այս ալ ուրիշ պատմություն» խորագրի տակ որպես ազդանշան նրա հետ հաշվեհարդար տեսնելու համար. «Քսանթիին ճամբորդ մը մեզի կպատմե թե կարևոր միսիայով հոն հասած է դեռ բեյանը կաթ հոտող տղեկ մը Ստեփան Կուրտիկյան անունով, որ ինքն իրեն որբի հանգամանք մը կուտա։ Կրսեն թե հիշյալը հոն գացած է տեղվույն որբերուն մոտ քարոզություն մղելու համար, խորհրդավոր նպատակի մը շուրջ։ Հավանաբար այցելե նաև ուրիշ քաղաքներ»[52]։

---

51 «Նոր Ալիք», 1926 թ., հունիսի 6։

52 «Ալիք», 1926 թ., մայիսի 29։

Այդ միությունները ծավալում էին բազմակողմանի գործունեություն։ Լուսավորական, քաղաքական-դաստիարակչական բոլոր աշխատանքները տարվում էին երիտասարդության կուլտուր-կենցաղային հմուտ սպասարկման միջոցով։ Օրինակ՝ Սալոնիկի Սովետական Հայաստանի համակիր որբերի երկսեռ միությունը իր վարչության կից կազմել էր աշխատանքի դիվան՝ անգործ որբերին գործ հայթայթելու համար։ Բացի գրադարանային սպասարկումից, երիտասարդության համար կազմակերպել էր հայերենի, ռուսերենի և ֆրանսերենի դասընթացներ, ինչպես և մարզական ու զեղարվեստական խմբեր[53]։ Նույնը կատարվում էր նաև մյուս միություններում, հատկապես Աթենքում, Պիրեայում, ինչպես նաև Մակեդոնիայի մի շարք հայաշատ կենտրոններում։

Ամբողջ ուշադրությունը կենտրոնացնելով մասսայական կազմակերպությունների մեջ տարվող աշխատանքների վրա, հունահայ կոմունիստներին հաջողվեց դիկտատուրայի ծանր մղձավանջից դուրս գալ ոչ միայն նվազագույն կորուստներով, այլև կրկնապատկված ուժերով։

Հիշատակենք որոշ դեպքեր ու փաստեր որբերի միությունների ընդհանուր աշխատանքների ու նրանց քաղաքական բովանդակության մասին պատկերացում տալու համար։

1926 թ. մարտի 28-ին, Սալոնիկի «Խորհրդային Հայաստանի համակիր որբերի երկսեռ միության» նախաձեռնությամբ Ադասպազար թաղի դանիական վարժարանի արհեստանոցի սրահում կազմակերպվեց սգահանդես նվիրված Ա. Մյասնիկյանի մահվան առաջին տարելիցին[54]։

---

53 «Աշխատանք», Սալոնիկ, 1926, № 3։

54 Ա. Մյասնիկյանի մահվան տարելիցի առթիվ Սալոնիկի ՀԿԿ-ի Կենտրոնական վարչությունը Սովետական Հայաստանի կառավարությանն ու ՀԿԿ-ի գլխավոր վարչությանը ուղարկեց ուղերձ, ուր ասված է. Մյասնիկյանը իր բարձր մտքով, ազնիվ սրտով և անմահ կամքով հանդիսացավ հոյակապ տիպար մը, որով իրավունք ունեն հպարտանալու թե մարդկությունը և թե հայությունը»։ Հունահայ աշխատավորները վառ պահելով Լենինի մարտական գինակցի անմահ կերպարը,— ասված է այդ ուղերձում,— ուխտել են «կանգնել բոլոր ուժով և անվերապահ, վերածնվող հայրենիքին կողքին»։

ԱՇԽԱՏԱՆՔ

ACHKHADANK

ՅՈՒՐԴԱՆՔ ԸՆԿԵՐ Ա. ՄԻՔՈՅԻԿԵԱՆԻ
ԵՒ ԽՄԲ ՁՈՐՍ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ ՅԻՇԵՑՏԱԿԻՆ

ՍՈՒՅՆ ՕՐԸ

ՄԻՔՈՅԻԿԵԱՆԻ ԵՒԵՐԵԿԱՆԸ

Ա. Մյասնիկյանի նիշատակին նվիրված «Աշխատանք» թերթի 1927 թ. մարտի 24-ի համարը

1926 թ. հոկտեմբերի 10-ին Սալոնիկի նույն որբերի միության նախաձեռնությամբ, Պեշ-Չինարի պարկի մեծ սրահում տեղի ունեցավ Ստեփան Շահումյանի մահվան 8-րդ տարելիցին նվիրված սգահանդես։ Այդ սգահանդեսը, որը կազմակերպվել էր դիկտատուրայի անկումից անմիջապես հետո, հայ աշխատավորության մասնակցության

արտահայտում են իրենց «անիծորտակելի հավատը սիրելի Հայաստանի ապագայի մասին և իրենց բովանդակ սերը, հավատարմությունն ու անձնվիրությունը Խորհրդային Հայաստանի իմաստուն վարիչներուն և աշխատող ու ստեղծող ժողովուրդին։ Տես «Երևան», Փարիզ, 1926, № 60։

շնորհիվ վերածվեց դեմոկրատական կազմակերպությունների քաղաքական հատուցության-և կազմակերպվածության խոշոր ատուգատեսի։ Սպահանդեսը ստացավ համաժողովրդական բնույթ, որին մասնակցեցին ՀՕԿ-ի Կենտրոնական վարչության, Հունաստանի կոմպարտիայի, Հունաստանի կոմերիտմիության, հայկական կոմունիստական խմբերի, ռամկավարների, հնչակյանների, հայրենակցական միությունների և Սալոնիկի հասարակական այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ, որոնք բազմաթիվ ծաղկեպսակներ էին բերել սպահանդեսին։

Բացման խոսքից հետո կոմունիստական երգեցիկ խումբը կատարեց բանվորական համերգ։ Շուշանիկ Կուրղինյանի «Բանվորները» բանաստեղծության արտասանությամբ հանդես եկավ կոմերիտական Գ. Տրիբունյանը, այլ արտասանություններով հանդես եկան շատ ուրիշներ։ Սալոնիկի որբերի միության կողմից ելույթ ունեցավ կոմունիստ Ստեփան Կուրտիկյանը, հակաղաշնակ ճակատի կողմից Գ. Նավասարդյանը և ուրիշներ։ Սպահանդեսը փակվեց «Ինտերնացիոնալի» մարտական հնչյունների տակ, որ կատարվեց կոմերիտական երգչախմբի կողմից[55]։ Սալոնիկի հայ գաղութի դեմոկրատական բոլոր հոսանքների համագործակցության ցայտուն ապացույցը հանդիսացած այս սպահանդեսը նոր աշխուժություն մտցրեց գաղութի հասարակական կյանքում։

Հունաստանի կոմպարտիայի հայկական հատվածի անդրանիկ օրգան «Աշխատանք» թերթը հատուկ համար նվիրեց Ստեփան Շահումյանի մահվան 8-րդ տարեդարձին։ Թերթը շեշտում էր, թե «Գաղութահայ բանվորությունը առանձնապես պիտի քալե Շահումյաններու գծած գաղափարի ուղիին և բարձրը պիտի բռնե այն դրոշը, զոր անոնք պարզեցին...»[56]։

Նույնպիսի սպահանդեսներ կազմակերպվեցին նաև ուրիշ քաղաքներում և հայաշատ գաղթակայաններում։

Ա. Մյասնիկյանի մահվան երկրորդ տարելիցի կապակցությամբ ամենուրեք անցկացված սպահանդեսները նույնպես

---

55 «Աշխատանք», Սալոնիկ, 1926, 22։

56 Նույն տեղում։

Մյասնիկյանի հիշատակին նվիրված Ֆիֆսի սգահանդեսի մի խումբ մասնակիցների խմբանկար

կազմակերպվել էին որբերի միությունների նախաձեռնությամբ և ազգային մարմինների ու հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ։ Օրինակ՝ 1927 թ. ապրիլի 3-ին Ֆիքսի ազգային վարժարանում «Կամք» որբերի միության կողմից կազմակերպված սգահանդեսին մասնակցեցին և ծաղկեպսակներ ուղարկեցին Ֆիքսի թաղական խորհուրդը, ՀՕԿ-ի մասնաճյուղը, Հաջընի հայրենակցական միությունը, «Հայ դաղթականաց երիտասարդական միությունը», «Կամք» որբերի միությունը և ուրիշ կազմակերպություններ։ Մյասնիկյանի կյանքի ու գործունեության մասին ելույթներ ունեցան Աթենքի հայ կոմունիստ ընկերները և դեմոկրատական կազմակերպությունների ներկայացուցիչները։ Նույնանման սգո միտինգներ տեղի ունեցան նաև Պիրեայի և Սալոնիկի հայկական թաղամասերում։ Հայաշատ բոլոր կենտրոններում սգահանդեսներին մասնակցող բանվորներն ու արհեստավորները երդվում էին շարունակել Ալ. Մյասնիկյանի կիսատ թողած գործը, սատարել Սովետական Հայաստանի սոցիալիստական շինարարությանը, ակտիվ կերպով պաշտպանել Սովետակա... Միությունը իմպերիալիստական ոտընձգություններից և մասնակցել ֆաշիզմի դեմ մարտնչող հույն ժողովրդի պայքարին։

Որբերի միությունները շարունակեցին իրենց գործունեությունը մինչև 20-ական թվականի վերջերը՝ իրենց շարքերում դաստիարակելով բազմաթիվ ազնիվ երիտասարդներ, որոնք աստիճանաբար անցնելով Հունաստանի կոմերիտմիության և կոմունիստական պարտիայի շարքերը, իրենց դրսևորեցին որպես կոմունիզմի աննկուն և անձնվեր մարտիկներ թե՛ Հունաստանում և թե՛ Սովետական Միության մեջ։

ՀՈՒՆԱՀԱՅ ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՆԿԱԼՈՍՅԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ԱՆԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ

ՆՈՐ ԻՐԱՎՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԵՐԵՆ ԱՌԱՋԻՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԹԵՐԹԸ

Հույն-թուրքական պատերազմից հետո Հունաստանում ստեղծված տնտեսական և քաղաքական ծանր ճգնաժամից դուրս գալու բուրժուազիայի փորձերը հիմնվեցին նախ և առաջ ժողովրդական մասսաների վայրագ շահագործման, ինչպես նաև օտարերկրյա մոնոպոլիստական կապիտալից երկրի կախվածության ավելի ևս ուժեղացման վրա։ Այս խախուտ հիմքի վրա էլ Հունաստանի տնտեսության մասնակի կայունացման, առանց այն էլ ավելի դանդաղ և ուշ սկսված պրոցեսը, անհամեմատ կարճատև եղավ։

Պանկալոսյան դիկտատուրան ոչ միայն չկարողացավ երկիրը դուրս բերել տնտեսական ու ֆինանսական ծանր վիճակից, այլև կանգնեցրեց նորանոր դժվարությունների առջև։ Հակադիկտատորական շարժումը ընդլայնվելով ընդգրկում էր ժողովրդական լայն խավերին։ 1926 թ. օգոստոսի 22-ին, հունական ռեակցիան վախենալով ժողովրդական զայրույթի պոռթկումից, հարկադրված եղավ զինվորական նոր հեղաշրջում կատարել՝ փրկելու համար իր վտանգված տիրապետությունը։ Պանկալոսյան դիկտատուրան տապալվեց բռնի ուժով և իշխանությունն ամբողջությամբ անցավ զինվորականության մի ուրիշ ներկայացուցչի՝ ֆրանսիական իմպերիալիստների դրածո, նախկին ռազմական մինիստր, գեներալ Կոնդիլիսի

ձեռքը, որն այդ ժամանակ շնորհազրկված էր և համագործակցում էր լիբերալ բուրժուազիայի տարբեր պարտիաների հետ։

Սակայն Կոնդիլիսի իշխանությունն զլուխ անցնելը դեռևս բոլորովին չէր նշանակում երկրի քաղաքական զրության կայունացում և բուրժուազիայի միմյանց դեմ պայքարող տարբեր խմբակցությունների համերաշխություն։ 1926 թ. սեպտեմբերի 9-ին հակակառավարական նոր շարժում բռնկվեց զեներալ Կոնդիլիսի իշխանության դեմ։ Աթենքի կայազորի ապստամբած զորամասերն ընդհարումներ ունեցան կառավարական զորամասերի հետ, իսկ ստեղծված անորոշ և խուճապային դրությունից օգտվելով, միապետականների հայտնի զեկավարներից Մերկուրիսն իր զինված խմբերով Աթենքի հրապարակն իջավ ու սկսեց դրավել պետական հիմնարկները՝ փորձելով տապալել Կոնդիլիսի կառավարությունը զինվորական նոր հեղաշրջման միջոցով։ Աթենքի աշխատավորները, որ ապելությամբ էին լցված պանկալոսյան լծի դեմ, տասնյակ հազարներով պայքարի դուրս եկան՝ ձախողելով միապետական-դիկտատորական պլանների իրագործումը։ Բանվորները զինվելով փայտերով ու քարերով՝ պարտադրեցին զինվորական ապստամբներին նահանջելու։ Կոնդիլիսի կառավարությունը վախենալով ժողովրդական շարժման ծավալումից, զենքի ուժով ցրեց ցուցարարներին, որոնք ատիպված էին հուժկու հակահարված տալ նաև կառավարական զորքերին և ինքնապաշտպանության դիմելով՝ զինվել իրենց իսկ զինաթափած ոստիկանների զենքերով։ Բանվորները, կոմունիստների և կոմերիտականների զեկավարությամբ, հակահարձակման անցնելով զինվորական ուժերի դեմ՝ զրավում են մի տանկ, հրշեջ մեքենա, զինաթափում են ֆաշիստներին և մի քանի ժամ պաշարված դրության մեջ են պահում կենտրոնական հեռագրատունն ու փոստը։

Ժողովրդական այս պայքարին ակտիվ մասնակցություն ունեցան նաև Աթենքի հայ բանվորները, հատկապես հեռագրատան շուրջը մղվող մարտերի ժամանակ[1]։

[1] Այդ պայքարին մասնակից հայ բանվորներից երիտասարդ կոմունիստ Բյուզանդ Դալաբյանը ներկայումս ապրում է Սովետական Հայաստանում, Երևան քաղաքում։

Միապետական դավադրության ճնշումից հետո հունական բուրժուազիան ձգտում էր ամրապնդել իր տիրապետությունը՝ քողարկվելով ժողովրդի ոտնակոխված դեմոկրատական իրավունքներն իբր վերականգնելու դեմագոգիկ լոզունգներով։

1926 թ. նոյեմբերի 7-ի համար նշանակվեցին պառլամենտական ընտրություններ։

Հունաստանի կոմունիստական պարտիան հակադրվելով բուրժուական պարտիաներին, նախընտրական ակտիվ պայքարի դուրս եկավ բանվորների, գյուղացիների, գաղթականների և աշխատավորական բոլոր խավերի միասնական ճակատ ստեղծելու նշանարանի տակ, և ամբողջ երկրում ծավալեց մասսայական լայն գործունեություն։

Կոնդիլիսի կառավարությունը կատաղի հալածանքներ կազմակերպեց կոմունիստական պարտիայի դեմ։ Ահաբեկելու համար բանվոր դասակարգի աճող ուժերին, ֆաշիստական տարրերը, զինված հարձակում գործեցին Աթենքի Բանվորական կենտրոնի վրա և վիրավորելով երեք բանվորների՝ սպանեցին բանվոր Պատլակասին, որը Աթենքի կոմունիստական կազմակերպության ակտիվ գործիչներից մեկն էր։ Դա առաջին հարվածն էր, որ պանկալոսյան դիկտատուրայի անկումից հետո ռեակցիան հասցնում էր կոմունիստական պարտիային՝ այս անգամ էլ «դեմոկրատիայի» պայմաններում։ Ֆաշիստական այս պրովոկացիան, որ տեղի ունեցավ նախընտրական պայքարի ժամանակ, մեծ հուզումներ առաջ բերեց աշխատավոր ժողովրդի մեջ։ Բանվոր ռևոլյուցիոներ Պատլակասի հուղարկավորությունը (1926 թ. հոկտ. 23-ին) վերածվեց Աթենքի աշխատավորության հուժկու հակաֆաշիստական ցույցի, որ իր կազմակերպվածությամբ սարսափ առաջացրեց բուրժուազիայի մեջ։ Հուղարկավորությանը մասնակցող հազարավոր բանվորներ, որոնց մեջ կային նաև բազմաթիվ հայ աշխատավորներ, երդվեցին իրենց զոհված ընկերոջ թարմ շիրիմի մոտ, որ վառ կպահեն ազնիվ մարտիկի հիշատակը, ավելի ևս ուժեղացնելով պայքարը կապիտալիզմի ու ֆաշիզմի դեմ։

Պանկալոսյան դիկտատուրայի անկումից հետո հայ կոմունիստները օգտվելով լեգալ աշխատանքի որոշ հնարավորություններից ու հաղթահարելով խոշոր դժվարություններ, 1926 թ. օգոստոսի վերջերին Սալոնիկում սկսեցին հրատարակել Հունաստանի կոմունիստական պարտիայի հայկական հատվածի անդրանիկ օրգանը՝ «Աշխատանք» կոմունիստական եռօրյա թերթը[2], որի լույս ընծայումը ուղղությունն նոր շունչ հաղորդեց հունահայ աշխատավորության պայքարին։ Հունահայ կոմունիստները հնարավորություն ստացան լեգալ մամուլի միջոցով տարածելու իրենց գաղափարները, հայ աշխատավորներին համախմբելու կոմունիստական պարտիայի դրոշի տակ։

Բացահայտ հակադաշնակ, պրոլետարական դասակարգային գիծ վարելով հունահայ գաղութի և բանվորական շարժման հարցերում, «Աշխատանքը» լայն պարզեց պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշը։ Նա կոմունիստական գաղափարների պրոպագանդիստն էր, մասսաների կազմակերպիչ, հետևողականորեն լուսաբանում էր բանվոր դասակարգի պայքարը շահագործողների դեմ և հայ աշխատավորությանը սերտորեն կապում էր այդ պայքարի հետ։

Թերթը լայն տեղ էր հատկացրել այդ տարիներին Չինաստանում ծավալվող ազգային-ազատագրական շարժումներին, անգլիական ածխահատների գործադուլային մեծ պայքարին, Հունաստանի և միջազգային բանվորական շարժման հարցերին, կապիտալիզմի անտեսական ճգնաժամին։

---

[2] «Աշխատանքի» խմբագրական կոլեգիայի մեջ մտնում էին՝ Ստեփան Կուրտիկյանը, Անթուան Միքայելյանը, Պետրոս Ախիկյանը։ Թերթի արտոնատերն ու պատասխանատու տնօրենն էր կոմունիստ Հակոբ Կետիրյանը։ Տպագրական գործերը վարում էր Մարտի Թերզյանը։ «Աշխատանքին» ակտիվ կերպով մասնակցում էին Սալոնիկի, Աթենքի, Պիրեայի և այլ քաղաքների հայկական կոմունիստական խմբերի ակտիվիստներն ու առաջավոր բանվորները։

ԱՇԽԱՏԱՆՔ

ԱՇԽԱՏԱՆՔ

ՈՂՋՈՅՆ ՄԱՆՋԻՆ ՄԷԿԻ ՐԱՆԻՈՐԱԿԱՆ ՄԵԾ ՏՕՆԻՆ

ՍՏԻՊԱՆԻՆ ՏՕՆԻ—ՄՈՍԿՎԱ ՍԷՐԸ

ՍԳԱՅԻՆ ՄԵԾԱԿԱՆ ԵՐԳ

ԻՆՉՊԵՍ ՀԵՂԻ ՊԻՆԵՑԻԱ

«Աշխատանք» թերթի 1927 թ. մայիսմեկյան համարը

Սրան զուգընթաց թերթը անհաշտ պայքար էր ծավալում հայ ազգայնական պարտիաների և հատկապես դաշնակցության դեմ, որն այդ տարիներին զգալի ուժ էր ներկայացնում և իր ազդեցության տակ էր պահում մեծ թվով հայ երիտասարդներ: Դաշնակներն այդ հայրենադուրկ ու մոլորյալ երիտասարդների մեջ մշտապես սրսկում էին նացիոնալիզմի թույնը և նրանց տրամադրում սովետական հայրենիքի դեմ: Պայքարը գնում էր հունահայ զաղութի ծաղիկը հանդիսացող քսան հազարից ավելի երիտասարդության համար:

«Աշխատանքը» ուժեղ պայքար ծավալեց այդ երիտասարդությունը դաշնակցության ազդեցությունից ազատելու, բանվոր երիտասարդությանը կոմունիզմի դրոշի շուրջ համախմբելու համար և վճռական հաջողություններ ձեռք բերեց: Թերթը հետևողականորեն լուսաբանում էր Սովետական Հայաստանի նվաճումները և հունահայությանը սերտորեն կապում իր վերածնված հայրենիքի հետ:

Հունաստանի պառլամենտի ընտրությունների ընտրական պայքարի ամենաբուռն շրջանում «Աշխատանքը», դիմակազերծ անելով հայ ազգայնական պարտիաների ռեակցիոն ու պահպանողական քաղաքականությունը, անվերապահորեն կոչ էր անում հայ աշխատավորներին՝ ակտիվ կերպով մասնակցել կոմունիստական պարտիայի կազմակերպած նախընտրական բոլոր միտինգներին և մասնայակաբն ժողովներին, ավելի ևս ամրապնդելու համար հույն և հայ աշխատավորության եղբայրական կապերը ռեակցիայի դեմ մղվող պայքարում: Հայ կոմունիստները, ձեռք-ձեռքի տված իրենց հույն ընկերների հետ, մոբիլիզացնելով բոլոր ուժերը, ագիտացիոն մեծ աշխատանք ծավալեցին կոմպարտիայի ընտրական ծրագիրը ժողովրդականացնելու համար: Բացի «Աշխատանք» թերթից, նրանք հայերեն հրատարակեցին հատուկ թռուցիկներ, պլակատներ, կայծակ-թերթիկներ, որոնք հաղարավոր տպաքանակով տարածվեցին աշխատավորության մեջ: Հունահայ կոմունիստների քաղաքական կոփվածության, հայ և հույն աշխատավորների մարտական ինտերնացիոնալ համագործակցության մասին է վկայում, օրինակ, 1926 թ. հոկտեմ-

բերին հայերեն տպագրված և մի քանի հազար օրինակով հունահայ գաղութում տարածված նախընտրական կոչը, որ հրատարակվել էր Բանվորա-գյուղացիա-գաղթականական ընտրական միացյալ ճակատի գործադիր մարմնի կողմից[3]։

Պանկալոսյան դիկտատուրայի անկումից հետո «Հայ բանվորներին, գաղթականներին, գրչի և մաքի աշխատավորներին» ուղղված այս կոչը, որ հայ և հույն աշխատավորների համատեղ պայքարի առաջին տպագիր փաստաթղթերից մեկն է, հանդիսանում էր միաժամանակ յուրատեսակ ծրագրային մանիֆեստ, ուր կոմունիստները հանգամանորեն վերլուծում էին երկրի տնտեսական և քաղաքական ծանր վիճակը, շեշտում հայ և հույն աշխատավորության համատեղ պայքարի անհրաժեշտությունը՝ հացի և ազատության համար մղվող ընդհանուր պայքարում։

«Երկիրը, ուր կապրիք,— ասված է այդ կոչում,— խումբ մը արկածախնդիր զինվորականներու ձեռքը կավախնձոր դարձած է։ ... Հունաստանի կապիտալիստ դասակարգը նախքան ընտրություններ հռչակելը, կարգ մը բախտախնդիր զինվորականներու միջոցավ իր տիրապետությունը բռնորեն շարունակելու համար, իշխանությունը հանձնեց կարգ մը դիկտատորներու։

Սակայն տեսնելով, որ դիկտատորներու անկումեն հետո այլևս ժողովուրդը խաբելու միջոցները սպառած են, ստիպվեցավ նոր ընտրության դիմել, որպեսզի այս անգամ ալ սահմանադրական միջոցներով շարունակի իր վատնգավոր տիրապետությունը»։

Նախազգուշացնելով հայ աշխատավորներին պառլամենտական պատրանքներից, կոչը շեշտում էր, թե քանի պահպանվում են կապիտալիստական կարգերը, «ընտրություններեն վերջն ալ կապիտալիստները Ազգային ժողովի և սահմանադրության անունով... պիտի շարունակեն իրենց

---

[3] Այդ կոչը տպագրվել էր թռուցիկի ձևով 43×31 սանտիմետր ծավալով, Սալոնիկի «Պրոսֆիդիկոս Ազոնաս» («Գաղթականական պայքար») թերթի տպարանում, որն ամբողջությամբ արտատպվել է նաև «Աշխատանք» թերթի 1926 թ. № 26-ում։

կողոպուտն ու շահագործումը, ոտնակոխելով աշխատավոր և արհեստավոր դասակարգերու արդարացի պահանջները»։

«Հույն դրամատիրական կուսակցությանց գլխավոր նպատակն է,— ասված է կոչում,— երկրին բոլոր տնտեսական տագնապին ծանրությունը բեռնավորել աշխատավորներուն, գաղթականներուն ու գյուղացիներուն կնայելը։ ...Մեկուկես միլիոն գաղթականությունը, զրկված սեփական միջոցներեն, հույն բուրժուազիայի համար եղավ շահագործման ապրյուր մը, գաղթականները առավելն մինչև իրիկուն կաշխատցնեն կտոր մը շոր հացի փոխարեն, և այդպիսով իրենց միլիոնները կրազմապատկեն։ Հույն բուրժուազիան Փոքր Ասիոյ աղետեն շահավոր դուրս եկավ. 1,5 միլիոն մարդոց թշվառության շնորհիվ ան զտավ շահագործելու համար էժան ձեռքեր»։ Աշխատավորներիս, փոքր տանուտերերիս, գաղթականներիս և գյուղացիներիս խնդիրը, այնուհետև ասված է կոչում, միայն մի բան է՝ «Ընտրական Միացյալ ճակատի մը անհրաժեշտությունը». միայն այսպիսի ճակատով մը կրնանք դիմադրավել բուրժուազիայի հարվածներուն...»։

Կոչի այս տողերը ցույց են տալիս, թե որքան բարձր էին գնահատվում կոմունիստական պարտիայի և Ընտրական միացյալ ճակատի ղեկավարության կողմից հունահայ աշխատավորության ռևոլյուցիոն հնարավորությունները։ Հունաստանի աշխատավոր բազմագգ ժողովրդի առավել ճնշված, բացարձակապես իրավազուրկ և առավել դեմոկրատական ջոկատը լինելով, նա, հիրավի, կարող էր ակտիվ դեր խաղալ հունական ռեակցիայի դեմ մղվող պայքարում։

«... Դուք, հայ բանվորներ ու գաղթականներ,— ասված է կոչում,— դուք որ դրամատեր դասակարգին գլխավոր զոհերը կհանդիսանաք, դուք որ այսօր գլուխներդ գնելիք հանգիստ անկյուն մը չունիք, վերջապես դուք, որ դրամատեր դասակարգը ներկայացնող, եկող գացող կառավարությանց կողմն միշտ տեղահան եղաք ու դեռ կրլլաք, դուք այս շահագործողներու հակամարդկային ճնշումներեն ազատվելու համար առավելապես պարտավոր եք բոլորվելու ձեր շահերու պաշտպան ներկայացող բանվորներու, գյուղացիներու և գաղթա-

կանների միացյալ ճակատի շուրջ։ Ուրեմն ուժ տվեք մեր Ընտրական միացյալ ճակատին, որ իրապես ազգային բոլոր փոքրամասնություններու և մասնավորապես իրավազրկված հայ ազգային փոքրամասնության միակ պաշտպանը կհանդիսանա»[4]։

Ընտրական միացյալ ճակատի գործադիր մարմնի հայերեն հրատարակած այս հատուկ կոչի տարածումը հայ աշխատավորության մեջ հասարակական-քաղաքական նոր երևույթ էր հունահայ գաղութի կյանքում, և նշանավորում էր հույն և հայ աշխատավորների մարտական համագործակցության ամրապնդումը ռեակցիայի դեմ մղվող պայքարում։

Կոմունիստներն ուժեղացնելով իրենց ագիտացիոն-մասսայական աշխատանքները քաղաքացիական իրավունքներ ունեցող հունահպատակ հայ աշխատավորների մեջ, ապահովեցին նրանց քվեների մեծ մասը կոմունիստական պարտիայի կողմից ղեկավարվող բանվորա-գյուղացիա-գաղթականական ճակատի թեկնածուների օգտին։ Ընտրական պայքարի ամենասուր ժամանակաշրջանում թե Հին և թե Նոր Հունաստանի հայկական կոմունիստական կազմակերպությունները հրատարակեցին մի շարք թռուցիկներ ու լոզունգներ, որոնք լայնորեն տարածվեցին հունահայ աշխատավորության մեջ։ Այսպիսի թռուցիկներից մեկում, որ տպագրվել էր նաև «Աշխատանք» թերթում, ասված էր, որ հայ քաղաքացիները տեղահանություններից զերծ մնալու, ազգային փոքրամասնության իրավունքները հարգել տալու և միաժամանակ իրենց շահերի պաշտպանությունը հուսալի մարդկանց վստահելու համար պետք է քվեարկեն Բանվորա-գյուղացիա-գաղթականական միացյալ ճակատի ընտրական ցանկի օգտին, որի «խորհրդանիշն է մուրճն ու մանգաղը»[5]։

Կոմունիստների եռանդուն գործունեության շնորհիվ հունահայ աշխատավորները ակտիվ մասնակցություն ունեցան կոմպարտիայի նախընտրական միտինգներին ոչ միայն Աթեն-

---

[4] «Աշխատանք», 1926, № 26։ (Կոչը մեջբերվում է կրճատումներով Ռ. Կ.)

[5] «Աշխատանք», 1926, № 28։

քում, Պիրեայում, Սալոնիկում, այլև Կավալայում, Քանթիում, Սերեզում, Դրամայում, Պատրասում և այլ քաղաքներում ու գյուղական շրջաններում։

1926 թ. հոկտեմբերի 3-ին Սալոնիկի «Խարիլաու» թատրոնում տեղի ունեցավ քաղաքի բազմազգ աշխատավորության հանդիպման միտինգը կոմպարտիայի պառլամենտական թեկնածուների հետ, որոնք հանդես եկան Բանվորա-գյուղացիա-գաղթականական միացյալ ճակատի դրոշի տակ։ Այդ միտինգին մասնակցում էին Սալոնիկի ավելի քան հինգ հազար աշխատավորներ, որոնք բուռն խանդավառությամբ դիմավորելով պառլամենտական դեպուտատության թեկնածուներին, իրենց վստահությունը հայտնեցին կոմունիստական պարտիայի քաղաքականությանը և միահամուռ հավանություն տվին նրա ընտրական ծրագրին։ Հույն, հրեա և օտարազգի մյուս բանվորների հետ միասին, այդ միտինգին մասնակցեցին բազմաթիվ հայ աշխատավորներ։ Նույն օրը նախընտրական մասսայական հավաքույթներ կազմակերպվեցին նաև ուրիշ թաղամասերում։

1926 թ. հոկտեմբերի 24-ին Սալոնիկի «Ատտիկոն» կինոթատրոնի սրահում տեղի ունեցավ կոմպարտիայի մի այլ ընտրական միտինգ, որին նույնպես մասնակցեցին ավելի քան չորս հազար աշխատավորներ։ Միտինգից հետո բանվորները լայն պարզած կարմիր դրոշներով, «Ինտերնացիոնալի» և ռևոլյուցիոն այլ երգերի մարտական հնչյունների տակ, խոշոր ցույց կազմակերպեցին Սալոնիկի կենտրոնական փողոցներում։

Բանվոր դասակարգի մարտական տրամադրություններն իրենց ցայտուն արտահայտությունն էին գտնում նաև այն հզոր հակացույցերի մեջ, որոնք կազմակերպվում էին կոմունիստական պարտիայի կողմից՝ հունական ռեակցիոն կազմակերպությունների ընտրական հավաքույթների ժամանակ։ Այսպես, օրինակ, 1926 թ. հոկտեմբերի 23-ին Սալոնիկի «Պանթեոն» թատրոնի սրահում ծայրահեղ միապետականների լիդեր, իսկ հետագայում (1936 թ.) Հունաստանի ֆաշիստական դիկտատոր Մետաքսասը փորձ է կատարում հանդես գալ

Սալոնիկի «Աշխատանք» թերթի շուրջը համախմբված մի խումբ ակտիվիստների խմբանկարը. կանգնած են՝ ձախից աջ՝ 1. Վերանես Սարաֆյան. 2. Ստեփան Կուրտիկյան. 3. Կարպիս Պալբայան, 4. Գրիգոր Բուռնազյան, 5. Բաղդիկ Գազազյան: Նստած են ձախից աջ՝ 6. Հրաչ Փաշայան, 7. Դավիթ Գազազյան, 8. Հակոբ Կեռիֆյան, 9. Մուրադ Գասպարյան:

ընտրողների առաջ։ Սրահում գտնվող բանվորները ռեակցիոներ հռետորին մերկացնող լոզունգներով ոչ միայն թույլ չէին տվել արտահայտվելու միապետության օգտին, այլև բոլորովին անհնարին էին դարձրել այդ միտինգի շարունակումը։ Թատրոնի շուրջը հավաքված հազարավոր բանվորների և արհեստավորների «Կորչին միապետականները» հուժկու և խրոխտ բացականչությունները սարսափով էին համակել միապետական միտինգարարներին, որոնք հարկադրված էին մի կերպ ցրվել։ Թե սրահի ներսում և թե նրա շուրջը հավաքված հակացույցի մասնակիցների մեջ կային բազմաթիվ հայ աշխատավորներ։ Հունական ռեակցիայի տիրապետավոր ներկայացուցիչ գեներալ Մետաքսասը կատարելապես խայտառակված իր իսկ պարտիայի կազմակերպած հավաքույթում, ժողովրդական բացահայտ արհամարհանքի ու ցասման բացականչությունների տակ, ստիպված էր հեռանալ «միտինգից»։ Այնուհետև Սալոնիկի իր կուսակիցների հետ միասին, 150 ավտոմոբիլներով, Մետաքսասը փորձում է փողոցային երթ կազմակերպել քաղաքում, հուսալով, որ ժողովուրդը գոնե այս ձևով որոշ մասնակցություն կբերի նրա նախընտրական «ուղևորությանը»։ Թե ինչպես ընդունվեց գեներալ Մետաքսասը Սալոնիկի աշխատավոր ժողովրդի կողմից իր «երթի» ճանապարհին, այդ մասին հետաքրքիր տեղեկություն է տալիս «Աշխատանք» թերթը, որը մանրամասն նկարագրում է ժողովրդի հակամիապետական այդ ցույցը։

«Ինքնաշարժերը Եկնաթիայեն անցած պահուն, ժողովուրդը «յուհաններով» և քարկոծությամբ դիմավորեց զանոնք։ Ճամբուն ամբողջ տևողությունը,— շարունակում է թերթը,— Մետաքսաս և իր կուսակիցները ինքնաշարժերուն մեջ գլուխնին ծռած, վախերնեն դեղնած, իրապես մարտիրոսացան։

Ինքնաշարժերուն վրա կնետվին փտած պտուղներ, բանջարեղեններ, ցեխ, քարեր ու աղբի թիթեղներ։ Սելանիկի ժողովուրդին կողմե պ. Մետաքսաս այսպիսի ընդունելության մը արժանացավ»[6]։

---

[6] «Աշխատանք», Սալոնիկ, 1926, № 25։

Մաղաք Թեոդյանը

Մյուս քաղաքներում ևս Մեսրոպասը ժողովրդական նույնպիսի դիմադրության հանդիպեց։ Օրինակ՝ հոկտեմբերի 30-ին Կարսիցա քաղաքի հրապարակում նա փորձել էր հանդես գալ ժողովրդի առջև։ Սակայն միտինգի վայրում հավաքված ավելի քան հինգ հազար բանվորներ, քաղաքային հիմնարկների ծառայողներ ոչ միայն թույլ չտվեցին նրան խոսելու, այլև ստիպեցին թողնել հրապարակը և փախուստի դիմել։ Մեսրոպասի համար պատրաստված ամբիոնից, աշխատավորության ընդ-

հանուր ոգևորության պայմաններում, ճառեր արտասանեցին կոմունիստական պարտիայի դեպուտատության թեկնածուներ Սյանթոսն ու Էվանկելիդիսը, որոնք պարզաբանեցին հավաքված բանվորներին Բանվորա-գյուղացիական-գաղթականական միացյալ ճակատի ընտրական ծրագրի բովանդակությունը՝ կոչելով ամրապնդել աշխատավոր ժողովրդի դեմոկրատական միասնությունը։ Ժողովրդական արհամարհանքի էին ենթարկվում նաև բուրժուական մյուս պարտիաների ներկայացուցիչները, որոնք պանկալոսյան դիկտատուրայի անկումից հետո դիմագոգիկ ճառերով ու կեղծ խոստումներով փորձում էին շահել աշխատավոր ժողովրդի վստահությունը և տեղեր գրավել պառլամենտում։

Դաշնակ մամուլը մեծ վայնասուն բարձրացրեց պառլամենտական ընտրությունների կապակցությամբ հայ կոմունիստների ծավալած մասսայական աշխատանքների առթիվ։ Ոստիկանական մարմինների առաջ և իրենց թերթերում դաշնակները բացարձակապես մեղադրում էին հայ կոմունիստներին, թե նրանք ոչ միայն ակտիվ մասնակցություն են բերում երկրի քաղաքական պայքարին, այլև իրենց «Աշխատանք» թերթը լիովին տրամադրել են կոմունիստական պարտիայի ընտրական ծրագիրը ժողովրդականացնելու գործին։

«Այո, պարոն դաշնակներ,— պատասխանում էին կոմունիստները,— մենք մեր թերթին հազվագյուտ այունակները ամենայն հաճույքով է, որ տրամադրեցինք Բանվորա-գյուղացիական-գաղթականական ընտրական միացյալ ճակատին, հավատալով, որ միայն այդ Միացյալ ճակատին հաղթանակն է, որ կախում ունի հունահայ աշխատավորության հանգիստն ու ապահովությունը, ու ճիշտ այդ իսկ պատճառով է, որ այդ ուղղությամբ աշխատեցանք կարելին ընել»[7]։

1926 թ. նոյեմբերի 7-ին պառլամենտական ընտրություններում դեմոկրատական պարտիաները լիակատար հաղթանակ տարան միապետականների և գինվորականության ռեակցիոն ուժերի դեմ։ Կոմունիստական պարտիան կրկնապատկեց իր

[7] «Աշխատանք», 1926, № 30։

բաղաքական ազդեցությունը և առաջին անգամ լինելով՝ հունական պառլամենտ ուղարկեց տասս կոմունիստ դեպուտատների[8]։

Կոմպարտիայի այս հաջողությանը նպաստեց նաև ազգային փոքրամասնությունների աշխատավորության ակտիվ մասնակցությունը ընտրական պայքարին։ Նրանք իրենց քվեների մեծ մասը տվին կոմունիստ թեկնածուների օգտին, հատկապես Մակեդոնիայի շրջաններում։ Օրինակ՝ միայն Սալոնիկ քաղաքում կոմպարտիայի ստացած 7259 քվեից 3917-ը պատկանում էր հրեա աշխատավորներին, որոնք օգտվում էին ընտրական իրավունքներից։ Ընտրական իրավունք ունեցող սակավաթիվ հայ աշխատավորներ նույնպես ակտիվ կերպով պաշտպանեցին Բանվորա-գյուղացիական-գաղթականական ճակատի թեկնածուներին, նրանց դիտելով որպես իրենց իրավունքների անվեհեր պաշտպանների։ Կոմունիստական պարտիայի քաղաքականության այս ակտիվ պաշտպանությունը ազգային փոքրամասնությունների աշխատավորության կողմից՝ կատաղեցրեց հույն ռեակցիոներներին, որոնք անցան ակտիվ ահաբեկչական գործունեության։ Ընտրություններից անմիջապես հետո «Մակեդոնական ազգային միություն» կոչվող ֆաշիստական կազմակերպության անդամները թռուցիկներ փակցրին Սալոնիկի բազմաթիվ շենքերի պատերին, կոչելով քաղաքի հույն բնակչությանը՝ բոյկոտի ենթարկել հրեաներին։ Սալոնիկի բազմազգ բանվորությունը պատասխանելով ռեակցիայի այս նոր պրովոկացիաներին, ավելի ևս ամրապնդեց իր ինտերնացիոնալ մարտական միասնությունն ու համագործակցությունը և հասավ զգալի հաջողությունների։

Ընտրություններից հետո հայ և հույն բանվորության եղբայրական կապերը էլ ավելի ամրապնդվեցին։ Այդ ցայտուն

---

[8] 1920 թ. հունական պառլամենտում կար միայն երկու կոմունիստ դեպուտատ։ 1926 թ. նոյեմբերի 7-ին պառլամենտական ընտրությունների հետևանքով լիբերալները (վենիզելոսականներ) ստացան 140 տեղ, միապետականները (Յայտարիս—Մետաքսաս) — 104, ռեսպուբլիկականները — 14, կոմունիստները—10, անկախները—3 տեղ։

կերպով դրսևորվեց նաև Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 9-րդ տարեդարձի առթիվ կազմակերպված մասսայական միտինգների և հանդիսավոր ժողովների ժամանակ։ 1926 թ. նոյեմբերի 14-ին Սալոնիկի հազարավոր բանվորներ հավաքվեցին «Ատտիկոն» թատրոնի սրահում՝ տոնելու մեծ Հոկտեմբերի տարեդարձը։ Կոմունիստական դեպուտատների ու Սալոնիկի բանվորության մարտական դեկավարների, ինչպես նաև կոմպարտիայի հրեական հատվածի ներկայացուցիչ Ժակ Վենդուրայի ելույթներից հետո, հանդիսավոր նիստի նախագահ ընկ. Կամոնասը միտինգի մասնակիցներին ներկայացրեց կոմունիստական պարտիայի հայկական հատվածի ներկայացուցչին, որի հանդես գալը բեմի վրա մեծ խանդավառություն առաջ բերեց հազարավոր հույն, հրեա, մակեդոնացի և հայ բանվորների մեջ։ Նրանք բուռն ծափահարություններով և հոտնկայս բացականչում էին՝ „Ζήτω ἡ Σοβιετική Ἀρμενία“ — «Կեցցե Սովետական Հայաստանը»։ Իր ելույթում նա բացատրելով Հոկտեմբերյան հեղափոխության պատմական նշանակությունը ճնված ժողովուրդների ազատագրման համար մղվող պայքարում, կոչ արեց բոլոր հայ աշխատավորներին, հույն հեղափոխիոն բանվորների հետ միասին համախմբվել Հունաստանի կոմպարտիայի մարտական դրոշի տակ, համառեղ պայքար մղելու համար շահագործող դասակարգերի տիրապետության դեմ՝ հանուն բանվորա-գյուղացիական իշխանության հաստատման[9]։

Նույնանման միտինգներ տեղի ունեցան նաև Աթենքում, Պիրեայում, Վոլոսում, Պատրասում և բազմաթիվ այլ քաղաքներում։ Դեմոկրատական ուժերի, հայ և հույն բանվորների ինտերնացիոնալ կապերի հետագա զարգացման և ամրապնդման համար նույնպես կարևոր նշանակություն ունեցան Հայաստանում սովետական կարգերի հաստատման 6-րդ տարեդարձին նվիրված մասսայական միտինգներն ու ժողովները, որոնք բարձր խանդավառության մթնոլորտում անցկացվեցին Հունաստանի մի շարք հայաշատ կենտրոններում։ Աթենք և

---

[9] «Աշխատանք», 1926, № 31։

Պիրեա քաղաքների հայ աշխատավորության համատեղ միտինգը տեղի ունեցավ Աթենքի «Կիվելն» թատրոնում: Միտինգի նախապատրաստման ընթացքում կոմունիստները մասսայական ու ագիտացիոն խոշոր աշխատանք ծավալեցին՝ լայնորեն օգտագործելով «Աշխատանք» և «Հաղթանակ» թերթերը, հրատարակելով թռուցիկներ, կազմակերպելով մասսայական ժողովներ և այլն:

«Ողջույն Խորհրդային Հայաստանի 6-րդ տարեդարձին» խորագրով Աթենքի հայ կոմունիստների հրատարակած տպագիր թռուցիկներից մեկում ասված է. «Հայ գաղթական... քո տառապանքը միմիայն խորհրդային կարգերու մեջ վերջ կգտնե.... քո թշնամին բուրժուազիան է ընդհանրապես և հայ բուրժուազիան մասնավորապես:

Զգաստացի՛ր, արիացի՛ր և թումբ կանգնիր քո խորհրդային հայրենիքի հակառակորդներուն դեմ:

Պաշտպանե՛ քո շահերը ամեն տեղ և ամեն ճակատին վրա:

Վեց տարիներու հաղթանակներով գոտեպնդված՝ հառաջացիր անվարան ու հաստատակամ դեպի նոր հաղթանակներ, նոր նվաճումներ:

Անկցին Խ. Միության դեմ դավողները...:

Կեցցե նոյեմբերի 29-ը»:

Աթենքի և Պիրեայի հայ աշխատավորներն իրենց մասսայական ու կազմակերպված մասնակցությամբ «Կիվելն» թատրոնի բազմամարդ միտինգին՝ շառաչուն ապտակ հասցրին հակասովետական ուժերին և ամբողջ հույն ժողովրդի առաջ ցուցադրեցին իրենց անսահման նվիրվածությունը սովետական հայրենիքին:

Հրապարակային այդ հանդիսավոր ժողովին մասնակցեցին հայկական գաղութի ղեկավարությունը, ՀՕԿ-երի կենտրոնական, շրջանային և արվարձանային վարչական ու շարքային անդամները, թաղական խորհուրդների, Պետական կարմիր խաչի, հայրենակցական միությունների ու դեմոկրատական այլ կազմակերպությունների և երիտասարդական միությունների անդամները, որոնց մեծամասնությունը բանվորներ և արհեստավորներ էին: Օրվա նշանակության մասին ճառերով

Հանդես եկան Սովետական Միության բարեկամ մամուլի կողմից Վահան Ջեյթունցյանը, Հունաստանում Սովետական Միության առաջին դեսպան Ա. Ուսաինովը, Հունաստանի կոմպարտիայի ներկայացուցիչ Պետրոս Պիկրոսը և ուրիշներ։

Կոմունիստ և հնչակյան բանվորների եռանդուն գործունեությունն ու նրանց համատեղ կազմակերպված ելույթը վիժեցրեց դաշնակների ամեն մի ոտնձգություն։ Տոնակատարությունը վերածվեց ժողովրդական հուժկու ցույցի դաշնակցության դեմ՝ Սովետական Միության և Սովետական Հայաստանի պաշտպանության նշանաբանի տակ։

1926 թ. դեկտեմբերի 5-ին, Սալոնիկի «Ատտիկոն» թատրոնի սրահում, ավելի քան հազար հայ աշխատավորների լայն մասնակցությամբ տոնվեց հայ ժողովրդի վերածննդի տարեդարձը։ Հանդիսավոր նիստը բացվեց «Ինտերնացիոնալի» հնչյունների տակ։ Նիստի նախագահ կոմունիստ Անթուան Միքայելյանի առաջարկությամբ բոլոր ներկաները հոտընկայս հարգեցին Լենինականի երկրաշարժի զոհերի, ինչպես և Կրասինի հիշատակը, որ վախճանվել էր այդ ժամանակ։ Նախագահի ելույթից հետո ողջույնի բոցավառ ճառով հանդես եկավ Սալոնիկի կոմունիստական կազմակերպության ներկայացուցիչ ընկ. Կամոնասը, որի ելույթը ներկաները դիմավորեցին երկարատև ծափահարություններով։ Այնուհետև ելույթ ունեցավ Սալոնիկի հայկական կոմունիստական ֆրակցիայի ղեկավարներից ընկ. Ստեփան Կուրտիկյանը։ Հռետորը մերկացնելով դաշնակների հակաժողովրդական քաղաքականության էությունը, նրանց ազդակործան գործունեությունը՝ մասնավորապես իրենց անփառունակ տիրապետության տարիներին, վեր հանեց Սովետական Հայաստանի վեց տարվա նվաճումները սոցիալիզմի կառուցման բնագավառում։

Այնուհետև, բուռն ծափահարությունների ու օվացիաների տակ, բեմ բարձրացավ Սալոնիկի Բանվորական կենտրոնի ներկայացուցիչը, որը կոչ արեց բոլոր հայ բանվորներին՝ կանգնել Հունաստանի բանվորական կազմակերպությունների կողքին, դասակարգային մարտերում ամրացնելով իրենց ինտերնացիոնալ կապերը Հունաստանի բանվոր դասակարգի

«Աշխատանք» թերթի ցրիչ Գեորգ Տրիբունյանը
(Տրիբուն)

հետ։ Կոմունիստ Պետրոս Ախիկյանի և Հակոբ Կետիքյանի ելույթներից հետո եղան մի շարք ուսուցչական արտասանություններ՝ «Աշխատանք» թերթի գրաշար և ակտիվ տարածող կոմերիտական Գեորգ Տրիբունյանի, Գ. Ասլանյանի[10] և այլոց

[10] *Գ. Տրիբունյանը (Տրիբուն) այժմ աշխատում է «Սովետական Հայաստան» թերթի խմբագրությունում որպես թղթակիր, իսկ Գուրգեն (Հենրի) Ասլանյանը՝ Երևանի երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում որպես արտիստ։*

կողմից, որոնք մեծ ոգևորություն առաջացրին ներկաների մեջ։ Միտինգը միահամուռ ընդունած բանաձևում ողջունելով Հայաստանում սովետական կարգերի հաստատման 6-րդ տարեդարձը, դատապարտեց դաշնակցության հակաժողովրդական գործունեությունը, պարտիա, որ «տակավին կշարունակե նյութել Հայաստանի բանվորա-գյուղացիության դեմ»[11]։

Հոկտեմբերյան ռևոլյուցիայի 9-րդ և Հայաստանում սովետական կարգերի հաստատման 6-րդ տարեդարձի առթիվ Սալոնիկի հայկական կոմունիստական ֆրակցիան հրատարակեց մի շարք թռուցիկներ և հատուկ բրոշյուրներ՝ «Նոյեմբեր 7—29» խորագրով, որոնք տարածվեցին ամբողջ հունահայ գաղութում։

Ամենուրեք ուժեղանում էր դեմոկրատական կազմակերպությունների գործունեությունը, ամրապնդվում էր հակադաշնակ ուժերի միասնությունը։

Ժողովրդային միության գործադիր կոմիտեն 1926 թ. սեպտեմբերի 27-ին հատուկ կոչով դիմեց Սալոնիկի հայ աշխատավորներին, հրավիրելով նրանց հավաքվելու բողոքի խաղաղ միտինգի Աստվածածնի եկեղեցում։ Բողոքի միտինգն ուղղված էր դաշնակների և Սալոնիկի Առաջնորդարանի «անպատասխանատու մարդկանց հակասահմանադրական և հակաժողովրդական արարքներուն դեմ» և պահանջելու էր «ազատ քվեարկություն՝ մասնակցությամբ անխտիր բոլոր հայերու»[12]։

Այս պահանջը լիովին ներդաշնակում էր պանկալոսյան դիկտատուրայի անկումից հետո ժողովրդական ազատությունների վերականգնման մասին հունական դեմոկրատիայի լո-

---

[11] Տես «Աշխատանք», 1926, № 37։ Այս բանաձևի պատճենն ուղարկվեց Սովետական Հայաստանի կառավարությանը, Աթենքում ՍՍՌՄ դեսպանությանը և Հունաստանի կոմպարտիայի օրգան «Ռիզոսպաստիսին»։ Սալոնիկում կոմունիստական պարտիայի հրեական հատվածի օրգան «Ավանտիս» թերթն իր սյունակները տրամադրեց առնակատարության նկարագրությանը։ «Ռիզոսպաստիս»-ը 1926 թ. դեկտեմբերի 7-ին նույնպես տպագրեց իր թղթակցի հաղորդումը այդ միտինգի մասին։

[12] «Աշխատանք», 1926, 17։

Կ Ո Չ

ՍԵԼԱՆԻԿԻ ՀԱՑ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

[illegible]

ՈՒՍՏԻ.

[illegible]

ԱՉԱՏ ՓՈՒԷՍՐԿՈՒՐՔԻՆ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ ԱՆԽՏԻՄ ԲՈԼՈՐ ՀԱՅԵՐՈՒ

[illegible]

ՄԱՇՏԱՆՈՐ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՄԲ

ՆԻՐՈՒԴ ԶՈՐԱԲԱՆԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

ԶՕՐ ՕԹՀՈՆԷՍԻՆ

[illegible]

Սալոնիկի ժողովրդային միության Գործադիր մարմնի նուագարակած կոչը

ղունդներին և ելնում էր հայկական գաղութում ազգային ընտրության օրգաններ ստեղծելու անհրաժեշտությունից։

Դեմոկրատական ազատությունների համար մղվող պայքարը դրսևորվում էր խաղաղ միտինգների, բողոքի ցույցերի մեջ։ Սակայն միշտ չէ, որ այդ միտինգները հաջողությամբ էին

պակվում։ Վերոհիշյալ միտինգը, օրինակ, որի համար հատուկ արտոնություն էր ստացել հունական 3-րդ զորաբանակի հրամանատար Օթհոնեոսից, հանդիպեց դաշնակ պրովոկատորների մեքենայություններին։ Դաշնակներն օգտագործելով ոստիկանական օրգանների հետ ունեցած իրենց կապերը, վերջին պահին կարողացան արգելել տալ սեպտեմբերի 28-ի համար նշանակված միտինգը։ Սակայն Սալոնիկի հայ աշխատավորները, հակառակ ոստիկանական արգելքին, մասսայորեն հավաքվեցին Առաջնորդարանի բակում և իրենց վճռական բողոքն արտահայտեցին դաշնակ-կղերական խմբակի ապօրինությունների դեմ։ Ոստիկանության հովանավորությունից օգտվելով, դաշնակ տեռորիստները մահակներով ու երկաթե գավազաններով զինված՝ հարձակում գործեցին հավաքվածների վրա, որոնք պատասխանեցին վճռական հակահարվածով։ Մասսայի ցասումը դաշնակ ահաբեկիչների դեմ այնքան ուժեղ էր, որ արյունալի ընդհարման պահին ներկա գտնվող ոստիկանությունն իսկ չկարողացավ փրկել դաշնակ գոչիներին բանվորների ոտքերի ու բռունցքների տակից։ Այստեղ դարձյալ դրսևորվեց իրենց քաղաքական իրավունքները պաշտպանելու՝ հայ աշխատավորների վճռականությունն ու մարտունակությունը[13]։

Հետագայում պարզվեց, որ դաշնակները, հավատարիմ իրենց տեռորիստական գործելակերպին, այդ պրովոկացիոն հարձակումը նախօրոք էին կազմակերպել։ Ինչպես վկայում է «Աշխատանք» թերթը, նրանք Առաջնորդարանի սենյակներում օր առաջ կենտրոնացրել էին «ատրճանակներ, սուրեր, սուփաններ և երկաթե գավազաններ»[14]։

---

[13] Դաշնակների ահաբեկչական գործունեությունը ցիմագրավելու և խափանելու նպատակով հետագայում հունական հակաֆաշիստական խմբերի օրինակով հունահայ գաղութի տարբեր կենտրոններում նույնպես կազմակերպվել էին հակադաշնակ մարտական խմբեր, որոնց հատուկ խնդիրն էր մասսայական միտինգները, ցույցերը, հանդիսները պաշտպանել դաշնակների ոտնձգություններից և պրովոկացիոն հարձակումներից։ Այդ խմբերի աչքի ընկնող մարտիկներից էին, օրինակ, Պիրեայից՝ Հակոբ Չելիբյանը, Դավիթ Բուզարյանը, Կյուլբենկ Քեշիշյանը և շատ ուրիշներ։

[14] «Աշխատանք», 1926, № 18։

Ազգային ինքնավարության օրգանների ստեղծման գործում ընտրական պայքարի միջոցով հաղթելու ամեն մի հնարավորությունից զրկված և ժողովրդի կողմից անարգանքի սյունին գամված դաշնակները սկսեցին ոստիկանական օրգաններին մատնել հունահայ աշխատավորության մարտական ղեկավարներին, նույնիսկ սեռորի դիմեցին նրանց դեմ։ Նման «գործունեության» առաջին զոհը դարձավ Սալոնիկի ՀՕԿ-ի և ժողովրդային միության կենտրոնական վարչության ակտիվ անդամներից Պետրոս Ադամյանը, որին սպանեցին դաշնակները 1926 թ. նոյեմբերի 4-ի երեկոյան, Պեշ-Ջինարի մութ փողոցներից մեկում, դաշույնի 7 մահացու հարվածներ հասցրնելով նրա գլխին։

Պ. Ադամյանի սպանության լուրը կայծակի արագությամբ տարածվեց հայաշատ բոլոր գաղթակայաններում և ժողովրդական զայրույթի բուռն հուզումներ առաջացրեց հայ և հույն աշխատավորության մեջ։ Հետևյալ օրը, Ժողովրդային միության կենտրոնական վարչության հրապարակած հայտարարության մեջ շեշտվում էր, թե դաշնակ բանդիտների խմբակը «երբեք չփորձեն կարծել, թե նման բռնություններով և ոճրագործություններով կարելի է խեղդել ժողովրդի մը բողոքի արդար ձայնը և խուսափել հանրային դատաստանեն. մոռ է այն օրը, որ անոնք այս բոլոր ոճրագործություններուն և անվերջ շահագործումներուն հաշիվը պիտի տան և իրենց արժանի պատիժը պիտի կրեն գամվելով անարգանքի սյունին»[15]։

ՀՕԿ-ի և Ժողովրդային միության կենտրոնական վարչությունները հատուկ կոչեր հրատարակեցին, հրավիրելով Սալոնիկի հայ աշխատավորությանը մասսայորեն մասնակցելու Պետրոս Ադամյանի հուղարկավորությանը, որ տեղի ունեցավ նոյեմբերի 6-ին։ Կոմունիստների և դեմոկրատների սերտ համագործակցության շնորհիվ, այդ հուղարկավորությունը վերածվեց ժողովրդական հուժկու ցույցի դաշնակցության դեմ և անցավ հայանուն ֆաշիստների ահաբեկչական գործունեության վնասազերծման և Սովետական Հայաստանի բարեկամ կազմակերպությունների հետագա ամրապնդման նշանաբան-

[15] Տե՛ս «Նոր Ալիք», 1926, № 849։

ների տակ։ Բազմաթիվ ծաղկեպսակներով զարդարված սգո թափորին հետևում էին հարյուրավոր հայ և հույն աշխատավորներ, «Աշխատանք» և «Նոր Ալիք» թերթերի խմբագրական կազմերը, ՀՕԿ-ի, Ժողովրդային միության, հայրենակցական միությունների, որբերի միության և այլ դեմոկրատական կազմակերպությունների անդամները, քաղաքական տարբեր հոսանքներին պատկանող աշխատավորներ՝ կոմունիստներ, հնչակյաններ, ռամկավար-ազատականներ։ Գերեզմանատան մեջ մի շարք դեմոկրատական կազմակերպությունների ներկայացուցիչների ելույթներից հետո դամբանական ճառով հանդես եկավ կոմունիստ Պետրոս Ախիկյանը, որն ասաց. «Մենք գիտենք, թե ովքեր են Պ. Ադամյանին սպանողները, գիտենք թե դաշնակցության արյունոտ քաղաքականությունն է, որ իր կարմիր գիծը կերկարև Լիոնեն մինչև Բեյրութ, Բեյրութեն Աթենք և Սեկանիկ։ ... Դաշնակցությունը սպանեց դաշույնի և բիրի հարվածների տակ ընդդիմադիր մը ևս, որը քաջություն ունեցած էր բողոքելու և ծառանալու իրենց ճիվաղային արարքներուն դեմ։ Ոճիր մը ևս կարձանագրվի դաշնակցության արյունոտ հուշագրին մեջ։ Բայց թող լավ գիտնա սճրագործներու դաշնակցությունը, թե տառապանքի և թշվառության մեջ ապրող գաղթականությունը, որ շնորհիվ նույն կուսակցության վարած քաղաքականությանը միլիոն զոհեր տվավ անցյալին մեջ, այսօր ավելի խորացած շարքերով պիտի ճակատի իր թշվառության միակ պատասխանատու դաշնակցության դեմ»[16]։

Ազգային օրինավոր իշխանություն ստեղծելու համար տարված պայքարը դրականապես նպաստեց հունահայ աշխատավորների քաղաքական գիտակցության աճին և դաշնակիզերական տարրերի քաղաքական մեկուսացմանը։ Սակայն նախորդող ժամանակաշրջանում չհասցրեց այդպիսի իշխանության կազմությանը Մակեդոնիայում, քանի որ հունական ռեակցիան այդ շրջանում փաստորեն հովանավորեց ապօրինի ազգային մարմինները, ընտրություններին թույլ տալով միայն հունահպատակներին։ Հին Հունաստանի և կղզիների շրջանում

[16] Տե՛ս «Աշխատանք», 1926, № 29։

ևս ուժեղացավ ռեակցիայի ճնշումը։ Պատգամավորական ժողովի երկրորդ նստաշրջանի բացումը, որ տեղի ունեցավ 1927 թ. ապրիլին, դեմոկրատական հասարակայնության կողմից ողջունվում էր մեծ լարվածությամբ։ Աշխատավորական լայն խավերը հուսով էին, որ նորընտիր Ազգային կենտրոնական վարչությունը նորից կկազմվի առաջադիմական տարրերից, որը հենվելով ժողովրդի և Պատգամավորական ժողովի դեմոկրատական մեծամասնության վրա, ձեռնհասորեն կվարի գաղութի ներքին գործերը և կապահովի նրա խաղաղ կյանքը։ Սակայն այս հույսերը չիրականացան գլխավորապես այն պատճառով, որ ռամկավար ջոջերը և աջ հնչակյան լիդերները խախտեցին հակադաշնակ միասնական ճակատի սկզբունքները, և ֆաշիստական տեռորի ուժեղացման պայմաններում իրենց քաղաքական վարքագծում շրջադարձ կատարեցին դեպի ռեակցիան։

Հունաստանի ռամկավարները Պատգամավորական ժողովի նախօրյակին գրավոր համաձայնագիր ստորագրեցին դաշնակների հետ «համերաշխարար» Ազգային կենտրոնական վարչություն կազմելու մասին։ Դա Հունաստանի ռամկավարների քաղաքական անկման ցուցանիշն էր և դավաճանություն ժողովրդական շահերին, մի բան, որ բուռն բողոքներ առաջ բերեց աշխատավորական մասսաների և նույնիսկ այդ պարտիայի հետևորդների մեջ։

Ազգայնական պարտիաների միջև վերջնական համաձայնության հասնելու նպատակով, հետաձգվել էին Պատգամավորական ժողովի նիստերը և բանակցությունները շարունակվում էին կուլիսների ետևում։ Այդ բանակցություններին մասնակցում էին նաև աջ հնչակյան մի քանի ազդայնամոլ տարրեր, որոնք ամեն ջանք գործադրեցին այդ բլոկի մեջ մտնելու և «համերաշխություն» կատարյալ դարձնելու համար։ Սակայն ձախերը և մանավանդ բայնվոր հնչակյանները կարողացան պարտադրել իրենց կամքը աջ լիդերներին, և հնչակյան պարտիայի Հունաստանի մասնաճյուղը հետու պահեցին այդ ռեակցիոն բլոկին մասնակցելու անպատվաբեր հեռանկարից։

«Այսօր փաստացիորեն կգտնվենք դաշնակ-ռամկավար բլոկի մը առջև, ուղղված հայ աշխատավոր գաղթականության ու խորհրդային հայրենիքի դեմ,— գրում էր «Երևան» թերթի Աթենքի թղթակիցը 1927 թ. հուլիսի 1-ին։ Ռամկավարները, որոնք անցյալ տարի մաս կկազմեին հակադաշնակցական բլոկին, այժմ անոր գավառանեցին և այս ամենը թայֆայական ու անհատական հաշիվներեն առաջնորդված։ Հնչակյանները թեև համաձայնեցան «չեզոք» վարչություն կազմելու, սակայն ձախ հոսանքի ճնշման տակ միջկուսակցական ժողովին մեջ իրենց երկու ներկայացուցիչները վճռական կերպով դեմ կեցան մնայուն բլոկի կազմության»[17]։ Այսպես, ռամկավար ջոջերն ու աջ հնչակյանները տուրք տալով հակակոմունիստական տրամադրություններին, դաշնակներին նորից ներգրավեցին ազգային ղեկավար մարմիններում, և «համերաշխության» նշանաբանի տակ բռնատիրական վիճակ ստեղծեցին հունահայ գաղութում։ 1927 թ. հունիսի 26-ի պատգամավորական ժողովի վերջին նիստում ընտրված Ազգային նոր կենտրոնական վարչությունը իսկական չարիք դարձավ հունահայ աշխատավորության համար, որի դեմ նա երկարամյա կազմակերպված պայքարի դուրս եկավ կոմունիստների ղեկավարությամբ։

Քաջալերվելով քաղաքական ուժերի նոր տեղաշարժերից, արկածախնդիր գեներալ Թորգոմը Պատգամավորական ժողովում առաջարկ մտցրեց՝ դատապարտել հունահայ կոմունիստների գործունեությունը։ Այդ առաջարկը, թեև անհետևանք մնաց, սակայն հատկանշական էր այն տեսակետից, որ հայկական ռեակցիան ևս բարձրացնում էր իր գլուխը, թևավորված կոմունիստների և դեմոկրատական ուժերի դեմ հունական իշխանությունների գործադրած դաժանություններից և ազգայնական պարտիաների «համերաշխության» քաղաքականությունից, որ ներդաշնակում էր հունական ռեակցիայի քաղաքականությանը։ Անդրկուլիսային բանակցությունները Աթենքի Պատգամավորական ժողովը հասցրին քաղաքական

[17] Տե՛ս «Երևան», Փարիզ, 1927, № 261։

լիակատար սնանկացման եզրին: Նա չէր արտացոլում այլևս Հունահայ գաղութի բաղաքական ուժերի իսկական հարաբերակցությունը: Կոմունիստները խիստ քննադատության ենթարկելով և մերկացնելով ռամկավարների ու աջ հնչակյան լիդերների անհեռատեսական բաղաքականությունը, գլխավորում էին աշխատավորական մասսաների պայքարը հանուն ազգային ընտրական նոր օրգանների ստեղծման, որոնք ամբողջապես հենված լինեին ժողովրդի վստահության վրա և կարողանային պաշտպանել նրա կենսական շահերը:

Հունահայ կոմունիստները դաշնակ-ռամկավար բլոկին հակադրեցին Սովետական Հայաստանին համակիր հասարակական բոլոր կազմակերպությունների և աշխատավորական լայն խավերի միասնական ճակատը: Բուրժուական նացիոնալիզմի դեմ մղվող ճակատամարտ պայքարում, որ հանդիսանում էր հույն ժողովրդի հակաֆաշիստական պայքարի անբաժան մասը, կոմունիստները ձեռք բերին աչքի ընկնող հաջողություններ հետագա ժամանակաշրջանում:

ՀՕԿ-ԵՐԸ ՎԵՐԵԼՔԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Հակաժաշնակ դեմոկրատական շարժումը նոր աշխուժություն ապրեց հունահայ գաղութում՝ Լենինականում երկրաշարժից առաջացած մասսայական կատաստրոֆի ժամանակաշրջանում: Սովետական Միության կառավարությունն և եղբայրական բոլոր ռեսպուբլիկաների անշահախնդիր օժանդակությանը միացավ ամբողջ հայ աշխատավորությունն, այդ թվում նաև հունահայ աշխատավորների համեստ լուման, նպաստելով ավերված քաղաքի ուրաղ վերականգնմանն ու նոր, ավելի ևս գեղեցիկ, սոցիալիստական Լենինականի կառուցմանը: Հայաշատ բոլոր գաղթավայրերում կոմունիստների գլխավորությամբ կազմակերպվեց առաջացածներին եղբայրական օգնություն ցույց տալու գործը: Սկսվեց մասսայական հանգանակությունների հավաքումը, որն անմիջականորեն իրականացնում էր ՀՕԿ-ի Կենտրոնական

վարչության նախաձեռնությամբ Ամերիկում տեղի ունեցած քաղաքական բոլոր հոսանքների ներկայացուցիչների խորհրդակցական ժողովում ընտրված միասնական հանձնաժողովը։ Սակայն Սալոնիկի ռամկավարները, որոնք իրենց ձեռքումն էին պահում Բարեգործական միության մասնաճյուղը, ելնելով իրենց պարտիական նեղ նկատառումներից, հրաժարվեցին ՀՕԿ-ի մասնաճյուղի հետ համագործակցելուց և սկսեցին հանդանակություն կազմակերպել անջատաբար[18]։ Կոմունիստները քննադատելով այդ անջատողական քայլը, շեշտում էին, որ «բոլոր հոսանքներն ու միությունները անխտիր պետք է հավաքվեն ՀՕԿ-երու հակակշռին տակ կազմվելիք հանձնախումբերուն մեջ»[19]։

Դիմակալեր անելով հանդանակություններին մասնակցելու միջոցով իրենց խարխլված քաղաքական ազդեցությունը վերականգնելու դաշնակների փորձերը, կոմունիստները սուր քննադատության էին ենթարկում նաև ռամկավարներին, որոնք գործնականում հրաժարվում էին իրենց ազդեցության տակ գտնվող Բարեգործական միության հարուստ միջոցներից զգալի որևէ օգնություն ցուցաբերել անգամ երկրաշարժից տուժածներին և Լենինականի վերաշինության գործին, մի բան, որ պահանջում էին հայ աշխատավորները, նման հնարավոր քայլը դիտելով որպես ռամկավարների անկեղծ հայրենասիրության ցուցանիշ։ Կոմունիստները կոչում էին հունահայ բանվորությանը՝ լինել ժողովրդական այս շարժման առաջապահ ջոկատը իրենց տուժած սովետական եղբայրներին անշահախնդիր օգնություն ցուցաբերելու գործում։

«Հունահայ աշխատավորությունը պետք է շարժվի, պետք է Լենինականի իր ազնտյալ եղբայրներուն օգնության ձեռնարկին մեջ առաջապահ դերը կատարե,— գրում էր «Աշխատանքը»,— այդպիսով թե իր բանվորի մարդու պարտականությունը կատարելու և թե միևնույն ժամանակ արժանի հարված մը տալու բոլոր այն փարիսեցիներուն և կեղծ հայրենասիրներուն,

---

[18] Տե՛ս ՀՍՍՌ ՀՌՇ ԿՊԱ, Ֆ. 178, ց. 1, գ. 443, էջ 8։

[19] «Աշխատանք», 1926, № 28։

որոնք օր ցերեկով կհանդգնին Լենինականի փլատակներուն տակ մնացած իր ընկերակիցներու դիակները շահագործել կուսակցական և թայֆայական նկատառումներու ի հաշիվ»[20]։

Լենինականի աղետյալներին օգնելու խնդիրը դուրս գալով հունահայ գաղութի շրջանակներից, դարձավ նաև Հունաստանի ուսուցչուհիների բանվոր դասակարգի և Սովետական Միության բոլոր բարեկամների ընդհանուր գործը։ Կոմունիստական պարտիայի Կենտրոնական կոմիտեն հրահանգեց իր բոլոր կազմակերպություններին՝ ակտիվ աջակցություն ցույց տալ հույն աշխատավորության մեջ հանգանակությունների կազմակերպման գործին։

«Սալոնիկի Կոմունիստ կուսակցությունը,— գրում էր այդ օրերին «Աշխատանք» թերթը,— նամակով մը մեզի կտեղեկացնե, թե Լենինականի աղետյալներուն օգնելու նպատակով Նոր Հունաստանի բանվորության կողմե սկսվելիք շարժումին պիտի մասնակցի նաև Մակեդոնիո և Թրակիո ամբողջ հույն պրոլետարիատը»[21]։

Եվ, իրոք, Լենինականին օգնելու նշանաբանի տակ սկսված այս շարժումն իր սկզբնական իսկ շրջանից ընդունելով համաժողովրդական, ինտերնացիոնալ բնույթ, վերածվեց հայ և հույն պրոլետարիատի եղբայրական կապերի ամրապնդման ցույցի Հունաստանի բոլոր հայաշատ շրջաններում։ Հանգանակությանը մասնակցեցին հայ համայնքի սոցիալական համարյա բոլոր խավերը և հասարակական կազմակերպությունները։ Մի շարք հայրենակցական միություններ, ինչպես, օրինակ, Քեմաթի հայրենակցական միությունը, իր գանձարկղում պատրաստի ամբողջ գումարը (105 անգլիական ոսկի) տրամադրեց Լենինականի օգնության ֆոնդին[22]։ Նույն օրինակին հետևեցին Դարանաղյաց հայրենակցական միությունը և ուրիշ կազմակերպություններ[23]։ Նույնիսկ հայ ազգային վարժարանների և ուրիշ դպրոցների աշակերտությունը ակտիվ

---

20 «Աշխատանք», 1926, № 34։

21 «Աշխատանք», 1926, № 34։

22 ՏԵ՛ս ՀՍՍՌ ՀՌՍՇ ԿՊԱ, Ֆ. 178, ց. 1, գ. 433, էջ 22։

23 «Աշխատանք», 1926, № 35։

մասնակցություն էր բերում։ Դեղձ-Ագաճի ազգային վարժարանի աշակերտները, օրինակ, կատարելով անձնական գանձատուփերը և իրենց աշակերտական խնայողությունները նվիրաբերելով նույն ֆոնդին, հատուկ կոչով դիմեցին գաղութի բոլոր ազգայիններին՝ հետևելու իրենց օրինակին։ Այս կոչը լայն արձագանք էր գտել նաև Աթենքի, Պիրեայի, Սալոնիկի և ուրիշ քաղաքների աշակերտության մեջ։ Միայն Աթենքի շրջանում հանգանակվել էր 136.985 դրախմ 60 լեպտա[24], իսկ Սալոնիկում՝ 100.000 դրախմ[25]։

«...Հանգանակած գումարը մեծ չէ,— գրում էր ՀՕԿ-ի Հին Հունաստանի կենտրոնական վարչությունն իր 1927 թ. սեպտեմբերի 24-ի № 333 նամակում, որ ուղղված էր Երևանի ՀՕԿ-ի Գլխավոր վարչությանը, սակայն եթե նկատի ունենանք այն դժնդակ կացությունը, որում մեջ կգտնվի գաղթականությունը ներկայիս գործերու կայունության (այսինքն՝ ճգնաժամային դրության - Պ. Կ.), աշխատանքի չգոյության պատճառով, այն ատեն իր կարևորությունը կունենա զոնե բարոյական տեսակետով գաղութին ըրած այս նվիրատվությունը»[26]։

Դեղձ-Ագաճի ՀՕԿ-ի վարչությունը 1927 թ. հունվարի 7-ի իր նամակում, որ հասցեագրված է Շիրակի ազգայինների օգնության Արտակարգ հանձնաժողովի նախագահ Ա. Երզնկյանին, նույնպես շեշտում էր, թե Դեղձ-Ագաճի հայ աշխատավորությունը «մարդկային ու նյութական պարտավորություններն մղված՝ ջանադիր եղավ բերել իր բաժինը ազգայինների օգնության գործին, որուն համար ձեռնարկեց քաղաքիս Հայաստանի համակիր ժողովուրդի մասնակցությունով հանգանակություն մը։ Արդյունքը 35 անգլիական ոսկի չեք մը՝ ներփակյալ կգտնեք արդեն։ Անշուշտ չնչին է գումարը, բայց նկատի ունենալով ընդհանրապես հանգանակությանը մասնակցող անհատներու նյութական համեստ դրությունը, բավարարված կզգանք որոշ չափով։ Իսկ ավելի դեղեցիկ պա-

---

[24] ՀՍՍՌ ՀԱՍՀ ԿՊԱ, Ֆ. 178, ց. 1, գ. 433, էջ 39։

[25] Նույն տեղում, էջ 22։

[26] ՀՍՍՌ ՀԱՍՀ, ԿՊԱ, Ֆ. 178, ց. 1, գ. 433, էջ 22։

բաղա մ՝ ալ, բարոյական տեսակետով, այն է, որ այս աղքատիկ զաղութը այս առթիվ կարտահայտեր հայրենիքի հանդեպ իր սիրույն և անոր վարիչներուն հանդեպ իր վստահության հավատիքը»[27]։

Երևանի ՀԿ-ի Գլխավոր վարչությունը բարձր գնահատեց Հունաստանի ՀԿ-ի կազմակերպությունների գլխավորած մասսայական հայրենասիրական շարժումը։ Այդ շարժման ընթացքում հունահայ կոմունիստները ուժեղացրին իրենց քաղաքական ազդեցությունը և կենտրոնացրին իրենց ամբողջ ուշադրությունը մասսայական դեմոկրատական կազմակերպություններում տարվող աշխատանքների վրա։ Հայաստանի սոցիալիստական շինարարությանը սատարելու գաղափարը նպաստեց ՀԿ-ի կազմակերպությունների շարքերում կոմունիստների և դեմոկրատական տարրերի համագործակցությանը։ Սակայն ռամկավարները և աջ հնչակյանները փորձում էին սահմանափակել ՀԿ-ի կազմակերպությունների գործունեությունը ներգաղթին աջակցելու և ժամանակ առ ժամանակ առանձին միջոցառումներ անցկացնելու շրջանակներում։ Այս հանգամանքը ժամանակին նկատվել էր նաև ՀԿ-ի գլխավոր վարչության կողմից, որն իր 1926 թ. օգոստոսի 19-ի № 308 նամակով, որ հասցեագրված էր ՀԿ-ի Հին Հունաստանի Կենտրոնական վարչությանը, շեշտում էր, թե ՀԿ-ի կազմակերպությունների գործունեությունը «թուլացել է և ծավալման ու ամրապնդման նախկին տեմպը չունի։ Այս հանգամանքը պետք է բացատրել նրանով,— ասված է նամակում,— որ ՀԿ-ի կազմակերպությունները Հունաստանում ՀԿ-ի դերը բացառապես կապած են գաղթականության տեղափոխության հարցի հետ»[28]։

Կոմունիստները հավատարիմ մնալով հունահայ գաղութի բոլոր դեմոկրատական ուժերի միասնության գաղափարին, պանկալոսյան դիկտատուրայի անկումից անմիջապես հետո բարձրացրին ՀԿ-երի վերակազմության հարցը՝ պահանջելով ՀԿ-ի ղեկավար օրգաններում համարձակորեն առաջ քաշել

---

[27] Նույն տեղում, էջ 11։

[28] ՀՍՍՌ ՀԱՍՀ ԿՊԱ, Ֆ. 178, ց. 1, գ. 400, էջ 69։

բանվորական և աշխատավորական տարրերին, «որոնք ավելի խորապես կհավատան գործին նվիրականության»[29]։

ՀՕԿ-երը ոչ թե ներդաղթի խողովակներ էին, այլ սփյուռքահայության դեմոկրատական, հակադաշնակ մնայուն մասնայական կազմակերպություններ, որոնք ամուր կապերով անվերապահորեն միացնում էին արտասահմանի հայ աշխատավորությունը սովետական հայրենիքի հետ։

«ՀՕԿ-երը սահմանված են,— գրում էին կոմունիստները,— ոչ թե միայն Խորհրդային Հայաստանի վերաշինության համար մի քանի հազար ֆրանկ հավաքելու,— ինչ որ էական է, այլ զանգվածահայությանը առաջնորդելու և զայն սերտորեն շաղկապելու Խորհրդային Հայաստանին»[30]։

ՀՕԿ-երի վերակազմության, դրանք իրենց կոչման բարձրության վրա դնելու հասունացած խնդիրները հրամայաբար առաջադրեցին-ՀՕԿ-ի պատգամավորական ժողով հրավիրելու պահանջը։ Եվ դա շուտով դարձավ օրակարգի հարց։ Հունահայ կոմունիստները բոլոր հայ աշխատավորների ուշադրությունը կենտրոնացնում էին ՀՕԿ-ի մասնաճյուղերի աշխատանքները աշխուժացնելու, դրանք իսկական մասնայական հակադաշնակ կազմակերպություններ դարձնելու խնդիրների շուրջը։ Անհրաժեշտ էր ծավալել ՀՕԿ-երի մշակութային-լուսավորական գործունեությունը, մասնաճյուղերը դարձնել կուլտուրայի կենտրոններ, հայաշատ բոլոր թաղամասերում կազմակերպել ակումբներ, որոնք և կոչված էին ապահովելու հրապարակային ժողովների, դասախոսությունների, հանդեսների, թատերական ներկայացումների իրականացումը, դաշտադնացությունների և կուլտուրական այլ միջոցառումների հաճախակի անցկացումը, մասնաճյուղերի բազմակողմանի գործունեության ծավալումը։

ՀՕԿ-ի պատգամավորական ժողովի քաղաքական գլխավոր խնդիրներից մեկն էր՝ որոշում ընդունել, և վճռականապես

---

[29] «Աշխատանք», 1926, № 9։

[30] Նույն տեղում, 1927, № 59։

պահանջել Հայ բարեգործական ընդհանուր միությունից արտասահմանյան բոլոր ազգային ֆոնդերը և հատկապես Մելքոնյան կտակը հանձնել Սովետական Հայաստանի կառավարությանը։ Այդ միջոցներով կարելի էր ոչ միայն արագացնել ներգաղթի կազմակերպման գործը, այլև նպաստել հայրենիքի վերաշինությանը, որը միակ ամուր հիմքն էր գաղթականական ընդհանուր հարցի լուծման համար։

Կոմունիստ ու հնչակյան բանվորները միասին էին ագիտացիոն աշխատանք տանում, միասին էին անցկացնում ժողովրդական հանրաբվեներ հայաշատ թաղամասերում, որոնք բաց նամակների ձևով և բազմաթիվ ստորագրություններով ուղարկվում էին ՀԲԸՄ նախագահ Պողոս Նուպարի անունով։ Այս նամակներից մեկում, օրինակ, Սինկրուի աշխատավորները գրում էին.

«Արդյոք մինչև ե՞րբ պիտի տևե մեր այս անտանելի կացությունը. Բարեգործականը պիտի չբարեհաճի՞ մեր ցավերուն դարման տանիլ և մեզ մեր մայր հայրենիքը փոխադրելու համար իր նյութական միջոցները տրամադրել։ Այսօր ամենքը համոզված են, որ գաղութահայությունը բոլորովին կորսվելու վտանգեն ազատելու միակ միջոցը՝ գաղթականները Հայաստանի մեջ ամփոփելուն մեջ կկայանա։

Ինչու՞ այս ուղղությամբ Բարեգործականը սերտորեն չաշխատի խորհրդային Հայաստանի ջանքերուն։ Ժողովուրդը Ձեզմե գործ կպահանջե։ Եթե Ձեր նախագահած Միության հսկա գումարները գաղթականներու վրա ծախսվեր, ներգաղթի հարցը մեծապես կդյուրանար։

Վիճուցս ենք, որ դուք նկատողության պիտի առնեք մեր այս նամակը և չպիտի ուզեք ամբողջ հայ ժողովուրդին առաջ պատասխանատու մնալ ապագային։ Շարժեցե՛ք, հարգելի նախագահ, շարժեցեք, վաղը արդեն շատ ուշ մնացած պիտի ըլլաք»[31]։

Հ. Բ. Ը.-ին ուղղված բողոքի նամակներով հանդես եկան նաև գաղութի բազմաթիվ միություններ։ Այսպես, օրինակ,

[31] Տե՛ս «Երևան», Փարիզ, 1926, № 84։

Աթենքի մի շարք դեմոկրատական կազմակերպություններ պահանջելով Բարեգործականի կտակները տրամադրել ներգաղթի կազմակերպման նպատակներին, իրենց համատեղ նամակներից մեկում գրում էին.

«Զենք ուզեր արտասահմանի մեջ հիվանդանոց, որբանոց, աշխատանոցներ ու անկելանոցներ։ ... Հայ ժողովուրդի շահերուն անհամապատասխան է գաղութներու մեջ պատկառելի գումարներով հաստատություններ հիմնել ու պահել, քանի ունենք Արարատի ստորոտը Խ. Հայաստանը և ուր պիտի բլլա անկասկած թափառական հայուն վերջին հանգրվանը. ինչու ուրեմն բախտին անողոք հարվածով գրված հայ ժողովրդի ստատնդական կյանքին վերջ չի տանք, երբ միջոցները չեն պակսիր այդ գոյավիճակեն փրկելու համար գինքը»[32]։

ՀՕԿ-ի Առաջին պատգամավորական ժողովը[33], որ տեղի ունեցավ Աթենքում, Հայ ակումբի սրահում, 1927 թ. մարտի 13-ից մինչև 23-ը, խոշոր իրադարձություն էր հունահայ գաղութի հասարակական կյանքում։ Այն նշանավորեց Սովետական Հայաստանի բարեկամ կազմակերպությունների կազմակերպական ու գաղափարական ամրապնդումը և հունահայ աշխատավորության բացարձակ մեծամասնության համախմբվածությունը սովետական հայրենիքի շուրջը։ Պատգա-

---

[32] Տե՛ս «Սուրիական Սամուր» ,1926, № 565։ Այս նամակը ստորագրել էին հետևյալ կազմակերպությունների և հայրենակցական միությունների Աթենքի մասնաճյուղերի դիվանները. 1) «Կամք» որբերի միության, 2) «Քրնար Թատերասիրաց», 3) «Նոր կայծ» երկսեռ երիտ. միության, 4) «Ժիրայր» Թատերախմբի, 5) Սիսի և Ֆենրեյի հայրենակցական միության, 6) Հաչբնի հայրենակցական միության կենտրոն. վարչության, 7) Ադանայի հայրենակցական միության, 8) Հայ գաղթականաց երիտասարդական միության, 9) Սերասաթայի հայրենակցական միության, 10) Տիգրանակերտի հայրենակցական միության, 11) Սերաստիս համայն գյուղացիական վերաշինության միության, 12) Շապին-Կարահիսարի և շրջանի հայրենակցական միության, 13) «Ռազմիկ» հայրենակցական միության։

[33] Պատգամավորական ժողովին վճռական ձայնով մասնակցում էին 23 պատգամավոր, որոնցից 13-ն ընտրված էին Նոր Հունաստանի, իսկ 10-ը՝ Հին Հունաստանի շրջաններից ու կղզիներից։ Բացակա էին վեց պատգամավոր։ Պատգամավորական ժողովի նախագահն էր ՀՕԿ-ի Կենտրոնական վարչության ատենապետ դոկտ. Տ. Էնֆիեջյանը։

մավորական ժողովը հոտընկայս հարգեց Ա. Մյասնիկյանի, Գ. Աթաբեկյանի և Սալոնիկում դաշնակ տեռորիստների կողմից սպանված՝ ՀՍԿ-ի աննկուն մարտիկ Պետրոս Ադամյանի հիշատակը։ Շնորհակալություն հայտնվեց հույն ժողովրդի եղբայրական վերաբերմունքի համար դեպի հայ աշխատավոր զանգվածները և ողջույնի հեռագրեր ուղարկվեցին ՀՍԿ-ի Երևանի և Փարիզի կենտրոնական վարչություններին։ Պատգամավորական ժողովը ամփոփեց Հունաստանի ՀՍԿ-ի կազմակերպությունների գործունեությունը 1924 թ. մինչև 1927 թ.[34] ընկած ժամանակաշրջանում և որոշում ընդունեց նրա հետագա խնդիրների մասին։

Պատգամավորական ժողովում բուռն ոգևորության պայմաններում ընթերցվեցին բազմաթիվ ողջույնի նամակներ, որոնք ստացվել էին «Կամք» որբերի միությունից, «Արամազդ» երիտասարդական միությունից, նորակազմ «Երևան» առաջադիմական միությունից, ինչպես նաև մի շարք հայրենակցական միություններից, Սինկրուի և Լիփազմայի բազական խորհուրդներից։ Ստացվել էր նաև հարյուրավոր ստորագրություններ կրող մի հանրագրություն, ուր պահանջվում էր Բարեգործականի կտակների հանձնումը Սովետական Հայաստանի կառավարությանը։ Հատկանշական էր, որ ՀՍԿ-ի գրեթե բոլոր մասնաճյուղերը մասնավոր լիազորություններ էին տվել իրենց ներկայացուցիչներին՝ Պատգամավորական ժողովում ակտիվ կերպով պաշտպանելու ժողովրդական այս պահանջը։

Արձագանքելով հունահայ աշխատավորության միահամուռ պահանջին, Պատգամավորական ժողովը Սալոնիկի

---

[34] 1924 թ. մինչև 1927 թ. փետրվարի վերջը ՀՍԿ-ի կազմակերպությունների ընդհանուր հասույթը հասել էր 527.678,60 դրախմ, որից 364.537.70 դրախմը ուղարկվել էր ՀՍԿ-ի Երևանի Գլխավոր վարչությանը։ Հունաստանի ՀՍԿ-ի կողմից նվիրաբերվել էր նաև երկու մանրադիտակ Երևանի պետական համալսարանին և հոգացվել էին մի խումբ որբերի Հայաստան փոխադրվելու ծախսերը հատուկ նվիրատվությունների կազմակերպման միջոցով, որոնք չեն մտնում այդ հաշվետու տվյալների մեջ (տես ՀՍՍՌ ՀՌՍՇ ՊԿԱ, Ֆ. 178, ց. 1, գ. 547, թ. 33—40)։

կոմունիստ պատգամավորի առաջարկությամբ հատուկ բանաձև ընդունեց, որով պահանջվում էր Հայ բարեգործական ընդհանուր միությունից՝ իր տրամադրության տակ գտնվող բոլոր կտակները և մասնավորապես Մելքոնյան նվիրատվությունը անհապաղ հանձնել իր օրինավոր տիրոջը՝ Սովետական Հայաստանի կառավարությանը[35]։ Այս բանաձևի դեմ քվեարկեց միայն մեկ պատգամավոր՝ Հ. Դարբինյանը, որ ռամկավարազատական պարտիայի Հունաստանի շրջանային վարչության անդամն էր։ Բացարձակ մեծամասնությամբ ընդունված այս որոշման հատուկ նշանակությունն այն էր, որ ուղղված էր առհասարակ Բարեգործական միության ղեկավարության դեմ, որը ձգտում էր հսկայական գումարների հասնող կտակներն ու նվիրատվությունները «սառեցնել» արտասահմանում՝ դրանք ռամկավարների պարտիական նեղ նկատառումներին ծառայեցնելու համար։

Նորընտիր Կենտրոնական վարչության կազմում ընտրվեց նաև կոմունիստ Սոֆի Մինասյանը, իսկ Սալոնիկի շրջանային վարչության կազմում՝ մի ուրիշ կոմունիստ։

---

35 «Ընդունված բանաձևում ասված է.

«1. Նկատի ունենալով, որ հունահայ գաղթականությունը տնտեսական ամենադժնդակ և անհանդուրժելի պայմաններու մեջ կը գտնվի և իր աչքերը հառած է դեպի Խ. Հայաստան,

2. Նկատի ունենալով, որ անոր համար փրկության տարբեր միջոցներ և ճանապարհներ չկան բացի ներգաղթեն,

3. Նկատի ունենալով, որ ներգաղթի ուշացումի միակ և բացարձակ արգելքը նյութականն է,

4. Նկատի ունենալով, որ արտասահմանի մեջ կը գտնվին գումարներ, կտակներու ձևին տակ, որոնք անգործածելի կմնան, երբ գաղթականական հոծ զանգվածներ կենաց և մահու պայքարը կմղեն և

5. Նկատի ունենալով, վերջապես, որ Մելքոնյան նվիրատվությունը չէ հանձնված մեր կառավարության և որ կրնա մեծ թվով գաղթականներու մուտքը ապահովել Խ. Հայաստանեն ներս,

ՀՕԿ-ի Հունաստանի պատգամավորական ժողովը, հանուն հունահայ գաղթականության, կոչ կրնե Հ. Բ. Ը. Մ. Գործադիր Կոմիտեին և կը պահանջե, որ իր տրամադրության տակ գտնված բոլոր կտակները և մասնավորապես Մելքոնյան նվիրատվությունը անհապաղ հանձնվի իր օրինավոր տիրոջ՝ խորհրդային Հայաստանի կառավարությանը։ Տես «Երևան», Փարիզ, 1927, № 218։

Պատգամավորական ժողովից հետո ՀՍԿ-ի շատ մասնաճյուղերում աշխատանքները բարելավվեցին։ Սակայն պայքարը կենտրոնական վարչությունում շարունակվեց նաև Առաջին պատգամավորական ժողովից հետո, երբ երկրի ընդհանուր ֆաշիզացման կապակցությամբ, ռամկավարներն ու հնչակյանները ՀՍԿ-ի կազմակերպությունները մատնեցին պասսիվության։ ՀՍԿ-ի Գլխավոր վարչությունը իր 1926 թ. նոյեմբերի 20-ի № 100 նամակում, որ հասցեագրված էր Հունաստանի ՀՍԿ-ի կենտրոնական վարչությանը, հարկադրված էր հատկապես շեշտելու, թե «մենք ավելին կսպասեինք ՀՍԿ-ի Հունաստանի մեր մասնաճյուղերի գործունեությունից»[36], քանի որ Հունաստանի ՀՍԿ-ի կազմակերպություններն իրենց մոտիկ անցյալում ունեին «բավական պատկառելի փորձի և եռանդուն գործունեության հարուստ շրջան»[37]։ Գլխավոր վարչությունը նշում էր, որ հենվելով ՀՍԿ-ի անցյալի խիզախ ելույթների և հակապաշտպան պայքարի տրադիցիաների վրա, անհրաժեշտ է վերակենդանացնել «անգործության ու անտարբերության մատնված մեր մասնաճյուղերը»[38] և օրինական հողի վրա մնալով՝ «պայքարել այն բոլոր մատնությունների ու դավադրությունների դեմ, որոնք տեղի ունեն դաշնակների կողմից» Սովետական Հայաստանին ցույց տրվող օգնություն իրականացնելու միակ մտադրությամբ։ «Երբեք թույլ չպետք է տալ,— այնուհետև ասված է նամակում,— որ խորհրդային Հայաստանի հակառակորդները դյուրին կերպով դիրքեր գրավեն իրենց հակախորհրդային, հակաժողովրդական գործունեության համար։ Չպետք է հեշտ կերպով զինաթափ լինել և դիրքերը նրանց թողնել, այլ պետք է բոլոր կարելի միջոցներով պայքարել՝ ՀՍԿ-ի իրավունքները ճանաչել տալու համար»[39]։

ՀՍԿ-ի Գլխավոր վարչության այս նամակը սթափեցնող ազդեցություն ունեցավ։ Գլխավոր վարչության առաջադրած

---

36 ՏԼ՝ ՀՍՍՌ ՀՊԱԿ, Ֆ. 178, ց. 1, գ. 454, էջ 53։

37 Նույն տեղում։

38 Նույն տեղում։

39 Նույն տեղում։

պատասխանատու խնդիրն իրականացնելու գործը վիճակվեց Հունահայ կոմունիստական խմբերին, որոնք դեմոկրատական տարրերի հետ միասին հետագայում գլխավորեցին մասսաների ինքնագործունեությունը, ՀՕԿ-երը հանելով հայրենասիրական-գործունեության լայն ճանապարհը։

ՊԱՅՔԱՐ ՌԵԱԿՑԻԱՅԻ ԴԵՄ. ՀԱՅ ԵՎ ՀՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ-ԿԱՊԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

Հունական պառլամենտի բնարությունների հետո 1926 թ. դեկտեմբերի սկզբներին կազմվեց կոալիցիոն բուրժուական կառավարություն, որը կնքեց մի շարք տնտեսական և ֆինանսական նոր պայմանագրեր իմպերիալիստական տերությունների հետ, որոնք ավելի ևս ուժեղացրին երկրի կախվածությունը օտարերկրյա կապիտալից։ Հունաստանն ամբողջությամբ ենթարկվեց միջազգային և հատկապես անգլիական իմպերիալիզմի ագրեսիվ քաղաքականության շահերին։ Սարսափելի այդ պայմանագրերի ամբողջ ծանրությունն ընկնում էր աշխատավորական մասսաների վրա։ Բավական է նշել, որ 1923 թ. մինչև 1927—1928 թթ. պետական հարկերն ավելացան 500 տոկոսով, որոնք խլում էին գյուղացիության ընդհանուր եկամուտների 40 տոկոսը։ Կապիտալիստները վճարում էին այդ հարկերի միայն 3,5 տոկոսը, գյուղացիները՝ 50 տոկոսը, քաղաքի ժողովրդական խավերը՝ 46,5 տոկոսը[40]։ Կոալիցիոն կառավարությունն իջեցնելով կապիտալիստների հարկերը 8 անգամ, կրկնապատկեց աշխատավոր ժողովրդի հարկային բեռը, նրան հասցնելով թշվառության եզրին։ Աշխատավարձի իջեցման և աշխատանքի ինտենսիվության բարձրացման հետևանքով բանվոր դասակարգի և գյուղացիության դրությունը ավելի ևս վատթարացավ։

Կոալիցիոն կառավարությունը ընդառաջելով կապիտալիստական տրեստների պահանջին, առաջին հերթին փորձեց աշնչացնել բանվոր դասակարգի առավել կազմակերպված

---

[40] «Ռիզոսպաստիս», 1927, № 300։

ջոկատի՝ ծխախոտագործ բանվորների որոշ արտոնությունները, որոնք երկարամյա պայքարի շնորհիվ գտնվում էին ավելի նպաստավոր պայմաններում, և հրաժարվեց ճանաչել նրանց արհմիությունը։ Կառավարության այս մարտահրավերին կազմակերպված կերպով պատասխանեցին ծխախոտագործ բանվորները, որոնք բոլոր քաղաքներում, հատկապես Մակեդոնիայում, մասսայական միտինգներ կազմակերպեցին ֆաշիստական միջոցառումների դեմ։

1926 թ. դեկտեմբերի 12-ին ամբողջ երկրում կազմակերպվեցին հակակառավարական բանվորական ցույցեր ու միտինգներ։ Հունահայ աշխատավորությանը ակտիվ համախմբման կոչելով Հունաստանի ռևոլյուցիոն բանվոր դասակարգի շուրջը, կոմունիստները բացատրում էին, որ միայն «ապագա բանվորա-գյուղացիական կառավարությունն է, որ պիտի փրկի Հունաստանի աշխատավորությունը, պիտի տա անոր կուլտուրական և տնտեսական զարգանալու միջոցներ, առաջնորդելով հույն պրոլետարիատը դեպի բարգավաճ սոցիալիստական ապագա»[41]։

Հունական բուրժուազիան շարունակում էր ակտիվացնել երկրի բոլոր ռեակցիոն ուժերը, արագացնելով նաև պետական ապարատի ֆաշիզացման պրոցեսը։

1927 թ. մարտի 21-ին, ռեակցիոն դեպուտատ Վ. Վոկոտոպուլոսը հունական պառլամենտի քննարկմանը մատրեց հակակոմունիստական օրինագիծ, որն արտակարգ լիազորություններ էր վերապահում ներքին գործերի մինիստրությանը, հատկապես օտարականների կողմից հրատարակվող բոլոր կոմունիստական թերթերի ու հանդեսների տարածումն արգելելու գործում՝ Հունաստանի ամբողջ տերիտորիայում[42]։ Միաժամանակ կառավարությունն ուժեղացրեց ռեպրեսիաները կոմունիստական պարտիայի դեմ և առաջ քաշեց Միացյալ ճակատի երկու կոմունիստ դեպուտատների՝ Ստավրիդիսի և Կիրիակոպուլոսի պառլամենտական անձեռնմխելիությունը վերացնելու պահանջը (1927 թ. մայիս), նրանց դատական

---

41 «Աշխատանք», 1926, № 40։

42 Օրինագծի նախագծի տեքստը տես «Ռիզոսպաստիս», 1927, № 245։

պատասխանատվության կանչելու համար։ Ֆաշիստական ռեակցիան ամենուրեք սկսեց բարձրացնել իր գլուխը։ Բարենպաստ իրադրություն էր ստեղծվել նաև դաշնակների տեռրեկչական ու լրտեսական գործունեության վերակենդանացման համար։ Այդ «գործունեությունը» ղեկավարելու նպատակով Ֆրանսիայից հատուկ առաքելությամբ 1926 թ. վերջերին Հունաստան էր եկել դաշնակցության Կենտրոնական կոմիտեի շրջիկ գործիչ Հ. Ամատունին, որի անվան հետ կապված է ոճրագործությունների մի ամբողջ շարք, սկսած Պետրոս Ադամյանի սպանությունից մինչև մասսայական մատնությունները։ Դավաճանները ամենուրեք գաղտնի ոստիկանության օրգաններին մատնագրերով հայտնում էին հունահայ ակտիվ կոմունիստների և հակադաշնակ ակտիվիստների անունները։ Սկսած Դեղե-Ազաճից մինչև Սերեզ, Սալոնիկ, Աթենք և կղզիները կոմունիստներն ու դեմոկրատները կանչվում էին ոստիկանատները և խիստ հարցաքննության ենթարկվում։ Միայն Սալոնիկում դաշնակները մատնել էին տասնմեկ մարդ՝ հակադաշնակ ակտիվիստների, պահանջելով նրանց անհապաղ արտաքսումը Հունաստանի սահմաններից։ Այս ակտիվիստների մեջ էին Սալոնիկի հայկական կոմունիստական խմբի ղեկավարներից Կարպիս Պալթայանը, «Աշխատանք» թերթի խմբագիրներից Անթուան Միքայելյանը, նույն թերթի արտոնատեր Հակոբ Կեսիբյանը, ֆինանսական գործերի վարիչ Մատաթ Թերզյանը, ավագ դրաշար Վրթանես Սարաֆյանը, ՀՕԿ-ի Հունաստանի Կենտրոնական վարչության լիազոր Սոֆի Մինասյանը, «Նոր Ալիք» թերթի խմբագրապետ, ռամկավար Գ. Նավասարդյանը և ուրիշներ։

«Ալիք» թերթի խմբագիր, դաշնակ գործիչ Կարո Գևորգյանը առաջնորդական փոխանորդ Մալաքյան քահանան, Սալոնիկի մի շարք ուրիշ ռեակցիոն տարրերի հետ ձեռք-ձեռքի տված պաշտոնապես դիմել էին նաև ներքին գործերի մինիստրը Ցալդարիսին՝ պահանջելով հակադաշնակ բոլոր ակտիվոր ղեկավարների արտաքսումը Հունաստանից[43]։

---

[43] Տե՛ս «Աշխատանք», 1927, № 55։

Ոստիկանական օրգանները հունվարի 14-ին կանչելով մատնագրերում նշված կոմունիստներից շատերին, ինչպես, օրինակ, Պ. Ախիկյանին, Ա. Միքայելյանին և Ուրիշների, հինգ օր պայմանաժամով առաջարկեցին հեռանալ Հունաստանի սահմաններից։ Հալածվող մյուս բոլոր կոմունիստներն անցան անլեգալ դրության, որի հետևանքով «Աշխատանք» թերթը 1927 թ. հունվարի 25-ից մինչև փետրվարի 27-ը լույս չտեսավ։ Հունահայ աշխատավորության ռևոլյուցիոն շարժումը զլխատելու նպատակով ձեռնարկված այս ֆաշիստական հարձակումը գաղութի առաջավոր դեմոկրատական ուժերի դեմ՝ բողոքի ալիք առաջ բերեց ոչ միայն հայ, այլև հույն, հրեա և մակեդոնացի աշխատավորների շրջանում։

1927 թ. հունվարի 15-ին Բանվորա-գյուղացիա-գաղթականական միացյալ ճակատի դեպուտատներ Պապանիկոլաուն և Սուլամը Սալոնիկի հայ աշխատավորության պատվիրակի հետ միասին ներկայանալով Մակեդոնիայի ընհանուր կառավարիչ Կալեվրասին, քաղաքի բազմազգ բանվորության անունից վճռական բողոք հայտնեցին հայ կոմունիստների արտաքսման դեմ, պահանջելով ոստիկանական օրգանների որոշման բեկանումը։ Նույն օրը նրանք ներքին գործերի մինիստրին ուղարկված հեռագրով պահանջում էին՝ դադարեցնել հալածանքները հայ կոմունիստների և դեմոկրատների դեմ[44]։ Կոմունիստական պարտիայի պառլամենտական ֆրակցիան հատուկ հարցապնդում կատարեց պառլամենտում հայ կոմունիստների արտաքսման մասին՝ ընդհանուր ապահովության օրգանների կամայական որոշման կապակցությամբ։ 1927 թ. հունվարի 26-ին կոմունիստական պառլամենտական խմբի ներկայացուցիչները այցելեցին ռազմական մինիստր Մազարակիսին, պահանջելով արտաքսման մասին ընդունված որոշման բեկանումը[45]։ Այս միջոցառումները թեև ժամանակավորապես կանխեցին այդ որոշման իրագործումը, սակայն չկարողացան բեկանել այդ։ Այսպես, ֆաշիստական ռեակցիայի առաջին զոհերի շարքում գտնվում էին նաև հունահայ

[44] «Աշխատանք», 1927, № 48։

[45] «Ռիզոսպաստիս», 1927, № 156։

աշխատավորության արժանավոր զավակները, որոնց մի մասը հույն ռևոլյուցիոն բանվորների հետ միասին աքսորվեցին Էգեյան ծովի չորակղզիները։

Ձերբակալությունները և ոստիկանական հետապնդումները զգալի հարված հասցրին հայկական կոմունիստական խմբերի գործունեությանը։ Խմբագրական կոլեգիայի անդամների ձերբակալության և մյուսների հետապնդման պատճառով «Աշխատանք» թերթը 73-րդ համարից հետո դադարեցրեց իր հրատարակությունը (1927 թ. մայիս)։ Դա այդ տարիներին պրոլետարական ինտերնացիոնալիզմի դիրքերում կանգնած միակ թերթն էր ամբողջ Բալկաններում, և նրա խափանումով բալկանյան հայ աշխատավորությունը զրկվեց իր մարտական օրգանից, սակայն ֆաշիզմի դեմ մղվող նրա հերոսական պայքարը չթուլացավ։

Դասակարգային պայքարի սրման պայմաններում տիրապետելով բոլշևիկյան մասսայական աշխատանքի լեգալ ու անլեգալ մեթոդներին, ողջ պարտիայի հետ միասին, նրա ղեկավարությամբ հայ կոմունիստները նոր թափ հաղորդեցին իրենց ագիտացիոն ու պրոպագանդիստական գործունեությանը։ Շարունակում էր լույս տեսնել Ստ. Կուրտիկյանի խմբագրած «Աշխատանք»-ին զուգընթաց լույս ընծայվող երգիծական խմորատիպ և նկարազարդ «Աշխատանքի Մոծակ» շաբաթաթերթը, որի քարտուղարն ու ձևավորող-նկարիչը Հր. Փաշայանն էր։, «Աշխատանքի Մոծակ»-ին ակտիվ կերպով աշխատակցում էր նաև Դավիթ Գազազյանը և ուրիշներ։ Այս երգիծաթերթը նացիոնալիստական պարտիաների, հատկապես դաշնակների հակահայրենասիրական գործունեությունը մերկացնելու հետ մեկտեղ, սուր քննադատության էր ենթարկում սոցիալական արատները և լայն մասսայականություն էր վայելում։

Ավելի հաճախակի դարձան կոմունիստական տպագիր ու խմորատիպ հայերեն թռուցիկների ու կոչերի հրատարակությունները, որոնք դասակարգային պայքարի կոնկրետ իրադրության համապատասխան՝ հայ աշխատավորներին էին

հասցնում կոմունիստական պարտիայի մարտական լոզունգները։

Պանկալոսյան դիկտատուրայի անկումից հետո սկսված ժամանակաշրջանը հատկապես հարուստ է հայ և հույն բանվորների համատեղ ռևոլյուցիոն ելույթների և պայքարի օրինակներով, պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարների լայն տարածումով հայ աշխատավորության մեջ։

1927 թ. մարտի 24-ին, երբ Չինաստանի ազգային-ռևոլյուցիոն բանակը գրավեց Նանկին քաղաքը, ամերիկյան և անգլիական իմպերիալիստները չինական ռևոլյուցիայի հաղթարշավը արյամբ կասեցնելու համար դիմեցին ռազմական բացահայտ ինտերվենցիայի՝ ռազմանավերից կատաղի ռմբակոծման ենթարկելով քաղաքի խաղաղ բնակչությանը։ Հունաստանի բանվոր դասակարգը արձագանքելով Կոմինտերնի կոչին, ամենուրեք ցույցեր ու միտինգներ կազմակերպեց չինական ռևոլյուցիայի պաշտպանության նշանաբանի տակ։

«Աշխատանք» թերթն այդ օրերին, ինչպես նշված է, իր էջերում լուսաբանում էր չին ժողովրդի հերոսական պայքարը, տպագրում մի շարք հոդվածներ, կոչելով հայ աշխատավորներին՝ Հունաստանի բանվորության հետ միասին պայքարի դուրս գալ չինական ռևոլյուցիայի պաշտպանության համար։ 1927 թ. մայիսմեկյան ցույցերն ու միտինգները ամենուրեք նույնպես անցան մարանչող չին ժողովրդի հետ ինտերնացիոնալ համերաշխության նշանաբանի տակ։ Կոմունիստական կազմակերպություններն ինչպես հունարեն, նույնպես և հայերեն հրատարակեցին հազարավոր թռուցիկներ, որոնք տարածվեցին հայաշատ բոլոր կենտրոններում[46]։

Մայիսմեկյան ցույցերին հայ աշխատավորների ակտիվ մասնակցությունը կատաղեցրել էր ոչ միայն դաշնակներին, այլև ռամկավար ջոջերին, որոնք «Նոր Ալիք» թերթի էջերից վիրավորական խոսքերով դատապարտում էին հունահայ բանվորներին։ Վճռական հակահարված տալով բուրժուա-պահպանողական վայրահաչությանը, կոմունիստները «Աշխատանք»-ի էջերից պատասխանում էին. «Ինչու՞ հայ բան-

---

[46] «Իրիդոսպատիս», 1927, № 248։,

վորը պետք է բաժնվի տեղացի բանվորին, երբ նույն դասակարգային շահագործման, նույն տնտեսական նեղության տակ կգտնվի և նույն բաղուկի ուժն է, որ կվատնե շահագործողին հավելյալ արժեքներ ապահովելու համար»[47]։

Շեշտելով հայ և հույն բանվորների դասակարգային շահերի միասնությունը, կոմունիստները կոչում էին ուժեղացնել համատեղ պայքարը կապիտալիստական շահագործման դեմ, բանվորա-դյուղացիական իշխանության հաստատման համար։ Հունաստանում, որը միայն կարող էր ազգային ու սոցիալական ազատագրում բերել բոլոր աշխատավորներին։

Հունական կապիտալիզմի մասնակի և ժամանակավոր կայունացումը ուղեկցվում էր գործարանատերերի կատաղի հարձակումով բանվոր դասակարգի կենսամակարդակի վրա և ֆաշիստական տեռորի ուժեղացումով։ 1927 թ. հունվարին Աղրինիոնի, Դրամայի, Քսանթիի և մակեդոնական խոշորագույն ծխախոտագործական կենտրոնների գործադուրկ բանվորները պայքարի դուրս եկան։ Կառավարությունը զինված ուժեր ուղարկեց բանվորների դեմ, տեղիք տալով արյունալի ընդհարումների։ Փետրվարի վերջերին Սալոնիկի ծխախոտագործ բանվորների մասսայական միտինգը գնդակոծվեց ոստիկանության կողմից, որի հետևանքով սպանվեց ծխախոտագործ բանվոր Կարանֆիլը և վիրավորվեցին տասնյակ բանվորներ։ Ժողովրդական հուզումներն ընդգրկեցին քաղաքի աշխատավորության բոլոր խավերը։ Բանվոր Կարանֆիլի հուղարկավորությունը վերածվեց Սալոնիկի բազմազգ աշխատավորության մասսայական ցույցի՝ կառավարության ֆաշիստական քաղաքականության դեմ, որին մասնակցեցին ավելի քան տասս հազար աշխատավոր։

Մարտի սկզբներին գործադուլային պայքարի եկան Աթենքի և Պիրեայի գորգագործ բանվորները։ Ծանր հարկերի դեմ պայքարելու համար ընդհանուր գործադուլ հայտարարեցին նաև Աթենքի ու Պիրեայի արհեստավորներն ու մանր առևտրականները։

---

[47] «Աշխատանք», 1927, № 70։

Ռևոլյուցիոն շարժման վերելքը կանխելու և աշխատավոր ժողովրդի դիմադրությունը ճնշելու համար կոալիցիոն կառավարությունը սկսեց երկրում կազմակերպել մասսայական ձերբակալություններ։ Հունաստանի ԿՊ ԿԿ-ի որոշման համաձայն 1927 թ. մայիսի 15-ին, 22-ին և 29-ին երկրի բոլոր քաղաքներում տեղի ունեցան ֆաշիստական տեռորի դեմ ուղղված մասսայական միտինգներ, որոնք նախերգանք հանդիսացան հետագա դասակարգային մարտերի համար։

Այդ օրերին էր, որ դաշնակները օգտվելով ոստիկանության հովանավորությունից, փորձեցին Աթենքում նշել իրենց ազգահռչակ «հանրապետության» օրը՝ մայիսի 28-ը, որը նոր մարտահրավեր էր հունահայ աշխատավորությանը։ Աթենքի հայ կոմունիստները հատուկ թռուցիկ հրապարակեցին կոչելով հայ աշխատավորներին՝ մասսայական բոյկոտի ենթարկել դաշնակների առաջիկա խառնաժողովը։ Հայ բանվորները նախօրոք տեղ գրավելով Աթենքի «Ապոլլոն» թատրոնի սրահում, ոչ միայն թույլ չտվեցին դաշնակ ղեկիներին ելույթ ունենալ Սովետական Հայաստանի դեմ, այլև բուռն բացականչությունների տակ ներկաների մեջ ցրեցին հարյուրավոր կոմունիստական թռուցիկներ՝ հավաքույթը վերածելով հակադաշնակ ցույցի[48]։

Վրա հասան նոր դեպքեր և քաղաքական նոր իրադարձություններ։ 1927 թ. մայիսի վերջերին ծխախոտի գործարանատերերը լոկաուտ հայտարարեցին Մակեդոնիայի և Թրակիայի արդյունաբերական բոլոր կենտրոններում, հարկադրելով բանվորներին՝ աշխատել ավելի ցածր աշխատավարձով և ավելի վատ պայմաններում։

Կառավարությունը գործարանատերերի տրամադրության տակ դրեց զինվորական և ոստիկանական ջոկատներ, հեծելազոր և նույնիսկ հրետանի՝ ծխախոտագործների դիմադրությունը կոտրելու համար։ Մակեդոնական քաղաքներում ու Թրակիայում տեռորը հասավ անսահման չափերի։

1927 թ. հուլիսի 2-ի առավոտյան, երբ Սալոնիկի ծխախոտագործները խաղաղ ցույց էին կազմակերպել դեպի ընդհա-

---

[48] «Ռիզոսպաստիս», 1927, № 276։

նուր կուսակալության շենքը՝ բողոքելու լոկաուտի շարունակվելու և բանվորների մասսայական ձերբակալությունների դեմ, նրանք հանկարծակի հարձակման ենթարկվեցին հեծելազորի կողմից և գնդակոծվեցին։ Երբ ցուցարարները հասան Բանվորական կենտրոնի (Արհմիությունների տան) մոտ, նրանք նորից գնդակոծվեցին ոստիկանության կողմից։ Բանվորական կենտրոնը, որի ներսում գտնվում էին հարյուրավոր բանվորներ, չորս կողմից պաշարվեց զինվորական ուժերով։ Շենքի դիմաց տեղավորվեց հրետանին, որից հետո, ինչպես պատերազմական գործողությունների ժամանակ, օրը ցերեկով Բանվորական կենտրոնը վայրագ գնդակոծության ենթարկվեց։ Շենքի ներսում գտնվող բազմաթիվ բանվորներ և բանվորուհիներ ծանր վիրավորվեցին արձակվող գնդակներից։ Արհմիությունների դրոշենյակները բոլորովին ավերվեցին, իսկ Բանվորական կենտրոն ներխուժած ոստիկանները սկսեցին ձերբակալություններ պաշարվածների մեջ։ Ձերբակալվածների մեջ գտնվում էին Սալոնիկի հայտնի հայ կոմունիստներից ծխախոտագործ բանվոր Կարպիս Պալթայանը, ծառայող Մաղաթ Թերզյանը և ուրիշներ, որոնք անմիջապես աքսորվեցին քաղաքից դեպի ամայի կղզիներ։ Այդ դեպքերի կապակցությամբ ձերբակալված և աքսորված բանվորների մեջ կային նաև ուրիշ հայեր, ինչպես, օրինակ, կոմունիստներ, «Աշխատանք» թերթի ավագ դրաշար Վրթանես Սարաֆյանը[49], ուսուցիչ-ժուռնալիստ Անթուան Միքայելյանը և ուրիշներ, որոնք, ինչպես նշել ենք, դաշնակների մատնագրերով ներկայացվել էին պետական օրգաններին և հետագայում աքսորվեցին Հունաստանի սահմաններից, որպես «վտանգավոր տարրեր»։ Սակայն, չնայած այս տեռորիստական միջոցառումներին, Մակեդոնիայի և Թրակիայի ծխախոտագործ բան-

---

[49] Ընկ. Վրթ. Սարաֆյանը Հունաստանից արտաքսվելով և ապաստան գտնելով Սովետական Հայաստանում, երկար տարիներ ծառայել է սովետական բանակում, մասնակցել Հայրենական մեծ պատերազմին որպես հրետանու փոխգնդապետ, ներկայումս աշխատում է Երևանի Կիրովի անվան գործարանում։

վորների մարտական ոգին շարունակում էր մնալ բարձր ու աննկուն։

Գործարանատերերի հայտարարած լոկաուտը հանդիպելով բանվորների մարտունակությանն ու կազմակերպվածությանը, վերածվեց ծխախոտագործ բանվորների համահունասանության գործադուլի՝ ծխախոտագործների բոլոր պահանջները բավարարելու նշանարանի տակ։

Սալոնիկի արյունալի դեպքերի կապակցությամբ Հունաստանի ԿՊ ԿԿ-ի քաղբյուրոն նույն օրը հատուկ թռուցիկով դիմեց Հունաստանի բանվոր դասակարգին, կոչելով ամենուրեք ծավալել համերաշխության շարժում մարտնչող բանվորների հետ[50]։ Հուլիսի 5-ին Աթենքի «Ապոլլոն» թատրոնում կազմակերպվեց Աթենքի և Պիրեայի աշխատավորության մասսայական միտինգը։ Միտինգի մասնակիցներն ընդունած բանաձևում իրենց համերաշխությունը հայտնեցին մարտնչող ծխախոտագործ բանվորներին, պահանջելով նրանց առաջադրած բոլոր պահանջների լիակատար բավարարումը։ Սակայն կառավարությունն անդրդվելի էր։ Գործադուլավորների դեմ նա մոբիլիզացրեց 20 հազար զինվոր և ոստիկանական մեծաթիվ ուժեր, որոնք տեռորի սարսափելի ռեժիմ հաստատեցին մակեդոնական բոլոր քաղաքներում։ Ծխախոտագործ բանվորների ֆեդերացիայի քարտուղար Հաջիստավրոն հուլիսի 7-ին այդ մասին հեռագրում էր Սալոնիկից, թե «Տեռորը շարունակվում է ամբողջ Մակեդոնիայում և Թրակիայում։ Ծխախոտագործ բանվորները ձերբակալվում են իրենց տներում, ծեծի են ենթարկվում և բռնի աշխատանքի են հարկադրվում։ Կավալայում խլվում են ծխախոտագործ բանվորների վկայականները, երբ նրանք հրաժարվում են աշխատել։ Դրամայում տհաբեկման են ենթարկում հայերին, որպեսզի նրանց աշխատանքի մղեն։ Քսանթիում ճնշվում են թուրքերը։ Նույնը նաև Կոմոտինիում։ Չնայած այս բոլորին, հերոսական ծխախոտագործ բանվորները պաշտպանվում են ամենայն վճռականությամբ։ Սալոնիկում շարունակվում են ձերբակալությունները։ Հեծյալ և հետևակ ժանդարմական պարեկներ

[50] «Ռիզոսպաստիս», 1927, № 280։

չափշփում են մակեդոնական և թրակիական քաղաքները։ Խարված ծխախոտագործ բանվորների մեծամասնությունը թողնելով աշխատանքը՝ նորից վերադառնում է մարանշողների շարքերը։ Ծխախոտագործ բանվորների հերոսություն, տոկունություն և հաստատակամություն պայքարում՝ հիացմունք է առաջացնում»[51]։

Նույն օրը Միացյալ ճակատի դեպուտատ Կոստաս Թեոսը հեռագրում էր Կավալայից.

«Անբնակայելի տեսար է իշխում Կավալա քաղաքում։ Ժանդարմական հեծյալ պարեկներ շափշփում են քաղաքը։ Բանվորները հետապնդվում են վայրենի անասունների պես։ Ձերբակալվածները մինչև մահվան ատիճան ծեծի են ենթարկվում։ ... Ծխախոտագործ բանվորների արհմիության գրասենյակները գրավվեցին ռազմական ուժով։ Իսկական մարդասպանություն է տիրում փողոցներում»[52]։

Լոկաուտի տասնհինգ օրվա ընթացքում ձերբակալվեցին, աքսորվեցին և բանտարկվեցին ավելի քան 500 գործադուլավորներ[53], *որոնց մեջ կային նաև հայ բանվորներ։*

Հունահայ կոմունիստները, որոնք ակտիվ կերպով կազմակերպում էին հայ բանվորների մասնակցությունը դասակարգային այդ մարտերին, իրենք էլ աճում ու առնականանում էին այդ պայքարի բովում։ Ամերիկայի իրենց ընկերներին ուղարկած մի թղթակցության մեջ Սալոնիկի կոմունիստները գրում էին այդ օրերին. «Ծանր և իլլեգալ պայքարի նախօրյակին կգտնվինք։ Ու այս անգամ ևս Հունաստանի կոմունիստ կուսակցությունը պիտի ճակատի բոլոր դժվարությանց և ապացուցանե թե ինքը իլլեգալ դրության մեջ իսկ ապրելու, դարգանալու ու գործելու՝ այսինքն բոլշևիկյան կենսունակ կուսակցություն մը դառնալու նախադրյալներն ունի իր մեջ»[54]։

---

[51] *«Ռիզոսպաստիս», 1927, № 284։*

[52] *Նույն տեղում։*

[53] *Նույն տեղում, № 285։ Քսանթիից Լիմնոս կղզին աքսորված գործադուլավորների մեջ հիշատակվում է նաև բանվոր Ս. Կարավյանը։*

[54] *Տե՛ս «Նոր Աշխարհ», Նյու—Յորք, 1927, № 53 (157)։*

Կոալիցիոն կառավարությունը, որ ամենուրեք սկսել էր ստեղծել իր ահաբեկչական-ֆաշիստական կազմակերպությունները, 1928 թ. հունվարին ոտնակոխելով սահմանադրական օրենքները, հրաման արձակեց ձերբակալելու բոլոր կոմունիստ դեպուտատներին։ Դա հունական ռեակցիայի ընդհանուր հարձակման ազդանշանն էր և միաժամանակ հունական բանվորական, հակաֆաշիստական ժողովրդական շարժման զարգացման նոր փուլի սկիզբը։

* * *

Պանկալոսյան դիկտատուրայի ժամանակաշրջանը ինչպես ամբողջ կոմպարտիայի, այնպես և Հունաստանի կոմերիտմիության համար հանդիսացավ պայքարի ու կռվման մարտական դպրոց։ Նա դուրս եկավ ընդհատակից ավելի ևս ամրապնդված ուժերով և դարձավ կոմունիստական պարտիայի աննկուն օգնականը՝ աշխատավոր երիտասարդության պայքարի կազմակերպման ու ղեկավարման գործում։ 1927 թ. փետրվարին կայացած Հունաստանի կոմերիտմիության կոնֆերենցիան համագումարի նշանակություն ունեցավ երիտասարդական ռևոլյուցիոն շարժման հետագա զարգացման հանդուցային հարցերը բարձրացնելու և լուծելու իմաստով։ Կոնֆերենցիայի որոշումներում հատուկ տեղ էին գրավում աշխատավոր երիտասարդության կազմակերպման և ռևոլյուցիոն մոբիլիզացման, ազգային փոքրամասնությունների շահերի ակտիվ պաշտպանության խնդիրները։

Փետրվարյան կոնֆերենցիայից հետո, Հունաստանի կոմերիտմիությունը արագորեն աճեց։ Եթե իր հիմնադրման առաջին տարին՝ 1922 թ. նոյեմբերին նա իր շարքերում միավորում էր միայն 300 անդամ, ապա Փետրվարյան կոնֆերենցիայից հետո ընկած ժամանակաշրջանում՝ 1927 թվի նոյեմբեր ամսին, այսինքն՝ կոմերիտմիության հինգերորդ տարեդարձին Միության անդամների թիվն արդեն հասել էր երկու հազարի[55]։

---

[55] «Ռիզոսպաստիս», 1927, № 465։

ΠΡΟΛΕΤΑΡΙΟΙ ΟΛΟΥ ΤΟΥ ΚΟΣΜΟΥ ΕΝΩΘΕΙΤΕ!

Η Νεολαία

ΟΡΓΑΝΟ ΤΗΣ ΟΜΟΣΠΟΝΔΙΑΣ ΤΩΝ ΚΟΜΜΟΥΝΙΣΤΙΚΩΝ ΝΕΟΛΑΙΩΝ (Ε. Τ. Κ. Α.)

ΝΕΟΙ ΕΡΓΑΤΟΧΩΡΙΚΟΙ, ΦΑΝΤΑΡΟΙ ΚΑΙ ΝΑΥΤΕΣ!

ΑΓΩΝΙΣΤΕΙΤΕ

ΚΙΝΗΤΟΠΟΙΗΘΕΙΤΕ

ΝΕΟΙ ΕΡΓΑΤΕΣ, ΑΓΡΟΤΕΣ ΦΑΝΤΑΡΟΙ ΚΑΙ ΝΑΥΤΕΣ!

ΟΚΝΕ

ΠΑΛΕΨΤΕ

Հունաստանի կոմերիտմիության Կենտկոմի օրգան «Ի Նեոլեա» թերթը:

Կոմերիտմիության կենտրոնական օրգան «Ի Նեոլեա» («Երիտասարդություն») թերթը 1927 թ. տարածվում էր 9-10 հազար տպաքանակով[56], *իսկ կոմերիտմիության տեսական օրգան «Նեոս լենինիստիս» («Երիտասարդ լենինյան») ամսագիրը տպագրվում էր 2500—3000 տպաքանակով*[57]*։ Բացի դրանից, հրատարակվում էին նաև մարքս-լենինյան տեսության հանգուցային հարցերին նվիրված հանրամատչելի բրոշյուրներ, գրքույկներ, Մարքսի, Էնգելսի, Լենինի առանձին աշխատություններ, որոնցով դաստիարակվում էին երիտասարդ կոմունիստական կադրերը։*

Ի դեպ ասենք, որ կոմպարտիայի հայերեն գրականությունը սկզբնական շրջանում սահմանափակվում էր գլխավորա-

56 *«Ռիզոսպաստիս», 1927, № 373։*

57 *Նույն տեղում, № 170։*

Հունաստանի կոմունիստական Կենտկոմի
տեսական օրգան «Նեոս Լենինիստիս» ժուռնալը

պես Սովետական Հայաստանից ստացված թերթերից, մարքսիզմ-լենինիզմի կլասիկների, ինչպես նաև Սովետական Հայաստանի կոմպարտիայի և կառավարության ակնավոր ղեկավարների՝ Ալ. Մյասնիկյանի, Ասքանազ Մռավյանի, Սարգիս Կասյանի, Աշոտ Հովհաննիսյանի, Արտաշես Կարինյանի, Դրաստամատ Սիմոնյանի և ուրիշների առանձին աշխատությունների ու հոդվածներից, պրոլետարական գրականության հայ պիոներների ստեղծագործությունների որոշ հրատարակություններից, ինչպես նաև Ֆրանսիայում և Ամերիկայում լույս տեսնող բանվորական թերթերից («Բանվոր-Պարիզ», «Երևան», «Պրոլետար», «Նոր աշխարհ») ու ամսա-

գրերից («Արեգ», «Վերելք») կազմված համեստ մի գրադարանով։ Այս գրադարանից օգտվում էին ինչպես կոմունիստ ակտիվիստները, այնպես և անպարտիական առաջավոր աշխատավորներ, Սովետական Հայաստանի շատ համակիրներ։ Ինքնուրույն ռևոլյուցիոն գրականության ստեղծման սկզբնավորումը կապված է զարգացում հայկական կոմունիստական կազմակերպությունների ամրապնդման և բանվորական շարժման վերելքի շրջանի հետ, մասնավորապես պանկալոսյան դիկտատուրայից հետո, երբ սկսեց հրատարակվել բանվորական «Աշխատանք» թերթը։ Այս գրականությունն էլ սկզբում գլխավորապես հրատարակվող և մասսայորեն տարածվող թռուցիկները, կոչերը, կայծակ-թերթիկներն ու պրոկլամացիաներն էին, որոնք լույս էին ընծայվում զանազան նշանակալից տարեթվերի, ռևոլյուցիոն տոների առթիվ, հատկապես հակապատերազմական, հակազաշնակ և հակաֆաշիստական մասսայական ելույթների նախապատրաստման կապակցությամբ և այլն։ Պահպանելով այս տրադիցիան հունահայ կոմունիստներն ստանձնաբար ձեռնամուխ են լինում բրոշյուրների, առանձին գրքույկների հրատարակմանը։

Այսպես, այդ շրջանում «Աշխատանքի» հրատարակությամբ առանձին բրոշյուրի ձևով լույս են ընծայվել «Կոմունիստական մանիֆեստի» որոշ հատվածներ, հրատարակվել են առանձին բրոշյուրներ՝ նվիրված Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիայի և նրա ծնունդ՝ Հայաստանում Նոյեմբերյան ռևոլյուցիայի նշանակությանը, իսկ «Աշխատանքի» խափանումից հետո հրատարակվել էր Վ. Ի. Լենինի արտասանած ճառը («Երիտասարդության միությունների խնդիրները») Կոմերիտմիության III համագումարում, «Քոմունիստ երիտասարդությունը և իր դերը» խորագիրը կրող բրոշյուրով[58] և այլն։ Ուշագրավ է նաև 1927 թ. սեպտեմբերին

---

[58] Այդ բրոշյուրը շարվել էր Սալոնիկում, հրեա կոմունիստ Ավրամ Բոյնոյի մեխանիկական արհեստանոցի նկուղում և տպագրվել 600 օրինակ տպաքանակով։ Տես Ստ. Կուրտիկյանի հուշերը «Լենինյան բրոշյուրը» խորագրով, «Ավանգարդ», 1957, ապրիլի 22։

Վ. Ի. Լենինի «Երիտասարդության Միությունների խնդիրները» («Քոմունիստ Երիտասարդությունը և իր դերը») բրոշյուրի շապիկը

Աթենքի հայ կոմունիստների կողմից հրատարակված «Ոճրածին թաթը» խորագիրը կրող բրոշյուրը, որ նվիրված էր բուլղար ֆաշիստների վայրագությունների մերկացմանը և նպաստում էր ինտերնացիոնալիստական ընդհանուր գաղափարների տարածմանը հունահայ գաղութում։

ՈՃՐԱՆԻՆ ԹԱԹԸ

Սպիտակ ակրոպի տերերի Պուլկարիայ մէջ

ԿԱԶՄԵՑԻՆ,

ՈՒՐԱՆԻԱ ԵՒ ԱԼՔՍԻՐ

«Ոճրածին թաթը» բուշյուրի շապիկը

Համախմբելով երիտասարդությանը կոմունիստական պարտիայի շուրջը, Հունաստանի կոմերիմիությունը կազմակերպեց աշխատավոր երիտասարդության մի շարք համագումարներ, որոնք մեծ հաջողությամբ անցկացվեցին խոշորագույն քաղաքներում։ Այսպես, օրինակ, 1927 թ. ապրիլի 17-ին Աթենքի և Պիրեայի աշխատավոր երիտասարդության առաջին համագումարին մասնակցեցին 241 դելեգատ-ներկայացուցիչ, որոնք ընտրվել էին երիտասարդ բանվորների միտինգներում։ Համագումարի նախապատրաստական աշխատանքներին ակ-

տիվ կերպով ներգրավվեց նաև Աթենքի և Պիրեայի աշխատավոր հայ երիտասարդությունը, որը նույպես ուղարկեց իր ներկայացուցիչներին։

Հայ և հույն աշխատավոր երիտասարդության մարտական համագործակցության համար չափազանց բնորոշ է նաև այն վիթխարի միտինգը, որ տեղի ունեցավ Աթենքի «Ապոլլոն» թատրոնում, 1927 թ. օգոստոսի 1-ին՝ Սովետական Միության և չինական ռևոլյուցիայի պաշտպանության, աքսորված ու ձերբակալված ռևոլյուցիոներ բանվորների անմիջական ազատագրման նշանաբանների տակ։ Միտինգի պատվավոր նախագահության մեջ ընտրվեցին Հունաստանի աշխատավոր երիտասարդության աքսորված առաջնորդներ Ա. Անկելուկասը (տրամվայի բանվոր), Գ. Կոստանդինիտիսը (ուսանող), Խ. Քսելուդիսը (ծխախոտագործ բանվոր), Կ. Կալոյանիսը (գրաշար բանվոր), և Սալոնիկի հայ աշխատավոր երիտասարդության մարտական ղեկավար Կարպիս Պալթայանը (ծխախոտագործ բանվոր), որն իր ռևոլյուցիոն գործունեության համար այդ ժամանակ գտնվում էր աքսորավայրում՝ Սիկինոս կղզում[59]։

Մասսայական նույնանման հավաքույթներ տեղի ունեցան նաև ուրիշ քաղաքներում։ Հունահայ աշխատավոր երիտասարդության մասնակցությունն այդ միտինգներին ու ցույցերին վկայում էր այն մասին, որ նա դուրս էր եկել ազգային սահմանափակվածության մտայնությունից դեպի ինտերնացիոնալ համագործակցության ու պայքարի ուղին, դարձել էր դեմոկրատական և կոմունիստական գաղափարների ակտիվ տարածողը հունահայ գաղութում։

Հունաստանի կոմերիտմիությունը հանդիսացավ ռևոլյուցիոն կադրերի պատրաստման այն դարբնոցը, որի շարքերում իրենց մարտական մկրտությունն ու կոփումը ստացան բազմաթիվ հայ երիտասարդ ռևոլյուցիոներներ։ Այդ երիտասարդության առավել աչքի ընկնող ներկայացուցիչներն էին Կարպիս Պալթայանը, Ստեփան Կուրտիկյանը, Հակոբ Կեսիբյանը,

---

59 «Ռիզոսպաստիս», 1927, № 339։

Սուրեն Մառուկյանը, Պողոս Երկանյանը[60], Գրիգոր Նազիկյանը, Հովհաննես Խաչիկյանը, Մանուկ Տեփոյանը, Ջիվան Բարթուղյանը, Բյուզանդ Գալստյանը, Խաչիկ Շահմանյանը, Սհան Ջինդյանը, Հրաչ Փաշայանը, Վրթանես Սարաֆյանը, Գևորգ Տրիբունյանը, և շատ ու շատ ուրիշներ։

Այդ երիտասարդների մի որոշ մասը հետագայում հայրենադարձվեց Սովետական Հայաստան, ուր նրանք շարունակեցին իրենց հայրենանվեր աշխատանքները։ 1927 թ. նոյեմբերին Աթենքի, Պիրեայի, Սալոնիկի հայ և հույն աշխատավորները ջերմորեն ճանապարհեցին դեպի հայրենիք իրենց 1200 գաղթական եղբայրներին, որոնց միացել էին նաև հունական կառավարության որոշմամբ իրենց աքսորավայր կղզիներից վերադարձած մի խումբ հայ կոմունիստներ, որոնք արտաքսվում էին Հունաստանի սահմաններից որպես «անցանկալի» տարրեր։ Այդ ընկերների մեջ էին Կարպիս Պալթայանը, Անթուան Միքայելյանը, Սոֆի Մինասյանը, Վրթանես Սարաֆյանը, Մատաթ Թերզյանը և ուրիշներ։ Ներգաղթի օրերին այնպիսի բարձր ոգևորություն էր տիրում հայաշատ կենտրոններում, որ դաշնակները չէին համարձակվում նույնիսկ հրապարակ գալ՝ վախենալով իրենց դեմ ժողովրդական զայրույթի պոռթկումից։ Կոմունիստները տարածում էին հարյուրավոր թռուցիկներ հայ աշխատավորների մեջ և ամենուրեք կազմակերպում մասսայական միտինգներ ներգաղթի կապակցությամբ։ Ներգաղթի քարավանի մեկնումից հետո անցկացված Սովետական Հայաստանի 7-րդ տարեդարձին նվիրված տոնակատարությունները նոր սուգատեսս էին հակադաշնակ ուժերի միասնության համար։ Աթենքի և Սալոնիկի գաղթակայաններում նորից տարածվեցին հարյուրավոր թռուցիկներ։ Բացի այդ, Աթենքի և Պիրեայի գաղթակայաններում կազմակերպվեցին մասսայական միտինգներ, ուր կոմունիստներն ու

---

60 Պողոս Երկանյանը ձուլող բանվոր էր, Պիրեայի (Լիփագմա) աշքի ընկնող հայ ակտիվ կոմերիտականներից, լավ կոնսպիրատոր և հակամիլիտարիստական գրականության ակտիվ տարածողներից մեկը։ Հայրենիք վերադառնալուց հետո (1929) աշխատել է Լեպսեի անվան մետաղագործական արտելում, վախճանվել է երկարատև հիվանդությունից հետո, 1935 թվին։

դեմոկրատները համատեղ ելույթներ ունեցան։ Ժողովրդական բարձր խանդավառությունը շփոթության մեջ էր գցել դաշնակների դավադիր կլիկին։ Իրենց մամուլի էջերից նրանք բացահայտ պայքար հայտարարեցին հունահայ կոմունիստներին և հակադաշնակ ակտիվիստներին, ոստիկանական ագենտների օգնությամբ դիմեցին զրպարտությունների, շանտաժի և սպառնալիքների մեթոդին։ Սակայն, չնայած այս բոլորին, Աթենքի և Պիրեայի հարյուրավոր հայ աշխատավորներ պեկտեմբերի 4-ին հավաքվեցին Աթենքի «Ապոլլոն» թատրոնի շենքում և հանդիսավոր պայմաններում տոնեցին հայ ժողովրդի վերածննդի 7-րդ տարեդարձը։

Հետագա տարիներին Հունաստանի կոմպարտիայի հայկական հատվածի արդյունավետ գործունեության շնորհիվ հունահայ գաղութը դարձավ ինչպես հակադաշնակ, այնպես և հակաֆաշիստական պայքարի կարևոր հենակետերից մեկը Բալկաններում, իր պատավոր տեղը գրավելով սփյուռքահայ աշխատավորության ռևոլյուցիոն պայքարի պատմության մեջ։

ՊԱՅՔԱՐԸ ՀԱՆՈՒՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ԴԵՄ ՀԱՂԹԱՆԱԿԻ

Պանկալոսյան դիկտատուրայից հետո, կոմունիստական պարտիայի առջև ամբողջ հասակով կանգնեցին պարտիական և կոմերիտական կազմակերպությունների վերակառուցման, նրանց գաղտիարական ու կազմակերպական ամրապնդման, երկրի բոլոր դեմոկրատական ուժերի միավորման հրատապ խնդիրները։ Նույն հարցերը յուրովի և ամենայն սրությամբ կանգնեցին նաև հայ կոմունիստների առջև։

Կապիտալիզմի մասնակի կայունացման, բանվորական ռևոլյուցիոն շարժման որոշ թուլացման և ֆաշիստական տեռորի ուժեղացման ազդեցության տակ Հունաստանի կոմպարտիայի շարքերում ևս երևան եկավ մանրբուրժուական և լիկվիդարիստական[61] թեքում, որն անմիջականորեն կապված էր Կոմինտերնում և նրա սեկցիաներում այդ ժամանակ գո-

[61] Լիկվիդարիզմը մենշևիզմի և տրոցկիզմի յուրովի խառնուրդի հունական այլատեսակությունն էր։

յություն ունեցող օպորտունիստական տենդենցների և սոցիալ-դեմոկրատական ու տրոցկիստական թեքումների հետ։ Կենտկոմի նախկին քարտուղար Պուլիոպուլոսը փորձում էր սկզբունքային հիմնական հարցերում ռևիզիայի ենթարկել պարտիայի քաղաքականությունը։

Ընթանալով դեպի Հունաստանի կոմպարտիայի III համագումարը՝ 1927 թ. հունվարի 28-ին Կենտրոնական կոմիտեն կոչ արեց բոլոր կազմակերպություններին և պարտիական աշխատողներին՝ ակտիվ կերպով մասնակցել նախահամագումարյան դիսկուսիային, արտահայտվելով ռևոլյուցիոն շարժման հանդուցային բոլոր հարցերի շուրջը։

Լիկվիդարիզմի դեմ միահամուռ կերպով կանգնեցին Աթենքի, Պիրեայի, Սալոնիկի և արդյունաբերական այլ քաղաքների պարտիական կազմակերպությունները և կոմունիստական երիտասարդությունը։

Նախահամագումարյան պարտիական կոնֆերենցիաներում, որոնք տեղի ունեցան փետրվար ամսին, հայկական կոմունիստական կազմակերպությունների ներկայացուցիչները Աթենքում, Պիրեայում և Սալոնիկում իրենց քվեները տվեցին այն դելեգատների օգտին, որոնք պաշտպանում էին պարտիայի գլխավոր գիծը։ Մի շարք կազմակերպություններում, ինչպես, օրինակ, Սալոնիկում, ուր հայ կոմունիստները նախահամագումարյան կոնֆերենցիային մասնակցեցին չորս դելեգատով[62], նրանց միահամուռ ելույթն ու քվեարկելը Կենտրոնական կոմիտեի քաղաքական գծի օգտին՝ կարևոր դեր խաղացին լիկվիդարիստների մեկուսացման և պարտիայի գլավոր գծի հաղթանակի գործում։

Ներպարտիական պայքարի ամենասուր մոմենտներում Պիրեայի հայկական թաղամասերի՝ Լիփաղմայի, Կոկինիայի, Տրապեցոնայի պարտիական և կոմերիտական սկզբնական կազմակերպություններում և ուրիշ բջիջներում գտնվող հայ

---

[62] *Սալոնիկի քաղաքային պարտիական կոնֆերենցիային որպես դելեգատներ հայկական կոմունիստական կազմակերպությունների կողմից մասնակցում էին Կ. Պալթայանը, Ա. Միքայելյանը, Մ. Թերզյանը, Ստ. Կուրտիկյանը։*

կոմունիստները միահամուռ կերպով նույնպես պաշտպանեցին պարտիայի գիծը լիկվիդարիստների դեմ և որոշակի դեր խաղացին կազմակերպությունը պարտիայի Կենտրոնական կոմիտեի շուրջը համախմբելու գործում[63]։ Ոչ միայն Պիրեայում, ուր լիկվիդարիստները կենտրոնացրել էին իրենց ամենախոշոր ուժերը, այլև Աթենքում հայ կոմունիստներն ու կոմերիտական ակտիվիստները հանդես եկան որպես պարտիայի լենինյան քաղաքականության ակտիվ պաշտպաններ։ Հունահայ կոմունիստները քաղաքական մեծ կոփում ստացան այդ պայքարում, որ կարևոր նշանակություն ունեցավ նրանց հետագա աշխատանքների համար։

1927 թ. մարտին, Աթենքում, անլեգալ պայմաններում տեղի ունեցավ Հունաստանի կոմպարտիայի հերթական համագումարը, որը քննության առավ պարտիայի ամբողջ գործունեությունը 1924 թ. նոյեմբերին կայացած համագումարից հետո ընկած ժամանակաշրջանում։ Իր քաղաքական բանաձևում համագումարը նշեց պարտիային սպառնացող աջ թեքման վտանգը և նրա դեմ անհաշտ պայքարի անհրաժեշտությունը։

Բազմակողմանի քննարկման ենթարկվեց նաև ազգային հարցը։ Համագումարը նշեց, որ թեև Բալկաններում գոյություն չունի անմիջական ռևոլյուցիոն սիտուացիա, ինչպես 1923—1924 թթ., սակայն Միացյալ և Անկախ Մակեդոնիայի լոզունգը պետք է մնա ուժի մեջ, որպես պարտիայի սկզբունքային և ընդհանուր ագիտացիոն լոզունգ։ Համագումարը պարտիական բոլոր կազմակերպություններին պարզաբանեց, թե «ներկա ժամանակաշրջանում ՀԿՊ պետք է առաջ քաշի առաջին հերթին ոչ թե անմիջական պայքարը վերոհիշյալ նշանաբանի համար (այսինքն՝ Միացյալ և Անկախ Մակեդոնիայի և Թրակիայի համար—Պ. Կ.), այլ կոնկրետ պայքարը ազգային ճնշման բոլոր միջոցառումների և ձևերի

---

63 1927 թ. Հունաստանի կոմերիտմիության փետրվարյան կոնֆերենցիայի որոշումների քննարկմանը նվիրված Պիրեայի կոմերիտական մարզային կազմակերպության ակտիվի ժողովում պարտիայի գլխավոր գծի ակտիվ պաշտպանությամբ հանդես եկան Մ. Մարտիկյանը, Պ. Երկանյանը։

դեմ»[64], ազգային բոլոր փոքրամասնությունների իրավահավասարության համար։

Համագումարը խնդիր առաջադրեց պարտիային՝ ուսումնասիրել ազգային ճնշման կոնկրետ ձևերը տարբեր շրջաններում, մշակել ազգային փոքրամասնությունների կոնկրետ պահանջները, լայնորեն տարածել ինտերնացիոնալիզմի գաղափարները մասսաների մեջ և կազմակերպել համաժողովրդական պայքար բուրժուազիայի նացիոնալիստական և շովինիստական քաղաքականության դեմ։ Հիմնական խնդիրն էր՝ պարտիայի բոլշևիկացումը, մասսաների հետ նրա կապերի ամրապնդումը, կազմակերպական ուժերի և քաղաքական ազդեցության միջև գոյություն ունեցող անհամամասնության վերացումը, պարտիայի կառուցման լենինյան սկզբունքների անաղարտ պահպանումը։

Հունաստանի ԿՊ ջախջախելով իր շարքերում տրոցկիստական-լիկվիդարիստական օպոզիցիան, ավելի սերտորեն համախմբվեց Կոմունիստական ինտերնացիոնալի շուրջը և վճռական շրջադարձ կատարելով դեպի մասսայական աշխատանքը, հաջողությամբ սկսեց կազմակերպել ու գլխավորել բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության ռևոլյուցիոն պայքարը։ Այդ պայքարում Հունաստանի ԿՊ աճեց և առնականացավ, դառնալով հերոսական հույն ժողովրդի ազատագրական պայքարի ճանաչված ղեկավարը, Կոմինտերնի մարտական սեկցիաներից մեկը։

* * *

Հայկական առաջին կոմունիստական խմբերը, որոնք կազմակերպվել էին Հունաստանում և սփյուռքահայ տարբեր գաղութներում, ինչպես նշված է, սկզբում բաղկացած էին զգալի մասով հնչակյան պարտիայի նախկին անդամներից կամ նրանց ազդեցության տակ գտնվող աշխատավորներից, որոնք անցյալի իրենց նացիոնալիստական բագաժը աստի-

[64] Տե՛ս «Χαράκτα Χρόνια του ΚΚΕ-1918-1938 Επιλογή κειμένων», էջ 205, (ընդգծումը մերն է—Պ. Կ.)։

ճանաչար հաղթահարում էին դասակարգային պայքարի բովում, կոմունիստական պարտիաների շարքերում։

Սոցիալ-դեմոկրատիզմը, ըստ էության աջ օպորտունիզմը, որ կոմունիստական բոլոր պարտիաների զարգացման ընկերվարական շրջանի գլխավոր խոչընդոտներից մեկն էր, հայկական միջավայրում դրսևորվում է ազգային սահմանափակվածության տենդենցներով, որը լուրջ կերպով խանգարում էր նաև հայ առաջավոր բանվորությանը ռևոլյուցիոն շարժման մեջ ներգրավելու և նրա ինտերնացիոնալ համախմբման գործին։

Կոմունիստական ինտերնացիոնալի III կոնգրեսն ամենայն վճռականությամբ պարտավորեցրեց իր բոլոր սեկցիաներին՝ մաքրազատվել մանրբուրժուական տարրերից, որոնք շարունակում էին գործել II Ինտերնացիոնալի ոգով, արգելակելով նոր տիպի՝ պրոլետարական ռևոլյուցիոն պարտիաների ստեղծումը։ Պայքարը սոցիալ-դեմոկրատական տրադիցիաների դեմ, որ սկսվել էր Հունաստանի կոմպարտիայի շարքերում դեռ 1923—24 թվականներին, հատկապես սուր բնույթ ստացավ պանկալոսյան դիկտատուրայի անկումից հետո, երբ պարտիայի առաջ ծառացավ լիկվիդարիզմի և տրոցկիզմի հաղթահարման խնդիրը։

Հունահայ կոմունիստները ամբողջ պարտիայի և կոմինտերնի հետ միասին գաղափարական լուրջ կռիվում ստացան հակալենինյան թեքումների դեմ մղվող պայքարում, բաղաքականապես և կազմակերպորեն աճեցին՝ դառնալով հունահայ գաղութի ամենաառողջ առաջադիմական հասարակական ուժը։ Հունական ռեակցիան հատուկ կատաղությամբ հարձակվեց ազգային փոքրամասնությունների և մասնավորապես հայ փոքրամասնության կոմունիստական ու առաջադիմական կազմակերպությունների վրա, ձերբակալեց, աքսորեց և Հունաստանից արտաքսեց նրա աշքի ընկնող ղեկավար-ակտիվիստներին և ինչպես նշել ենք, խափանեց «Աշխատանք» կոմունիստական թերթի հրատարակությունը Սալոնիկում։ Այս հարվածների հետևանքով ժամանակավորապես թուլացավ հայ կոմունիստների առավել կազմակերպ-

ված և կոփված ջոկատի գործունեությունը Մակեդոնիայի և Թրակիայի շրջաններում։ Այս իրադրության մեջ Աթենքի և Պիրեայի հայկական կոմունիստական խմբերի ռևոլյուցիոն գործունեության նշանակությունը ավելի ևս մեծացավ ամբողջ դաղութի համար, Հունաստանի բոլոր ծայրամասերում գործող հայ կոմունիստների համար։ Սակայն բանն այն է, որ Աթենքի, Սալոնիկի հայկական կոմունիստական խմբերի ղեկավարության որոշ անդամներ տուրք տալով ազգային սահմանափակվածության տենդենցներին, ապակողմնորոշում էին հայ կոմունիստներին իրենց գործունեության մեջ։

Հակադաշնակ պայքարի գծով զարգացնելով համագործակցությունը ազգայնական պարտիաների և դեմոկրատական կազմակերպությունների հետ, հայկական խմբերի առանձին ղեկավարներ մոռացության տվեցին այն կարևոր հանգամանքը, որ այդ համագործակցության մեջ կոմունիստները պարտավոր են պաշտպանել իրենց դասակարգային ինքնուրույն ինտերնացիոնալ գիծը, որ կոմունիստների մասսայական աշխատանքի հիմնական նպատակն է դաստիարակել բանվորներին և աշխատավորներին պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով, նրանց ազգայնական պարտիաների քաղաքական ազդեցությունից ազատելու և հունական բանվորական ռևոլյուցիոն շարժման մեջ ներգրավելու համար։ Առանց այդ նպատակին հասնելու՝ կոմունիստների լեգալ գործունեությունը, որքան էլ այդ հակադաշնակ բնույթ կրեր, հավասարազոր էր կապիտուլյացիայի ազգայնական պարտիաների առաջ, որոնք ակտիվ կերպով պայքարում էին հայ աշխատավորությանը Հունաստանի բանվոր դասակարգի պայքարից հեռու պահելու համար, քարոզելով երկրի «ներքին գործերին չմիջամտելու» և հայերի «հյուր» լինելու բուրժուական «թեորիաները»։ Թեև ներպարտիական սուր պայքարի ժամանակ լիկվիդարիստներն ու միացյալ օպոզիցիան չունեցան իրենց ակտիվ հետևորդները հայ կոմունիստների շրջանում, սակայն նրանց հետագա գործունեության համար ոչ պակաս վտանգ էին ներկայացնում այն տենդենցները, որոնք ուղղված էին կոմունիստների գործունեության սահմանափակմանը սոսկ հայկական գաղութի

Սուրեն Մառուկյան

կամ Սովետական Հայաստանի բարեկամների ժողովրդական շարժման շրջանակներում։ Հունաստանի կոմպարտիան, կոմերիտմիությունը և նրանց մարտական շարքերում գործող հայ կոմունիստները, տեռորի և հալածանքի ամենադժվարին պայմաններում պատրաստվում էին նոր ընդհատակի համար, ամրապնդելով իրենց անլեգալ ապարատը։ Այս պայմաններ-

բում լեգալիստական հոռետեսական տրամադրությունների դրսևորումը տհաճ աննկարագրելի ներգործություն էր ստեղծում պարտիական և կոմերիտական մասսայի ռևոլյուցիոն ընդհանուր լավատեսության ու խանդավառության ֆոնի վրա։ Հոռետեսությունը բխում էր Աթենքի հայկական խմբի (ֆրակցիայի) ղեկավարության որոշ անդամների թերահավատությունից դեպի հայ բանվորների ռևոլյուցիոն հնարավորությունները, և հետևանք էր նրանց կտրվածությանը աճող կոմունիստական շարժումից, նրանց անկարողությանը վերակառուցվելու նոր իրադրության և նրա առաջադրած խնդիրներին համապատասխան։

«Աշխատանք» կոմունիստական թերթի խափանումից և դեմոկրատական «Հաղթանակ» օրաթերթի հրատարակման դադարումից հետո, 1927 թվի վերջերին, ոչ միայն Աթենքում, Պիրեայում, Սալոնիկում, այլև ուրիշ քաղաքներում կոմունիստներն ունեին գործուն ուժեր և քաղաքական զգալի ազդեցություն հունահայ գաղութում։ Հայկական կոմունիստական կազմակերպությունների առաջ հրատապ խնդիր էր դրված՝ խափանված «Աշխատանք» թերթի փոխարեն Աթենքում հրատարակել Հունաստանի կոմպարտիայի հայկական հատվածի նոր մարտական օրգանը, որը պայքարելով ազգայնական պարտիաների գաղափարախոսության դեմ, պետք է դաստիարակեր հայ աշխատավորական մասսաներին սովետական հայրենիքի հանդեպ անվերապահ նվիրվածության և պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով, կազմակերպեր և ապահովեր նրանց ակտիվ մասնակցությունը Հունաստանի բանվոր դասակարգի ու ազատասեր ժողովրդի ռևոլյուցիոն, հակաֆաշիստական պայքարին։ Սակայն Աթենքի հայկական կոմունիստական խմբի ղեկավարության անդամների որոշ մասը, տուրք տալով լեգալիստական տրամադրություններին, փոխանակ վերակառուցելու իր աշխատանքները և ձեռնամուխ լինելու կոմպարտիայի հայերեն նոր օրգանի հրատարակությանը, 1928 թ. սկզբներին սկսեց Աթենքում հրատարակել «Արձագանք» թերթը, որը ոչ միայն չկարողացավ շարունակել «Աշխատանք»-ի դասակարգային դիծը, այլև մոռացության

տալով Հունահայ աշխատավորության ռևոլյուցիոն պայքարի տարադիրները, նահանջ կատարեց պրոլետարական ինտերնացիոնալիզմի մարտական դիրքերից, դժվարացնելով հայ փոքրամասնության մեջ կոմպարտիայի ազդեցությունը տարածելու գործը։

Հունաստանի կոմպարտիայի Կենտրոնական կոմիտեն 1928 թվականի կեսերին քննության առավ հայ փոքրամասնության մեջ տարվող աշխատանքների վիճակը, և հաստատելով պարտիական գծի խախտման փաստերի, ազգային սահմանափակվածության վնասակար տենդենցների առկայությունը, Աթենքի ֆրակցիայի ղեկավարությունից և ապա Հունաստանի կոմպարտիայի շարքերից հեռացրեց մի շարք աշխատողների, իսկ նրանց տեղը առաջ քաշեց ռևոլյուցիոն պայքարում կոփված նոր ընկերների, ինչպես Պիրեայի պարտիայի մարզկոմի անդամ, գործարար բանվոր Հովսեփ Սերոբյանին, կոմերիտմիության Պիրեայի մարզկոմի քարտուղար Մինաս Մարտիկյանին, ժողովրդական մեծ հեղինակություն վայելող բանվոր Սուրեն Մառուկյանին, իսկ հետագայում նաև աննկուն մարտիկ Վահրամ Սաքայանին, Գրիգոր Նազիկյանին, Մանուկ Տեփոյանին, Հովհաննես Խաչիկյանին և ուրիշ ընկերների։ Հունաստանի կոմպարտիայի Կենտրոնական կոմիտեի առաջադրանքով Աթենքի կոմունիստական ֆրակցիայի նոր ղեկավարությանը հանձնարարվեց նաև կոորդինացնել հայկական կոմունիստական խմբերի աշխատանքները Կենտրոնական բյուրոյի իրավունքով[65]։ Կենտրոնական բյուրոյի քարտուղար ընտրվեց ընկ. Հովսեփ Պողոսի Սերոբյանը։ Առաջ բաշված այս և մի շարք ուրիշ պարտիական և կոմերիտական հայ ակտիվիստներ, որոնք սերտորեն կապ-

---

[65] Հետագայում՝ 1929 թ. սկսած մինչև 30-ական թվականների կեսերը հայկական կոմունիստական խմբերի բյուրոն պաշտոնապես հանդես է եկել «Հունաստանի կոմկուսի հայկական ֆրակցիա», «Հունաստանի կոմկուսի հայկական ֆրակցիայի կենտրոնական բյուրո», «Հունաստանի կոմկուսի հայկական բյուրո» անվանումներով։ Բյուրոն գործել է անլեգալ պայմաններում, գտնվելով Հունաստանի կոմպարտիայի Կենտկոմի անմիջական ղեկավարության տակ։

Հովսեփ Սերոբյան

ված էին ընդհանրապես շարժման և մասնավորապես հայաշատ բաղաքներում գործող կոմֆրակցիաների հետ, հետագայում հանդիսացան Հունաստանի կոմպարտիայի ամուր հենարանը հայ փոքրամասնության մեջ ռևոլյուցիոն աշխատանքները բարելավելու և պրոլետարական ինտերնացիոնալիզմի գիծը հայկական սեկցիայի գործունեության մեջ իրականացնելու գործում[66]։

---

[66] Հ. Սերոբյանը *1928 թ. մասնակցել է ՀԿՊ IV համագումարին որպես դելեգատ, իսկ 1930 թ. Պրոֆինտերնի կոնգրեսին Հունաստանի արհմիութենական ներկայացուցչության կազմում, ապա վերադառնալով Հունաստան, մեծ խանդավառությամբ շարունակել է իր ռևոլյուցիոն գործունեությունը։ 1932 թ. վերադառնալով Սովետական Հայաստան, եղել է ՀՍԿ-ի Գլխավոր վարչության ղեկավար աշխատող։ Զոհվել է Հայրենական մեծ պատերազմում, 1942 թ. մարտի 10-ին, Մինսկի տակ մղված մարտերում։*

Ազգային սահմանափակվածության հայացքների ու պրակտիկայի միահամուռ քննադատությունն ու հետագա հաղթահարումը ցույց էին տալիս հունահայ կոմունիստների քաղաքական հասունությունն ու մարքս-լենինյան կոփվածությունը, որ նրանք ձեռք էին բերել դասակարգային մարտերում և պարտիայի գլխավոր գծի անաղարտության համար մղած պայքարում։ Հետագա ժամանակաշրջանում էլ ավելի սերտորեն համախմբվելով ՀԿՊ ԿԿ-ի շուրջ, հունահայ կոմունիստները հասան լուրջ հաջողությունների իրենց ժողովրդասեր ու ռևոլյուցիոն գործունեության մեջ, դառնալով հունահայ աշխատավորության մարտական ղեկավարները ազգային ճնշման և կապիտալիստական շահագործման դեմ մղվող պայքարում։

Սուրեն Մառուկյանը *պարտիական ուսումնառության շրջանն ավարտելով Մոսկվայում, Միջազգային պարտդպրոցում, հետագայում գտնվում էր Ուկրաինայում (1933—1935 թթ.) որպես պարտիական-քաղաքական աշխատող և այնտեղ էլ անժամանակ վախճանվեց իր ուժերի ծաղկման շրջանում, ծանր հիվանդության հետևանքով։*

1932 թ. հայրենադարձված Հովհ. Խաչիկյանը զոհվեց Հայրենական մեծ պատերազմում, Մ. Տեփոյանը վախճանվեց Երևանում՝ Հայրենական մեծ պատերազմից վերադառնալուց հետո։ Հունաստանից 1930 թ. որպես քաղաքական աքսորական արտաքսված Մ. Մաուտիկյանը, 1932 թ.՝ Գր. Նազիկյանը, որպես ՍՄԿՊ անդամներ և գիտական աշխատողներ, շարունակում են իրենց գործունեությունը Սովետական Հայաստանում։

ՎԵՐՋԱԲԱՆ

Կապիտալիզմի մասնակի կայունացումը Հունաստանում երկար չտևեց։ 1928 թ. երկրորդ կեսին սկսեցին երևան գալ տնտեսական ճգնաժամի առաջին նշանները, որոնք արտահայտվեցին ամենից առաջ գյուղացիներից գնվող գյուղատնտեսական մթերքների գների անկման մեջ։ 1929 թ. տնտեսական ճգնաժամը ծավալվեց՝ ընդգրկելով երկրի ողջ տնտեսությունը իր բոլոր ճյուղերով։ Բանվորա-գյուղացիական մասսաների տնտեսական դրության վատթարացման հողի վրա սկսվում է ռևոլյուցիոն շարժման նոր վերելքը թե քաղաքում և թե գյուղում։ Հունաստանի կոմունիստական պարտիան հաղթահարելով իր ներքին դժվարությունները, ամբողջովին նվիրվում է բանվորա-գյուղացիական մասսաների ռևոլյուցիոն պայքարի կազմակերպմանը։ Պարտիան հաջողությամբ ղեկավարում է ծխախոտագործների, սննդարդյունաբերության և կառուցող բանվորների, ծովայինների համահունաստանյան գործադուլները, Կրետե կղզու գյուղացիական ապստամբությունները (1928 թ.), Լավրիոնի և Էլեվսինայի հանքափորների, Սալոնիկի ծխախոտագործների գործադուլները, Աղրինիոնի գործադուրկ պրոլետարների բարիկադային մարտերը, Թասոս կղզու ծխախոտագործների ռևոլյուցիոն ելույթները, որոնք արտահայտվեցին նրանց կողմից կղզու նավահանգստում խարսխված նավերը գրավելու և դեպի Կավալա քաղաքը քաղցարշավ կազմակերպելու մեջ, Միտիլինի կղզու բանվորական ռևոլյուցիոն ելույթները, Կիլկիսի գյուղացիության ապստամբությունը և այլն (1929)։

Հայկական կոմունիստական կազմակերպությունները ամրապնդելով իրենց մարտական շարքերը, եռանդուն գործունեություն ծավալեցին հացի և ազատության համար մղվող դասակարգային մարտերին հայ աշխատավորության մասնակցությունը կազմակերպելու ուղղությամբ։ Կոմունիստները հանդես եկան դեմոկրատական նորանոր մասսայական կազմակերպությունների ստեղծման նախաձեռնությամբ և վերակենդանացրին հունահայ գաղութի հակադաշնակ բոլոր կազմակերպությունների գործունեությունը։ Այդ ամենի մեջ դասակարգային պայքարի սրման և ֆաշիստական տեռորի ուժեղացման պայմաններում հատուկ կարևոր դեր խաղաց 1930 թ. սկզբներից հրատարակվող Հունաստանի կոմպարտիայի հայկական սեկցիայի մարտական օրգան «Ժողովուրդի Ձայն» թերթը, որը 46-րդ համարից հետո, խմբագրական կոլեգիայի անդամ Խաչիկ Կոկայանի և խմբագիր Մինաս Մարտիկյանի ձերբակալության և աքսորման հետևանքով (1930 թ. հուլիս-սեպտեմբեր), որոշ ընդհատումներով շարունակվեց 1931 թ. մարտ ամսից մինչև 1934 թ. առաջին կեսը, վերանվանելով «Նոր շարժում»։

Հետագա տարիներին հունահայ կոմունիստները, դեմոկրատական առաջավոր տարրերի հետ համագործակցելով, հրատարակեցին «Սևան», «Երևան», «Նոր կյանք» և առաջադիմական այլ թերթեր, որոնք տարբեր ժամանակաշրջաններում հանդիսացան հակադաշնակ ճակատի ժողովրդական օրգաններ։

Հարուստ է սիրիահայության անբաժան մասը կազմող հունահայ աշխատավորության ռևոլյուցիոն պայքարի պատմությունը, որը և հանդիսանում է հունահայ գաղութի նորագույն շրջանի պատմության հիմնական բովանդակությունը։

Մենք փորձեցինք լուսաբանել այդ պատմության միայն մի փոքր ժամանակաշրջանը, որն ընդգրկում է հիմնականում 1918 թ. մինչև 1928 թ. սկզբները, երբ դեմոկրատական շարժման ընդհանուր ամրապնդման հիման վրա գաղութի հասարակական կյանքում հանդես եկան Հունաստանի կոմպարտիայի առաջին հայկական խմբերը, որոնք իրենց անդրանիկ

օրգանով՝ «Աշխատանք» թերթով մարքսիզմ-լենինիզմի դիրքերից պատերազմ հայտարարեցին բուրժուական նացիոնալիզմին և, լայնորեն պարզած պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշը, կոփեցին հայ և հույն աշխատավորության ռևոլյուցիոն պայքարի միասնությունը։ Հետագա տարիներին այդ գաղափարները տիրեցին հազարավոր հունահայ բանվորների, գյուղացիների, արհեստավորների և մտավորականների մտքին, որոնք ասպիճանաբար ազատագրվելով նացիոնալիստական պարտիաների ազդեցությունից, անվերապահորեն կանգնեցին սովետական հայրենիքի պաշտպանության դիրքերում, հերոսաբար մասնակցեցին ֆաշիզմի դեմ մղվող դաժան պայքարին թե Մեսոպոտամիայի դիկտատուրայի և թե գերմանական օկուպացիայի տարիներին։ Այդ պայքարում հունահայ աշխատավորները ավելին բազմաթիվ զոհեր, ցուցաբերելով մարտական ոգի, խիզախություն և անսահման անձնվիրություն։ Ոչ բանտերը, ոչ աքսորավայրերը և ոչ էլ թշնամական գնդակները չկարողացան ընկճել հայ առաջավոր բանվորների ռևոլյուցիոն ոգին։

Մարտնչող հույն ժողովուրդը երբեք չի մոռանա, որ ֆաշիստական օկուպացիայի ամենադժվարին տարիներին հայկական թաղամասերը, հատկապես Աթենքում և Պիրեայում, եղել են ազատագրական պայքարի անընկճելի միջնաբերդեր, որ Հունաստանի ազատաշունչ լեռներում, հույն պարտիզանների հետ ուս-ուսի, ասպնջական Հելլադայի ազատագրման համար զենքը ձեռքին կռվել են հայ ժողովրդի հարյուրավոր լավագույն զավակներ՝ անվեհեր մարտիկներ, որոնցից շատերն իրենց կյանքն են զոհաբերել ազատագրության գործին, իրենց անբիծ արյամբ ամրապնդելով հայ և հույն ժողովուրդների դարավոր եղբայրությունն ու մարտական բարեկամությունը, հարստացնելով այդ բարեկամության պատմությունը համատեղ պայքարի հուզիչ դրվագներով և նոր ու փայլուն էջերով։ Որպես Հունաստանի կոմպարտիայի հայկական սեկցիայի և մասսայական դեմոկրատական կազմակերպությունների բեղմնավոր գործունեության դրական արդյունք պետք է դիտել, անշուշտ, և այն պատմական անժխտելի իրողությունը,

որ 1924—1927 թվականներին և հետագա տարիներին Հունաստանից հայրենադարձված հայ աշխատավորները հայրենասիրական մեծ խանդավառությամբ լծվեցին սոցիալիստական շինարարության վեհ գործին, դիտակից կարգապահությամբ և հայրենանվեր աշխատանքով հաղթահարելով սոցիալիստական կառուցման դժվարությունները և ցուցադրելով աշխատանքային ու մարտական սխրագործության հերոսական օրինակներ ինչպես սոցիալիզմի կառուցման, այնպես էլ Հայրենական մեծ պատերազմի ճակատամասերում։

РЕЗЮМЕ

Великая Октябрьская социалистическая революция ознаменовала коренной перелом в исторических судьбах народов мира и положила начало новой эры в истории человечества—эры крушения капитализма и победы нового, социалистического общества.

Трудящиеся Армении, следуя примеру русских рабочих и крестьян, под руководством Коммунистической партии свергли иго дашнакского контрреволюционного правительства и в ноябре 1920 года установили Советскую власть. Армянский народ восстановил не только свою утерянную веками государственность и национальную независимость, но и получил реальную возможность подлинного социального и национального возрождения, объединения на родной земле рассеянных по всему миру армян.

Сотни тысяч зарубежных армян-трудящихся, ведущих скитальческую жизнь в капиталистических странах, благодаря ленинской национальной политике Советского правительства были репатрированы в Советскую Армению и в настоящее время активно участвуют в строительстве коммунизма.

Армянская Советская Социалистическая Республика стала символом надежды для зарубежных трудящихся армян, вместе со всеми прогрессивными силами активно участвующих в борьбе против поджигателей войны, в защиту дела мира, демократии и социализма.

Заметным пробелом в работах историков Советской Армении и до сих пор остается слабое освещение проблем зарубежных армянских колоний и, в частности, вопросов участия трудящихся армян в революционном рабочем и коммунистическом движении.

Актуальность и своевременность этой проблемы диктуется не только необходимостью показать в более полном и всестороннем виде новейшую историю армянского народа, но и тем обстоятельством, что за весь период после Великой Октябрьской социалистической революции передовые слои зарубежных трудящихся армян почти во всех капиталистических странах, где они нашли приют от турецких преследований и избиений, в годы первой мировой войны и после нее активно участвовали в борьбе народов этих стран против капитализма и фашизма, особенно во время второй мировой войны.

В этой борьбе зарубежные армянские коммунисты и демократы—члены братских коммунистических партий и прогрессивных организаций—понесли большие потери. Многие из них покрыли свои имена неувядаемой славой героев, отдавших свою жизнь в борьбе против фашизма. Среди них особенно ярко сияет светлый образ воспитанного в рядах болгарского революционного движения члена Центрального Комитета Болгарской компартии и секретаря Пловдивского окружного комитета Степана Шахбазяна, злодейски убитого фашистскими палачами во время антифашистского народного восстания в сентябре 1923 года. Символом мужества для бойцов Сопротивления являлось имя воспитанного в рядах Французской коммунистической партии боевого командира интернациональных партизанских групп Мисака Манушяна, расстрелянного в 1944 году в Париже приговором фашистского трибунала. Славой бессмертия увенчал свое имя пламенный борец за дело коммунизма член Коммунистической партии Греции Ваграм Сакаян, кото-

рый, выйдя после долголетнего заключения из концентрационного лагеря Акронавплия, снова посвятил себя революционной деятельности, организовав активное участие трудящихся армян в национально-освободительной борьбе греческого народа против немецких и итальянских оккупантов. Будучи арестован в Афинах в 1944 году, он был зверски убит фашистскими карателями.

Во многих капиталистических странах сотни передовых армян—рабочих, крестьян, ремесленников и интеллигентов—рука об руку со своими классовыми братьями активно участвовали в борьбе против фашизма.

Освещение этого сложного исторического процесса со всеми его проявлениями, конечно, нуждается в серьезном исследовании.

Настоящая работа является первым опытом в этом направлении. В ней изучается экономическая и политическая жизнь одной из крупных зарубежных армянских колоний, исследуется история участия трудящихся армян в демократическом и коммунистическом движении в Греции, деятельность Компартии Греции среди армянского национального меньшинства в период 1918—1927 гг.

В работе использованы решения съездов, конференций и пленумов ЦК КП Греции, архивные документальные материалы, коммунистическая пресса и историко-революционная литература на греческом языке, а также армянская периодическая печать, издаваемая в Греции и в других странах. В частности, использованы орган ЦК КП Греции газета «Ризоспастис», органы армянской секции Компартии Греции—газеты «Ашхатанк» (Труд), «Жоговурти дзайн» (Голос народа), «Нор шаржум» (Новое движение), а также газеты армянской секции компартии Болгарии «Кармир лурер» (Красные вести) и «Нор ашхар» (Новый мир), газеты армянской секции

Компартии США «Пролетар», «Нор Ашхар», газеты армянской секции компартии Франции «Банвор Париз» (Рабочий Париж), «Ереван» и др.

Работа состоит из введения, четырех глав и заключения.

В первой главе—«Образование армянской колонии в Греции и экономико-политическое положение трудящихся армян»—дан краткий исторический обзор и показаны причины массовой иммиграции армян в Грецию, в результате последовавших после первой мировой войны киликийских событий и греко-турецкой войны. В начале 1920-х годов армянская колония Греции стала одной из наиболее многолюдных колоний.

Первая значительная послевоенная иммиграция армянских беженцев в Грецию началась в конце 1921 г., после того как турецкие войска изгнали французских оккупантов из Киликии. Второй поток беженцев начался после разгрома греческой оккупационной армии и занятия турецкими войсками Измира 9-го сентября 1922 г. Третий поток беженцев начался в связи с оставлением ранее оккупированной греческой армией территории Восточной Фракии.

По данным официальной переписи 1928 г.[1], общее число беженцев, хлынувших в Грецию за 1918—1923 гг., составляло 1. 221. 849 человек, из которых 980. 000 греков, а остальные 241. 849 человек—иных национальностей, среди которых большинство составляли армяне.

На основе анализа различных официальных источников и исследований, в работе указывается, что общее число армян-беженцев в Греции составляло в 1922—1923 годах около 120. 000 человек. Из этого количества 50. 000 человек в конце 1922 года проживало на территории кон-

[1] См. «Икономикос Тахидромос» за 31 марта 1929 г.

тинентальной Греции и на островах, а остальная часть была устроена в районах Новой Греции, т. е. в Македонии и в Западной Фракии[1]. Только в городах Афины и Пирей и в их окрестностях проживало более 30. 000 армянских беженцев, которые были «устроены» в палатках, во дворах церквей и под открытым небом. На островах Крит, Самос, Митилини, Хиос, Сира, Закинтос, Корфу и других армянские беженцы создали свои общины. Большие группы беженцев были рассеяны также в городах Пелопоннеса и в районах Фессалии.

Крупным центром армянских беженцев был город Салоники со своими многочисленными поселками, а также города и села Македонии (Кавала, Драма, Серез, Флорина, Козана и т. д.) и Западной Фракии (Комотини, Ксанти, Александруполис и т. д.).

Основное внимание в этой главе уделено вопросам тяжелого экономического положения армянских и греческих трудящихся, показан реакционный курс буржуазии, попавшей в финансовую зависимость от американского, английского и французского империализма, проводившей внутри страны политику неудержимой эксплуатации греческих и инонациональных масс. Вопрос об устройстве армянских беженцев буржуазия превратила в предмет узкокорыстного торга в Лиге наций, а в самой стране проводила политику преследования угнетенных национальных меньшинств, в частности армян.

Согласно официальным данным, в декабре 1922 г. только в континентальной Греции и на островах 30. 000 армянских беженцев нуждались в насущном хлебе, 35. 000 человек—в оказании помощи одеждой и бельем, 30. 000 человек—в одеялах, обуви и мыле, 5. 000 детей—в молоке и питании[2]. 65. 000 армянских беженцев были

---

[1] «Еркунк», Пирей, 1922, № 21.

[2] Там же, № 15.

зарегистрированы в государственных органах как абсолютно нуждающиеся[1].

С первых же лет массовой иммиграции армян в Грецию греческое правительство поставило перед Лигой наций вопрос о невозможности дальнейшего пребывания армянских беженцев в Греции. Этой кампанией национальной дискриминации реакция стремилась отвлечь внимание греческих трудящихся от борьбы за свои насущные требования, искусственно вызвать национальную рознь между двумя народами. Между тем очень скоро трудящиеся армяне стали активно участвовать в промышленной жизни Греции, особенно в области производства ковров, шелковых изделий, шелководства и т. п. 40 % рабочих и специалистов ковровых фабрик Афин составляли армяне. Десятки тысяч армянских рабочих трудились на хлопко-шелкообрабатывающих, на табачных и текстильных фабриках —всюду, где требовались дешевые и умелые руки. Они привезли с собой в Грецию искусство отделки фарфора. Армянские женщины внедрили также искусство восточного рукоделия, а крестьяне—новые сорта сельскохозяйственных культур, тем самым открывая новый источник доходов для экономики Греции.

В работе показывается тяжелое положение подрастающего поколения, бесперспективная жизнь 20. 000 армянских сирот, находившихся в английских и американских сиротских домах. Эти сироты по достижении совершеннолетия отправлялись на табачные плантации Македонии и Фракии для работы в кабальных условиях. Американские ассимиляторы запрещали сиротам даже говорить на своем родном армянском языке.

В отличие от других национальных меньшинств (евреи, турки) армянская колония была признана прави-

---

[1] См. статью П. Аргиропулоса «Греческое правительство и армянские беженцы»,—«Нор алик», Салоники, 1924, № 215.

тельством лишь как религиозная община, а трудящиеся армяне были лишены политических прав.

После объявления Греции республикой (25 марта 1924 г.) одним из первых мероприятий первого «демократического» буржуазного правительства, возглавляемого Папанастасиу, было осуществление коварного плана массового изгнания армянского населения из своих потом и кровью обжитых мест. С конца марта 1924 г. начались насильственные выселения армян из городов и сел Македонии и Фракии и отправка их в засушливые горные районы Пелопоннеса, причем греческому населению строго было запрещено покупать что-либо у армянских трудящихся. Государственные чиновники конфисковали имущество и урожай выселяемых, засчитывая их стоимость в оплату той помощи, которую армяне получили от государства в первые месяцы прибытия в Грецию. На квартирах и земельных участках изгнанных армян правительство размещало греческих беженцев. Выселение почти 10 тысяч армян из районов Македонии и Фракии стало причиной полного разорения тысяч армянских семей, вызвав невиданное обнищание. По приблизительным подсчетам материальный ущерб, нанесенный армянскому населению Греции вследствие этих выселений, только в 1924 году достигал свыше 30 миллионов драхм.

Жестокие условия буржуазно-помещичьей эксплуатации и национального угнетения превратили абсолютное большинство населения армянской колонии в самую обездоленную и угнетенную часть греческого общества. Это и послужило социальной основой для сплочения трудящихся армян вокруг греческого пролетариата и его авангарда—Коммунистической партии, последовательно выступавшей за равноправие трудящихся всех национальностей.

Во второй главе—«Политические течения в армянской колонии Греции»—дан исторический обзор деятельности

молодой Коммунистической партии по организации борьбы рабочего класса и трудящихся масс против малоазиатской империалистической войны и против участия Греции в антисоветской интервенции. Эта борьба оказала решающее влияние на формирование революционных, демократических сил армянских трудящихся и других национальных меньшинств Греции.

Еще в 90-х годах XIX века, под влиянием общего развития демократического и социалистического движения, среди армянских трудящихся Греции началось распространение прогрессивных, национально-освободительных и социалистических идей. Об этом свидетельствуют, например, издание в 1893 г. в виде отдельной брошюры одной главы из произведения К. Маркса «Наемный труд и капитал», а также опубликование на страницах армянского журнала «Гагапар» (Идея) в 1894 году двух глав «Коммунистического манифеста». Эти факты подтверждают, что передовой части армянских рабочих и ремесленников тогдашней малочисленной колонии уже были знакомы идеи марксизма.

Важное значение для революционного воспитания трудящихся имело также созданное в Салониках, после объявления турецкой Конституции 1908 г., интернациональной социалистической организации «Федерасион», которая объединяла в своих рядах греческих, еврейских, болгарских и армянских рабочих.

Выйдя победительницей из Балканской войны 1912—1913 гг., Греция получила южную Македонию вместе с г. Салоники, Западную Фракию, остров Крит и Южный Эпир. Территория Греции удвоилась, а ряды рабочего класса увеличились за счет новых боевых отрядов многонациональных и организованных рабочих Македонии.

Проживающие в Южной Македонии и в Западной Фракии армяне, в частности воспитанные в рядах социалистической рабочей революционной организации «Фе-

дераспон», среди которых было много рабочих-табачников, также присоединились к армянской колонии Греции, принося с собой боевые традиции пролетарского интернационализма.

В работе отражено решающее влияние Великой Октябрьской социалистической революции в деле сплочения боевых сил рабочего класса и создания в ноябре 1918 г. Социалистической рабочей партии, которая впоследствии была переименована в Коммунистическую партию Греции. Вступление Балканской социалистической федерации в ряды Коммунистического Интернационала и переименование ее в январе 1920 г. в Балканскую коммунистическую федерацию создало прочную основу для боевого сотрудничества не только между коммунистическими партиями Балканских стран, но и между существующими армянскими коммунистическими группами, организационно входящими в эти партии. Серьезную помощь этим группам оказывала целеустремленная работа армянских коммунистов Болгарии, проводимая под руководством члена ЦК БКП Степана Шахбазяна. После Первого Конгресса Коминтерна в июле 1919 г. в Пловдиве было напечатано первое коммунистическое воззвание[1] на армянском языке, которое было широко распространено во многих зарубежных армянских колониях, особенно на Балканах. Это воззвание разоблачало антинародную политику буржуазных националистических партий и призывало армянских рабочих сплотиться вокруг коммунистических партий своих стран под знаменем Коммунистического Интернационала. Контакт, существовавший в 1919—1923 г. между коммунистическими группами Болгарии и Греции, поддерживался благодаря существо-

[1] Это воззвание было напечатано в виде маленькой брошюры и состояло из 16 страниц. Оно было отредактировано ветераном болгарского революционного движения Степаном Шахбазяном. См. ЦГА ОРСС Арм. ССР, ф. 4/114, оп. 1, дело 63, л. 9—17.

ванию при ЦК БКП так называемого «Комитета печати» (в Пловдиве), который периодически посылал этим группам инструктивные письма и отвечал на все волнующие их вопросы. Так, например, в одном из таких писем, датированном январем 1920 г., говорится, что целью коммунистических групп является «организация армянских рабочих и мелких ремесленников в отдельный союз, вне армянских националистических партий гнчаков, дашнаков и рамкаваров, во имя коммунизма и Третьего Интернационала»[1]. Коммунистические организации во всех зарубежных армянских колониях создавались и укреплялись в непримиримой борьбе с буржуазными националистическими партиями. Они были пламенными глашатаями идей пролетарского интернационализма.

Летом 1920 г. в Пловдиве начала издаваться первая на Балканах коммунистическая армянская газета «Кармир лурер». С 15 марта 1922 г. она продолжала свое издание под названием «Нор ашхар». Эти коммунистические газеты распространялись также в Греции, значительно содействуя формированию революционного течения в общественно-политической жизни армянской колонии.

В работе показывается острая политическая борьба между демократическими и реакционными силами, происходившая в процессе создания органов национального самоуправления, общественных и культурно-массовых организаций, а также армянской печати. Здесь же дается характеристика всех политических партий и течений в армянской колонии, их отношение к Советской власти в Армении, а также различная тактика коммунистов в отношении националистических партий дашнаков, гнчаков и рамкаваров. В непримиримой борьбе против идеологии и практики этих партий выросли и укрепились коммунистические и демократические кадры, обеспечивающие по-

[1] См. ЦГА ОРСС Арм. ССР, ф. 4/114, оп. 1, д. 63, л. 1.

беду революционно-демократического направления в общественной жизни колонии и сплотившие всех трудящихся армян вокруг их освобожденной родины—Советской Армении. Под руководством КП Греции коммунисты крепили боевое сотрудничество армянских и греческих трудящихся в борьбе против реакции.

В третьей главе—«Внутриполитическая борьба в армянской колонии»—показана совместная борьба армянских коммунистов и демократов за создание единого фронта всех организаций, стоящих на позициях друзей Советской Армении.

Коммунисты выступали инициаторами создания массовых народных организаций, среди которых особо важную роль сыграли комитеты помощи Армении (ХОК), филиалы Армянского Государственного Красного Креста, демократические молодежные организации сирот, молодежные организации армянских беженцев, рабочие спортивные союзы и другие культурно-массовые и земляческие организации.

Применяя тактику единого фронта и активно сотрудничая со всеми прогрессивными организациями, коммунистам удалось сплотить абсолютное большинство демократической общественности армянской колонии вокруг Советского Союза и Советской Армении и обеспечить внушительную победу демократических сил на выборах депутатов национального политического собрания Македонии и Фракии (Салоник), происходивших 7 сентября 1924 г., а также на выборах второго созыва национального собрания Континентальной Греции (Афины), происходивших 27 сентября 1925 г.

В работе показывается острая борьба во время выборов высшего органа национального самоуправления и поселковых Советов, дается характеристика участвующих в избирательной борьбе политических сил, анализируется тактическая линия коммунистов на полную поли-

тическую изоляцию контрреволюционных дашнаков в представительных органах колонии. В начале 1926 г. совместными усилиями коммунистов и демократов в Афинах стала издаваться ежедневная демократическая газета «Ахтанак» (Победа), которая сыграла большую роль в дальнейшем укреплении демократического единого фронта.

В годы фашистской диктатуры Пангалоса армянские коммунисты под руководством КП Греции использовали малейшие легальные возможности для продолжения своей революционной деятельности, сконцентрировали все свои силы на работе в массовых народных и молодежных организациях. Они организовывали собрания и митинги, выпускали множество листовок и воззваний, широко популяризировали успехи Советской Армении в строительстве социализма, организовывали участие рабочих и ремесленников в революционном движении Греции, ковали боевое единство греческих и армянских рабочих в борьбе против диктатуры.

В четвертой главе—«Деятельность армянских коммунистов после падения диктатуры Пангалоса»—показывается деятельность Компартии Греции, твердо ставшей на путь большевизации и успешно возглавлявшей движение народного сопротивления против восстановительных планов греческой буржуазии В новых, относительно легальных условиях деятельности компартии для армянских коммунистов тоже были созданы благоприятные условия для развертывания своей массовой революционной работы.

Продолжая свое активное сотрудничество с организациями, входившими в антидашнакский фронт, и содействуя его печатному органу—газете «Ахтанак», армянским коммунистам Греции удалось в августе 1926 г. издать в Салониках свою первую коммунистическую

газету «Ашхатанк» (Труд)[1], которая сыграла важную роль в деле интернационального воспитания армянских трудящихся. Газета «Ашхатанк» была активным пропагандистом идей коммунизма и организатором масс, последовательно освещала борьбу рабочего класса Греции против эксплуататоров и тесно связывала армянских трудящихся с этой борьбой. Она уделяла большое внимание проблемам греческого и международного рабочего движения, широко популяризировала достижения СССР, в частности Советской Армении. Наряду с этим, она вела непримиримую идеологическую борьбу против буржуазных националистических партий, направляя свой основной удар против контрреволюционных дашнаков. Газета «Ашхатанк» стала боевым оружием в руках коммунистов для высвобождения армянской рабочей молодежи из-под влияния националистических партий и для сплочения ее под знаменем греческого комсомола. В связи с парламентскими выборами 7 ноября 1926 г. армянские коммунисты мобилизовали все свои силы для популяризации программы избирательного единого фронта рабочих, крестьян и беженцев, выпустили на армянском языке воззвание[2] его Исполнительного Комитета «Ко всем армянским рабочим, беженцам и работникам умственного труда». Это воззвание является первым программным документом, где обстоятельно анализируется тяжелое экономическое и политическое положение страны и подчеркивается необходимость совместной борьбы армянских и греческих трудящихся за хлеб и свободу.

---

[1] Газета «Ашхатанк» издавалась в Салониках два раза в неделю—с августа 1926 г. по май 1927 г. Всего было издано 73 номера. В редколегию входили Антуан Микаелян, Степан Куртикян, Петрос Ахтикян. Издателем и директором был Акоп Кетикян.

[2] Это воззвание было напечатано в виде отдельной листовки в Салониках в типографии газеты «Просфигикое Агонас», а также полностью было помещено в газете «Ашхатанк»—№ 26 за 1926 год.

Коммунисты выпустили тысячи прокламаций, разных избирательных плакатов и листовок-молний, призывая армянских трудящихся активно участвовать во всех предвыборных собраниях, организуемых Компартией Греции.

Массовое участие армянских трудящихся на митингах, посвященных 9-й годовщине Великой Октябрьской социалистической революции, повсеместное торжественное празднование шестой годовщины победы Советской власти в Армении, выпуск массовой пропагандистской литературы свидетельствовали об укреплении влияния компартии среди армянских трудящихся, об упрочении политических позиций коммунистов. Это ярче всего выразилось в время героической борьбы 40. 000 табачных рабочих Македонии и Фракии против локаута предпринимателей (май 1927 г.), которая, благодаря руководству КП Греции, организованности и боевому сопротивлению рабочих, была превращена во всегреческую забастовку табачников. Армянские рабочие активно участвовали в этой забастовке, а многие их руководители подверглись арестам и ссылке вместе с сотнями греческих рабочих. Газета «Ашхатанк» была закрыта вследствие установления во время забастовки по всей стране террористического режима, вызвавшего мощный протест всего греческого народа и международной демократической общественности.

Армянские трудящиеся принимали активное участие в движении народного сопротивления против наступления фашизма. В работе показывается, в частности, участие молодежи в этой борьбе.

Важной вехой в истории комсомола Греции была Февральская конференция 1927 г., протекавшая под непосредственным руководством ЦК Компартии Греции и Исполкома КИМ-а.

Конференция изучила и обобщила богатый опыт под-

польной работы комсомола, накопленный в годы диктатуры Пангалоса, наметив задачи Союза в деле организации борьбы рабоче-крестьянской молодежи за свои непосредственные экономические требования, против войны и фашизма, в защиту национальных меньшинств.

Воспитывая кадры в духе ленинской принципиальности и укрепляя свои позиции на заводах, в массовых организациях и среди молодежи национальных меньшинств, КСМ Греции твердо стал на путь организационного и политического роста, на путь превращения комсомола в массовую молодежную организацию. С 300 членов в ноябре 1922 г. Союз вырос к ноябрю 1927 г., т. е. к пятилетию КСМ Греции, до 2000 членов[1].

Центральный орган КСМ Греции газета «И Неолеа» (Молодежь) увеличила свой тираж с 3.000 экземпляров в 1925 г. до 10. 000 в 1927 г. Теоретический журнал ЦК КСМ Греции «О Неос Ленинистис» (Молодой ленинец) распространялся тиражом до 3. 000 экземпляров. Кроме периодической печати, КСМ Греции выпускал ряд популярных брошюр и книг, посвященных основным вопросам марксистско-ленинской теории, отдельные произведения Маркса, Энгельса, Ленина, решения Коминтерна и КИМ-а, на которых воспитывались молодые коммунистические кадры. Широко распространяя всю эту литературу среди армянской молодежи, коммунисты издавали также отдельные брошюры и книги на армянском языке, которые, наряду с получаемой из-за границы, особенно из Советской Армении, марксистской литературой, значительно помогали воспитанию рабочей молодежи в духе пролетарского интернационализма.

Далее в работе показывается положение внутри партии после падения диктатуры Пангалоса, когда под вли-

---

[1] «Ризоспастис», 1927, № 465.

янием частичной стабилизации капитализма, некоторого ослабления революционного движения и усиления фашистского террора в рядах КП Греции появился мелкобуржуазный, социал-демократический и ликвидаторский уклон, возглавляемый бывшим секретарем ЦК КПГ Пулиопулосом. Правый уклон явился главной опасностью для КП Греции, и задача его полного разгрома стала первостепенной обязанностью всех партийных и комсомольских организаций. Во время внутрипартийной дискуссии как в первичных организациях, так и на партийных и комсомольских конференциях армянские коммунисты активно поддержали линию Центрального Комитета. Это свидетельствовало о марксистско-ленинской закалке национальных кадров Компартии Греции, об их политическом росте.

В марте 1927 г. в нелегальных условиях происходил третий съезд Компартии Греции, который резко осудил ликвидаторов и призвал всех коммунистов бороться за единство и монолитность рядов партии. Съезд обратил внимание всех партийных организаций на работу на крупных фабриках и заводах, обсудил национальный вопрос и определил задачи партии в новых условиях, заключающиеся в организации конкретной борьбы против шовинистической политики греческой буржуазии, за предоставление равноправия всем национальным меньшинствам. После съезда партийные организации вплотную занялись вопросами изучения конкретных требований и нужд национальных меньшинств, значительно улучшив дело интернационального воспитания трудящихся Греции. Компартия Греции и все ее национальные секции после съезда достигли значительных успехов во всех областях революционной работы.

В борьбе за чистоту ленинской линии партии выросли многие армянские коммунисты, которые в 1927—1928 гг. выдвинулись на руководящую партийно-комсомольскую

работу. Решительно преодолевая социал-демократические, национал-специфические тенденции, ведущие к обособлению борьбы трудящихся-армян от революционного движения греческого пролетариата, армянские коммунисты с помощью ЦК Компартии Греции в 1928 г. обновили состав руководства армянской секции и достигли значительных успехов в укреплении широкого демократического фронта и сплочения армянских рабочих вокруг Компартии и революционного пролетариата Греции. В новых условиях подъема революционного движения в Греции (1928—1936), особенно после преодоления с помощью Исполкома Коминтерна беспринципной фракционной борьбы в руководстве КПГ (1931), все организации Компартии Греции, в том числе и ее национальные секции, твердо стали на путь организационного и политического роста и успешно возглавили мощное антифашистское народное движение в стране. Армянским коммунистам удалось, кроме газет «Жоговурти дзайн» (Голос народа) и «Нор шаржум» (Новое движение), совместно с демократами и передовыми общественными силами армянской колонии выпустить прогрессивные газеты «Севан», «Ереван» и «Нор кянк» (Новая жизнь), которые в разное время являлись органами народного демократического фронта. Эти газеты сыграли важную роль в деле сплочения зарубежных армян вокруг Советского Союза и Советской Армении.

История армянской колонии Греции, составляющая неотделимую часть новейшей истории Греции, богата своим содержанием, имеет славные боевые традиции.

В настоящей работе освещается только часть этой истории (1918—1927), когда на основе общего укрепления демократического движения в армянской колонии появились первые организации Компартии Греции, которые, открыто объявив войну буржуазному национализму,

сплотили трудящихся под знаменем пролетарского интернационализма.

Трудящиеся-армяне Греции, как и других зарубежных колоний, в своем абсолютном большинстве стояли и стоят на позициях верных друзей Советского Союза. Они активно участвовали в борьбе против фашизма, как в годы диктатуры Метаксаса, так и в период гитлеровской оккупации. В этой борьбе многие армянские рабочие пали смертью храбрых, проявляя боевой дух, отвагу и преданность делу освобождения Греции от фашистской тирании. Свободолюбивый греческий народ никогда не забудет о том, как в тяжелые годы фашистской оккупации населенные армянами рабочие поселки Афин, Пирея и других городов были неприступными крепостями освободительной борьбы, как вместе с греческими партизанами за свободу гостеприимной Эллады с оружием в руках сражались лучшие сыны армянского народа, которые своей самоотверженной борьбой укрепили вековое братство и боевую дружбу между обоими народами, обогащая историю этой дружбы новыми яркими страницами совместной борьбы.

Как результат благотворной деятельности армянской секции Компартии Греции и демократических организаций нужно рассматривать также тот неоспоримый факт, что репатрированные в разные годы в Советскую Армению десятки тысяч трудящихся из Греции, в своей основной массе, с огромным патриотическим воодушевлением приобщились к великому делу строительства социализма и показали трудовые и боевые подвиги как в строительстве своей новой, свободной и счастливой жизни, так и на фронтах Великой Отечественной войны.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատություններ

Կ. Մարքս և Ֆ. Էնգելս — *Կոմունիստական պարտիայի մանիֆեստը, Ընտիր երկեր, Հայպետհրատ, 1950։*

Վ. Ի. Լենին — *Երկեր, չորրորդ հրատ., Հայպետհրատ, հհ. 5, 6, 7, 12, 15, 22, 28, 29, 31։*

Կոմունիստական շարժման ղեկավարների աշխատություններ, պարտիական փաստաթղթեր

Ստ. Շահումյան — *Երկեր, հհ. 1, 2, 3, Երևան, 1955—1958։*

Ավ. Մարտունի (Ա. Մյասնիկյան) — *Կուսակցությունները դպրոցական-ության մեջ, Թիֆլիս, 1924։*

Г. Димитров—Избранные произведения, том 1—2, М. Госиздат. 1957.

Г. Димитров—Национально-революционное движение на Балканах и задачи балканских коммунистических партий. «Коммунистический Интернационал», 1928, № 42.

В. Коларов—Национальный вопрос на Балканах. «Коммунистический Интернационал», 1924, № 3—4.

П. Тольятти—Некоторые проблемы истории Коммунистического Интернационала. «Проблемы мира и социализма», 1959, № 11.

И. Кабин—Роль Коминтерна в развитии коммунистического движения «Вопросы истории КПСС», 1959, № 2.

Λ. Γκρόζος—Σαράντα χρόνια ἀγῶνων του ΚΚΕ. Νοέμβρης 1918—Νοέμβρης 1958 „Νέος Κόσμος", 1958, № 11.

Μ Παρτσαλίδης—Πρός τα Σαράντα χρόνια του ΚΚΕ „Νέος Κόσμος", 1958 № 9.

С. Стрингос—Передовой отряд борцов за независимость и демократию. «Вопросы истории КПСС», 1959, № 1.

Յու. Ն. Զաքարյան, *Հայաստանի կոմունիստական պարտիայի Կենտկոմի հաշվետու զեկուցումը Հայաստանի կոմպարտիայի XXII համագումարում, Հայպետհրատ, 1961։*

Коммунистический Интернационал в документах, 1919—1932. М., Партиздат, 1933.

Постановление Шестой конференции Балканской Коммунистической Федерации по национальному вопросу. «Коммунистический Интернационал». 1924, № 3—4.

Το ΚΚΕ από το 1918 έως το 1931 τόμος Α. Το ΚΚΕ από το 1918 έως το 1926 έκδοση της ΚΕ του ΚΚΕ Αθήνα. 1947. Το ΚΚΕ από το 1918 έως το 1931, τόμος Β. Το ΚΚΕ από το 1926 έως το 1931. έκδοση της ΚΕ του ΚΚΕ. Αθήνα 1947.

Χρονικό του αγώνα (1878—1951) έκδοση της ΚΕ του ΚΚΕ 1952.

Σαράντα Χρόνια του ΚΚΕ 1918—1958. Επιλογή Ντοκουμέντων. Πολιτικές και Λογοτεχνικές εκδόσεις. 1958.

„Ριζοσπάστης" *(«Ռիզոսպաստիս») Հունաստանի կոմպարտիայի Կենտկոմի օրգան, Աթենք, 1926—1936*

Արխիվային ֆոնդեր

Հայկական ՍՍՌ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի և սոցշինարարության կենտրոնական պետական արխիվ, (Երևան), ֆֆ. 4/114. 178։

ՍՄԿՊ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի պարտիական արխիվ (Երևան), ֆ. 4055։

Архив внешней политики России. ф. Политархив, 1895, д. 278; 1896, д. 282, 1898, д. 292.

Архив внешней политики СССР, ф. 56, 84.

Հրատարակված աղբյուրներ

Балканские страны. М., Огиз, 1946.

Большая Советская Энциклопедия (БСЭ), Второе изд., том 12. «Греция».

Н.Калинин—Государственный строй Греции. Госиздат, М., 1959.

Очерк рабочего движения в Греции. «Красный Интерн. профсоюзов», 1923, № 4.

Международное профдвижение, 1923—1924. М., 1924.

Г. Кинис—Современное профдвижение (Греция). «Красный Интерн. профсоюзов» 1927, № 11.

Костов—Рабочее движение в Греции (1918—1925). «Красный Интерн. профсоюзов», 1927, № 2.

П. П.-ве—10 лет борьбы и идейной консолидации греческой компартии. «Коммунистический Интернационал».1928, № 44—45.

Х. Ватис—Экономика послевоенной Греции. «Мировое хозяйство и мировая политика», 1928, № 7.

Х. Ватис—Крестьянское движение в Греции. «Аграрные проблемы», 1929, № 1.

Х. Ватис—Аграрный вопрос и аграрные реформы в Греции. «Аграрные проблемы», 1929, № 6.

Ա.ե.— *Թուրքահայ հեղափոխության գաղափարախոսությունը, հ. Ա. Փարիզ, 1934, հ. Բ, Փարիզ, 1935։*

Լեո—*Հայոց Պատմություն, հ. Գ, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1946։*

Ա. Հովհաննիսյան—*Գաղութահայ խնդիրներ, Երևան, Պետհրատ, 1925.*

Ա. Ալպոյաճեան—*Պատմութիւն հայ գաղթականութեան, Գահիրե, 1941, հ. 1։*

Ե. Սայան—*Տասներկու տարի Պոլսեն դուրս (1896—1908), Կ. Պոլիս, 1914։*

Պատմութիւն Սեբեոսի եպիսկոպոսի ի Հերակլն, Թիֆլիս, 1913։

Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ, Երուսաղեմ, 1915։

Հունահայ տարեգիրք, Աթենք, 1927, 1928, 1929, 1930։

Հնչակյան տարեգիրք, Փրավիտենս, 1931։

Ա. Մակարյան—*Յուշագիրք Թրակիոյ և Մակեդոնիոյ հայ գաղութներու, Սելանիկ, 1929։*

Լ. Տոնիկյան—*Իմ տեսածներս, 1915—1927, Փարիզ, 1933։*

Եղիշա—*Ակնարկներ Արևելքի բանվորական շարժման մասին, Երևան, 1924։*

Դր. Հ. Գալուստյան, *Մարաշ կամ գերմանիկ և հերոս Զեյթուն, Նյու-Յորք. 1934։*

Ի. Հ. Խաչատուրյան—*Արտասահմանի հայ կոմունիստական մամուլի պատմությունից, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1960։*

Պ. Կոկինոս—*Հունաստանի կոմերիտմիությունը դասակարգային մարտերում, Կուսհրատ, Երևան, 1934։*

—*Էջեր Բալկանների հայկական կոմունիստական կազմակերպությունների պատմությունից, «Լենինյան ուղիով», 1958, № 4։*

—*Սփյուռքահայ կոմունիստների առաջին տպագիր կոչը և նրա պատմական նշանակությունը, «Բաներեր Հայաստանի արխիվների», 1960, № 1։*

—*Բուլղարահայ կոմունիստների առաջին շրջաբերականը, «Բաներեր Հայաստանի արխիվների», 1961, № 1։*

—*Հունահայ աշխատավորության ռևոլյուցիոն պայքարի պատմությունից (1922—1927 թթ.), (դիսերտացիոն աշխատություն), Երևան, 1960։*

Ամիսոնեանց պարբերական մամուլ

«Կարմիր լուրեր»	Պլովդիվ . . .	1921—1922
«Նոր աշխարհ»	Պլովդիվ . . .	1922—1923
«Աշխատանք»	Սալոնիկ . . .	1926—1927
«Պրոլետար»	Նյու-Յորք . .	1924—1926
«Բանվոր-Պարիզ»	Փարիզ . . .	1924—1925
«Նոր աշխարհ»	Նյու-Յորք . .	1926—1929
«Երևան»	Փարիզ . . .	1926—1930
«Երկունք»	Պիրեա-Աթենք .	1922—1923
«Ապտակ»	Աթենք . . .	1894—1896
«Հնչակ» Փարիզ,	Աթենք, Լոնդոն .	1891—1894
«Արարատ»	Աթենք . . .	1925
«Նոր ալիր»	Սալոնիկ . .	1924—1927
«Արեգ»	Վիեննա-Բեոլին .	1922—1924
«Երկիր»	Կ. Պոլիս . .	1919—1922
«Ժողովրդի ձայնը»	Կ. Պոլիս . . .	1919—1923
«Ժողովրդի ձայնը-Ժամանակ»	Կ. Պոլիս . . .	1920—1922
«Սուրիական մամուլ»	Հալեպ . . .	1922—1926
«Հնչակեան մամուլ»	Փարիզ . . .	1930
«Երիտասարդ Հայաստան»	Նյու-Յորք . .	1924—1927
«Նոր երկիր»	Փարիզ . . .	1926—1928
«Նոր օր»	Աթենք . . .	1924—1928
«Ալիք»	Սալոնիկ . . .	1923—1927
«Հորիզոն»	Սալոնիկ . . .	1928—1930
«Արձագանք»	Աթենք . . .	1928—1929
«Ժողովուրդի ձայն»	Աթենք . . .	1930—1931
«Նոր շարժում»	Աթենք . . .	1931—1934
«Սևան»	Աթենք . . .	1933—1936
«Երկիր»	Աթենք . . .	1963

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 5

Գաղութի կազմավորումը և հայ աշխատավորության տնտեսական վիճակը

Հայերի մասսայական գաղթը Հունաստան առաջին իմպերիալիստական պատերազմից հետո 23

Հունահայ աշխատավորության մասսայական տեղահանումները . 49

Հայ աշխատավորության պայքարը ազգային հալածանքների դեմ

Հայերի մասսայական արտագաղթը Հունաստանից . . . 63

Քաղաքական հոսանքներ հունահայ գաղութում

Կոմունիստական հոսանքի կազմավորումը 70

Ազգային մարմինների ձևավորումը և հասարակական կազմակերպությունների ու պարբերականների ստեղծումը 1922—1924 թթ. 86

Հայ ազգայնական պարտիաների դիրքորոշումը Սովետական Հայաստանի հանդեպ 100

Ներքաղաքական պայքարը հունահայ գաղութում

Մասսայական դեմոկրատական կազմակերպությունների ամրապնդումը և հակադաշնակ ժողովրդական ճակատի ստեղծումը . 107

Պայքար հանուն միասնական ճակատի և ազգային մարմիններում դաշնակների մեկուսացման 122

Դաշնակների պարտությունը ընտրական պայքարում . . . 145

Հունաստանի կոմերիտմիությունը և հունահայ երիտասարդությունը 162

Հունահայ կոմունիստների գործունեությունը պանկալոսյան դիկտատուրայի անկումից հետո

Նոր իրադրությունը և հայերեն առաջին կոմունիստական թերթը . 171

ՀՕԿ-երը վերելքի ճանապարհին 197

Պայքար ռեակցիայի դեմ. հայ և հույն աշխատավորների ինտերնացիոնալ կապերի ամրապնդումը 208

Պայքարը հանուն ինտերնացիոնալ դծի հաղթանակի . . . 227

Վերջաբան 238

Резюме 242

Օգտագործված աղբյուրներ և գրականություն . 260

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ

ՊԵՏՐՈՍ ԿՈԿԻՆՈՍ
(Խաչիկ Կարապետի Կոկայան)

ПЕТРОС КОКИНОС
(Хачик Карапетович Кокаян)

ՀՈՒՆԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Տպագրվում է ՀՍՍՌ ԳԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի հանձնարարությամբ

Պատ. խմբագիր Մ. Կ. Մարտիկյան
Հրատ. խմբագիր Ա. Խ. Մանոյան
Նկարչական ձևավորումը Կ. Հ. Յուրուչյանի
Տեխ. խմբագիր Մ. Ա. Կափլանյան
Սրբագրիչ Փ. Հ. Մաղանյան

ՎՖ 06289, հրատ. № 2505, խշհ № 943, պատվեր 40, տպաքանակ 1500

Հանձնված է արտադրության 22/II 1965 թ., ստորագրված է տպագրության 4/VIII 1965 թ., 16,75 մամուլ, հրատ. 11, 62 մամուլ, թուղթ 84×108 1/32։ Գինը 90 կոպ.։

ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի հրատարակչության էջմիածնի տպարան

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220037109

A II 37109